# ԷՋՄԻԱԾԻՆ



Բ
2008

ԿԴ ՏԱՐԻ

# ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

**Փետրուար**

**2008**

ՀՐԱՄԱՆԱՒ

## Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

# ԼՂՀ ՆԱԽԱԳԱՀԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Փետրվարի 11-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանի հետ:

Ողջունելով Արցախի նախագահի անդրանիկ այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ Նորին Սրբությունը վերստին շնորհավորեց Բակո Սահակյանին՝ Լեռնային Ղարաբաղի նախագահի պաշտոնում ընտրվելու կապակցությամբ և մաղթեց նույն նվիրումով ու նախանձախնդրությամբ շարունակել իր ծառայությունը բերել հավատավոր արցախահայությանը: Ամենայն Հայոց Կաթողիկոսը մաղթեց, որ այն ոգին, որի ականատեսն է եղել Արցախ կատարած այցերի ընթացքին, շարունակվի դրսևորվել արցախահայության կյանքի բոլոր բնագավառներում, և հաղթանակներն ու հաջողությունները միշտ ուղեկից լինեն նրանց: Իր խոսքում Նորին Սրբությունը հավաստեց, որ Հայոց Եկեղեցին պիտի շարունակի իր զորակցությունը բերել Արցախի առաջընթացին:

Վեհափառ Հայրապետը նաև իր գոհունակությունը հայտնեց ԼՂՀ նախագահին՝ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հանդեպ դրսևորվող բարյացակամ վերաբերմունքի և այն աջակցության համար, որ իշխանությունները ցուցաբերում են Արցախի հայոց թեմին:

Իր հերթին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը, ուրախություն հայտնելով հանդիպման առիթով, անդրադարձ ունեցավ Լեռնային Ղարաբաղի կացությանը, տնտեսության զարգացման ծրագրերին և հեռանկարներին՝ կարևորությամբ նշելով, որ Արցախը միշտ զգացել է Մայր Եկեղեցու և Ամենայն Հայոց Հայրապետի աջակցությունը: Խոսքի ավարտին նախագահը առաջարկեց Նորին Սրբությանը, որպեսզի ավանդույթ ձևավորվի, և ամեն տարի, եկեղեցական նշանակալի որևէ տոնի առիթով, Վեհափառ Հայրապետն այցելություն կատարի Արցախ և իր անմիջական մասնակցությունը բերի Արցախում կազմակերպվող տոնակատարությանը:

Հանդիպման ընթացքում անդրադարձ կատարվեց նաև Հայաստանում կայանալիք առաջիկա նախագահական ընտրություններին: Ամենայն Հայոց Հայրապետը և ԼՂՀ նախագահը կարևոր նկատեցին, որ ընտրություններն անցնեն օրինականության շրջագծի մեջ, խաղաղության և համերաշխության մթնոլորտում, որպեսզի մեր կյանքում տեղ չգտնեն այնպիսի քայլեր ու երևույթներ, որոնք կարող են վնասել ժողովրդի արժանապատվությունը, ստվերել ազգի, պետության վարկն ու հեղինակությունը՝ վտանգներ ստեղծելով պետականության և Հայաստանում ու Արցախում թանկ գնով ձեռք բերված նվաճումների համար:

Հանդիպմանը ներկա էին Արցախի հայոց թեմի առաջնորդ Տ. Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանը և Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Փետրվարի 14-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնախմբեց Տեառնընդառաջը՝ 40-օրյա մանուկ Հիսուսի ընծայումը տաճարին:

Տոնի նախօրեին՝ փետրվարի 13-ին, Մայր Աթոռի Միածնաէջ Սուրբ Տաճարում երեկոյան ժամերգության ավարտին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ կատարվեց տերունի տոնի սկիզբն ավետող նախատոնակի հանդիսավոր արարողություն, ապա և անդաստանի կարգ, երբ օրհնվում են աշխարհի չորս կողմերը: Շարականների երգեցողության ներքո բարեպաշտ բազում հայորդիներ իրենց հարկերը տարան Մայր Տաճարի կանթեղներից վառված մոմեր՝ լուսավորելու Քրիստոսի խորհրդանիշ լույսով:

Փետրվարի 14-ին Մայր Տաճարում, հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մատուցվեց Սուրբ Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Տ. Զարեհ վարդապետ Կաբաղյանը: Հոգեշնորհ Հայր Սուրբն իր քարոզում անդրադարձավ տոնի խորհրդին՝ նշելով. «Ոչ ոք չի կարող ժխտել, թե որքան հաստատ է հավատացյալ հայ մարդու հավատը դեպի իր Տերը, դեպի Հիսուսի նախանշած Եկեղեցին: Եվ այդ անսահման հավատով է նա ամեն Տեառնընդառաջի տոնին գալիս եկեղեցի և խորանի վրա վառվող կանթեղից լույսի իր մասը տանում իր օջախ՝ այն Աստծու լույսով լուսավորելու համար: Հայ մարդը հույսի, միասնության, իր կյանքը բարեփոխելու լավատեսության, հոգևոր վերազարթոնքի, հայ մտածողը իմաստնության, հայ զինվորը անպարտելիության ու հաղթության գաղափարն է ամփոփել այդ լույսի մեջ, ողջ հայության վերածնունդն է ամփոփված այդ լույսի մեջ»:

Հավարտ Սուրբ Պատարագի Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ կատարվեց նորապսակ զույգերի օրհնության կարգ:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*




# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԱՆՏՈՆԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԼԱՆՔԻՆ «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ԲԱՐԵԿԱՄՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅՍ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԵԱՆՍ ԳԵՐԱՊԱՅԾԱՌ ԱՆՏՕՆԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԼԱՆՔԻ ՈՐ ՆԻՍ, ՖՐԱՆՍԻԱ

Ձերդ Սրբազնութիւն,

Համայն հայութեան հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Մեր ողջոյնն ու օրհնութիւնները:

Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Նորվան արքեպիսկոպոս Զաքարեանից գոհունակութեամբ տեղեկացանք Կաթոլիկ Եկեղեցու անդաստանում Ձեր երկարամեայ եւ արդիւնաշատ ծառայութեան վերաբերեալ: Ուրախ ենք մեծապէս, որ Դուք, որպէս բարի եւ հաւատարիմ ծառայ Քրիստոսի, տասնեակ տարիներ հոգու եւ մտքի Ձեր կարողութիւնները անձնուիրաբար ի սպաս էք դնում Կենաց Խօսքը սերմանելու սրբազան առաքելութեան իրականացմանը, որպէսզի հաւատացեալները առաւել զօրանան հաւատի, յոյսի ու սիրոյ մէջ եւ աստուածճանաչողութիւնը պայծառօրէն լուսաւորի ու առաջնորդի մարդկային մեր կեանքը:

Գոհունակութեամբ ենք անդրադառնում նաեւ մեր ժողովրդի եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հանդէպ Ձեր յարգալիր վերաբերմունքին եւ մատուցած օգտաշատ ծառայութիւններին: Հայոց Մեծ եղեռնի, հայ գրերի գիւտի 1600-ամեայ յոբելեանի եւ այլ առիթներով կազմակերպելով ցուցահանդէսներ, դասախօսութիւններ ու էկումենիկ արարողութիւններ, Դուք գնահատելի աւանդ էք բերել մեր ժողովրդի քրիստոնէական անցեալն ու ստեղծած հոգեւոր հարուստ ժառանգութիւնը Նիսի հասարա-

կական լայն շրջանակներին ներկայացնելու գործում: Մեր ժողովրդի զաւակների համար ուրախութեան առիթ է նաեւ Նիսի կենտրոնական կաթողիկէ Մայր Տաճարում Ձեր ջանքերով տեղադրուած հայկական խաչքարը՝ նուիրուած Հայաստանում քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակման 1700-ամեակի դարակազմիկ յոբելեանին, որը եղբայրական ոգու գեղեցիկ արտայայտութիւն է մեր եկեղեցիների միջեւ: Ձեր գործերում «զի բարի կամ զի վայելուչ, զի եղբարք բնակին ի միասին» սաղմոսի բաղձալի պատգամն ենք տեսնում մարմնաւորուած, որով Դուք արժանապէս վաստակել էք անկեղծ սէրն ու երախտագիտութիւնը Նիսի հաւատաւոր հայութեան:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից առանձնակի ուրախութեամբ բերում ենք Ձեզ Մեր օրհնութիւնը եւ Հայրապետական այսու Կոնդակով շնորհում Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

## ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

պատուոյ բարձր շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթում եւ մաղթում ենք, որ Բարին Աստուած օգնական ու աջակից լինի եւ Իր հանապազ օրհնութեամբ զօրացնի Ձեզ բարձր ու պատասխանատու Ձեր կոչման մէջ՝ «իբրեւ զքաջ զինուոր Քրիստոսի» շարունակելու արդիւնաշատ Ձեր ծառայութիւնը ի փառս Աստուծոյ եւ ի բարօրութիւն հաւատաւոր Ձեր հօտի:

Թող Բարին Աստուած օրհնի մեր Սուրբ Եկեղեցիների բարեկամական յարաբերութիւնները եւ խաղաղ ու անվրդով պահպանի համայն մարդկութեանը աստուածային Իր սիրոյ ու խնամքի մէջ:

*Ողջ լերուք ի Տէր, զօրացեալք շնորհօք Սուրբ Հոգւոյն, եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:*

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 7-ոյ Փետրուարի
ի թուին Տեառն 2008 եւ ի թուին հայոց ՌՆԾԷ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 460

# ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կոնդակով փետրվար ամսին.

**«Ս. Ներսես Շնորհալի»** շքանշանով պարգևատրվել են.

Լևոն Միսաք և Անի Տիգրանուհի Չափան (ԱՄՆ հայոց Արևելյան թեմ)

Սարգիս Վահագն (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ 20-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

Սիրելի ժողովուրդ ի Հայաստան, յԱրցախ և ի Սփյուռս.

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ողջույն ենք հղում և Հայրապետական Մեր օրհնությունը բերում ձեզ՝ Արցախյան շարժման 20-րդ տարեդարձի առիթով:

1988 թ. այս օրերին սկիզբ առած ազատագրական պայքարում, պաշտպանելով Արցախի հայության ազատ ապրելու իրավունքը, չընկրկելով զրկանքների ու զոհողությունների առջև, հավատավոր մեր ժողովուրդը հաղթանակել է Աստծոողորմությամբ: Հաղթական են նաև Արցախում պետականության կառուցման, երկրի շենացմանն ու առաջընթացին ուղղված ջանքերը մեր ժողովրդի, որ այսօր շարունակվում են աննվազ հավատով ու լավատեսությամբ, Մայր Հայաստանի հետ Արցախի միացյալ նոր կյանքը կառուցելու վստահությամբ:

Աղոթում ենք առ Աստված, որ խաղաղության Իր շնորհի ներքո պահպանի մեր Հայրենիքն ու համայն ժողովրդին և արժանի դարձնի մեզ շուտով տեսնելու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգայնորեն ճանաչումը, որ արդար իրավունքն է Արցախի հայության:

Թող Տերը հավատով պայծառ և հայրենյաց սիրով զորացյալ պահի մեր ժողովրդին և պարգևի նոր ձեռքբերումներ՝ մարմնավորելու իր հույսերը, կառուցելու իր միացյալ, բարօր ու լուսավոր գալիքը:

Ս. Էջմիածին
19 փետրվարի 2008 թ.

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ԱԹԵՆՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՀԵԼԼԱԴԱՅԻ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

Փետրվարի 9-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորական գիր է ուղղել Աթենքի և Համայն Հելլադայի նորընտիր Արքեպիսկոպոս Նորին Ամենապատվություն Հերոնիմոս Բ-ին:

Նորին Սրբության գրում մասնավորապես ասվում է. «...*Ուրախությամբ տեղեկացանք Ձերդ Ամենապատվության՝ Աթենքի և Համայն Հելլադայի Արքեպիսկոպոս ընտրվելու մասին, որի առիթով շնորհավորում ենք Ձեզ և Համայն հայության հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերում ենք Մեր եղբայրական սերն ու բարեմաղթանքները:*

*Ձերդ Ամենապատվությունը, իբրև «Տիրոջ այգու մշակ», երկար տարիներ ծառայելով եկեղեցական բարձր և պատասխանատու պաշտոններում, եղել է կրթության ջատագովը և առանձնակի ուշադրությամբ խրախուսել քրիստոնեական դաստիարակությունն ու երիտասարդ հոգևորականների աստվածաբանական կրթությունը:*

*Կրթության և լուսավորության առաքինի գործը դարեր ի վեր մշակութասեր և եղբայրական մեր ժողովուրդների բարեկամության ակունքներում է եղել, որոնք այսօր ավելի են ամրապնդվում Հունաստանի հյուրընկալ երկրում հայ համայնքի և հայոց թեմի գործունեությամբ, միջպետական և միջեկեղեցական հարաբերություններում սիրո համագործակցությամբ:*

*Լիահույս ենք, որ Ձերդ Ամենապատվության գահակալության տարիներին հեռանկարներով լի այս հարաբերություններն ավելի կհարստանան աստվածահաճո և արդյունաշատ գործերով ու ձեռքբերումներով»:*

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում փետրվարի 14-ին տեղի ունեցավ Գերագույն Հոգևոր Խորհրդի ժողով՝ նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի: Ժողովը անդրադարձավ նաև ՀՀ նախագահի ընտրություններին և այդ առիթով կոչ ուղղեց ժողովրդին:

## ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՉԸ ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

Փետրվարի 19-ին կայանալիք ՀՀ նախագահական ընտրությունները կարևոր իրադարձություն են մեր երկրի և ժողովրդի կյանքում:

17 տարիներ առաջ մեր ժողովուրդը կատարեց ազատ, անկախ ապրելու իր ընտրությունը: Հայաստանի պետականության վերականգնումը մեր իրականության մեջ սկիզբ դրեց նոր գործընթացների՝ ուղղված արդար և հասարակական համերաշխությամբ հատկանշվող երկրի կառուցմանը: Մեր ժողովրդի արդար սպասումն է, որ նոր նախագահի ընտրությունը դառնա երաշխիք երկրում կայունության ու համերաշխության ամրապնդման և առաջընթացի:

Մեր հորդորն է, որ պատասխանատու այս իրադարձության առջև մեր ժողովուրդը դրսևորի հայրենասիրության բարձր գիտակցություն, առաջնորդվի բացառապես հայրենի մեր երկրի հեղինակության գերակայության գաղափարականով: Թող ո՛չ մի քայլ, ո՛չ մի դրսևորում չստվերի մեր ընտրությունը, չպառակտի մեր ժողովրդի միասնությունը: Հայրենասեր ենք ճիշտ այնքան, որքան գիտենք հարգել, հանդուրժել, սիրել միմյանց: Հայրենասեր ենք ճիշտ այնքան, որքան գիտենք ազգային շահի առջև խոնարհեցնել անձնական հավակնություններն ու զգայնությունները:

Աղոթող ենք, որ Տերը դեպի նոր հաջողություններ առաջնորդի մեր երկիրը խաղաղության, սիրո միաբանության ու համերաշխության մեջ:

*«Հարգեցեք բոլորին, սիրեցեք եղբայրությունը, վախեցեք Աստծուց» (Ա Պետրոս Բ 17):*

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ՈՒՂԵՐՁԸ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Փետրվարի 29-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի տեղի ունեցավ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու թեմակալ առաջնորդների և եպիսկոպոսների ժողով: Մտահոգություն հայտնելով Հայաստանում հետընտրական զարգացումների հետևանքով ստեղծված ներքաղաքական իրավիճակի առիթով՝ Հայ Եկեղեցու առաջնորդներն ուղերձով դիմեցին ժողովրդին:

Ուղերձում ասվում է.

«Սիրելի բարեպաշտ ժողովուրդ,

Խորապես մտահոգ և անհանգստացած ենք նախագահական ընտրություններից հետո մեր երկրի ներքաղաքական լարված իրավիճակով:

Հուզումների ալիքները անհանդուրժողության և մեր ժողովրդի զավակների միջև առճակատման սերմեր են պարունակում իրենց մեջ: Ստեղծված իրավիճակը հղի է երկրի ներքին խաղաղությանն ու կայունությանը, մեր պետության վարկին սպառնացող վտանգներով:

Անկախության ճանապարհին մեր ժողովուրդը բազմաթիվ դժվարություններ ու խոչընդոտներ է հաղթահարել՝ հույսով ու հավատով ավելի զորացող տեսնելու իր երկիրը և ոչ՝ բաժանումներից, բախումներից ու ցնցումներից տարուբերվող ու անհաստատ: Պառակտյալ ժողովուրդը դատապարտված է ձախողման իր իղձերի իրականացման մեջ, առաջընթաց ու զարգացած երկիր և հզոր պետականություն հաստատելու իր ձգտումների մեջ, ինչպես մեր Տերը՝ Քրիստոս է ասում. «Ինքն իր մեջ բաժանված ամեն թագավորություն ավերվում է» (Մատթ. ԺԲ 25):

Սիրելի հավատավոր հայորդիք, Մեր հորդորն է ձեզ պահպանել ողջամտության ու խոհեմության ոգին, լինել զգոն, օրինապահ, անարձագանք թողնել ատելություն և թշնամանք հրահրող ամեն ձայն, յուրաքանչյուր քայլ կատարել մեր երկրի հեղինակության, մեր ներկայի և ապագայի հանդեպ լուրջ մտահոգությամբ:

Կոչ ենք բերում ընդդիմության ներկայացուցիչներին, ովքեր չեն ընդունում ընտրությունների արդյունքները, գործել օրենքի շրջանակներում, որպեսզի անխաթար մնա մեր երկրի կայունությունը, չվտանգվեն մեր ժողովրդի ձեռքբերումները և կյանքի անդորրը: Հանրահավաքներն ու երթերը բարվոք ճանապարհ չեն վիճարկելու կայացած ընտրությունների վերջնական արդյունքները:

Հայրենի իշխանությանը կոչ ենք անում առավելագույն ջանքեր բերել խաղաղ գործընթացներով լուծման առաջնորդելու հուզող հարցերն ու մարտահրավերները:

Աղոթում ենք առ Ամենակարողն Աստված, որ Իր բարի հայացքի ներքո անխռով պահի մեր երկիրը, անսասան՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին և խաղաղության մեջ՝ աշխարհասփյուռ մեր ժողովրդին:

*Շնորհք, սէր և խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան. Ամէն*»:

## *ՔԱՐՈԶԽՈՍԱԿԱՆ*

# Տ. ՏԱԹԵՎ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(3 փետրվարի 2008 թ.)

*«Երբ ծոմ պահեք, տրտմերես մի՛ եղեք կեղծավորների նման, որոնք իրենց երեսները այլանդակում են, որպեսզի մարդկանց այնպես երևան, թե ծոմ են պահում»*

(Մտթ. Զ 16):

*«Ձեր ծոմապահության օրերին, ձեր ցանկություններն եք կատարում և կսկիծ պատճառում բոլոր նրանց, ովքեր ենթակա են ձեզ: Հակառակության և կռիվների մեջ եք պահում տկարին, իսկ Իմ ինչին է պետք այդպիսի ծոմապահության օրը: Դուք պիտի զաք բողոքեք ինձ և ես չպիտի լսեմ ձեզ: Այն ամեն ինչը, որ հավատից չի բխում, մեղք է»*

(Հմմտ. Հռոմ. ԺԴ 23):

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն»

Ահավասիկ մի քանի մեջբերումներ այն աստվածաշնչական և ավետարանական հատվածներից, որոնք այսօր ընթերցվեցին մեր եկեղեցիներում, և դրանով հայտարարվեց Մեծի Պահոց սկիզբը և Բուն Բարեկենդանը: Քառասուն օրեր և հետո ամբողջ Ավագ Շաբաթը մենք աղոթքով, ծոմապահությամբ և ապաշխարությամբ պիտի անցկացնենք, որպեսզի վերագտնենք քրիստոնեական կյանքի իսկական իմաստը, ամեն տեսակ շեղումներից դուրս գանք և աստվածատեսության մթնոլորտի մեջ Աստուծո բարի զավակները դառնանք:

Ոչ միայն մեր Եկեղեցին, այլ նաև բոլոր քրիստոնեական Եկեղեցիները այսօր բարեկենդանն են տոնում: Երկրներ կան, ուր մեծածախս, շվայտ, ցոփ և հաճոյասեր կյանքի այլազան ձևերով են հայտարարում Մեծի Պահոց սկիզբը: Քանի-քանի կառնավալներ կան աշխարհի մեջ: Բարեկենդանի իրենց ընկալումը այն է, թե ինչ կրքեր ունենք, ինչ ցոփություններով կրնանք հաճոյանալ, ինչ չափազանցությունների և ծայրահեղության գնանք, լավ է: Այսպիսով կ’ազատվենք, կը պարպվենք և դրանից հետո կը լցվենք բարությամբ և զգաստությամբ, ուրիշ տեղեր էլ տպավորիչ և հուզիչ թափորներ կկազմակերպվեն, որպեսզի բարեկենդանությունը գա և տեղ գտնի կյանքի մեջ:

Անշուշտ հարց է, թե մեր Եկեղեցին ինչպես է ընկալում բարեկենդանը: Ես ուզում եմ այսօրվա մեր շարական աղոթքներից մի քանի հատված մեջբերել, որպեսզի մենք տեսնենք, թե մեր Եկեղեցին ինչպես է ընկալում բարեկենդանը: Տեսնենք՝ մեր ժողո-

վուրդը ինչպե՞ս է ընկալել այդ բարեկենդանությունը: Տեսնենք, թե մեր հայրերը ինչ խրատներով և հորդորներով են առաջնորդում մեր ժողովրդին, որ իրենց կյանքը իրոք վերածեն բարի կենդանության:

«Աստված Իր Խոսքին, Բանին և Իր Սուրբ Հոգու հետ Իր պատկերը մեր հողեղեն բնությանը միախառնեց, զոր փառքով զարդարելով դրեց երանական դրախտին մեջ: Ադամ այդ դրախտին մեջ ցնծում էր, որովհետև միշտ զԱստված էր տեսնում դրախտի մեջ իջած, նրանից ցոլացած լույսի ճառագայթները իր մեջ տպավորվում և արտացոլվում էին: Ուստի Աստուծո Մայր՝ Սուրբ Մարիամ, աղաչիր Քո Միածին Որդուդ, որպեսզի ավազակին նման շնորհ անի մեզ դրախտին վայելչությունը վերստին ժառանգելու»:

«Այսօր մեր նախահայրը, որ եդեմի պտուղից ճաշակելով զվարճանում էր, մենք ևս Աստուծոյ պատվիրանները ճաշակենք և դրախտավայել զգացմունքով երջանկանանք և ուրախանանք: Հարսնացած Եկեղեցին Փրկչի քառասնօրյա պահքին օրինակով այսօր պահք է պահում, որպեսզի հարուցյալ փեսային հետ առագաստ մտնի: Հավիտյան փառավորեցեք զԱյն»:

«Քրիստոսի հավատացողներ, եկեք ցնծությամբ պահք պահենք: Անմահին մահվան հետ մեղքին համար մեռնենք, որպեսզի անոր բարությամբ, արդարությամբ կենդանանանք. հավիտյան փառավորեցեք Աստծուն»:

Ահավասիկ, թե ինչպես է ընկալվում դրախտը, բարեկենդանությունը մեր Եկեղեցու և ժողովրդի կյանքի և հասկացողության մեջ: Աստված դրախտը ստեղծեց, ամեն տեսակ բարիքներով օժտեց զայն և տվեց մարդկությանը, որպեսզի բարիկենդանություն ունենանք Աստծո այս բարի գործերը վայելելով, որպեսզի Աստծու այս գործերը տեսնելով ցնծանք և զվարճանանք:Այնուամենայնիվ Աստված մեզ միայն նյութ չտվեց: Նյութական աշխարհը հարուստ է, առանց մեզի էլ կ'ապրի, պետք չունի ոչինչի: Աստված Իր իմաստուն կարգավորությամբ նրան կուղարկի ցողն էլ, անձրևն էլ, և նրան կպարգևի այն ամբողջ առատությունն ու հարստությունը, որոնցով ամբողջ ստեղծագործությունը կ'ապրի,կը զարգանա և կը գոյատևի: Մարդը սակայն այդպես չի: Հողով, քարով, ջուրով, ծառով և այլ նյութական բարիքներով չի սնանի: Մարդ ստեղծած ժամանակ առավել մի բան տվեց՝ նրա մեջ Իր շունչը փչելով: Մարդու մեջ աստվածությունը ներկա է միշտ այլազան կերպերով և այդ ներկայության տեսությամբ և գիտակցությամբ դրախտը կդառնա բարիկենդանությունը: Ադամը դրախտը վայելում էր այնքան ատեն, որքան տեսնում էր Աստծուն այդ դրախտի մեջ:

Այսօր պարզ և հստակ իրականությունը այն է, որ Դրախտը մարդիկ կուզեն առանց Աստծու, որ իրենց ուզածը անեն: Աստված քանի մարդուն իշխանություն է տվել նյութական այս բարի արարչության վրա, մարդիկ անում են ոչ թե այն, ինչ Աստված է կամենում,այլ իրենք: Ամեն ինչ չարաշահվում է, ամեն ինչ փչանում և այլասերվում է: Բարի հողն անգամ թունավորվում է: Մթնոլորտը ապականվում է, պայմանները վտանգավոր փոփոխությունների են ենթարկվում, և բնական աղետները ահավոր նյութական և մարդկային կորուստների և զոհերի պատճառ են դառնում: Դրախտը ոչ միայն կորել է, այլև մեր այս աշխարհի իրավիճակը տագնապեցնում է գիտական աշխարհին:

Մեր աղոթքների մեջ մենք այսօր ասում ենք, թե դրախտը դրախտ կը դառնա, երբ մենք դրա մեջ Աստծուն տեսնենք, ներթափանցվենք Նրա էությամբ, լույսով, շնորհ-

քով և իմաստությամբ, երբ մեր շրջապատի և աշխարհի մեջ նրանք արտացոլվեն: Ես ուզում եմ հարց տալ ինքս ինձ և մեր եկեղեցու բոլոր հավատացյալներին՝ «Հավատու՞մ եք ձեր և մեր բոլորի աղոթքին»:

Ես հիշում եմ իմ սարկավագության և աբեղայության առաջին տարիները, երբ Վեհափառ Հայրապետը դուրս էր գալիս Վեհարանից և ման էր գալիս վանքի բակում: Եթե այդ օրը կամ ամբողջ շաբաթ մենք եկեղեցի էինք գնացել և կանոնավորապես մերվել մեր աղոթական կյանքին և կատարել մեզի հանձնված պարտականությունները կամ ներդաշնակորեն մերվել վանական կյանքին, վազում էինք Վեհափառ Հայրապետին ընդառաջ, ուզում էինք համբուրել հայրապետի աջը, նրա հետ ուզում էինք խոսել, նրա օրհնությունը ստանալ: Բայց եթե հանցապարտության զգացում ունեինք, եթե գիտեինք, որ աղոթական կյանքին չէինք մասնակցել, անդրադարձել էինք, որ մեր պաշտոնը լավ չէինք կատարել, երբ Վեհափառը տեսնեինք, կփախչեինք, պահ կմտնեինք, որպեսզի չերևայինք նրան, ում այնքան սիրում, հարգում էինք: Ինչո՞ւ: Որովհետև հանցապարտության զգացումը այդ սիրո հարաբերությունները ամբողջը քանդել էր:

Իմ խորը համոզմամբ Հայոց Առաքելական մեր Ս. Եկեղեցին իր աղոթքներով հետևյալ պատգամն է տալիս իր հավատացյալներին.

- Դուք Աստծո ընտանիքն եք: Ճիշտ է, կատարյալ չեք ձեր Հոր նման, բայց Աստված այս կյանքը ձեզ տվել է նրան հասնելու: Կյանքը ձեզ չի տրվել չարչրկվելու, իրար նեղելու, կամ զրկելու համար: Կյանքը վայելք է և Բարի Կենդանություն:Աստծո բաղձանքն այն է, որ այդ բարի և բարերար կյանքը տարածվի, արմատավորվի և բարգավաճի յուրաքանչյուրի ընտանիքին, գործին և աշխատանքին մեջ: Աստված ամեն ինչ արել և տնօրինել է դրա համար: Բայց ամեն ինչ Աստծուց չէ կախված: Շատ հաճախ մենք փչացնում ենք մեր և ուրիշների կյանքը, որովհետև Աստվածատեսության մեջ չենք ապրում: Այդ իսկ պատճառով ամենամեծ աղոթքը այսօր մեր բոլոր շարականների մեջ՝ Տեր Աստված, օգնիր մեզ, որ Քեզ միշտ տեսնենք, Քո պատվիրաններին լսենք: Որովհետև ասեք ինձ ,առանց Աստուծո պատվիրանները կարդալու, առանց Աստված լավ ճանաչելու մենք Իրեն հետ ո՞նց պիտի հարաբերվենք, ո՞նց Իր զավակները պիտի ըլլանք, ո՞նց պիտի կարենանք Իր կամքը կատարել: Դրա համար պետք է պահք պահել, Աստծո պատվիրանների քաղցրությունը ճաշակել: Առանց Աստծո պատվիրանները իմանալու ոնց կարելի է զԱստված ճանաչել, Նրան սիրել և պաշտել: Այն ինչ որ Աստծո կամքը չէ, չի կարող բարի լինել և բարի կենդանություն բերել: Այն, ինչ որ հավատից չի բխում, մեղքի է առաջնորդում:

Ես աղոթք եմ մատուցում համայն աշխարհի և մեր Եկեղեցու,Հայոց Հայրենիքի և ժողովրդի բարի կենդանության համար: Իմ այս խորհրդածություններով փորձում էի ձեզ ևս աղոթքի հրավիրել, որպեսզի բոլորս՝ բացի նյութական, սննդական պահեցողությունից նաև պահենք, պահպանենք և երջանկանանք հոգևոր, հավատի պահեցողությամբ: Թող աշխարհը տեսնի և վկայի, որ Հայոց Եկեղեցին իրոք պահք է պահում երեք կարևոր առաջադրանքներ իրականացնելու համար.

Առաջին՝ Աստծո տեսության արժանանալու համար, որպեսզի ինչպես անցյալին, ներկայիս և ապագային ևս իր մեջ տպավորվի Աստուծո հարազատ պատկերը և Նրա ներկայության ցոլքերը տարածվեն և սփռվեն աշխարհով մեկ: Աստծո ամենամեծ

բաղձանքն է բնակվել մեր մեջ Իր սեփական տաճարներում, որպեսզի բարի կենդանությունը հասնի բոլորին հավիտենական կյանքի չափանիշներով:

Երկրորդ ՝ զԱստված տեսնելու համար պետք է լսել Նրան ճաշակելով և վայելելով Նրա պատվիրանների քաղցրությունը: Մեծի Պահոց շրջանին մեր եկեղեցում միշտ և երկարորեն կարդացվում է Աստվածաշունչը: Այդպես է, որ Աստված հանգչում է մեր մեջ, և մենք դեպի Աստված ենք ուղղորդվում: Աստվածաշունչը միշտ պետք է լինի հավատացյալի ձեռքում, դառնա նրա բարձի կամ գրասեղանի գիրքը և անպայման ընթերցվի:

Երրորդ՝ աղոթքը անբաժան մասն է պահեցողության: Աղոթքի պահին Քրիստոս՝ մեր Փրկիչը, Աստված՝ մեր ստեղծիչը և Ս. Հոգին որպես մխիթարիչ և դաստիարակ, մեր հավատը ամրապնդում են, ճշմարտում և կյանքի վերածում: Այսպիսի հավատով միայն քրիստոնեական կյանքն ու արժեքները արտացոլվում են և դառնում վկայություն, նկարագիր և կերպար: Այսպիսով մահը հաղթահարվում է և հավիտենական կյանքի ճանապարհը հարթվում:

Հավիտենական բարի կենդանության փնտռտուքի մեջ միշտ պետք է հիշել, թե բարին Աստված է և բնավ պետք չէ մոռանալ առաքյալի սրտառուչ խրատը.

- Այն, ինչ որ հավատից չի բխում, մեղք է:

*Շնորհ, սեր և խաղաղութիւն եղիցի ընդ ամենեսեանդ. Ամէն...*

# Տ. ԶԱՐԵՀ ՎԱՐԴԱՊԵՏ ԿԱԲԱՂՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(14 փետրվարի 2008 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն»

*«Տէ՛ր, թող բացվեն մեր աչքերը»*
(Մտթ. Ի 33)

Հիսուսից լույս խնդրող Երիքովի կույրերի այս աղերսանքը լսելի ու ընկալելի է մեզ դարերի խորքից: Աշխարհստեղծման առաջին իսկ օրվանից լույսը դարձել է աղբյուրը կյանքի: Այն մարդկային կյանքի շարունակականության և բուսական ու կենդանական աշխարհի գոյատևության կարևոր նախապայմանն է: Սակայն այս ամենը որպես բացարձակ ճշմարտություն ընդունելով հանդերձ մենք՝ քրիստոնյաներս, երբեք չպետք է մոռանանք հոգևոր լույսի մասին, որն առավել կենսական ուժ ունի մեր կյանքում, որով լուսավորվելով է, որ միանում ենք Արարչին, հաղորդակցվում Նրա հետ, համարվում «Լուսո որդիք»:

Քրիստոնյաներս ավետարանից գիտենք. «Աստված լույս է» և «Կյանքը Նրանով էր: Եվ այդ կյանքը մարդկանց համար լույս էր» (Հովհ. Ա 4), իսկ Հիսուսի նախանշած կյանքի ուղին անվերապահորեն լուսավոր է ու պայծառ: Այդ ուղով մեզ առաջնորդում է աստվածային լույսը՝ ցույց տալով փրկության իրական ճանապարհը: Իսկ Տեառնընդառաջի տոնը այդ փրկության ավետումն է: Այդ տոնն է այսօր մեծ խորհրդավորությամբ ոգեկոչում Հայ Առաքելական Եկեղեցին և այդ տոնն է նվիրված քառասնօրյա Հիսուսին Տաճարին ընծայելուն:

Աստծու Մովսեսին տված պատգամի համաձայն, թե «Սրբիր Ինձ համար ամեն առաջնեկը Իսրայելի որդիների մեջ... այն Իմն է» (Ամտ. Ելք ԺԳ 2), Հովսեփն ու Մարիամը 40-օրյա Հիսուսին Երուսաղեմի տաճարը տարան: Տաճարի մոտ նստած էր Սիմեոն ծերունի անունով մի մարդ, որի մեջ Սուրբ Հոգին էր բնակվում: Սուրբ Հոգին հայտնել էր նրան, որ նա ապրելու է այնքան, մինչև տեսնի Տիրոջ օծյալին: Եվ հենց նա էր, որ Մանկանը տեսնելով՝ ճանաչեց Աստծու օծյալին, ընդառաջ գնաց նրան և գրկելով՝ գոհություն տվեց Տիրոջն ու ասաց. «Այժմ, ով Տեր, խաղաղությամբ արձակիր Քո ծառային ըստ Քո խոսքի, որովհետև աչքերս տեսան Քո փրկությունը, որ պատրաստեցիր բոլոր ժողովուրդների առաջ, լույսը, որ կլինի հայտնություն հեթանոսների համար, և փառք՝ Իսրայելի Քո ժողովրդի համար» (Ղուկ. Բ 29-32):

Ահա այս ավետարանական ճշմարտության վրա է խարսխված Տեառնընդառաջի տոնը: Եկեք փորձենք ըմբռնել ու հասկանալ դրա խորհուրդը:

Հիսուսի հայտնությունից առաջ, չնայած Աստծու բազում հայտնություններին, թելադրված ճշմարիտ կյանքի օրենքներին, պատգամներին ու պատվիրաններին, մարդկային ցեղը ապրում էր մեղքերի բեռի տակ կորացած, շփոթված ու անճարակ: Մար-

դիկ փրկություն էին հայցում երկնքից, մինչդեռ շարունակում էին մեղք գործել, որովհետև Երիքովի կույրերի նման փակ էին նրանց աչքերը, նրանց համար փակ էր երկնքի վարագույրը: Եվ մարդիկ անթափանց այդ խավարում սկսեցին փնտրել պայծառ լույսը, որը ճշմարիտ փրկության ճանապարհով էր առաջնորդելու նրանց դեպի կատարելություն: Միայն այդպես մարդ անհատը կարող էր դառնալ երկնքի արքայության ժառանգորդ: Եվ ահա Տիրոջ հայտնությամբ հայտնվեց նաև վաղուց փայփայված մխիթարությունը՝ աստվածային լույսը, որի հետևորդների հոգիները իրապես պետք է փրկվեին ու լուսավորվեին: Ահա թե ինչու է սաղմոսերգուն փառաբանում Տիրոջն ու ցնծում. «Տէր, լոյս իմ և կյանք իմ» (Սղմ. ԺԶ 1):

Այո, սիրելի հավատացյալ քույրեր ու եղբայրներ, Սիմեոն ծերունին իր հոգու աչքերով տեսավ այդ Լույսը, ընդառաջ գնաց, գրկեց Նրան՝ որպես ողջ մարդկության պայծառակերպ փրկչական հոգի և ճշմարտության հաղթանակի հավիտենական վառվող ջահ: Ահա այսպես փակուղի մտած մարդկության հոգևոր-բարոյական կյանքի անբավարարությունը սկսեց նահանջել, քանզի Հիսուս աշխարհ բերեց բարձրագույն և նոր՝ լուսավոր կյանքի աստիճան՝ հոգևոր կյանք: Եթե մարդկային սովորական կյանքում առկա էին կործանման տանող բազում արատներ՝ ատելություն, նախանձ, հակառակություն, կիրք, վրեժխնդրություն, չարություն, բարձրագույն այս կյանքի մեջ, սակայն, կար հոգու պղծման ու կործանման դեմ փրկանյութը. «Սեր, խնդություն, խաղաղություն, երկայնամտություն, քաղցրություն, բարություն, հավատարմություն, հեզություն, ժուժկալություն» (Գաղատ. Ե 23), ինչպես Գաղատացիներին մեկնում էր Պողոս առաքյալը: Լուսավոր այդ կյանքում աստվածային սերն է գերակա՝ սերն առ Աստված և սերն առ մարդիկ: Հիսուսի բերած պայծառ այս լույսն էր, որ մարդուն բացահայտեց երկնային կյանքի մաքրամաքուր ակունքները, և մարդը հարաբերության մեջ մտավ Աստծու հետ, հաղորդակից դառնալով Նրա բնությանը՝ հեղաշրջեց իր կյանքը: Այդպիսով բնական դարձավ ապրելը լուսավոր բարձրագույն կյանքով, մաքուր կյանքով, ինչպես այսօր էլ պարտ է ապրել յուրաքանչյուր ճշմարիտ քրիստոնյայի: Եվ քանի որ մաքուր հոգին է արարում, ստեղծում մաքուր կյանքը, ուստի հոգեկան բարձրագույն այդ շնորհով օժտված անձի համար թանկ արժեք է սրբության գիտակցությունը՝ իր ամենալայն նշանակությամբ: Այո, ճշմարիտ քրիստոնյան հպարտությամբ կրելով իր լուսապսակը՝ հարկ է, որ մաքուր մարդ լինի ամեն տեսակետով՝ իր կյանքի բոլոր ուղղություններով՝ ապրումներով, մտածումներով, խոկումներով, ձգտումներով, նպատակներով, հարաբերություններով, գործելաոճով:

Սիրելի հավատացյալներ, Հիսուսի՝ այս աշխարհ բերած լույսով իրենց հոգիները սրբած մարդկանց միջև միայն կարող է հաստատվել ներդաշնակ փոխհարաբերություններ՝ փոխադարձ սեր, վստահություն, հարգանք, զորակցության կամք, գթասրտություն: Այսպես ապրող մարդիկ անպայման նախանձախնդիր են իրենց պատվի ու արժանապատվության համար, Աստծուն և իրենք իրենց հաշվետու լինելու պարտավորությունն են զգում յուրաքանչյուր արարքի, գործի, նախաձեռնության համար՝ իրենց կյանքի ամեն մի հանգրվանում: Այսպես են գոյատևել և մեր կյանքում անսասան հաստատվել քրիստոնեական արժեքները և բարոյական սկզբունքները, որոնք ստիպված են եղել հավերժական հակամարտության մեջ լինել հոռի բարքերի, կեղծիքի, չարության և աշխարհի անդորրն ու մարդկանց հոգիների ներդաշնակությունը

խաթարող կործանարար այլ ախտերի դեմ: Այսօր էլ առկա է այդ պայքարը, իսկ այնտեղ հաղթողները անպայման առաջնորդվում են երկնային այն լույսով, որն աշխարհ եկավ մեր Տիրոջ հայտնությամբ, որն էլ նրանց տանում է բարոյական զորության, իսկ աշխարհին՝ քաղաքակրթական առաջադիմության:

Այս պայքարի մեջ մտնողները պետք է լինեն խիստ նպատակասլաց ու վճռական, որպեսզի կարողանան ոչ միայն հաղթել, այլ նաև հաստատել, ապրեցնել մեր կյանքում այն ամենը, ինչ ուսուցանում է քրիստոնեությունը, ինչն իրենց գործունեությամբ մեզ քարոզել, պատգամել և ավանդել են մեր կրոնի լուսահոգի առաջնորդները, այսօրվա ջահակիրները: Այստեղ պետք է փնտրել քրիստոնեական կատարելության գաղտնիքը՝ քրիստոնեավայել ապրելով երջանիկ կյանքը:

Կյանքը երջանիկ է, երբ երկնքի թագավորությունն հաստատվում է երկրի վրա: Իսկ ինչպե՞ս:

Սիրելիներս, կյանքը ժամանակահատված է՝ ժամերից, րոպեներից ու վայրկյաններից կազմված: Սակայն Ֆենելոն մտածողն ասում է. «Ժամանակը մեզ տրված է հավիտենականության մասին խորհելու համար»: Աստվածաշունչը մեզ պատգամում է. «Վերինն խորհեցուք» (Կող. Գ 2): Բնական է, որ երկնայինի մասին խորհելով, մարդը կսկսի ապրել Աստծու կամքին համաձայն: Այդ ժամանակ է, որ երկրի վրա կհաստատվի երկնքի արքայությունը, կյանքը կդառնա երջանիկ: Եվ այդ ժամանակ է միայն, որ Աստծու գաղափարը՝ նրանից ճառագող լույսը ներդաշնակություն ու խաղաղություն կծնի մարդու և մարդկության միջև: Այդ խաղաղության իղձը միշտ ունենալով՝ մեր նախնիները փնտրելով գտան Տիրոջ հրաշափառ լույսը, ընդառաջ գնացին, գրկեցին այն և իրենց հոգու ժայռավիհից փառաբանեցին Տիրոջը՝ ասելով. «Լոյս, Արարիչ լուսոյ, առաջին լոյս բնակեալդ ի լոյս յանմատոյց, Հայր Երկնաւոր ի դասուց լուսեղինացն օրհնեալ, ի ծագել լուսոյ առաւօտուս ծագեա ի հոգիս մեր զլոյս Քո իմանալի»:

Այս լույսով մի օր Հիսուս իջավ Հայաստան աշխարհ: Այդ էջքին ձոնվեց շարականը քաղցրաձայն. «Էջմիածինն ի Հօրէ և լոյս փառաց ընդ Նմա»: Նա իջավ հնամենի Վաղարշապատ և այնտեղ ոսկե մուրճով հաստատեց Իր աղոթքի սրբազան տան՝ Սուրբ տաճարի կառուցման վայրը: Երկնքից ճառագած լույսը տեսավ Գրիգոր Լուսավորիչը և ավետեց հայ ժողովրդի հանդեպ Աստծու հաճությունը: Եվ հեթանոս խավարի մեջ խարխափող ժողովուրդը պայծառացավ ճառագող այդ լույսից՝ դառնալով լուսակիր ու խաչակիր ժողովուրդ, ուխտելով ապրել Աստծու պատվիրաններով ու քրիստոնեական առաքինություններով՝ իրենց հայտնված քրիստոնեական բարձրագույն կյանքով:

Սիրելի հավատացյալներ, լուսավոր այս կյանքով ապրեց Գրիգոր Լուսավորիչը: Նա էր, որ 13 տարի առանց հուսահատության, տոկալով ու տեսիլքով ապրեց Խոր Վիրապի վիհում՝ դիմանալով ֆիզիկական զրկանքներին, սակայն առավել հզորանալով հոգով, աներեր հավատով, աստվածային տեսիլքներով, մեզ բերեց փրկության լույսի շողերը, լուսավորեց մեզ՝ դարձնելով որդեգիրն Աստծու: Երախտապարտ ժողովուրդը նրան «Լուսավորիչ» պատվավոր տիտղոսը շնորհեց: Նրան հետևելով՝ մեր նախնիները քրիստոնեական հզոր քաղաքակրթություն ու մշակույթ ստեղծելով՝ ապահովեցին մեր հավերժությունն իբրև քրիստոնյա լուսակիր ժողովուրդ՝ ստիպելով աշխարհի հզորներին հաշվի նստել մեզ հետ որպես առաջին քրիստոնյա պետութ-

յուն, քրիստոնեության ակունքներին ամուր փարված ժողովուրդ, որ միայն քրիստոնեության ճաճանչափայլ լույսով է վառում իր հավատի կանթեղները: Այդ է փաստում մեր բազմադարյան պատմությունը, այդ մասին են վկայում մեր դարավոր խնկաբույր վանքերն ու տաճարները, մեր գրական հուշարձաններն ու մշակութային անգին արժեքները: Այսօր հպարտանում ենք իբրև ազգ ու ժողովուրդ, որ արժանացել ենք Տիրոջ էջքին մեր երկիր, որ լուսավորվել ենք Նրանից ճառագող աստվածային լույսով:

Իսկ ինչ է այդ լույսն այսօր մեզ համար: Այն մեր հավատի, հույսի, կամքի առհավատչյան է, այն զորեղ ուժն է, որ միշտ առաջնորդում է մեզ դեպի ճշմարիտ ուղի, որով քայլում են մարդիկ՝ հավատարիմ քրիստոնեության ավանդներին:

Սակայն ես վստահ եմ նաև, որ այսօր մեզնից յուրաքանչյուրը ամեն պահ առիթ է ունենում ինքն իրեն հետևյալ հարցը տալու. «Ինչու են մարդիկ անտարբեր միմյանց հանդեպ, ինչն է ծնում չարությունն ու նախանձը, անհանդուժողականությունն ու եսասիրությունը, ինչից են սկսվում պատերազմները, չարիքներն ու աղետները, որոնք այդքան դժբախտություններ են բերում մարդկությանը»: Այս ամենը մեկ պատասխան ունի. սիրո պակասից, որը տանում է շատ վտանգավոր մի հոգեվիճակի՝ հոգևոր կուրության, երբ անթափանց խավարը փակում է մեր հոգու աչքերը ու մենք անզոր ենք լինում տեսնելու անգամ ամենապայծառ լույսը՝ աստվածային լույսը, որն իբրև անմար կանթեղ միշտ ճառագում է մեր գլխավերևում: Հոգևոր այդ կուրության պատճառով մենք կարծես հաշտվում ենք չարիքի հետ, որից էլ ծնվում են բոլոր աղետները: Չմոռանանք նաև, որ հոգևոր կուրությունն է, որ այսօր շարունակում է մարդկությանը տանել դեպի նյութապաշտության վիհը, որից նույնպես ծնվում են մեր կյանքում առկա բազում չարիքներ: Այո, մարդու անհագ ձգտումը դեպի նյութը կյանքի մի հանգրվանում անտարակույս բերում է հուսահատության և բախման հոգեկան բարդ իրավիճակների հետ: Օրինակները բազում են, և ձեզանից յուրաքանչյուրը դրանց ականատեսն է դառնում իր առօրյա կյանքում:

Սիրելիներս, հավատացեք, որ այսօր շատ բարդություններ էլ մեզ համար մենք ենք ստեղծում՝ կասկածելով, բամբասելով, հաճախ ոչ տեղին դժգոհելով, հայհոյելով, շատ հաճախ մեր հավատում երերալով: Այս ամենով հանդերձ չեմ ուզում ժխտել, որ քիչ չեն նաև այն գերխնդիրներն ու փորձությունները, որ մենք ամեն քայլափոխի ստիպված ենք լինում հաղթահարել:

Եկեք չվհատվենք այս կյանքում մեզ պարտադրված փորձություններից, երբեք չտարակուսենք, որ Աստծու կողմից մեզ փրկությունն է շնորհված, մեզ առաջնորդում է Նրանից ճառագող լույսը, Աստված սիրում է մեզ և մեր կողմից է, ինչպես Պողոս առաքյալն է ասում. «Եթե Աստված մեր կողմից է, ո՞վ կլինի մեզ հակառակ»:

Սիրելի հավատացյալներ, այսօր, առավել ևս, երբ գտնվում ենք Մեծի Պահոց շրջանում, փորձենք մի պահ առանձնանանալ առօրյա հոգսերից ու մտահոգություններից, անդրադառնալ մեր ապրած կյանքին և փորձել գտնել մեր սխալներն ու սայթաքումները, քաջություն ունենանք ինքներս մեզ խոստովանել մեր սխալներն ու վրիպումները, աղոթքով ու ապաշխարությամբ մաքրենք մեր հոգիները, սրբագրենք մեր կյանքը, պայծառացնենք Քրիստոսի լույսը մեր հոգում, հաղթահարենք խավարը, քանզի «Լույսը խավարի մեջ լուսավորում է, և խավարը Նրան չնվաճեց» (Հովհ. Ա 5):

Սիրելիներս, ոչ ոք չի կարող ժխտել, թե որքան հաստատ է հավատացյալ հայ մարդու հավատը դեպի իր Տերը, դեպի Հիսուսի նախանշած Եկեղեցին: Եվ այդ ան-

սահման հավատով է նա ամեն Տեառնընդառաջի տոնի գալիս եկեղեցի և խորանի վրա վառվող կանթեղից լույսի մասն է տանում իր օջախ այն Աստծու լույսով լուսավորելու համար: Հավատացեք, հայ մարդը հույսի, միասնության, իր կյանքը բարեփոխելու լավատեսության, հոգևոր վերազարթոնքի, հայ մտածողը իմաստնության, հայ զինվորը անպարտելիության ու հաղթության գաղափարն է ամփոփել այդ լույսի մեջ, ողջ հայության վերածնունդն է ամփոփված այդ լույսի մեջ:

Այդ լույսով լուսավորված ճանապարհով ընդառաջ գնանք Տիրոջը, և երբ Տերը հարցնի, թե ինչ ենք ուզում, որ անի մեզ համար, խնդրենք նրանից. «Տե՛ր, թող բացվեն մեր աչքերը», որպեսզի Քեզ հետևելու ճանապարհին չմոլորվենք ու հավիտենապես Քո ուխտավորը լինենք՝ «հոգու մաքրությամբ ու սրտի ուրախությամբ», ինչպես կոչում է Դավիթ մարգարեն. «Թող Քո երեսի լույսը ծագի մեզ վրա և ուրախություն պարգևի մեր սրտերին» (Սաղմ. ԽԳ 4):

Եվ քեզ վայել է փառք, իշխանություն ու պատիվ:

Այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից: Ամեն:

2008 ԷՋՄԻԱԾԻՆ Բ 21

# Տ. ՍԱՀԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՇԱԼՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՏՆՏԵՍԻ ԿԻՐԱԿԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(24 փետրվարի 2008 թ.)

Սիրելի՛ հավատացյալ եղբայրներ ու քույրեր:

Եկեք այսօր կրկին անդրադառնանք տիեզերական մեր ճամփորդությանը, մեր այս աշխարհից մյուս աշխարհի մեկնումին:

Երբ այս եկեղեցուց դուրս ելնեք և մտնեք աշխարհ, կտեսնեք, որ քաղաքակրթության մեջ շատ քիչ բաներ կան, որ ձեզ պիտի հիշեցնեն այս ճամփորդությունը. մեր կարդացած բոլոր վեպերը, մեր տեսած բոլոր ֆիլմերը սկսվում են ծնունդով և ավարտվում մահով: Աշխարհում մարդու մասին մեր իմացածը միշտ սկսվում է ծնունդով և իր ավարտին հասնում մահով: Միայն կրոնն է, որ մեզ ասում է, թե մարդու կյանքն ունի շարունակություն, որովհետև այս կյանքի Ճարտարապետը՝ Աստված, խենթ չէ: Երևակայեցեք մի ծառ, որ տարիներով աճում է, ջուր խմում, արև առնում, հետո մեծանալով բողբոջ տալիս և ապա պտղակալում: Իսկ երբ այդ պտուղն ընկնում է գետնին, չորանում է: Եթե մենք չիմանայինք, որ այդ պտղի մեջ անմահության հունդ կա, պիտի ասեինք, թե այս ինչ խենթություն է, ինչի համար է ծառի այսչափ ջանքը: Բայց իրականում Աստծո Լոգոսը՝ Բանը, այդ ոչ բանական ծառի մեջ դրել է նպատակակետային սխրանք՝ շարունակականության սխրանքը: Մեր հավատը մեզ ասում է, որ նաև տիեզերքի մեծագույն հրաշքը՝ մարդ արարածը և նրա ճամփորդությունը գերեզմանով չի ավարտվում, այլ շարունակվում է: Հետևաբար, եթե սա է մեր հավատքը, ապա այդ մտայնությամբ էլ պետք է ապրենք: Եթե կա մեկը, որ այլ կենսափիլիսոփայություն կորդեգրի, բան չունեմ ասելու: Եթե մեկն ասում է, որ Աստված չկա, կյանքն արկած է, մենք էլ միայն մի կյանք ունենք, կմեռնենք ու փոշի կդառնանք: Այսպիսիների համար Պողոս առաքյալն ասում է. «ուտենք, խմենք, քանզի վաղը մեռնելու ենք» (Ա Կորնթ. ԺԵ 32), սակայն մեզնից, որ կոչվում ենք հավատացյալներ, Տեր Հիսուսը պահանջում է ապրել այլ փիլիսոփայությամբ...

Մի մարդ խոսող թռչուն է գնում և նրան սովորեցնում իր կյանքի փիլիսոփայությունն այսպիսի մի նախադասությամբ. «Երջանիկ եմ, ուրախ եմ, կյանքը գեղեցիկ է»: Առավոտյան արթնանում է, իսկ թռչունը ձայնում է. «Երջանիկ եմ, ուրախ եմ, կյանքը գեղեցիկ է», ճաշին թռչունը կրկին բղավում է. «Երջանիկ եմ, ուրախ եմ, կյանքը գեղեցիկ է», աշխատանքից վերադառնալիս նույնպես լսում է. «Երջանիկ եմ, ուրախ եմ, կյանքը գեղեցիկ է»: Մի օր, երբ այս մարդը տանը չի լինում, հրդեհ է ընկնում, և տունն այրվում է: Հրշեջները գալիս են, սակայն բոցն արդեն տարածված է լինում ամենուրեք, և բոցերի միջից մի աղաղակ է լսվում. «Երջանիկ եմ, ուրախ եմ, կյանքը գեղեցիկ է»: Վստահաբար, մեզանից շատերն այս թութակի օրինակը կարող են լինել: Մեր

շուրջն ամեն ինչ մահվան բոցերի մեջ է: Պարզապես օրվա կամ տարվա խնդիր է, և մենք պետք է մեռնենք: Մնալու համար չեկանք այս աշխարհ: Կյանքում առկա ամեն բան ցույց է տալիս, որ մեզանից ոչ մեկն այստեղ չի մնալու, ինչպես չմնացին մեր հայրերը, չեն մնալու նաև մեր թոռները: Ամենքս պիտի գնանք: Հետևաբար պետք է պատրաստություն տեսնենք այդ ճամփորդության համար, որովհետև չգիտենք, թե ուր ենք գնալու, և ինչ է սպասում մեզ այնտեղ: Տեր Հիսուսն այս մասին տեղեկացնելու համար մեզ մի առակ պատմեց, որի անունով էլ կոչվում է այս կիրակին: Դա Տնտեսի առակն է: Նախ ուզում եմ Տնտեսի մասին մի փոքր լուսաբանում տալ: Տնտեսն այն անձն է, որին հարուստը կարգում է իր կալվածքների վրա, որ նա կառավարի դրանք և շահույթ բերի իրեն: Հետևաբար, այս Տնտեսն ազատ է այդ կալվածքները տնօրինելու իրավունքներում և հաշվետու է միայն կալվածատիրոջը: Ուրեմն, այսպիսի մի Տնտեսի մասին էր Տեր Հիսուսի պատմածը. *«Մի մեծահարուստ մարդ կար, որ մի Տնտես ուներ. և նրա մասին ամբաստանություն եղավ, որպես թե վատնում է տիրոջ ունեցվածքը: Տերը կանչեց նրան և ասաց. «Այս ի՞նչ եմ լսում քո մասին. տո՛ւր քո տնտեսության հաշիվը, որովհետև այլևս Տնտես լինել չես կարող»: Տնտեսն իր մտքում ասաց. «Ի՞նչ պետք է անեմ, քանի որ իմ տերը տնտեսությունս ինձնից վերցնում է. հողի վրա աշխատել չեմ կարող, մուրալ ամաչում եմ: Գիտեմ, թե ինչ պիտի անեմ, որպեսզի տնտեսությունից հեռացվեմ, ընդունեն ինձ իրենց տները»: Եվ իր տիրոջ պարտապաններից յուրաքանչյուրին մեկ առ մեկ իր մոտ կանչելով՝ առաջինին ասաց. «Իմ տիրոջը ինչքա՞ն պարտք ունես»: Եվ սա ասաց. «Հարյուր տակառիկ ձեթ», և տնտեսը սրան ասաց. «Ա՛ռ քո մուրհակը և նստի՛ր ու անմիջապես գրի՛ր՝ հիսուն»: Ապա դարձյալ մյուսին ասաց. «Դու ինչքա՞ն պարտք ունես», և սա ասաց. «Հինգ հարյուր պարկ ցորեն»: Տնտեսը նրան ասաց. «Ա՛ռ քո մուրհակը և նստի՛ր ու գրի՛ր՝ չորս հարյուր»: Եվ տերը գովեց անիրավ Տնտեսին, որովհետև հնարամտությամբ գործեց, քանի որ այս աշխարհի որդիները ավելի հնարամիտ են, քան լույսի որդիները իրենց սերնդի մեջ»,* որովհետև վերջիններս իրենց խելքը ինչպես հարկն է չեն օգտագործում հավիտենական ճամփորդության համար:

Ամերիկայի մեծահարուստներից մեկը՝ Ռոքֆելլերը, երբ հանգստի էր անցել, թոռների խնամքով էր զբաղվում: Ուներ մի թոռնիկ, որն ուսումնատենչ չէր, անվերջ ծուլություն էր անում: Մի օր նա գալիս և պապից հարյուր դոլար է խնդրում: Ռոքֆելլերն ասում է. «Տղա՛ս, հարյուր դոլարը խնդիր չէ, ես քեզ հարյուր հազար կարող եմ տալ, բայց իմացիր՝ աշխարհում մարդիկ պետք է աշխատեն և այդպես դրամ վաստակեն: Հետևաբար դու էլ պետք է աշխատես այդ հարյուր դոլարը ստանալու համար»: Թոռը հարցնում է. «Իսկ ես ի՞նչ պիտի անեմ»: «Մեր ագարակի միջով մի առվակ է անցնում, նրա երկու կողմերում տնկիր հարյուր ծառ, օրվա վերջում կստանաս հարյուր դոլար»: «Շատ լավ»,- պատասխանում է թոռը: Կեսօրին պապը գնում է տեսնելու, թե ինչ է անում թոռը և տեսնում, որ սա մի ծառի տակ քնած է: Հարցնում է. «Ի՞նչ ես անում», և թոռը պատասխանում է, թե՝ աշխատում եմ: «Այս ի՞նչ աշխատանք է»,- հարցնում է պապը: «Մի՞թե չես տեսնում: Ես մի սևամորթի եմ վարձել ու աշխատեցնում եմ՝ ամեն ծառի համար 50 ցենտ տալով: Օրվա վերջում հիսուն դոլարը կտամ

նրան, իսկ մնացյալ հիսունն ինձ այսօր բավական է»: Ռոքֆելլերը հասկանում է, որ այս թոռն առնտրի մեծ շնորհ ունի և սկսում է նրա հետ այս ուղղությամբ զբաղվել և հետագայում իր գործերի մեծ մասը փոխանցում է նրան: Սա նշանակում է, որ մենք միշտ գնահատում ենք խելամտությունը, այն միշտ հիացմունք է պատճառում մեզ: Եվ մեր Տերն էլ է ասում մեզ, որ Աստված շատ է ուրախանում, երբ մենք խելամտորեն ենք գործում՝ հանուն մեր հավիտենական ճամփորդության: Մենք պետք է սիրաշահենք Աստծուն և ձեռք բերենք Նրա բարեկամությունը: Երբ մենք այս աշխարհում բարեկամներ ենք շահում, նրանք այնտեղ՝ մյուս աշխարհում են մեզ դիմավորելու: Սա այն Տնտեսի հնարամտության պես ողջախոհություն է ենթադրում: Եվ Տեր Հիսուսն էլ այս առակով կամենում է ասել, որ մեզ տրված այս աշխարհի հարստությունը հավիտենական չէ, որովհետև մենք Տնտես ենք միայն և ոչ մի իրական կալվածք չունենք այս աշխարհի վրա, ոչինչ մեզ չի պատկանում, և այն ամենը, ինչ տրված է մեզ, Տվողը հետ պիտի վերցնի ու հաշիվ պիտի պահանջի: Հետևաբար մենք բոլորս էլ միայն անիրավ տնտեսներ ենք և ոչ կալվածատերեր, և մեզանից ոչ մեկը չի կարող հաշիվ չտալ Աստծուն: Մենք բոլորս էլ մեր տնտեսությունից դուրս պիտի ելնենք, այսինքն՝ պիտի մեռնենք: Այս աշխարհը մեզ տրված մի ազարակ է, այս մարմինը՝ ժամանակավոր սեփականություն: Եվ նրանք, ովքեր չեն պատրաստվել Տիրոջը հաշիվ տալու համար, խավարը պիտի դիմավորի նրանց, ուր լաց պիտի լինի, ու ատամների կրճտոց, որովհետև չպատրաստվեցին այդ խավարն ու ցուրտը դիմագրավելուն: Իսկ նրանց, ովքեր պատրաստված են, լույսը պիտի սպասի, և հրեշտակներն ու բարի հոգիները նրանց պիտի առաջնորդեն դեպի երկնային բնակարաններ: Սա Աստծո խոսքն է, որ ասում եմ ձեզ: Ուրեմն եկեք մտածենք, կշռադատենք ու հարց տանք մեզ՝ ճշմարի՞տ է այս խոսքը, թե՞ ոչ: Իսկապես, մեր կյանքը մինչև գերեզմա՞ն է, թե՞ հետո շարունակություն է ունենալու: Եվ երբ որոշենք, որ շարունակվելու է, ապա պետք է բարեկամներ ստեղծենք մեզ համար հենց այս աշխարհում՝ մարդկանց օգնելով: Նայե՛նք, թե ինչ կա պակաս, ով է տխուր, որտեղ արցունք կա, որտեղ վերք ու հիվանդություն կա, այնտեղ էլ պիտի հասնենք: Եվ սա չպիտի անենք պարտադրված: Եվ եթե գիտակցաբար գործենք, Աստված պիտի նայի մեզ ու ասի, թե այս մարդը շատ մեղավոր է, շատ անիրավություններ է արել, սակայն այժմ Ինձ մոտ գալու համար գործում է խելամտորեն:

Այժմ էլ ուզում եմ խոսել ձեզ հետ միստիկ աստվածաբանության մասին, որպեսզի հասկանալի լինի մեր բարիք գործելու բուն իմաստը: Այն ամենը, ինչ անում ենք մարդկանց, ոչ թե Աստծո աչքին երևալու համար է, այլ հենց Աստծո համար է: Չէ՞ որ Տեր Հիսուսն ասաց մեզ, որ Ինքը որթատունկն է, իսկ մենք՝ ճյուղերը: Ուրեմն՝ ես, դուք, մենք, բոլոր ազգերը Քրիստոսի մարմնի ճյուղերն ենք: Հետևաբար, եթե այդ ճյուղերից մեկին օգնենք, Քրիստոսին օգնած կլինենք, եթե այս ճյուղերից մեկի վերքերը բուժենք, Քրիստոսին բուժած կլինենք: Ուստի, եթե այս մոտեցմամբ չդիտարկենք մեր անելիքները, ապա մեր բարերարությունը ինչ-որ տեղ կնմանվի սակարկության: Երբ օգնում ես ուրիշին, քեզ ես օգնում, Քրիստոսի մարմնի բարգավաճմանն ես նպաստում: Սա է ճշմարիտ բարությունը. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, քանի որ Իմ այս

փոքր եղբայրներից մեկին արեցիք այդ՝ Ի՛նձ համար արեցիք» (Մատթ. ԻԵ 40)։ Եվ, վստահաբար, վերջին Դատաստանի օրն էլ մեզ պիտի ասի. «... քաղցած էի, և Ինձ ուտելիք տվիք, ծարավ էի, և Ինձ ջուր տվիք խմելու, օտար էի, և Ինձ ձեր մեջ առաք, մերկ էի, և ինձ հագցրիք, հիվանդ էի, և Ինձ տեսնելու եկաք, բանտում էի, և Ինձ այցի եկաք» (Մատթ. ԻԵ 34)։ Եվ մենք զարմացած պիտի հարցնենք. «Ե՞րբ արեցինք այս ամենը», իսկ Նա պիտի բացի վարագույրը մեր աչքերի առջև, և մենք պիտի տեսնենք տիեզերական եղբայրությունը, մեր եղբայրությունը ոչ միայն մարդկանց հետ, այլև հրեշտակների, ամենայն արարածոց, բուսականության ու անշունչ տարրերի։ Երբ որևէ թշնամություն ենք անում մեկին, Աստված պիտի բերի մեր դեմ, իսկ երբ բարիք գործած լինենք, Աստված պիտի դիմավորի մեզ ժպտերես և ուրախ սրտով։ Սա էր ահա Տնտեսի կիրակիի մեզ տալիք ճշմարտությունը։ Եկեք, ուրեմն, մեր բարեգործությամբ բարեկամներ շահենք այս աշխարհում, և Աստված պիտի դիմավորի մեզ ժպտերես։ Չհոգնենք բարիք անելուց, քանզի դրանով հարստություն ենք դիզում երկնային արքայությունում։ Ձեզ, սիրելինե՛րս, մաղթում եմ հարստություն, այն հարստությունը, որ փոխանցվում է այն աշխարհը։ Այս է քրիստոնեության խորհուրդը։ Տերը օրհնի բոլորիդ։

## *ԿՐՈՆԱ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ*

*Տ. ՄՈՒՇԵՂ ԱԲԵՂԱ ԲԱԲԱՅԱՆ*

# ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ ԱՍՏԾՈ ԵՐԿՅՈՒՂ, ՄԱՀՎԱՆ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ, ԱՀԵՂ ԴԱՏԱՍՏԱՆ ԵՎ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՏԱՆՋԱՆՔՆԵՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԸՍՏ «ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ»

Մարդու փրկության և հոգևոր-բարոյական կատարելության մասին Սուրբ Գրիգոր Նարեկացու հայացքներում Աստծո երկյուղ, մահվան մտորումներ, Ահեղ Դատաստան և հավիտենական տանջանքներ հասկացությունները բացառիկ նշանակություն ունեն: Աստծո երկյուղը, Նարեկացու կարծիքով, մարդու հոգևոր կյանքը դնում է ճշմարիտ հունի մեջ, որը տանում է կատարելության: Մահվան մասին մտորումները դիտվում են որպես մարդուն հոգու փրկության առաջնորդող բացառիկ միջոց, իսկ Ահեղ Դատաստանի և հավիտենական տանջանքների հիշողությունը, ըստ Սուրբ Գրիգորի, մարդուն մղում են ողբով և Աստծո առաջ լացի միջոցով հոգևոր կատարելության հասնելու:

Մատյանի տարբեր մասերում, սակայն, այդ հարցի շուրջ իր մտորումները զուտ Աստվածաշնչյան հիմք ունեն:

Վերոնշյալ հասկացությունների մասին Սուրբ Գրիգոր Նարեկացու հայացքների ճիշտ ընկալման համար կարևոր է հաշվի առնել նրա ստեղծագործական ժամանակաշրջանը՝ 1000 թ., երբ ողջ քրիստոնյա աշխարհը, այդ թվում նաև Հայաստանը, Քրիստոսի Երկրորդ Գալուստի և Նրա Ահեղ Դատաստանի սպասման մեջ էր: Այսպիսի պարագաներում և հայտնութենական (ապոկալիպտիկ) սպասումներով լի միջավայրում Սուրբ Հոր համար, կարծում ենք, կարևոր էր հավատացյալին զգուշացնել գալիքի մասին, որի համար էլ Մատյանի գրության պատճառներից և նրա թեմաներից մեկն եղել է Սուրբ Գրիգորի վախճանաբանական մտորումները, որի մասին նա գրում է հենց Ա բանում.

*Բայց քանզի **ձայնդ ահաւոր դատաստանիդ հատուցման,***
*Ուժգինս հնչեցեալ ի ձորն վրէժխնդրութեան*[1]*,*
*Կրկինս ինձ երկնէ մարտից յարուցմունս՝*
*Այժմէն զուշակեալ շարժմունս յուզմանց ներհակականաց,*
*Որ յիմումս անձին ցուցանի...*
*Վասն զի թէ՝ Մերձ է աւր Տեառն, որպէս Գիր ասէ...*[2]
***Զհանդերձեալսն ինձ կերպաւորեն,***
*Ապա եւ յաւէտ մերձեցաւ ի վերայ իմ*
*Արքայութիւնն Աստուծոյ մարմին եղելոյ...*
*Ահ, զուբ եւ որոգայթ անճողոպրելի,*

[1] Հմմտ. Հովել Գ 2:

[2] Տե՛ս Հովել Գ 2, 14:

*Ըստ մարգարէին եւ առակողին*[3]*,*
***Տագնապաւ մեծաւ առ դուրս ինձ հասեալ,***
*Զամաւթն մշտնջենաւոր աստէն գծագրեն (Ա, բ)*[4]*:*

Մեջբերված հատվածից ակնհայտ է, որ Նարեկացին հաճախակի է վկայակոչում աստվածաշնչյան տեքստերը և այնտեղից օրինակներ վերցնում:

Տեղին է նշել, որ Սուրբ Գրիգոր Նարեկացու մոտ շատ քիչ դատողություններ են հանդիպում երկյուղ զգացումի բնության մասին: Հավատացյալների ամբողջ ուշադրությունը նա դարձնում է այն բանին, որ Աստծո երկյուղը սթափեցնում է մեղքերով թունավորված գիտակցությունը, վանում է մարդուն աշխարհի ունայնությունից և մեղավորին բարեպաշտության դրդում: Նարեկացին ջանում է սեփական փորձից ընթերցողին ակներև օրինակներ տալ, որ Աստծո երկյուղը, մտորումները Ահեղ Դատաստանի, մահվան և դժոխային տանջանքների մասին, մարդուն տանում են մեղքի գիտակցման, ինքնադատապարտման, զղջումի, խոստովանության, ապաշխարության և աղոթքի, այսինքն՝ այն ամենին, որոնցով ձեռք է բերվում փրկությունը, որին հասնելը կապված է չարի դեմ անդադար պայքարով և մեծ դժվարությունների հետ:

Սուրբ Գրիգորը Մատյանում մեծ ուշադրություն է դարձնում Վերջին Դատաստանի մասին մտորումներին, քանզի անկեղծորեն հավատում է դրանց փրկակար ուժին: Նա հավատում է Քրիստոսի Երկրորդ Գալուստին, Ահեղ Դատաստանին, հատուցմանը, արդարների հավիտենական երանությանը և մեղավորներին սպասվող տանջանքներին: Այդ ամենը մարդուն մտորումների առիթ են տալիս և միաժամանակ երկյուղ ներշնչում: Սուրբ Գրիգոր Նարեկացին թվարկում է, թե ինչին պետք է երկրպագել, հավատալ, ինչը փառավորել, խոստովանել և ինչից զարհուրել.

*Զնշան խաչիդ փրկութեան՝ զոր* ***երկրպագեմ,***
*Զյարութեանն ճշմարտութիւն՝ որում* ***հաւատամ,***
*Զփառացդ Քո յայտնութիւն՝ զոր* ***փառաւորեմ,***
*Զդատաստանիդ ահաւորութիւն՝ զոր* ***խոստովանիմ,***
*Զքանիցդ յանդիմանութիւն՝ յորմէ* ***զարհուրիմ****... (ՀԳ, գ):*

Նարեկացին առանձնացնում է նաև երկյուղն աստվածային այնպիսի հատկանիշներից, որոնք մարդկանց աչքերում Տիրոջը դարձնում են ահեղ Դատավոր. ամենակարողություն, արդարություն, անկաշառելիություն, անհասանելիություն, անաչառություն.

*Եւ քանզի սկիզբն կալայ խաւսել ընդ Քեզ...*
*Յիրաւի սարսեալ, դողացեալ տագնապաւ մեծաւ յաւէտ* ***երկնչիմ,***
*Վասն զի ահաւոր եւ անտանելի եւ ի սահմանէ բանի փախչելի,*
*Յիշատակ անճողոպրելի անաչառդ Քո ատենի՝*
*Ի կշտամբումն իմ՝ պարտաւորի, Արարիչ երկնի եւ երկրի (Դ, ա):*

Իր մտքերը Նարեկացին տարբեր միջոցներով և Մատյանի տարբեր մասերում բազմիցս կրկնում է՝ խրատելով, որ Աստծո ամենուրեքության, ամենատեսության, արդարադատության, հզորության և արդարության հանդեպ մարդու հավատի զո-

---

[3] Տե՛ս Եսայի ԻԴ 17: Երեմիա ԻԸ 43, Առակաց Ա 27:

[4] **Գրիգոր Նարեկացի,** Մատեան ողբերգութեան, աշխատասիրությամբ՝ Պ. Խաչատրյանի և Ա. Ղազինյանի, Երևան, 1985: Այսուհետև այս հրատարակությունից օգտվելիս տողատակում նշելու ենք միայն՝ **Գրիգոր Նարեկացի,** Մատեան ողբերգութեան, և էջը, իսկ հոդվածում՝ Մատյան:

բացմանը զուգընթաց, մարդու մեջ ծնվում է նաև երկյուղ Նրա հանդեպ.

*Եւ արդ, ես՝ երկրածինս մարդ,*
*Կենցաղականաւ անկայուն գոյիւս զբաղեալ...*
*Քանզի որո՞վք դիմաւք վերագրեցելովք նշանակաւք աղարտեցելովք*
*Յանդգնեցայց լինել յանդիման Քում դատաստանիդ, ո՛վ իրաւադատ,*
*Ահաւոր, անճառ, անպատում, հզաւր, Աստուած բոլորից (Ե, ա):*

Արդեն իսկ Մատյանի առաջին գլուխներում Սուրբ Գրիգորը խոսում է Աստծո երկյուղի, Նրա Ահեղ Դատաստանի մասին և աստիճանաբար զարգացնելով իր միտքը՝ եզրակացնում է, որ դրանց մասին մշտական հիշողությունը մարդուն մեղքերից հեռու պահելու լավագույն միջոցն է:

## ա. Ահեղ Դատաստան

Աստծո երկյուղը մարդու հոգում ծնվում է Քրիստոսի Դատաստանի պատկերացումներից, որոնք սուրբ Գրիգորը նկարագրում է ահավոր և մռայլ գույներով[5], որպեսզի մարդկանց սրտերում հոգեփրկիչ երկյուղ արթնացնի և ապաշխարության դրդի.

*Իսկ ինձ՝ ապաւինելոյս ի Քեզ, Տէր Յիսուս...*
*Որ զալստեանդ Քոյ ակն ունիմ...*
*Ի յոյս Քո անկանիմ եւ զզարշապարիդ հետս համբուրեմ,*
*Զպարտութիւնս **խոստովանիմ եւ զմեղանս հրապարակեմ**...*
*Ի լրութենէ համբաւոյն **սարսեմ եւ յիշատակաւ ահին կորնչիմ,***
***Կերպարանաւք ատենին հալիմ եւ սպառնալեաւք մեծիդ մեռանիմ**...*

*( ԿԶ, է):*

Երկնային թագավորը «վճիռ հատուցման ի ձեռին Իւրում» (ՀԹ, բ) սկսելու է դատել յուրաքանչյուրին: Այնտեղ պահապան հրեշտակը մեղադրող է դառնում: Նարեկացին գրում է, որ այդ օրը ամեն ծածուկ բան հայտնվելու է և հրապարակվելու. «Ծածկութիւն գործոց հրապարակին և աներեւոյթք կրից մեր յայտնին» (ՀԹ, բ): Անպատասխան և վախեցած մարդը բացահայտված մեղքերով կանգնելու է Ահեղ Դատավորի առաջ: Ոչ միայն մեղավորը, այլև «որ փառաւորեալքն են երանութեամբ սարսեն դողալով... երեսաց մեծ դատաստանին», երբ «հրեշտակն պահպանողական» նրան «իրաւամբք ամբաստանեսցէ».

*Եւ հատուցանողն ահաւոր՝ արդարութեամբ յանդիմանեսցէ...*
*Զոմանս ի կեանսն հրաւիրեն,*
*Եւ զոմանս յամաւթն դատապարտեն...*
*Ոմանց պսակս լուսապաճոյճս մատուցանեն,*
*Եւ այլոց կորուստ մահու բողոքեն...*
*Յիւրաքանչիւր մարմինս անպակաս զրութեամբ իսկոյն երեւին,*
*Եւ խորութիւնք անճառիցն՝ կնքելոցն յիմաստից աստեացս*

---

[5] Տե՛ս ԿԸ, բ:

*Առաջի աչաց մերոց կերպարանին...*
*Զտանջանարանսն բազմապատիկս*
*Անձամբ անձին աստէն իսկ պատրաստեցի.*
*Զիա՞րդ մխիթարեցայց համառաւտեալս յուսոյ (ՀԹ, դ):*

Դատաստանի մասին Սուրբ Գրիգորի անունից ներկայացված նման պատկերներն ու մտորումները իրոք կարող են մարդու մեջ վախի զգացում առաջացնել, սթափեցնել նրա միտքը և բերել ճշմարիտ ուղու: Սակայն քրիստոնյան ավելի սաստիկ երկյուղ ու վախ կարող է զգալ սեփական դատավճիռը պատկերացնելով.

*Ես՝ եղկելիս, աւանդակորոյս սատակման որդիս, ո՞ւր երեւեցայց,*
*Որ ոչ միայն չեմ պսակելոց,*
*Այլ եւ պատուհասն իմ՝ անտանելի,*
*Եւ կորուստն անսպառելի (ՀԹ, դ):*

Ծանր պատիժը և անդառնալի կորուստը մեղավորների հավիտենական տանջանքն է դժոխքում, որը Արդար Դատավորի դատավճիռն է: Քանի որ այնտեղ «ի տագնապի տանջանաց» և «ի լուր երկիւղին» ահ է առաջանում, ապա միայն մտորումները սրանց մասին ընդունակ են հոգում երկյուղ առաջացնել: Իր այս միտքը Նարեկացին բացահայտում է հետևյալ հատվածում, ասելով, որ «տեսեալ մտացս իմաստիւ զապագայիցն դիպուածս», փրկության համար Աստծուն աղոթելուց բացի մարդուն ոչինչ չի մնում.

*Աստանաւր տեսեալ մտացս իմաստիւ զապագայիցն դիպուածս,*
*Բաւականացեալ ի լուր երկիւղին*
*Ի տագնապէ տանջանաց ահին համբաւով՝*
*Կամաւք Քո բարեաց զերծեալ ապրեցայց... (ՀԹ, ե):*

Մահից հետո՝ մյուս աշխարհում, մեղավորի զղջումը և փրկության համար առ Աստված աղոթքները անօգուտ և ուշացված կլինեն, նրանք անընդունելի և անպատասխան կմնան Աստծուց, քանի որ «վճար եղեալ զթութեանն առ իս»[6] (ՀԹ, դ):

## բ. Մահվան մտորումներ

Այսպիսի վախճանաբանական հեռանկարով է Նարեկացին մտորում մահվան մասին: Մահը մարդու երկրային կյանքի եզրափակիչ պահն է, երբ դադարում է նրա կենսագործունեությունը: Մարդն ստեղծված է կյանքի համար, և մահն անբնական է նրա աստվածաստեղծ բնությանը: Իր անկմամբ, սակայն, մարդը կորցրեց իր նախկին երանելի վիճակն ու դարձավ մահկանացու և ապականացու: Ըստ Սուրբ Գրիգորի, մահվան պատճառը մարդ ինքն է.

***Ե՛ս** խորթացայ, զերեցայ եւ զայթակղեցեայ,*
***Ե՛ս** նզովեցայ, ե՛ս թշուառացայ, արբեցայ եւ վատթարացայ,*
***Ե՛ս** ընկլուզայ, ե՛ս խաբեցայ, ե՛ս անաւրինեցայ,*
***Ե՛ս** ապականեցայ, մահացայ եւ իսպառ եղծայ (ԿԵ, դ):*

Մահվան սպասումով մեղավորն սկսում է ողբալ, հեծել իր մեղավոր վիճակը: Մահվան երկյուղն անդամալուծում է մեղավորին և կարծես թարմացնում նրա հիշողությունը: Այդպիսի վիճակում մարդու հայացքի առջևով անցնում են նրա բոլոր մե-

[6] Հմմտ. Մատթ ԻԵ 11-13: Ղուկ. ԺԳ 25:

ղավոր գործերն ու անօրինությունները (Է, Ը):

Սուրբ Հոր համար մահվան մտորումները բացառիկ և նախընտրելի արժեք ունեն, որը տալիս է փրկարար արդյունքներ: Մահվան վախը մեղավորի հոգում բնակվելով՝ ստիպում է հոգևոր-բարոյական ինքնավերլուծություն կատարել: Մարդն սկսում է ա-ռավել գիտակցված, լուրջ վերաբերվել խոստովանությանն ու ապաշխարությանը: Մերկացնելով սեփական մեղքերն ու արատները՝ մահվան պատճառները, մեղավո-րը գթության խնդրանքով դիմում է Աստծուն.

*Ողորմեա՛ց, Տէր, մահու մեղապարտիս,*
*Յաւուր արձակման շնչոյս կենդանութեան...*
*Զանփախչելին ճանապարհ յաչս բերելով՝*
*Մտացս տեսմամբ ամենայնիւ վտանգեալ...*
*Թշուառացեալ կիսամեռութեամբ, դիմաւք այլայլութեան,*
*Տատանմամբ մատանցս, կարկամ հառաչմամբ...*
*Ի խորոցս աներևույթից զգործեցելոցս ողբալով հառաչեմ (ՀԳ, բ):*

Բացելով Սուրբ Հոր մտքերը, կարելի է ասել, որ մարդը, մահվան սարսափից և Աստծո զայրույթի երկյուղից սթափվելով, քանի դեռ ողջ է, ապաշխարությամբ և ա-ղոթքով կարող է մեղքերից ազատվել, սակայն մահը վերջ է դնում ապաշխարությա-նը, փակում բոլոր դռները և խլում ամեն տեսակի մխիթարություն: Այստեղից պարզ է, թե ինչո՛ւ է մեղավոր մարդու կողմից մահն ընկալվում ոչ թե որպես երանություն, այլ որպես մեծ վիշտ, քանզի այն ազդարարում է դաժան տանջանքների սկիզբը: Սուրբ Գրիգոր Նարեկացին, մեղավորին սթափեցնելու համար, իր մահը նկարագ-րում է ցնցող պատկերներով.

*Յորժամ, որ այժմս բանապաճոյճ,*
*Խրոխտաձայն, սիգացող, բարձրապարանոց,*
***Անկեալ դնիմ դի անկենդան, կարկեալ ի խաւսից...***
*Խփեալ շրթամբք, կափուցեալ աչաւք,*
*Տախտակ անշարժուն, կոճղ կիսայրեաց,*
*Արձան անզգայ, պատկեր անբարբառ, զոյութիւն անշունչ,*
*Ողորմելի տեսիլ, աշխարհելի կերպարան,*
*Ողբալի աւրինակ, եղկելի դէմք,*
*Արտասուելի նմանութիւն, լռեցեալ լեզու...*
*Թալկացեալ մարմին, ժողխեալ որովայն...( ՀԳ, բ-գ):*

Այն ամենը, ինչ բացվել էր Սուրբ Գրիգորի հոգևոր հայացքին, արտացոլվել է Մատյանում: Սուրբ Հայրը, մտորելով մահվան մասին, բերում է բազմաթիվ օրինակ-ներ, որտեղ հենց տանջանքներ կամ երանություն ճաշակած մահացածներն իրենք են խոսում տեղի ունեցածի մասին և խրատում բարի գործեր կատարել: Նարեկացին օ-րինակ է բերում աղքատ Ղազարոսին ու Մեծատունին և Սուրբգրային այլ անձերի (ՀԱ, դ):

Սուրբ Գրիգորը գրում է կյանքի կարճատևության և փոփոխականության մասին (ՀԱ, դ) ու քրիստոնյաներին կոչում յուրաքանչյուր օրն օգտագործել հոգևորի օգտին, քանզի անիմաստ ժամանցը ևս մեկ քայլ է դեպի մահ: Նա սովորեցնում է աղոթել, որ վերջին օրն անսպասելի չգա, և մեղավորն Աստծո առաջ չհայտնվի անպաշտպան ու առանց ապաշխարության.

*Մի՛ ածեր, ողորմած, ինձ աւր տարաժամ ի համառաւտս երբի...*

*Եւ մի՛ իբր յանկարծադէպ հինից ասպատակ՝*
*Գիշեր մահուն ինձ պատահեսցի:*
*Մի՛ պահեսցի ինձ սառն մեղացս...*
*Մի՛ հանգիստն մահ բերիցէ,*
*Եւ մի՛ ննջումն ի սատակումն յառաջեսցէ (ՉԲ, գ):*

Հոգու մահը, ըստ Սուրբ Գրիգոր Նարեկացու, մարմնական մահից շատ ավելի ահավոր է, քանզի վերջինով ավարտվում է մարդու ժամանակավոր կյանքը, իսկ հոգու մահվամբ՝ մարդ զրկվում է Արարչի հետ հաղորդակցությունից: Մեղավորը միայն մահվան մտածումից արդեն սարսափում է՝ պատկերացնելով սպասվող չարիքը, քանզի նա գիտակցում է սեփական մեղքը. «Զառիթսն մահու դիպուածս դժոխարմատ ծառոյս դառնութեան պտուղք...» (ԾԶ,ա)[7]:

## գ. Հավիտենական տանջանքներ

Մեղավորության հստակ գիտակցումը և Ահեղ Դատաստանի ժամանակ նրա հետևանքների պատկերացումը մարդուն բերում են հատուցվող հատուցման մտքին: Հիշելով Վերջին Դատաստանի ժամանակ Աստծո արդարադատության մասին՝ մեղավորը արցունքով, զղջալով փորձում է շարժել Տիրոջը գութը: Նա հստակ պատկերացնում է դժոխային տանջանքների սարսափը, որն ավելի է ուժեղացնում նրա ապաշխարությունը, քանզի նա վախենում է այնպիսի տանջանքներից, ինչպիսիք «չար» են՝

---

[7] Ուշագրավ է այն հանգամանքը, որ գիտակցված մահվան հասկացությունը մեկնաբանելիս Նարեկացին դիմում է «իմաստակի ումեմն արտաքնոյ» խոսքին.

Քանզի եւ որպէս իմաստակի ումեմն արտաքնոյ
Բարւոք թուեցաւ չար ասել զմահ՝ առ չիմանալոյն պատճառի,
Եւ ես վկայեմ իմովս բանիւ.
Քանզի իբր զանզգայ պաճարս անասնոց՝
Մեռանիմք, եւ ոչ զարհուրիմք,
Կորնչիմք, եւ ոչ հիանամք,
Թաղեցեալ լինիմք, եւ ոչ խոնարհիմք,
Տարագրիմք, եւ ոչ տագնապիմք,
Եղծանիմք, եւ ոչ զղջանամք (ԾԵ, դ, 465):

Դժվար է ճշտել, թե ում նկատի ունի Նարեկացին «իմաստակ» ասելով և կամ գիտակցված մահվան մասին ում միտքն է զարգացնում (այս մասին եղած տարակարծությունների մասին տե՛ս **Գ. Աւետիքեան,** Նարեկ աղօթից համառօտ և զգուշաւոր լուծմամբք բացայայտեալ միանգամ և այժմ երկրորդ անգամ յաւելուածով, Վենետիկ, 1827, էջ 280: **Գրիգոր Նարեկացի**, Մատեան ողբերգութեան, էջ 1063-1064): Կարծում ենք, որ մահվան փաստը, որին մարդիկ իրենք ականատես են լինում, պետք է գիտակցված և արդար կյանքի զգուշացնող պատճառ նկատել: Այդ ժամանակ մահը վաստակված և գիտակցված է լինում: Մարդ իրավունք չունի վատնել Աստվածատուր շնորհը, ուրիշներին վնաս պատճառել ու հետո մահվան առաջ դողալ: Կարծում ենք, որ մեր ենթադրության լավագույն կռվան են Նարեկացու հետևյալ խոսքերը.

Իսկ հանգիստ ասել երջանկին Յոբայ զվախճան մարդոյ,
Եւ ես խոստովանիմ զսոյն ընդ սրբոյն,
Եթէ ոչ ունէի զբեռն աշխատութեան մահացու գործոց ստանձնեալ ( ԾԵ, ե, 465):

*...քան զտարտարոսն,*
*Եւ սաստիկ, քան զգեհենն,*
*Թունաւորագոյն, քան զորդունսն,*
*Տարակուսելի, քան զխաւարն,*
*Երկիւղագին, քան զխորխորատն... (ԺԹ, բ):*

Դրանից զղջումն ավելի է պարուրում մարդու սիրտը, և նա ապաշխարության ուղին բռնելով՝ մաքրվում և ազատվում է հոգևոր մահից ու գալիք տանջանքից: Արտահայտված բոլոր մտքերը, Սուրբ Հայրը հիմնավորելով մարգարեների խոսքերով՝ հիանալի արտահայտել է երկու հատվածներում.

*Արդար ես յիրաւունս Քո եւ յաղթող ՝ ի դատաստանի.*
*Եթէ մահու մատնես, ճշմարիտ են գործք Քո*[8]*,*
*Եթէ դատապարտես ՝ աստուստ սկսեալ զտանջողականն կշտամբութիւն,*
*Ստոյգ են հատուցմունք Քո...*
*Թէ զկենդանութիւն շարժմանս բարձցես,*
*Թէ զբանիս զաւրութիւն ունայնացուցես...*[9]
*Թէ դիւաց չարաց մատնեսցես...*
*Եւ թէ այլ ինչ նորոգ արարած* ***տանջանարանաց կազմեսցես...***
*Եւ քանզի յաւէտ տպաւորագոյն են նմանութիւնք փոխատրութեանցն*
*Առ ազգակցութիւն մեղանացս,*
*Իբր պատկերակիցք, միատեսակք, զուգաշաւիղք ՝*
*Նշանակիչք այսր խորհրդոյ,*
***Արդ կարեւոր է խոստովանել եւ յանդիմանել զերեսացն ծածկոյթս ՝***
***Առ ծանաւթութիւն խնդրողին*** *(ԺԹ, բ-գ):*

Նարեկացին չի խոսում տանջանքների տեսակների և ձևի մասին, և միայն ընդգծում է, որ նրանք լինելու են սարսափելի և հավիտենական: Սուրբ Գրիգոր Նարեկացու կարծիքով դժոխքի տանջանքների պատկերացումները երկյուղ առաջացնելով՝ մարդուն սովորեցնում են վախենալ Աստծուց, Ով իշխանություն ունի դատապարտելու դժոխքի, ուր միայն «դժնդակք և տաժանելի օթեւանք կան» (Ը, ա):

## դ. Աստծո երկյուղ

Սուրբ Գրիգորը բոլոր դեպքերում հավատում է Աստծո արդար հատուցմանը, որի հանդեպ սարսափը ապաշխարություն է ծնում: Աստծո երկյուղը, Ում առաջ «դողում են բոլոր արարածները», չի ճնշում մարդու հոգին: Սուրբ Գրիգորը Աստծո երկյուղը անվանում է «ունողն յարկին կառուցման» (ԻԴ, գ)[10], որը մարդուն հնարավորություն է տալիս ապաշխարությամբ սրտից վանել հուսահատությունն ու ունայնությունը, որոնք առաջանում են սեփական մեղավորության գիտակցությունից և գալիք հատուցման ծանրությունից: Ապաշխարության միջոցով Տիրոջ երկյուղը մեղավորի հոգին լցնում է փրկության հույսով.

---

[8] Տե՛ս Սաղմ. Ծ 6; Հռոմ. Գ 4:

[9] Տե՛ս Ամոս Ը 11:

[10] Տե՛ս Սիրաք ԻԷ 3:

*Արդ, այսքան ամենաթշուառ եւ ողորմագին տարակուսանացս,*
*Ի վերայ միմեանց բարդելոց...*
*Վտանգ սատակման մահու գուշակին...*
*Ազդեն ինձ տագնապս՝ վէրս պահելս անխնամարկելիս...*
*Յորոց նեղութեանց չարաչար ճնշեալ* ***աղաղակ ձայնիս,***
***Խառնեալ արտասուաւք, կողկողագին թախծանաւք հոգւոյ...***
*Յերկրաստեղծիցս նախատակաց ընդ իմ մաղթողաց յերկինս առաքեմ:*

***Վերջին հեծութեամբս եւ ես ընդ նոսին***
***Արտասուաւք ողբոց, ամենեքումբք նուիրողաւք,***
*Ջաղերսանս ըղձիցս ի ստորնայնոցս աստի յերկինս առաքեմ:*
*Շնորհեա՛, Տէր, անդորրութիւն կենաց հանգստեան... (ԻԳ, դ):*

Նարեկացու այս խոսքերից տեսնում ենք, որ Տիրոջ երկյուղից ծնված ապաշխարության զգացումի արտահայտություններից են արցունքները: Այսպիսով, Աստծո երկյուղը, ծնելով ապաշխարություն, մեղավորին հասցնում է մշտական լացի, վշտի և հանգիստ կյանքի աղերսանքի: Բերված հատվածի վերջին խոսքերը ցույց են տալիս, որ երկյուղը ծնում է նաև մեղքերը քավելու անընդհատ աղոթքի ցանկություն: Քրիստոնյայի ամբողջ կյանքը ներծծված է աղոթքով, առանց որի նա չի կարող փրկվել: Աղոթքով է ուղեկցվում հոգին մեղքերից մաքրող ապաշխարությունը: Սրտում երկյուղ ունենալով, մեղքերի մեջ թաղված մարդը, աղոթքով կանգնելով Աստծո առաջ, երաշխավորված է հոգևոր մոլորությունից: Տիրոջ երկյուղով առաջնորդվելով՝ նա աստիճանաբար սովորում է ճիշտ աղոթել: Վերջ ի վերջո, խիղճը տանջող այս հարցերին, թե.

*...որո՞ց խնդրոց արժանաւոր վարկանելով զիս՝ մատչիմ աղերսել.*
*Արքայութեա՞նն, յորմէ վրիպեցայ,*
*Թէ փառա՞ցդ վայելչութեան, յորմէ զրկեցայ,*
*Թէ կենա՞ցդ անմահականաց, յորմէ հերքեցայ,*
*Թէ ընդ հրեշտակսն պարակցութեա՞ն, յորմէ տրոհեցայ...*
*Թէ հայրենի ծոցո՞յն հարազատ, յորմէ ընկեցայ (ԻԴ, ա[11]):*

Մեղավորը գտնում է նաև պատասխաններ, որ Աստծո՛ւց պետք է տանջանքների թեթևացում խնդրել և Նրան հնազանդ լինել.

*Քանզի ո՛չ համարձակի խնդրել Իւր զարքայութիւնն,*
*Այլ զտանջանացն թեթեւութիւն,*
*Ո՛չ ընդ կենդանեացն ի լոյս,*
*Քան թէ ընդ զերեզմանականացն զգայական շնչովն՝ ի խաւար,*
*Ո՛չ ընդ ամբարձեալսն, այլ ընդ բեկեալսն եւ ընդ խորտակեալսն ( Լ, բ):*

Փրկարար երկյուղը իր վրա է հրավիրում Ամենակարող Աստծո օգնությունն ու պաշտպանությունը: Մահվան, Դատաստանի և տանջանքների մասին մտորումները մարդու հոգևոր փորձառության արտացոլումներն են, զգացմունքի հոգևոր-բարոյական կողմը, որն ամրապնդում է կրոնական կյանքը և փրկարար նշանակություն ունի, ինչը և Սուրբ Գրիգոր Նարեկացին փայլուն կերպով ցույց է տվել Մատյանում:

Անկասկած է, որ Նարեկա սուրբը հավատարիմ է մնում աստվածաշնչյան սկզբունքին՝ իմաստության սկիզբը Տիրոջ երկյուղն է: Նրա համար իմաստությունը այն որակն է, որը մարդ պետք է ձեռք բերի մահից առաջ կյանքը ճանաչելու համար:

---

[11] Տե՛ս նաև շարունակությունը:

Մովսես մարգարեի վկայությամբ, սերն ու երկյուղը մարդուն տանում են առ Աստված[12], և առաջնորդում են նրան փրկարար ճանապարհին, որովհետև նրանք են աստվածահաճո կյանքի ու իմաստության սկիզբն ու հիմքը[13]:

Աստծո, որպես խիստ Դատավորի, մահվան, Ահեղ Դատաստանի և դժոխքի տանջանքների մասին մտածող մարդու ներսում ծնված Աստծո երկյուղը մարդուն տանում է մեղավորության գիտակցման և փրկության համար ինչ-որ բան ձեռնարկելու: Մեղավորության զգացում, ինքնադատապարտում, զղջում, խոստովանություն, ապաշխարություն, աղոթք՝ ահա թե ինչեր է ծնում փրկարար երկյուղը: Այս շրջափուլերով անցնելով՝ քրիստոնյան աճում է հոգևոր կյանքում, ներքնապես կատարելագործվում, մաքրվում, հոգեպես հարստանում և, կանգնելով ճշմարիտ ճանապարհին, զորանում փրկության հույսի մեջ:

Եզրակացնելով պետք է հաստատենք, որ քրիստոնեական ուսմունքի այնպիսի ավանդական թեմաները, ինչպիսիք են Աստծո երկյուղը, մահվան, Ահեղ Դատաստանի և հավիտենական տանջանքների մասին մտորումները Նարեկացու կրոնաբարոյական հայացքների ընդհանուր համակարգում զբաղեցնում են զգալի, եթե չասենք գլխավոր տեղը:

Անհրաժեշտ է նշել, որ Նարեկացին այդ հարցերին կարևոր փրկաբանական նշանակություն է տալիս, ինչի մասին վկայում են հոգևոր անտարբերության մեջ գտնվող հոգիներին ուղղված ապաշխարության և կյանքի ուղղման իր կոչերն ու արտասվալից աղերսները: Սակայն սխալ կլիներ զալիք հավիտենականության խիստ գերակշռող նրա բնութագրումների մեջ տեսնել միայն հովվական-մանկավարժական հնարք մեղավորներին ուղղելու համար: Ընդհակառակը, հարկ է ընդգծել, որ նրա ներկայացրած սարսափի, վախի, տառապանքների, հոգին պարուրող ապրումների ողբերգական պատկերները հիմնված են նրա անձնական մտահայեցողական փորձի վրա:

Նարեկացին խոսում է յուրաքանչյուր մարդու համար մահվան անդառնալիության և անխուսափելիության մասին: Սուրբ Գրիգոր Նարեկացու Մատյանը, որը գրվել է հազարամյակների սահմանագծում, հիմնված է վախճանաբանական հայացքների և հեղինակի՝ դրանց հետ կապված կրոնաբարոյական ապրումների վրա, որի նպատակն է ժամանակակիցներին և հետագա սերունդներին կոչ անել ապաշխարության և բարեպաշտ կյանքի:

Անվիճելի ապացույցը, որ Մատյանի հեղինակի նպատակը զուր չէր, կենդանի արձագանքն է, որն այն գտել և շարունակում է գտնել մարդկանց հոգիներում:

---

[12] Հմմտ. Բ. Օրինաց Ժ 12:

[13] Տե՛ս Սաղմ. ՃԺ 10; Առակ. Թ 10; ԺԴ 27; ԺԹ 23:

*Տ. ՀՈՎԱԿԻՄ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

# ԷԿՈՒՄԵՆԻԿ ՇԱՐԺՈՒՄԸ 20-ՐԴ ԴԱՐՈՒՄ ԵՎ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՍ ՇԱՐԺՄԱՆԸ

«Էկումենիզմ» բառն առաջացել է հունարեն (oikoumene) «Օյկումենե» բառից և նշանակում է բնակեցված աշխարհ, տիեզերք[1]: 20–րդ դարում այս անվանումը բնորոշ է դառնում մի շարժման, որը նպատակ է հետապնդում մերձեցնել բաժանված Եկեղեցիները՝ սերտացնելով Եկեղեցիների միջև գոյություն ունեցող հարաբերությունները և նպաստելով նրանց համագործակցությանն ու երկխոսությանը:

Ոմանք կարող են առարկել, որ նախկինում ևս տեղի են ունեցել շփումներ, երկխոսություններ ու հարբերություններ: Սակայն, մեր խորին համոզմամբ, նախորդ շրջանում սույն հարաբերությունները միարարական փորձեր էին: Եկեղեցու նվիրապետության, ավագության յուրահատուկ ընկալումները և հավասարը հավասարի հետ երկխոսելու սկզբունքի բացակայությունը բնականորեն խոչընդոտ էին հանդիսանում:

20–րդ դարի էկումենիզմն էականորեն տարբերվում էր նախորդ շրջանների միարարական փորձերից. այն աչքի է ընկնում մի շարք կազմակերպությունների երևան գալով, որոնք հանդիպման վայր են դառնում բոլոր եկեղեցիների համար: Այսօր մենք հաճախ օգտագործում ենք «երկկողմանի», «եռակողմ», «քառակողմ» կամ «բազմակողմ» բանակցություններ եզրերը:

Էկումենիզմը 20-րդ դարին բնորոշ հասկացություն է: Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի առաջին գլխավոր քարտուղար Վիսեր դե Հուֆտն իր հուշերում գրում է, թե Հառնակի և բողոքական այլ աստվածաբանների ազդեցությամբ իրենք ուղղափառությունը համարում էին քարացած միջնադարի արտահայտություն: Իսկ արևմտյան բողոքական միսիոներները ուղղափառներին ու կաթոլիկներին հավասարաբար հեթանոսներ էին համարում[2]:

Դրա հիմնական պատճառը համագործակցության պակասն էր և միմյանց չճանաչելն ու չընդունելը:

Էկումենիկ շարժումը ջանքեր է գործադրում Եկեղեցիների և կրոնական կազմակերպությունների փոխհարաբերություններին նոր որակ հաղորդել և այդ նպատակով ստեղծել է բազմաթիվ կառույցներ, որոնց մեջ խոշորագույնը Եկեղեցիների Համաշխարհային խորհուրդն է: Կան նաև տարածաշրջանային էկումենիկ կազմակերպություններ[3] և Եկեղեցիների Ազգային խորհուրդներ[4]: Մինչ Եկեղեցիների Համաշ-

[1] **Ղազարյան Ա.**, Էկումենիկ շարժում, Քրիստոնյա Հայաստան, Երևան, 2002, էջ 358:

[2] **Եղիայեան Բ**, Հայ Կաթոլիկ և Աւետարանական Հարանուանութեանց բաժանումը ԺԹ դարում, Անթիլիաս, 1971 թ., էջ 165-315:

[3] Այս կազմակերպությունները ստեղծվել են 20-րդ դարի կեսերից: Դրանցից առաջինը ստեղծվել է 1957 թ. Հնդկաստանում: Դա Արևելյան Ասիայի Քրիստոնեական Եկեղեցիների Կոնֆերանսն է: Հետագա 25 տարիների ընթացքում ստեղծվել են 6 այլ տարածաշրջանային էկումենիկ կազմակերպություններ: Յուրաքանչյուրն ունի իր զարգացման ուրույն պատմությունը: Դրանք հետևյալներն են. 1. Համայն

խարհային Խորհրդի ստեղծվելը երևան էին եկել այնպիսի կազմակերպություններ, ինչպիսիք էին «Հավատք և Կարգ», «Կյանք և Գործ», «Միսիոներական Միջազգային Խորհուրդ» կազմակերպությունները[5]:

Հայ Եկեղեցին այսօր շատ գործուն կերպով մասնակցում է էկումենիկ շարժմանը, սակայն ոչ միայն էկումենիկ շարժումը չի լուսաբանվում ըստ արժանվույն, այլ նաև Հայ Եկեղեցու մասնակցությունն այս շարժման մեջ և այդ շարժման ձեռքբերումները Եկեղեցիների փոխհարաբերությունները կարգավորելու գործում[6]:

---

Աֆրիկայի Եկեղեցիների Կոնֆերանս (AACC), հիմնվել է 1958 թ., առաջին ասամբլեան տեղի է ունեցել 1963 թ., 2. Կարիբյան Եկեղեցիների Կոնֆերանս (CCC), հիմնադրվել է 1973 թ. Ցամայկայում, 3. Ասիայի Քրիստոնեական Կոնֆերանս (CCA), 1957 թ., 4. Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանս (CEC) 1959 թ. Դանիա, 5. Եկեղեցիների Լատինաամերիկյան Խորհուրդ (CLAI), 1978 թ., Պանամա, 6. Մերձավոր Արևելքի Եկեղեցիների Կոնֆերանս (MECC),1974 թ., Կիպրոս, 7. Օվկիանիայի Եկեղեցիների Կոնֆերանս (PCC), 1961 թ., Մալուա, Արևմտյան Սամոա:

Քննարկելով նրանց դերը համընդհանուր էկումենիկ շարժման մեջ՝ կարելի է առանձնացնել երեք հիմնական գծեր.

- Միջազգային կոնտեքստում առաջ են քաշում մասնավոր տարածաշրջանային հիմնախնդիրներ:
- Եկեղեցիների համար հանդիպման մի վայր են հանդիսանում, ուր նրանք համատեղ կարող են տեղական խնդիրներին պատասխաններ գտնել:
- Աստվածաբանական և Աստվածաշնչային հեռանկարներից ելնելով՝ պատասխանում են տարածաշրջանային հիմնահարցերին՝ օրինակ քաղաքականության մեջ:

[4] 20-րդ դարասկզբին Եկեղեցիներն սկսեցին ստեղծել Եկեղեցիների Ազգային Խորհուրդներ:

Եկեղեցիների Ազգային Խորհուրդների մեծ մասն ստեղծվել է Եկեղեցիների Անգլիկան և Բարեկարգչական ընտանիքների կողմից: Այս Խորհուրդների առաջացման խթաններից էր միսիոներական գործունեություն իրականացնող բողոքական խմբավորումների միջև առկա մրցակցությունը համագործակցությամբ փոխարինելու միտումը: 19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին Միսիոներական Խորհուրդներ են հաստատվում Եվրոպայի տարբեր մասերում և Եվրոպական երկրների կողմից գաղութացված տարածքներում՝ Գերմանական Միսիոներական Խորհուրդը՝ 1885 թ., Բրիտանական Միսիոներական Խորհուրդը՝ 1912 թ.:

1910 թ. Էդինբուրգում գումարված Միսիոներական կոնֆերանսից հետո սկսվում է սերտ համագործակցություն Միսիոներական կազմակերպությունների միջև: Առաջին Ազգային Եկեղեցական Խորհուրդը, որի մեջ Եկեղեցիներն ընդգրկվեցին որպես հաստատուն անդամներ, 1905 թ. հիմնադրված Ֆրանսիայի Բողոքական Եկեղեցիների դաշնությունն էր: Սրան հաջորդում է 1908 թ. ԱՄՆ Բողոքական Եկեղեցիների Միությունը, որոնք 31 հարանվանություններով կազմում են Ամերիկայում Քրիստոսի Եկեղեցիների դաշնային խորհուրդը:

Ներկայումս ԵՀԽ հաշվարկներով գոյություն ունեն ավելի քան 105 Եկեղեցական Ազգային Խորհուրդներ աշխարհի 90 երկրներում: Եկեղեցիների ազգային խորհուրդների մեծ մասը հիմնադրվել է 1940-ական և 50-ական թվականներին:

[5] Այս մասին ավելի հանգամանալից տե՛ս. Հովակիմ աբեղա Մանուկյան, «Էկումենիկ շարժումը 20-րդ դարում և Հայ Եկեղեցին», վարդապետական ատենախոսություն, անտիպ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2005 թ., էջ 6-22:

[6] Էկումենիզմի մասին հայերեն որևէ աշխատություն չկար, որն ամբողջական կներկայացներ այս շարժումն իր բոլոր դրսևորումներով: Լավագույն աղբյուրները «Արարատ», «Էջմիածին», «Հասկ» ու «Սիոն» ամսագրերում տեղ գտած հոդվածներն էին, որոնք, սակայն, հիմնականում տեղեկություններ են հաղորդում իրադարձությունների, մասնակիցների ու քննարկվող հարցերի մասին: Առանձին հոդվածներ հազվադեպ էին հանդիպում. օրինակ՝ Շահե արքեպս. Աճեմյանի «Հայ Եկեղեցու մասնակցությունը «Հավատք և կարգ» շարժումին» (Էջմիածին, 1979 թ. Զ), կամ Եկեղեցիների Միության հար-

## Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի կազմավորումը

Այսօր ԵՀԽ-ին անդամակցում են 347 Եկեղեցիներ: Այս Եկեղեցիները միասին ունեն 550 միլիոն անդամներ աշխարհի 120 երկրներից, հիմնականում ուղղափառ և բողոքական ընտանիքներից[7]:

ԵՀԽ-ն անցել է կազմավորման տևական գործընթացների և գաղափարական բուռն պայքարի բովով, որը սկսվում է 20-րդ դարի առաջին քառորդից:

1920 թ. Տիեզերական պատրիարքությունն առաջինն էր, որ Պատրիարքական տեղապահ Գենադիոս Մետրոպոլիտի հատուկ շրջաբերականով կոչ արեց Եկեղեցիներին ստեղծել «բոլոր Եկեղեցիների համագործակցություն» կամ «Եկեղեցիների լիգա» (koinonia Ekklesion), ինչպես Ազգերի Լիգան էր՝ ստեղծված Առաջին Համաշխարհային պատերազմից հետո:

Այս գաղափարի կողմնակիցներն էին ժամանակի այնպիսի գործիչներ, ինչպիսիք էին Ուփսալայի արքեպիսկոպոս Նաթան Սոդերբլոնը՝ «Կյանք և Գործ» շարժման հիմնադիրը, և Ջոզեֆ Օլդհամը՝ Միսիոներների միջազգային խորհուրդ կազմակերպության հիմնադիրը[8]:

1920 թ. Ժնևում կայանում է «Հավատք և Կարգ» շարժման հանձնախմբերից մեկի հանդիպումը, որի ընթացքում Տիեզերական Պատրիարքի գաղափարը ներկաներին հիշեցնում է Հույն Եկեղեցու ներկայացուցիչ պրոֆեսոր Ալվիսատրոսը: Իսկ արդեն 1927 թ. «Հավատք և Կարգ» շարժման Լոզանյան կոնֆերանսի 7-րդ նիստին Ուփսալայի արքեպիսկոպոս Նաթան Սոդերբլոնը, անդրադառնալով Կոստանդնուպոլսի Եկեղեցու առաջ քաշած գաղափարին, մի նախնական օրինակով առաջարկում է գոյություն ունեցող էկումենիկ կազմակերպություններից ստեղծել Եկեղեցիների մի

---

ցի շուրջ խմբագրականը (1965 թ., Ժ-ԺԱ): Էկումենիկ շարժման մասին «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարանի հոդվածը Արտաշես Ղազարյանի Էկումենիկ շարժման համառոտ և ոչ ամբողջական: Էկումենիկ շարժումը և միջեկեղեցական հարաբերությունները մեզանում շատ հաճախ ընկալվել են միայն դավանաբանական վեճերի լույսի ներքո: Այդ իսկ պատճառով, որոշ նյութեր հանդիպում են ամսագրերում ու հանրագիտարաններում, որոնց մեջ հետաքրքրական են «Գանձասար» հանդեսի՝ Էկումենիզմին նվիրված հոդվածները: Այս թեմայի շուրջ կարևոր է երջանկահիշատակ Գարեգին Առաջին Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ էկումենիկ բնույթի բանախոսությունների ու հոդվածների ժողովածուն՝ հրատարակված 2004 թ. Նյու Յորքում և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա-ի գործերը: Սակայն թեմատիկ առումով հարուստ այս ժողովածուները մատչելի չեն հայերեն ընթերցողների համար: Այս նպատակով էլ մեր վարդապետական ատենախոսությունը, որը պաշտպանել ենք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Ճեմարանում 2006 թ. ապրիլին, նվիրվեց հենց այս թեմային: Մինչ դա «Էջմիածին» ամսագրում հոդվածներ էի տպագրել՝ երջանկահիշատակ Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի գահակալության շրջանում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միջեկեղեցական գործունեության մասին: 2005 թ. գարնանը Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ մասնակցելով ԱՄՆ հայոց արևելյան թեմի հոգևորականների տարեկան համագումարին՝ հանդես եկա բանախոսությամբ՝ «Հայ Եկեղեցին և Էկումենիկ շարժումը» թեմայով, որտեղ էլ խորհուրդ տվեցին ամբողջացնել աշխատանքը՝ այն ընթերցողին հասանելի դարձնելու նպատակով:

[7] Տե'ս ԵՀԽ պաշտոնական կայքէջ, www.wcc-coe.org.

[8] Hooft, Visse□t, W. A, The Genesis of the World Council of Churches, A History of the Ecumenical Movement, volume I, 1517 –1948, էջ 667:

խորհուրդ[9]:

1937 թ. Էդինբուրգի կոնֆերանսում անդրադառնալով Եկեղեցիների Խորհրդի գաղափարին՝ Քենթրբերիի արքեպիսկոպոս Ուիլիամ Թեմփլերը նշում է, որ անհրաժեշտ է միավորված (Una Sancta) Եկեղեցի ստեղծել, սակայն մինչ այդ Եկեղեցիները պետք է համագործակցեն և օգնեն միմյանց իրենց առաքելության բոլոր ասպարեզներում՝ ստեղծելով Եկեղեցիների մի համագործակցություն[10]:

Արդեն 1937 թ. հուլիսին «Կյանք և Գործ» շարժման Օքսֆորդի և «Հավատք և Կարգ» շարժման Էդինբուրգի կոնֆերանսների ներկայացուցիչները հանդիպում են Լոնդոնում, որտեղ որոշում են երկու շարժումները միավորել և ստեղծել Եկեղեցիների Միացյալ Խորհուրդ: Առաջարկվող նոր կազմակերպությունը «իշխանություն չի ունենալու օրենքներ մշակել Եկեղեցիների համար և պարտադրել նրանց որևէ քայլ առանց նրանց համաձայնության, սակայն որպեսզի այն արդյունավետ լինի, պետք է արժանանա և վայելի Եկեղեցիների հարգանքն այն աստիճան, որ Եկեղեցիներում մեծ ազդեցություն և հարգանք վայելող անձինք կամենան իրենց ժամանակը և միտքը նվիրել նրա գործերի իրականացմանը»: Որպեսզի բարձրացնեին նոր ստեղծվող Խորհրդի հեղինակությունը, որոշում են նաև, որ Խորհրդի աշխատանքներին պետք է մասնակցեն միայն «առաջնակարգ մտավորականներ» ու «այնպիսի աշխարհականներ, ովքեր կարևոր պաշտոններ էին զբաղեցնում և պարտականություններ ունեն աշխարհիկ միջավայրերում»[11]: ԱՄՆ-ից պր. Մակգրեա Քավերթն առաջարկում է, որ այս Խորհուրդը կոչեն Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդ[12]:

Երկրորդ Համաշխարհային պատերազմի ավարտից հետո՝ 1948 թ., Ամստերդամում գումարվում է ԵՀԽ հիմնադիր անդրանիկ համագումարը, որին մասնակցում էին 147 Եկեղեցիներ աշխարհի 44 երկրներից: Բոլոր հարանվանական ընտանիքները և Եկեղեցիները, բացի Հռոմեակաթոլիկ Եկեղեցուց[13], մասնակցում էին այս համագումարին պատվիրակի և դիտորդի կարգավիճակներով:

Ժողովի երկրորդ օրը համագումարն ընդունում է ԵՀԽ-ի սահմանադրությունը, իսկ անդամ Եկեղեցիները պատրաստում են իրենց պատգամը. «Քրիստոս մեզ Իրենն է դարձրել, և Նա բաժանված չէ: Նրան փնտրելով՝ մենք գտնում ենք միմյանց: Այստեղ՝ Ամստերդամում, մենք պարտավորվում ենք նորոգվել Նրա մեջ և ուխտ ենք կնքում միմյանց հետ՝ սահմանելով Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդը»[14]:

Ամստերդամի համագումարն ընդունելով սահմանադրությունը՝ ընդհանուր կերպով սահմանեց ԵՀԽ-ի պարտավորությունները, իսկ իր որոշումներով՝ նաև այն հարցերը, որ վերաբերում էին նրա ծրագրերին, քաղաքականությանը և ֆինանսավորմանը: Համագումարը թույլատրեց ԵՀԽ-ին կոչեր ուղղել Եկեղեցիներին և պե-

---

[9] Faith and Order, Lausanne, 1927, ed. H. N. Bate, 2nd edition, էջ 397:

[10] Բերված է 1937 թ. Էդինբուրգի կոնֆերանսում Թեմփլերի բացման քարոզից: The Second World Conference on Faith and Order, ed. Leonard Hodgson, էջ 20:

[11] Ecumenical Review, Vol. I, no 1, էջ 86:

[12] Hooft, Memoirs, էջ 79:

[13] Կաթոլիկ Եկեղեցին էկումենիկ շարժմանը միացավ 20-րդ դարի կեսերից՝ 1962-1965 թթ. Վատիկանի երկրորդ ժողովից հետո՝ իր սկզբունքներն ու յուրահատուկ մոտեցումները դրսևորելով այս շարժման մեջ և հիմնականում հեռու մնալով կառուցվածքային մասնակցությունից:

[14] http://www.wcc-assembly.info/Amsterdam.520.0.html.

տություններին, ինչպես նաև սահմանեց դրանց չափն ու սահմանները: Ամստերդամի համագումարից հետո ԵՀԽ-ն սկսում է անընդհատ մեծանալ:

## Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի բնույթը

Ստեղծելով ԵՀԽ-ի պես մի կազմակերպություն՝ անհրաժեշտ էր հստակեցնել նաև նրա բնույթն ու նպատակը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ անդամ Եկեղեցիներից շատերն այդ հարցին խստությամբ էին մոտենում, իսկ շատ Եկեղեցիներ էլ իրենց հեռու էին պահում այդ շարժումից:

Նման Խորհուրդը նորություն էր Եկեղեցիների համար: Առաջին անգամ էր ստեղծվել հսկայական մի Խորհուրդ, որին Եկեղեցիները պետք է անդամակցեին և պետք է գործեին միասին: Այս նորությունը անծանոթ էր նաև աստվածաբանական բառարաններին:

1948 թ. ԵՀԽ-ի անդամ Եկեղեցիները հասկանում էին, որ այս կառույցը գեր-Եկեղեցի չէ և ոչ էլ տիեզերական Եկեղեցի կամ «համաշխարհային Եկեղեցու սկիզբ»: Նրանք ընդունում էին, որ Խորհուրդը մի կառույց է, որտեղ Եկեղեցիները միասին իրենց ընդհանուր վկայությունն են բերում Քրիստոսին ծառայելու գործում և փնտրում այն միությունը, որ Հիսուս Քրիստոս կամենում է իր Մեկ և Անբաժան Եկեղեցու համար, ինչպես նաև համագործակցում են այն խնդիրների շուրջ, որոնք պահանջում են համատեղ ջանքեր և գործողություններ:

1948 թ. համագումարն ընդունում է Խորհրդի վերաբերյալ Վիսեր դե Հուֆտի ներկայացրած սահմանումը. «... մի համագործակցություն, որ Քրիստոսով մեզ տված միության արտահայտությունն է, որն ի վիճակի է հարթել այդ միության ավելի ամբողջական ու լիարժեք ներկայացնելու ճանապարհը»[15]:

Այնուամենայնիվ, այս բանաձևման մեջ հստակ չէին ինչպես հարաբերություններն անդամ Եկեղեցիների հետ, այնպես էլ անդամ Եկեղեցիների պատկերացումները ԵՀԽ-ի գործառնության ու սահմանափակումների նկատմամբ: Հարց էր ծագում, թե անդամակցելով ԵՀԽ-ին՝ արդյո՞ք Եկեղեցին ստիպված էր փոփոխություն մտցնել իր կարգավիճակում ու ընկալումներում, թե՞ ոչ: Ի՞նչ էր իրենից ներկայացնում ԵՀԽ-ն և ո՞րն էր նրա դերը:

Առաջացած խնդիրներին լուծում տալու նպատակով ԵՀԽ-ի Կենտրոնական Կոմիտեն ընդունում է 1950 թ. Տորոնտոյի հայտարարությունը՝ «Եկեղեցու, Եկեղեցիների և Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի վերաբերյալ», որտեղ նշվում է, թե ինչ չէ ԵՀԽ-ն և ապա՝ ինչ է ԵՀԽ-ն:

Համաձայն այս փաստաթղթի՝ «Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդը գեր-Եկեղեցի չէ և չպետք է դառնա գեր-Եկեղեցի»: Այն չի բանակցում միության համար Եկեղեցիների անունից: «Այն հիմնված չէ և չի կարող հիմնվել Եկեղեցու որևէ մասնավոր սկզբունքի վրա»: Անդամակցությունը ԵՀԽ-ին չի նշանակում, որ «որևէ Եկեղեցի Եկեղեցու վերաբերյալ իր ուրույն ընկալումը համարում է հարաբերական» կամ «Եկեղեցու միության հարցի շուրջ ընդունում է որևէ հատուկ բանաձևած սկզբունք»:

---

[15] Hooft, Memoirs, էջ 210:

Այնուամենայնիվ, անդամների վկայությունը «պետք է հիմնվի համընդհանուր վկայության վրա, որ «Քրիստոս մարմնի աստվածային գլուխն է», որը, «Նոր Կտակարանի համաձայն», Քրիստոսի միակ Եկեղեցին է: Անդամակցությունը Քրիստոսի Եկեղեցուն ավելի «ընդգրկուն է», քան անդամակցությունն իր առանձին մարմնին, «սակայն սա չի նշանակում, որ յուրաքանչյուր Եկեղեցի պարտավորված է մյուս անդամ Եկեղեցիներին Եկեղեցի համարելու «Եկեղեցի» բառի ճշմարիտ և ամբողջական իմաստով»: Բայց անդամակցությունը ԵՀԽ-ին գործնականում ենթադրում է, որ «Եկեղեցիները պետք է ընդունեն միմյանց համերաշխությամբ, օգնեն միմյանց և զերծ մնան այնպիսի քայլերից, որոնք անընդունելի են եղբայրական հարաբերություններում»[16]: Թեև այս հայտարարությունը դարձավ սուր քննադատությունների առարկա, սակայն նպաստեց, որ բազում Եկեղեցիներ ավելի վստահ գործեն ու անդամակցեն ԵՀԽ-ին[17]:

ԵՀԽ-ն իր գործունեությամբ և իր գործառնություններով հետագայում գերազանցում է նախապես իր առջև դրված պահանջները՝ շարունակելու «Հավատք և Կարգ» ու «Կյանք և Գործ» շարժումների գործերը և մի քանի տասնամյակ անց մի նոր փաստաթուղթ ստեղծելու անհրաժեշտություն է զգում:

Մինչ այս փաստաթղթի ստեղծումը հարցեր էին առաջացել: Եթե այս հայտարարության մեջ խոսվում էր ընդհանուր կոչման մասին, ի՞նչ էին հասկանում Եկեղեցիներն «ընդհանուր կոչում» ասելով: Արդյո՞ք Եկեղեցիներն ունեն ընդհանուր տեսիլք: Արդյո՞ք էկումենիզմի մասին Եկեղեցիների պատկերացումները նույնն էին: Տորոնտոյի հայտարարությունը և 1950-ականների ԵՀԽ-ն ծնվել էին Երկրորդ աշխարհամարտից հետո և զարգացել սառը պատերազմի տարիներին: Խորհրդային Միության փլուզումից հետո քրիստոնեության առջև նոր մարտահրավերներ են ծագում: ԵՀԽ-ն, լինելով Եկեղեցիների համագործակցություն, անշուշտ պետք է վերանայեր իր բնույթին ու նպատակին առնչվող հարցերը:

Այս նպատակով 1989 թ. ԵՀԽ-ի Կենտրոնական կոմիտեն սկսում է նոր քննարկումներ «ԵՀԽ-ի ընդհանուր ըմբռնումի ու տեսլականի» վերաբերյալ:

1995 թ. փետրվարին ԵՀԽ-ի Գործադիր կոմիտեն հավանություն տվեց, որ քննարկման այս գործընթացը մի փաստաթուղթ պատրաստի 8-րդ համագումարի համար և ԵՀԽ-ի 50-ամյակի առիթով, որը կհանդիսանա էկումենիկ փաստաթուղթ 21-րդ դարի համար: Այդ փաստաթղթի առաջին մասում ուրվագծվում են ԵՀԽ-ի կեսդարյա գործունեության ընթացքում տեղ գտած փոփոխությունները՝ նշելով, որ այդ փաստաթուղթը իր տեղն ունի ԵՀԽ-ի շարունակական գործունեության մեջ, այն է՝ արտահայտել էկումենիկ միության բնույթն ու նպատակը ԵՀԽ-ից ներս: Երկրորդ մասում ուսումնասիրվում է էկումենիկ շարժման իմաստը, որից ծնունդ է առել և որի կազմակերպչական արտահայտություններից մեկն է հանդիսանում ԵՀԽ-ն: Երրորդ մասում քննարկվում է ԵՀԽ «ինքնաընկալումը»՝ բացատրություն տալով դրա սահմանադրական հիմքի մասին որպես «Եկեղեցիների միություն», իսկ չորրորդ մասում

---

[16] *The Church, the Churches and the World Council of Churches*, WCC Central Committee, Toronto, 1950, in The Ecumenical Movement, An Anthology of Key Texts and Voices, էջ 463 - 469:

[17] Այս հայտարարության վերաբերյալ քննադատությունների մասին տե'ս *Comments on the Church, the Churches and the World Council of Churches*, Ecumenical Review, vol 3, no. 3, 1951, էջ 253-254:

նկարագրվում է ԵՀԽ հարաբերությունները տարբեր համագործակիցների հետ:

Այս տեքստը վկայում է անդամ Եկեղեցիների՝ ԵՀԽ-ի նկատմամբ ունեցած խորը էկումենիկ պարտավորության մասին՝ միևնույն ժամանակ պարզորոշ մատնանշելով, որ «ընդհանուր ըմբռնումի ու տեսլականի» մեջ կան բազմաթիվ կետեր, որոնք վերաբերում են էկումենիկ շարժման նպատակներին ու միության բնույթին, և որոնց շուրջ Եկեղեցիները դեռևս համաձայնության չեն եկել: Քննարկման գործընթացի այս ներկա փուլն ավարտելով այս տեքստի ընդունմամբ, որպես քաղաքականության մասին հայտարարություն՝ ԿԿ չի հավակնում լուծել այդ հարցերը կամ իր վերջնական խոսքն ասել ԵՀԽ-ի և էկումենիկ շարժման վերաբերյալ, այլ հորդորում և օգնում է Եկեղեցիներին՝ գնահատել իրենց էկումենիկ պարտավորություններն ու գործունեությունն՝ իրենց տեղական համակոնտեքստում, իրենց ազգային, տարածաշրջանային և գլոբալ հարաբերություններում և հատկապես ԵՀԽ-ի հետ հարաբերություններում:

Կյանքի կոչելով այս փաստաթուղթը՝ ԿԿ նաև այլ քայլեր է ձեռնարկել: Նա փոփոխություններ է մտցրել իր գործունեության կանոններում, ընդունել ԵՀԽ-ի նոր ծրագրերի և կառույցների նախագիծը՝ վճռելով շարունակաբար ուսումնասիրել և՛ իր ներքին գործունեության ուղղությունները և՛ առավել ընդարձակ էկումենիկ համագործակցության հնարավորությունները:

## Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի իշխանությունը

ԵՀԽ սահմանադրության մեջ նշվում է, որ ԵՀԽ-ը կոչված է.

- Իրականացնել «Հավատք և Կարգ», «Կյանք և Գործ», «Միսիոներական Միջազգային Խորհուրդ» շարժումների գործը.
- Պարզեցնել Եկեղեցիների համատեղ գործունեությունը.
- Խրախուսել համագործակցությունը հետազոտություններում.
- Բոլոր անդամ Եկեղեցիների մեջ զորացնել էկումենիկ և միսիոներական մտածողությունը.
- Նպաստել Եկեղեցիների աշխարհասփյուռ միսիոներական և քարոզչական գործունեությանը.
- Հարաբերություններ հաստատել ու պահպանել Եկեղեցիների տարածաշրջանային Խորհուրդների, Համաշխարհային հարանվանական մարմինների և էկումենիկ այլ կազմակերպությունների հետ.
- Հրավիրել համաշխարհային կոնֆերանսներ մասնավոր թեմաների շուրջ, եթե դրանց անհրաժեշտությունը կա և իրավունք վերապահել հրատարակելու կոնֆերանսների փաստաթղթերն ու հետազոտությունները:

Սակայն հարց է առաջանում, թե ինչ իշխանությամբ է գործում ԵՀԽ-ն, կամ ինչքա՞ն են վավերական կայացրած որոշումները: Այս հարցը սուր քննարկումների առիթ է եղել ԵՀԽ-ի կազմավորման ժամանակ և տակավին շարունակում է բաց մնալ նաև այժմ՝ միշտ էլ քննադատությունների տեղիք տալով:

Իշխանության մասին ԵՀԽ սահմանադրության 4-րդ հոդվածում ավելի հստակ նշվում է, որ ԵՀԽ-ն

- Խորհուրդ է տալիս և հնարավորություն ստեղծում համընդհանուր հարցե-

րի շուրջ միասնաբար գործելու համար.

- Կարող է գործել անդամ Եկեղեցիների անունից, եթե նրանցից մեկը կամ մի քանիսը համաձայնություն տան.
- Իրավունք չունի Եկեղեցիների անունից օրենքներ մշակել կամ գործել նրանց փոխարեն որևէ եղանակով, բացառությամբ վերը նշված դեպքերի կամ անդամ Եկեղեցիների պահանջի:

ԵՀԽ օրենքների 10-րդ հոդվածում, խոսելով ԵՀԽ-ի կողմից կատարվող հայտարարությունների ուժի մասին, նշված է. «Չնայած այսպիսի հայտարարությունները, որպես մի խոշոր՝ ներկայանալի քրիստոնեական կառույցի համար դատապարտության արտահայտություններ կամ հետաքրքրություն ներկայացնող նյութեր են, կարող են մեծ կարևորություն և ազդեցություն ունենալ: Իրենց իշխանությունը իրենց արժեքն է, որն իրենց կողմից ներկայացնում է որպես սեփական ճշմարտության և իմաստության արտահայտություն, և նման հայտարարությունների հրապարակումը չի ենթադրում, որ Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդը, որպես այդպիսին, ունի կամ կարող է ունենալ սահմանադրական իշխանություն անդամ Եկեղեցիների վրա կամ իրավունք՝ խոսելու նրանց անունից»:

Այս երկու հոդվածները ցույց են տալիս ԵՀԽ-ի իշխանության սահմանափակությունը: Խորհուրդն իրավունք չունի օրենքներ սահմանել Եկեղեցիների համար, խոսել նրանց անունից, գործել նրանց փոխարեն, բացառությամբ այն դեպքերի, երբ անդամ Եկեղեցին ինքն է պահանջում ԵՀԽ-ի օժանդակությունը: Այն Եկեղեցիների խորհուրդ է, սակայն նման չէ վաղ շրջանի եկեղեցական ժողովներին, որտեղ եպիսկոպոսների կողմից ընդունված որոշումները դառնում էին պարտադիր օրենքներ և կանոններ բոլորի համար: Այնուամենայնիվ, չնայած վերը բերվածին՝ ԵՀԽ-ն մի շարժում է, որ Եկեղեցիներին միության է առաջնորդում:

Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդը կանոնական իշխանություն չունի կատարելու այն, ինչ ասում է, այլ միայն «խորհուրդ է տալիս» Եկեղեցիներին և «համատեղ գործելու» հնարավորություն ստեղծում: Այս ամենը նախապես ենթադրում է Եկեղեցիների պարտավորությունը ԵՀԽ-ի կայացրած որոշումների նկատմամբ, և սա այն առավելությունն է, որ Եկեղեցիներն իրենք են որոշում ԵՀԽ-ի լիազորությունը (mandatum)՝ համատեղ որոշումներով ու ծրագրերով:

Եկեղեցիները ԵՀԽ-ին օժտում են մանդատով ընդհանուր համագումարների միջև ընկած ժամանակահատվածում ԿԿ գործունեության, ինչպես նաև առանձին կոնֆերանսներում իրենց բերած մասնակցության միջոցով, որոնց գործառնություններն ու լիազորությունները ևս արտահայտված են սահմանադրության մեջ:

ԵՀԽ-ը անդամ Եկեղեցիներից ակնկալում է.

1. Պատգամավորներ նշանակել ԵՀԽ-ի համագումարների, Խորհրդի որոշում կայացնող գլխավոր մարմնի համար և Խորհրդում այլ Եկեղեցիների հետ կերտել էկումենիկ տեսիլքն ու իրականացնել ծրագրերը,
2. ԵՀԽ-ին հայտնել իրենց հիմնախնդիրների, հրամայականների, գործունեության և կառուցողական քննադատությունների մասին, որպեսզի նրանք կարողանան մաս կազմել ԵՀԽ-ի ծրագրերին, ինչպես նաև այն խնդիրներին, որոնք անհրաժեշտ են, որպեսզի արտահայտվի էկումենիկ

համերաշխությունը և որը արժանանա Խորհրդի և կամ աշխարհասփյուռ Եկեղեցիների ուշադրությանը,

3. Տարածել էկումենիկ նվիրումի ոգին, խթանել և քաջալերել էկումենիկ հարաբերությունները և գործունեությունը՝ Եկեղեցական կյանքի բոլոր մակարդակներում և նպաստել էկումենիկ եղբայրությանը տեղական, ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում,
4. Որպես զեկույցի ընդհանուր մաս՝ իրենց անդամներին ներկայացնել ինչպես առավել ընդարձակ էկումենիկ շարժումը, այնպես էլ Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդը, բնույթը, նպատակը և ծրագրերը,
5. Քաջալերել մասնակցությունը Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի ծրագրերին, գործունեությանը և հանդիպումներին `

   ա) առաջադրելով անձեր, ովքեր կարող են մասնավոր նպաստ բերել և կամ մասնակցել Խորհրդի տարբեր կոմիտեներին, հանդիպումներին և խորհրդակցություններին,

   բ) կապեր հաստատելով իրենց ծրագրերն իրականացնող գրասենյակների և Համաշխարհային Խորհրդի համապատասխան ծրագրերն իրականացնող գրասենյակների միջև,

   գ) տրամադրել նյութեր՝ գրքեր, ամսագրեր և այլ հրատարակություններ, Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի տեղեկատվական համակարգին:
6. Պատասխանելով Կենտրոնական կոմիտեի որոշումներին, որ հրավիրում է Եկեղեցիներին [այս որոշումներն] ուսումնասիրել, գործադրել կամ այլ հետևողական ծրագրեր իրականացնել, ինչպես նաև արձագանքել՝ աղոթելու, խորհուրդ տալու, տեղեկություններ հաղորդելու և կարծիք հայտնելու խնդրանքներին, որոնք առաջադրում են Կենտրոնական կամ Գործադիր կոմիտեները, կամ էլ գլխավոր քարտուղարը: Հետևաբար, էկումենիզմին կամ ԵՀԽ-ի կյանքին մասնակցելը կամավոր պարտավորություն է՝ զարգացնելու համագործակցություն և եղբայրություն Եկեղեցիների միջև՝ ուղղորդելով նրանց միության: ԵՀԽ-ն միայն համագործակցելու պարտականություն ունի:

## Հայ Եկեղեցու մասնակցությունը էկումենիկ շարժմանը

Հայ Եկեղեցու անդամակցությունը Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդին և էկումենիկ շարժմանը տևական աշխատանքի արդյունք էր:

19-րդ դարավերջից և 20–րդ դարասկզբից «Արարատ» ամսագրի էջերում սկսում են պարբերաբար տեղեկություններ հաղորդվել այլ Եկեղեցիներում տեղի ունեցող իրադարձությունների մասին: Արևմուտքում ուսանած Էջմիածնի միաբանները սերտացնում են կապերը օտար հարանվանությունների ներկայացուցիչների ու աստվածաբանական համալսարանների գիտնականների հետ[18]: Թույլատրելիության սահ-

[18] **Խաչիկ Րաֆֆի Ղազարյան,** Բարենորոգչական նախաձեռնությունները Հայ Առաքելական Եկեղեցում 19-րդ դարի վերջին քառորդին և 20 –րդ դարի առաջին կեսին, Ս. Էջմիածին, 1999, էջ 13-97:

մաններում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն օրհնում էր, որ Սփյուռքում գործող առանձին հոգևորականներ մասնակցեն նոր ձևավորվող էկումենիկ շարժմանը:

Հայ Առաքելական Եկեղեցին դիտորդներ է ուղարկել 1927 թ. Լոզանի և 1937 թ. Էդինբուրգի «Հավատք և Կարգ» միջազգային կոնֆերանսներին[19], իսկ ԵՀԽ կազմավորումից հետո դիտորդներ է ուղարկում ԵՀԽ 1948 թ. Ամեստերդամի, 1954 թ. Էնվանստոնի և 1961 թ. Նոր Դելիի համագումարներին[20]: Միայն 1962 թվականից՝ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի անդամ[21] դառնալուց հետո է Հայ Եկեղեցին կարողանում ակտիվորեն մասնակցել այս գործընթացներին:

## Հայ Եկեղեցին Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի անդամ

Անդամակցության շուրջ երկխոսությունները ինչպես Հայ Առաքելական Եկեղեցու, այնպես էլ ԽՍՀՄ տարածքում գործող մյուս Եկեղեցիների հետ սկսվում են 1959 թ.:

1959-ին ԵՀԽ պատվիրակությունը, գլխավոր քարտուղար Վիսեր դե Հուվտի գլխավորությամբ, այցելում է ԽՍՀՄ, ապա Հայաստան, Մայր Աթոռ Ս. Էջմիածին: ԵՀԽ Կենտրոնական վարչությունը, 1962 թվականի օգոստոսի 7-17-ը կայացած նստաշրջանում համաձայնելով Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգեն Ա Կաթողիկոսի դիմումին, Հայ Առաքելական Եկեղեցին ընդունում է որպես Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի անդամ:

1962 թվականին «Էջմիածին» ամսագրում նշվում է, որ «Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդը», Հայ Եկեղեցուն ընդունելով որպես իր լիիրավ անդամ, «հանդիսավոր կերպով նշեց ու արձանագրեց, թե մեկ է և անբաժանելի Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին իր բոլոր նվիրապետական Աթոռներով, հոգևոր վերին իշխանությանը ներքև Ամենայն Հայոց Հայրապետության[22]»:

Մինչ այդ, ԵՀԽ 1948 թ. Ամստերդամի համագումարին մասնակցելու Կազմակերպիչ կոմիտեի հրավերին Հայ Եկեղեցին պատասխանում է՝ 1948 թ. Մոսկվայում Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Զ Չորեքչյանի գլխավորած պատվիրակությամբ մասնակցելով Ուղղափառ Եկեղեցիների գահակալների ժողովին, որը հանդես է գալիս համատեղ հայտարարությամբ, հայտնի՝ «Լուծում էկումենիկ հարցի վերաբերյալ» վերտառությամբ:

Այս փաստաթղթում մի կողմից խոսվում էր պապականության դեմ, իսկ մյուս կողմից էկումենիկ շարժումն ու բողոքականության մեջ առաջացած կազմակերպությունները համարվում էին «հակաարշավ պապականության դեմ»[23]: 1948 թ. Հայ Եկեղեցու

---

[19] **Արզումանեան Զ**, *Ազգապատում,* Դ. հատոր, Բ Գիրք, Նիւ Եորք, 1997 թ., էջ 166-167: Շահե արքեպս. Աճեմյան, Հայ Եկեղեցու մասնակցությունը «Հավատքի և Կարգի» ժողովներին, «Էջմիածին», 1979 թ., Զ, էջ 58-62:

[20] Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի երրորդ համագումարը, «Էջմիածին», 1962 թ., Ա, էջ 28:

[21] Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին անդամակցում է Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդին, «Էջմիածին», 1962 թ., Թ, էջ 14-15:

[22] «Էջմիածին», 1962, Թ, էջ 10.

[23] Resolution on the Ecumenical Question, Moscow, USSR, 1948, Orthodox Visions of Ecumenism,

դիրքորոշումը էկումենիկ շարժմանը ժխտական էր:

Նկատի ունենալով ժամանակաշրջանը և տիրող քաղաքական իրավիճակը նոր զարգացող սառը պատերազմի սկզբնական տարիներին՝ այս կապակցությամբ որևէ գնահատական չենք կարող տալ: 1948 թվին Էջմիածինը միանում է Ուղղափառ ութ Եկեղեցիների մոսկովյան որոշմանը, որոնց գլխավորում էր Ռուսաց Պատրիարք Ալեքսի Ա Սիմանսկին: Ուղղափառ Եկեղեցիներից Հույն Օրթոդոքս և Տիեզերական Պատրիարքություններն էին միայն, որ բավականին գործուն էին այս շարժման մեջ, որի նախապատրաստողներից են համարվում[24]:

1962 թ. ԽՍՀՄ-ում խրուշչովյան հալոցքի շրջանն էր: 1961 թ. ԵՀԽ-ին անդամակցել էր Ռուս Եկեղեցին ու նախկին Խորհրդային Հանրապետություններում գործող Ուղղափառ Եկեղեցիներից շատերը[25]: Հայ Եկեղեցին ևս փոխում է իր պաշտոնական դիրքորոշումն այս շարժման նկատմամբ:

Երջանկահիշատակ Վազգեն Ա Կաթողիկոսը Եկեղեցիների Միության հարցի շուրջ իր կոնդակում գրում է. «Եկեղեցին, իբրև աստուածային նախախնամութեան գործ, անշուշտ մէկ է և տիեզերական, սակայն այդ աստուածային տնօրինութեան իրագործումը երկրի վրա զգեցած է և կը զգենու արտաքին տարբեր տարազներ, համաձայն ժողովուրդներու հոգեկան դիմագծութեան և Աստուծո խօսքը ընկալելու և ապրելու կերպին, և համաձայն պատմական իրադրութեանց ու աւանդութիւններուն, որոնց մէջ ծնած ու աճած են Եկեղեցիները: ...Մեր օրերուն, փառք Ամենակալին, այլևս չկան ոչ բարեկամական դրսևորումներ Եկեղեցիներու միջև: Այլևս ոչ ոք չի մտածեր հին վէճերու և հակառակութիւններու մասին: Այսօր բոլոր Եկեղեցիները, բոլոր քրիստոնեաները կը խօսին փոխադարձ հաճութեան մասին, գործակցութեան մասին, միութեան մասին...»[26]:

ԵՀԽ-ն մի կենտրոն էր, ուր ոչ միայն աստվածաբանական հարցեր էին քննարկվում, այլև հասարակական, քաղաքական և ընկերային: Կազմակերպությունը հնարավորություն է ընձեռում Եկեղեցիների ներկայացուցիչներին՝ ԵՀԽ ամբիոններից ի լուր աշխարհի կոչեր անել արդարության, հավասարության, սիրո ու խաղաղության: Այդ օրերի համար այս փաստը մեծ ձեռքբերում էր: Մինչ այդ հալածանքների ու ճնշման տակ գտնվող Եկեղեցին դառնում էր Միջազգային Եկեղեցական կառույցի անդամ:

Հետագայում Հայ Եկեղեցին դառնում է անդամ նաև այլ էկումենիկ կառույցների: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը գործուն կերպով մասնակցում է Եկեղեցիների Եվրոպական Կոնֆերանսի կյանքին սկսած 1977 թ., երբ Ս. Էջմիածինը անդամագրվեց այս

---

Statements, messages and Reports on Ecumenical Movement 1902-1992. Compiled by Gennadios Limouris, WCC Publications, Geneva, 1994, էջ 18-19: The Ecumenical Review, vol. I, no.2, Winter 1949, 15 189-191, Резолюция по вопросу "Экуменическое движение и Православная Церковь", Москва, 1948. Православие и экуменизм, Документы и материали 1902 – 1998., Москва, 1999, էջ 189:

[24] Zernov Nicolas, *The Eastern Churches and The Ecumenical Movement in the Twentieth Century,* A History of the Ecumenical Movement, Vol. I, Chapter 14:

[25] Տես՝ Istavridis Lukas, *The Orthodox Churches in the Ecumenical Movement* 1948 -1968, A History of the Ecumenical Movement, Vol. II, Chapter 11, էջ 287:

[26] Հայրապետական Կոնդակ, «Էջմիածին», 1965 թ., էջ 4:

կազմակերպությանը[27], իսկ իր թեմերով անդամ է Եկեղեցիների Ազգային Խորհուրդների, որոնց մեջ գործուն է հատկապես ԱՄՆ Քրիստոսի Եկեղեցիների Ազգային Խորհուրդը, որին ԱՄՆ հայոց Արևելյան թեմն անդամագրվել է 1957 թ.[28]:

Բացի տարածաշրջանային էկումենիկ այլ կառույցներից, Հայ Եկեղեցին նաև անդամ է Մերձավոր Արևելքի Եկեղեցիների Կոնֆերանսի, ուր հատկապես գործուն է Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը: Իր ստեղծման սկզբնական շրջանում այս կազմակերպության աշխատանքներին մասնակցում էին նաև Երուսաղեմի Հայոց Պատրիարքության ներկայացուցիչները:

## Հայ Եկեղեցին ԵՀԽ կյանքից ներս

Մեր ժամանակներում, որպես արդյունք ետ-մոդեռնիստական գաղափարախոսության և աշխարհայնացման, Ուղղափառ Եկեղեցիները ԵՀԽ-ում կանգնած են լուրջ մարտահրավերների առջև: Նույնիսկ 1998 թվականին Զիմբաբվեում տեղի ունեցած ԵՀԽ 8-րդ համագումարից առաջ վտանգ կար, որ Ուղղափառ աշխարհը կդադարեցնի իր մասնակցությունը ԵՀԽ-ին՝ ԵՀԽ-ին անդամ մի շարք բողոքական Եկեղեցիներում տեղի ունեցող ոչ ընդունելի զարգացումների պատճառով:

Իրավիճակն այդպիսին չէր 20-րդ դարի երրորդ քառորդում: Սա մի ժամանակաշրջան էր, երբ Ուղղափառ աշխարհն իր մասնակցությամբ ԵՀԽ-ն դարձրեց իրապես «Տիեզերական շարժում»: Մեծ եռանդով տեղի էին ունենում աստվածաբանական գիտաժողովներ, ուսումնասիրվում էին անդամ թե՛ հին և թե՛ նոր Եկեղեցիների պատմությունները, նախաձեռնվում էին բարեգործական ծրագրեր, կազմակերպվում փոխադարձ այցելություններ:

Հայաստան՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածին են այցելել ԵՀԽ-ի գրեթե բոլոր գլխավոր քարտուղարները: 1959 թ. Վիսեր դե Հուվտի՝ Սուրբ Էջմիածին կատարած այցելությունից հետո Հայաստան է այցելել դոկ. Բլեյկը՝ 1967 թ և 1972 թ.[29], Էմիլիո Կաստրոն[30] և Կոնրադ Ռայզերը՝ 1996 թ.[31]: Փոխադարձաբար Հայոց Հայրապետներն այցելություններ են կատարել ԵՀԽ-ի Ժնևյան գրասենյակ. 1967 թ.՝ Վազգեն Ա Կաթողիկոսը և 1996 թ.՝ Գարեգին Ա Կաթողիկոսը[32]:

ԵՀԽ-ին անդամակցելուց հետո կարևոր նշանակություն է ստացել և մամուլում մեծապես լուսաբանվել 1967 թ. հուլիսին Վազգեն Ա Կաթողիկոսի Ժնև՝ Եկեղեցիների

---

[27] 1997 թ. ապրիլի 20-23-ը Ռումինիայի Յաշ քաղաքում «Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանս»-ը հաստատեց Հայ Եկեղեցու անդամակցությունը: «Էջմիածին», 1977 թ., Ե, էջ 56:

[28] Ազգապատում, Գիրք Գ, էջ 221:

[29] Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի գլխավոր քարտուղար դոկտոր Է. Կ. Բլեյկը Մայր Աթոռ Ս. Էջմիածինում, 1967, Գ, էջ 18-21, Անդ, 1972 թ., Բ, էջ 13:

[30] Էմիլիո Կաստրոն Հայաստան է այցելել որպես ԵՀԽ հանձնախմբերից մեկի պատասխանատու: Տե՛ս Շահբազյան Պարգև, Համաօրթոդոքսյան խորհրդակցություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, «Էջմիածին», 1980 թ., Թ, էջ 6:

[31] Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի գլխավոր քարտուղար դոկտոր Կոնրադ Ռայզերի պաշտոնական այցը Հայաստան, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, «Էջմիածին», 1996, Դ, էջ 17-22:

[32] Վեհափառ Հայրապետի «Գերագույն Հոգևոր Խորհրդին» զեկուցագրից՝ Միջեկեղեցական հարաբերություններ, «Էջմիածին» 1997, Դ-Ե, էջ 23:

Համաշխարհային Խորհուրդ կատարած այցելությունը թե՛ Ժնևում և թե՛ Հայաստանում:

Վերադարձից հետո Երևանում ռադիոյի թղթակցին տված հարցազրույցում Վազգեն Կաթողիկոսը Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդը բնութագրում է՝ «կենդանի շարժում մըն է, որ կձգտի իր խոսքը ըսել և իր աշխատանքի բաժինը բերել կրոնական, դաստիարակչական, մշակութային և ընկերային մարզերու մեջ: Մենք կհավատանք, թե աշխարհի խաղաղության պահպանման հրամայական և ազգերու և պետություններու համերաշխ գործակցության իդեալը, առաջնահերթ նպատակները պետք է նկատել Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդը, որ ցարդ գնահատելի ջանքեր ի գործ դրած է արդեն այս ուղղությամբ»[33]:

Մի քանի անգամներ ԵՀԽ-ն առիթ է ընձեռել Հայ Եկեղեցուն բարձրաձայն աշխարհին կոչեր հղելու Հայոց ցեղասպանությունը ճանաչելու և Արցախի արդար դատին զորավիգ կանգնելու համար:

1983 թ. ԵՀԽ Վանկուվերի վեցերորդ համագումարին հայ պատվիրակների առաջարկով քննարկվել է 1915 թ. Հայոց ցեղասպանության հարցը: Ընդունվել է 4 կետերից բաղկացած մի բանաձև, որով ճանաչում էին Հայոց ցեղասպանությունը, կոչով դիմում ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին և ԵՀԽ գլխավոր քարտուղարին, որպեսզի այս հարցը քննարկվի անդամ Եկեղեցիներում[34]:

1991 թ. Կամբերայի յոթերորդ համագումարին Վազգեն Ա Կաթողիկոսը դիմել է ուղերձով՝ արցախահայությանը սատար կանգնելու նպատակով: Ի պատասխան Հայրապետի ուղերձի և Հայ պատվիրակության խնդրանքի՝ համագումարը որոշում է. «Մենք մտահոգված ենք. Ղարաբաղի հայ ազգաբնակչությունը զոհ է դառնում խտրականության, ահաբեկչության և բռնությունների», որի հիման վրա ԵՀԽ-ն որոշում է.

- Անմիջապես միջոցներ ձեռք առնել հայ ազգաբնակչության կրոնական, մշակութային և ազգային շահերը պաշտպանելու համար,
- Ապահովել Ղարաբաղի շրջանի բոլոր բնակիչների մարդկային իրավունքները,
- Պահանջել անդամ բոլոր Եկեղեցիներից, որ աղոթեն հայության համար, որոնք «պայքարում են հանուն արդարության ու խաղաղության»[35]:

Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդը, բերելով իր նպաստը հայ ժողովրդին հուզող խնդիրները բարձրացնելիս, նաև նեղության պահին ետ չի կանգնել հայ ժողովրդին օգնության հասնելուց նյութական և բարեսիրական այլ ծրագրերի միջոցով:

Հատկապես ՀՀ անկախությունից հետո, երբ Հայաստանը գտնվում էր Արցախյան պատերազմի և շրջափակման մեջ, իսկ Հայաստանի հյուսիսային շրջանները տուժել էին 1988 թ. երկրաշարժից, ԵՀԽ հովանավորությամբ սկսում են Կլոր սեղաններ կազմակերպել ԵՀԽ ներկայացուցիչների, ինչպես նաև Հայ Առաքելական, Կաթոլիկ և Ավետարանական Եկեղեցիների ներկայացուցիչների միջև՝ Հայաստանում բարեգոր-

---

[33] Հարցազրույց Երևանի ռադիոյի թղթակցի հետ, «Էջմիածին», 1967 թ., հուլիս, էջ 40:

[34] Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի 6-րդ Համաժողով, «Էջմիածին», 1984 թ., Բ, էջ 12:

[35] **Շահբազյան Պ.**, *Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի 7-րդ համագումարը,* «Էջմիածին», 1991 թ., Ա- Բ-Գ, էջ 83 - 86:

ծական և զարգացման ծրագրեր իրականացնելու համար: Նման հանդիպումներ են տեղի ունեցել 1993 և 1996 թթ. Մայր Աթոռ Ս. Էջմիածնում՝ դիվանապետ Գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի և ԵՀԽ չորրորդ բաժանմունքի նախագահ տիկին Քերոլ Էյքի համանախագահությամբ[36]:

1997 թ. այս հանդիպումների արդյունքում ստեղծվում է Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Հայաստանյան Կլոր սեղանի գրասենյակը, որն իր բարեսիրական գործունեությունն իրականացնում է բժշկական, սոցիալական, տնտեսական ծրագրերում, կրթության ոլորտներում, հոգևոր ճեմարաններում և այլ հաստատություններում՝ նպաստելով տեղական մակարդակներում էկումենիզմի զարգացմանը[37]:

Հայ Եկեղեցու մասնակցությունը էկումենիկ շարժման մեջ կանոնակարգելու և զարգացնելու նպատակով Վազգեն Ա Կաթողիկոսը Մայր Աթոռի դիվանատանը կից հիմնում է Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակ, որը հաջորդաբար ղեկավարում են Տ. Արսեն վարդապետ (այժմ արքեպիսկոպոս) Բերբերյանը, տիար Պարգև Շահբազյանը, Տ. Ներսես եպիսկոպոս Պոզապալյանը, Գարեգին Ա Կաթողիկոսի գահակալության շրջանում՝ Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը՝ որպես Ամենայն Հայոց Կաթողիկոսի միջեկեղեցական հարցերով օգնական, իսկ 1999 թվականից՝ Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը՝ որպես Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու[38]:

Միջեկեղեցական հարցերով մշտապես զեկույցներ են հնչել Հայ Եկեղեցու Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստերում: 1969 թ. Էջմիածնում գումարված եպիսկոպոսական ժողովն իր Զ նիստը ամբողջությամբ նվիրել է Միջեկեղեցական հարաբերություններին, որի շուրջ Տ. Թորգոմ արքեպս. (այժմ Երուսաղեմի հայոց պատրիարք) Մանուկյանը զեկուցել է «Հայաստանյայց Եկեղեցին և էկումենիզմը» թեմայով, իսկ Տ. Հայկազուն արքեպս. Աբրահամյանը՝ «Հայաստանյայց Եկեղեցին և աշխարհի խաղաղության ամրապնդումը» թեմայով[39]:

Հայրապետները նաև ստորագրել են համատեղ հայտարարություններ, հռչակագրեր ու հաղորդագրություններ Քույր Եկեղեցիների պետերի ու առաջնորդների հետ, որոնք նպաստում են Միջեկեղեցական և էկումենիկ հարաբերություններին: Ստորև բերում ենք դրանք ըստ հերթականության:

### Ն.Ս.Օ.Տ.Տ. ՎԱԶԳԵՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ

1. Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Հռոմի Պապ Նորին Սրբություն Պողոս Զ-ի Համատեղ Հայտարարությունը (12 մայիս 1970 թ.),

---

[36] Տես՝ **Վարդանյան Մ.**, *Կլոր սեղան,* «Էջմիածին», 1996 թ., Բ-Գ, էջ 171:

[37] **Նավասարդյան Լ.**, Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Հայաստանի Կլոր սեղանի եռօրյա նիստ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, «Էջմիածին», 1997 թ., Ը-Թ, էջ 187 -191:

[38] Սույն հոդվածը չի ընդգրկում ԳԱՐԵԳԻՆ Բ Վեհափառ Հայրապետի գահակալության շրջանում Հայ Եկեղեցու հետ ունեցած հարաբերությունները: Արդի շրջանի համար կառաջարկեի ընթերցել անգլերենով մեր խմբագրությամբ (Հովակիմ վրդ.) հրապարակված գիքը: Journey of Service and Frendship, Ecumenical Works of the Mother See of Holy Etchmiadzin, during the Pontificate of His Holiness KAREKIN II, Catholicos and Suprmeme Patriarch of All Armenians, Mother See of Holy Etchmiadzin, 2008.

[39] Եպիսկոպոսական ժողով՝ գումարված Ս. Էջմիածնում, սեպտեմբերի 27-ից հոկտեմբերի 2-ը, «Էջմիածին», 1969 թ., Ժ– ԺԱ, էջ 23:

2. Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Բուլղարական Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք Նորին Սրբություն Մաքսիմի Հայտարարությունը (14 մայիս 1974 թ.),
3. Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Բուլղարական Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք Նորին Սրբություն Մաքսիմի Հայտարարությունը (27 մայիս 1974 թ.),
4. Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Համայն Աֆրիկայի Պապ և Պատրիարք Նորին Սրբություն Նիկոլաոս Զ-ի Հայտարարությունը (25 նոյեմբեր 1974 թ.),
5. Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Քենթրբերիի Արքեպիսկոպոս և Անգլիայի Առաջնորդ Մետրոպոլիտ Դոկտոր Ֆրեդերիկ Դոնալդ Կոգանի Համատեղ Հայտարարությունը (3 հոկտեմբեր 1977 թ.),
6. Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Եթովպական Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք Նորին Սրբություն Աբբա Թեքլե Հայմանոթի Համատեղ Հայտարարությունը (22 մայիս 1978 թ.):

### Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ

1. Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Հռոմի Պապ Նորին Սրբություն Հովհաննես-Պողոս Բ-ի Համատեղ Հայտարարությունը (13 դեկտեմբեր 1996 թ.),
2. Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Նորին Գերազանցություն Քենթրբերիի Արքեպիսկոպոս Ջորջ Քերիի Համատեղ Հայտարարությունը (10 նոյեմբեր 1997 թ.):

Որպես ամփոփում նշենք, որ մասնակցելով էկումենիկ շարժմանը՝ Հայ Եկեղեցին ի սկզբանե մի քանի խնդիրներ է դրել իր առջև, որոնք ցայժմ իրականացնում է մեծ հանձնառությամբ.

- Ներկայացուցչական առումով բարձր պահել Հայ Եկեղեցու հեղինակությունը միջեկեղեցական էկումենիկ հարաբերություններում:
- Իր ներդրումը բերել ընթացող աստվածաբանական երկխոսություններին՝ նպաստելով համագործակցությանը, աշխարհում խաղաղության հաստատմանը և սիրո քարոզչությանը՝ արդիական բազում խնդիրներ լուծելու ճանապարհին:
- Մեծացնել հայ ժողովրդի բարեկամների թիվը:
- Մեր ժողովրդին հուզող հարցերը լսելի դարձնել համայն աշխարհին՝ Եկեղեցիների և եկեղեցական կազմակերպությունների միջոցով:
- Իր առաքելության ճանապարհին Քույր Եկեղեցիների փորձառությունը ի սպաս դնել Մայր հայրենիքում և սփյուռքում իրականացվող գործընթացներին:

# ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

*ԳՐԻԳՈՐ ԲՐՈՒՏԵԱՆ*[*]
*Ֆիզիկա-մաթեմատիկական գիտութիւնների թեկնածու*

## ՈՐՈՇ ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԻՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՐԱՇԱՊԱՏՈՒՄ ՀԷՔԵԱԹՆԵՐՈՒՄ
## Ա

Որպէս բացառիկ խոր անցեալից մեզ հասած մշակութային իրողութիւններ, ժողովրդական հէքեաթները, յատկապէս՝ հրաշապատում հէքեաթները, կարող են ծառայել իբրեւ այլ աղբիւրներում բացակայող յոյժ արժէքաւոր տեղեկոյթի եզակի աղբիւր իրենց ակունքներին ժամանակակից մշակութային իրողութիւնների մասին: Թէպէտ շատ հետազօտողներ տարբեր առիթներով անդրադարձել են հայկական ժողովրդական հէքեաթներին, այդուհանդերձ, դրանք հարկ եղած չափով ուշադրութեան չեն արժանացել հայկական հնագոյն հաւատալիքների, տիեզերական եւ ժամանակային պատկերացումների ու դիցաբանութեան ուսումնասիրման առումով: Պատճառը, թերեւս, այն է, որ հէքեաթներից խուսափել են «*նոր ժամանակներում փոխառուած օտարամուտ տարրերի առանձնացման հարցում չսխալուելու նպատակով*»: Եւ սա էլ գալիս է նրանից, որ համարուել է, թէ հէքեաթները «*առաւել հեշտութեամբ են անցնում մի ժողովրդից միւսին, եւ մանաւանդ, նրանց մէջ պատմուած ամեն ինչին չէ, որ հաւատ են ընծայում, թէեւ **շատ հէքեաթներ կարող են բոլորովին հին բաներ պարունակել,** ինչպէս եւ պարունակում են*»[1] (ընդգծումը իմն է - Գ. Բ.): Այդուհանդերձ, հայ ժողովրդական հէքեաթների պարունակած որոշ տեղեկութիւններ ուսումնասիրուել են, եւ որոշ բան դուրս է կորզուել նրանցից: Սակայն նրանց պարունակած տեղեկոյթի մի կարեւոր բաղադրիչը տակաւին բաւարար հետազօտուած չէ: Խօսքն այն օրացուցային ու տիեզերական պատկերացումների մասին է, որոնք ժամանակակից են այդ հէքեաթների ակունքներին եւ որոնց մասին, ինչպէս ստորեւ կը տեսնենք, այս աղբիւրները պարունակում են մեծ ծաւալի յոյժ կարեւոր տեղեկոյթ:

Անշուշտ, մեզ հասած հայկական բոլոր հէքեաթները այս տեսանկիւնից քննելը շատ շահեկան կը լինէր հնագոյն օրացուցային ու տիեզերական պատկերացումները բեկոր առ բեկոր հաւաքելու, ի մի բերելու եւ ի վերջոյ անցեալի օրացուցային պատկերացումներն ամբողջապէս վերականգնելու առումով: Միեւնոյն ժամանակ, սակայն, դա շատ մեծ ծաւալի աշխատանք է, որ ներկայումս դուրս է իմ սուղ հնարաւորութիւններից: Ուստի, այստեղ կը սահմանափակուեմ **միայն որոշ** հէքեաթների քննութեամբ[2]:

Մեզ հետաքրքրող խնդրի առումով առաւել հետաքրքիր է «*Սինամ թագաւորի հէ-*

---

[*] ՀՀ ԳԱԱ Վիկտոր Համբարձումեանի տուն-թանգարան, ՀՀ, 0213, Արագածոտնի մարզ, գ. Բիւրական, էլ. հասցէ՝ vhm@sci.am:

[1] Այս եւ նախորդ մէջբերումը տե՛ս՝ **Մանուկ Աբեղեան**, Երկեր, հ. Է, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1975, էջ 15:

[2] Նոյնիսկ ընտրուած հեքէաթները կը քննուեն միայն մասնակիօրէն, ի նկատի առնելով ամսագրային յօդուածի սեղմ հնարաւորութիւնները:

*քեարը*», որի հիմնական նիւթը զրառուած է նաեւ «*Սըմաւոն թագաւոր եւ Գիլ*» խորագրով հէքեաթում[3]: Այս հէքեաթը իր որոշ դրուագներով շատ սերտ աղերսներ ունի նաեւ Սասնայ Ծռեր դիցավէպի (յատկապէս սրա առաջին ճիւղի) հետ: Համառօտ ներկայացնենք հէքեաթի մեզ հետաքրքրող դրուագները:

Զանց առնելով հէքեաթի սկզբնամասը, որ մեր խնդրին չառնչուող անկախ պատմութիւն է[4], բուն հրաշապատում մասը սկսւում է տղայի եւ իր նշանածի փախուստով: Տղան ու աղջիկը գիշերով ճանապարհը կորցնում են, մնում գիշերելու մի սարի գլխին: Առաւօտեան զարթնում-տեսնում են, որ մի վիշապ շրջապատել է իրենց, գլուխը դրել պոչի վրայ: Տղան ուզում է թրով կռուել վիշապի հետ, սակայն վիշապը բացատրում է, որ իր դէմ անզօր են թէ՛ ինքը եւ թէ՛ իր զէնքը: Պահանջում է որպէս «փրկագին» գնալ-բերել իր համար Սինամ[5] թագաւորի եւ իր կնոջ՝ Գիլի պատմութիւնը եւ իբրեւ առաջադրանքի կատարման երաշխիք՝ տղայի նշանածին պահում է իր մօտ պատանդ:

Մի տարբերակում տղան Սինամ թագաւորի քաղաքը որոնելիս հանդիպում է 3 ջրաղացպան եղբայրների: Սրանցից կրտսերը 30000 տարեկան է եւ չի լսել Սինամի մասին: Միջնեկը 40000 տարեկան է եւ դարձեալ չգիտի Սինամի տեղը: Իսկ աւագը 60000 տարեկան է եւ յիշում է, որ գրկի երեխա եղած ժամանակ մի աղմուկ է լսուել, եւ իր մայրն ասել է, թէ դա Սինամ թագաւորն է, որ գնացել է 40 ծովի կղզին:

Յօդուածը շատ չուռճացնելու համար սրան յաջորդող իրադարձութիւնների շարադրանքն ու քննութիւնը թողնենք շարքիս յաջորդ յօդուածին եւ այստեղ փորձենք քննութեան առնել միայն Սինամի պատմութեան օրացուցային – տիեզերաբանական կողմը:

Արդ քննենք Սինամ թագաւորի պատմութիւնը առանձին:

Թռչունի օգնութեամբ Սինամի կղզին հասնելուց յետոյ տղան ծանօթանում է Սինամ թագաւորի հետ եւ իմանում վերջինիս պատմութիւնը, որ հետեւեալն է:

Սինամը հայերի թագաւոր է եղել: Ունեցել է 3 ձի. մինը՝ կրակից, միւսը՝ քամուց եւ երրորդը՝ կայծակից (կամ ջրից) ծնուած: Ձիերի նիհարելու պատճառով Սինամը գլխատել է 29 ձիապանների: 30-րդը նրան յուշել է ձիերի նիհարելու պատճառը գտնելու միջոցը: Սինամը պարզել է, որ իր սիրելի կինը՝ Գիլը, դաւաճանում է իրեն: Երբ թագաւորը բացայայտել է դաւաճանութիւնը եւ փորձել է պատժել դաւաճանին, Գիլը կախարդական գաւազանով Սինամին դարձրել է գայլ՝ 7 տարի, ապա էշ՝ եւս 7 տարի, ապա արագիլ՝ եւս 7 տարի եւ վերջն էլ շուն՝ դարձեալ 7 տարի: Ի վերջոյ Սինամը ազատուել է այս փորձանքներից վաճառականի (հացթուխի) աղջկայ օգնութեամբ, վերստին դարձել է մարդ, պատժել չարագործներին. կնոջ սիրեկանին դարձրել է փուշ, զոքանչին՝ ագռաւ, կնոջն էլ՝ խնձոր: Այս ամենից յետոյ Սինամը Աստծուն

[3] Հայ ժողովրդական հէքեաթներ (այսուհետ՝ ՀԺՀ), հ. 3, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1962, էջ 80 – 94 նաեւ էջ 274 – 282: Այս նոյն հէքեաթի տարբերակներն են «Սինան թագաւորը», ՀԺՀ, հ. 5, 1966, էջ 28 – 35, «Հազարան բլբուլ» հէքեաթի մի հատուածը՝ ՀԺՀ, հ. 8, 1977, էջ 555 – 560, «Ասլանզադէ ու Ջանփոլադ» հէքեաթի մի դրուագը՝ ՀԺՀ, հ. 10, 1967, էջ 62 – 69, «Սինամ թագաւորի հէքեաթը»՝ ՀԺՀ, հ. 11, էջ 131 – 137, «Փիր-վալին» հէքեաթի մի հատուածը՝ ՀԺՀ հ. 13, 1985, էջ 50 – 57: Աշխատանքիս ընթացքում կ՚օգտուենք նաեւ որոշ այլ հէքեաթներից, որ պարունակում են մեզ հետաքրքրող տեղեկութիւններ:

[4] Անդ, տե՛ս 550 եւ 548 էջերում այդ հէքեաթին ու պատմողին վերաբերող ծանօթագրութիւնները:

[5] Բուն վերոնշեալ հէքեաթում թագաւորի անունը Սըմաւոն է, որ ուղղել եմ Սինամ՝ հիմք ընդունելով նոյն բովանդակութեամբ բազմաթիւ այլ հէքեաթների տուեալները:

խնդրել է տանել իրեն 40 ծովի կղզին, որ մարդու երես չտեսնի եւ դրանից յետոյ ապրել է այդտեղ:

Տղան պատմութիւնն իմանալուց յետոյ նոյն թռչունի[6] օգնութեամբ փախչում է. Սինամը, տեսնելով, որ իր զաղտնիքը պիտի տարածուի, իրեն ծովն է զցում՝ մեռնում: Տղան գալիս է, պատմում այս ամենը փիշապին, սա պատռում է կաշին, միջից դուրս է գալիս մի սիրուն աղջիկ:

Նախքան առաջ անցնելը, համարակալենք մեզ հետաքրքրող հէքեաթի տարբերակները լատինական տառերով եւ աղիւսակի տեսքով ներկայացնենք հէքեաթի՝ մեզ հետաքրքրող տուեալներն ըստ այդ տարբերակների: Ահա մեզ հետաքրքրող հէքեաթների անունները, աղբիւրները եւ մեր տուած համարները.

| Հէքեաթի անունը | Սրմաւոն թազաւոր եւ Գիլ | Սինամ թազաւորի հէքեաթը | Սինան թազաւորը | Հազարան բլբուլ | Ասլանզադէ ու Զանփոլադ | Սինամ թազաւորի հէքեաթը | Փիրվալին |
|---|---|---|---|---|---|---|---|
| ՀԺՀ հատորն ու էջը | 3, 80 – 94 | 3, 274 – 282 | 5, 28 – 35 | 8, 555 – 560 | 10, 62 – 69 | 11, 131 – 137 | 13, 50 – 57 |
| համարը | a | b | c | d | e | f | g |

Իսկ այս հէքեաթների պարունակած որոշ տուեալների եւ դրանց տարբերակների ցուցակն ըստ աղբիւրների հետեւեալն է.

| տուեալը\աղբիւրը | a | b | c | d | e | f | g |
|---|---|---|---|---|---|---|---|
| Սինամի տեղն իմացողը | ծերունի 300-ամեայ, թռչուն 300-ամեայ | արծիւ | ծերունի, թռչուն | ծերունի | | | |
| Սինամի մօտ տանողը | թռչուն | արծիւ | թռչուն | - | արծիւ | Սինամի արծիւը | թռչուն |
| Թռչունը ձուտ է հանել | 12 անգամ | | | | | | 40 տարի |
| Թռչունը Սինամի մօտ եղել է | 150 տարեկանում | ձուտ եղած ժամանակ | | | | | |
| Ժամանակը Սինամի մօտ | 40 + 10 + 5 = 55 օր | 1 տարի | | | | | |

[6] Հէքեաթի (d) տարբերակում տղան Սինամի մօտից փախչում է աներեւոյթ դարձնող գլխարկի օգնութեամբ:

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| զնալուց առաջ | | | | | | | |
| Սինամի ընտանիքը | կին, զոքանչ | կին, զոքանչ | կին, աղջիկ, զոքանչ | կին, զոքանչ | շատ կանայք | կին, աղջիկ, | կին, քոյր |
| ձիերի թիւը | 2 | 3 | 2 | 2 | շատ | | 3 |
| ձիերի ծագումը | զնուած 1000 մանեթով | կայծակ, քամի, կրակ | | | | | քամի, կրակ, ջուր |
| ձիապանների թիւը | - | 30 | | | | | |
| սպանուած ձիապաններ | - | 29 | | | | | 1000 |
| կնոջ սիրեկանը | արաբ | արաբ | 40 աւազակ | 7 վիշապ | սեւ արաբ | | 7-գլխանի դեւ |
| տեւողութիւնը | | | | | | | 3 ժամ |
| առաջին կենդանին | | գայլ | - | | | | շուն |
| երկրորդ կենդանին | էշ | էշ | - | էշ | էշ | էշ | էշ |
| երրորդ կենդանին | շուն | արագիլ | - | կռունկ | շուն | շուն[7] | |
| չորրորդ կենդանին | կատու | շուն | շուն | շուն | | | 1 շաբաթ հանգիստ |
| կախարդուած մնալու ժամանակը | - | **4** – **7** = **28** տ. | | | | | մէկական շաբաթ |
| 40 ծովի կղզում եղած ժամանակը | | 60000 տարի | | | | | |
| Սինամի զաղտնիքը լսելով վիշապը դառնում է | - | սիրուն աղջիկ | - | | (Սինամի) աղջիկը | սիրուն աղջիկ | սիրուն աղջիկ |

[7] Բնագրում այստեղ գրուած է «դավճի», որ անիմաստ է. ՀԺՀ տարբեր հատորներում բարբառների համար տրուած բառարաններում այսպիսի բառ չկայ: Հաւանաբար վրիպակ է. այստեղ նախապէս եղած պիտի լինի «բաւճի» - «բօճի», որ կը նշանակի փոքրիկ շուն եւ կը ներդաշնակի միւս տարբերակների իմաստին: Ըստ այդմ էլ շտկել եմ՝ դարձնելով «շուն»:

Սինամին վերաբերող համարեա բոլոր թուերը օրացուցային իմաստ ունեն: Այսպէս. Սինամն ունեցել է **3** ձի եւ **30** ձիապան (որոնցից 29-ին սպանել է, վերջինից իմացել կնոջ գաղտնիքի մասին): Կախարդուած վիճակում մնացել է **4** – **7** = **28** տարի: Իր կեանքի ողբերգական իրադարձութիւնների աւարտից յետոյ Սինամը 40 ծովի կղզում ապրել է **60** 000 տարի (համաձայն ջրաղացպան աւագ եղբօր պատմածի եւ տարիքի): Այս թուերն արդեն յուշում են, որ Սինամը աստեղային կերպար է եւ ըստ ամենայնի պիտի լինի հէնց **լուսնային** կերպար:

Նախ նկատենք, որ այս թուերի իմաստները պիտի **անկախ** լինեն դրանցով արտայայտուած մեծութիւնների չափման միաւորներից: Սա երեւում է թէկուզ հէնց վերի աղիւսակից: Այստեղ Սինամի կախարդուած մնալու տեւողութիւնը մի դէպքում **4** – **7** = **28 տարի** է (b), մի այլ դէպքում (g) ամեն կենդանու վիճակում Սինամը լինում է մէկական շաբաթ, այսինքն՝ պիտի լինի 28 **օր**: Ըստ այսմ, եթէ վերանանք չափման միաւորներից, նայենք միայն թուերը, կունենանք բաւական հասկանալի պատկեր:

Իրօք, 4 – 7 = 28-ը Լուսնի 4 հիմնական փուլերը ցոյց տուող առնչութիւն է: Լուսնի հիմնական փուլերը՝ նորալուսին, առաջին քառորդ (կիսալուսին), լիալուսին եւ վերջին քառորդ, իրար յաջորդում են հէնց 7-ական օր ընդմիջումով: Ամեն պարագայում, այս 7-ական օրերը Լուսնի հիմնական փուլերի կանոնականացուած ժամանակներն են: Եւ 28-ն էլ լուսնային ամսի այն օրերի քանակն է, որոնց ընթացքում Լուսինը երեւում է երկնքում[8]:

Սինամը 30 ձիապան ունի: Սրանցից 29-ին նա սպանել է, մնացել է մէկը, եւ այս մէկից էլ նա իմացել է կնոջ դաւաճանութեան մասին: Այս 30-ը արեգակնային օրացոյցի ամսուայ տեւողութիւնն է՝ արտայայտուած օրերով: Սա էլ, իր հերթին, գալիս է Լուսնի փուլերի կրկնման պարբերութիւնից, որ, փաստօրէն, զուգընթացական ամսի (29.53 օր) տեւողութեան կլորացուած արժէքն է: Այսինքն, հիմքում սա եւս լուսնային ամիսն է: Աւելին, գիտենք, որ տոմարական տարբեր հաշուումներում լուսնային ամսի տեւողութիւնը եւս ընդունւում է հէնց 30 օր: Այսինքն, Սինամի պարագայում ունենք լուսնային ամսի տեւողութեան երկու տարբերակների համադրումը նրան վերաբերող իրողութիւնների հետ: Լուսնային կերպար լինելն է յուշում նաեւ Սինամի անունը, որի սկիզբը՝ **Սինը,** նոյնական է լուսնային աստուածների անուններին տարբեր լեզուներում[9]:

Սինամի կնոջ անունը՝ Գիւլ, ընդհանրապէս նշանակում է ծաղիկ, իսկ մասնաւորապէս՝ հէնց **վարդ** ծաղիկը: Իսկ վարդ ծաղկի առնչութիւնը Արեգակի հետ յատուկ հիմնաւորման կարիք չունի: **Վարդ** ծաղիկը շատ դէպքերում հանդէս է գալիս իբրեւ **Արեւի** նշանակ: Աւելին, հէքեաթում կախարդանքից վերջնականապէս ազատուելուց

---

[8] Ընդհանրապէս Լուսինը ամսւայ ընթացքում կարող է երեւալ նաեւ աւելի քիչ՝ 26 կամ 27 օր: Դա կախուած է Լուսնի «բարձր» կամ «ցածր» լինելուց, եղանակային պայմաններից ու դիտման վայրից: Ամեն դէպքում, 28 օրը այն առաւելագոյն տեւողութիւնն է, որի ընթացքում Լուսինը կարող է երեւալ ամսուայ ընթացքում:

[9] Սրան է յարում նաեւ հայերէն Լու-սին բառի երկրորդ կէսը՝ սին, որ նոյնական է աքքադական եւ եմենական դիցաբանութիւնների մէջ լուսնային աստուծոյ «Սին» անուանը. տե՛ս Мифы Народов мира, т. 2, Советская Энциклопедия, Москва, 1992, ст. 437, նաեւ՝ Enn Kasak, Raul Veede, Understanding planets in ancient Mesopotamia, Folklore, vol. 16, 2001, pp.17 – 18, (http:/haldjas.folklore.ee/folklore/vol16/planets.pdf): Ի դէպ, հէնց այս կերպարի լուսնային լինելն էլ յուշում է, որ տարբեր հէքեաթներում առկայ այս անուան տարբերակներից հարազատ նախնականը պիտի լինի Սինամը:

յետոյ Սինամը Գիւլին դարձնում է **խնձոր**: Իսկ խնձորը աղջկայ եւ յատկապէս **արեգակնային** աղջկայ նշանակը լինելը, ի թիւս բազմաթիւ այլ աղբիւրների, վկայուած է նաեւ Սասնայ Ծռերում, ուր Դեղձունի **ոսկի խնձորը** դրուած է սեան (կամ աշտարակի) գլխին եւ արեւի պէս փայլփլում է: Այնպէս որ, ի դէմս **Սինամ – Գիւլ** զոյգի ունենք **Լուսին – Արեգակ** զոյգը: **Արեւ – Լուսին** զոյգի, նրանց առնչութիւնների եւ յատկապէս **հակառակութեան** մասին կան բազմաթիւ տեղեկութիւններ ազգագրական աղբիւրներում: Սրանց բոլորին անդրադառնալը զանց առնելով՝ նկատենք, որ սրանք բոլորն էլ պիտի ունենան մէկ ընդհանուր աստղագիտական հիմք, որ հետեւեալն է:

Լուսինը մէկ ամսի ընթացքում անցնում է ամբողջ երկնակամարով եւ լուսնային ամսի վերջում մօտենում է Արեգակին: Հէնց այս օրերին, երբ Լուսինը լինում է Արեգակի անմիջական մերձակայքում (տեղի է ունենում Արեգակի եւ Լուսնի **միացում**), Արեւի պայծառ լոյսի պատճառով Լուսինը դառնում է աչքի համար անտեսանելի: Այսինքն, պարզունակ ընկալմամբ պիտի համարուի, որ Լուսինը Արեւին մօտենալով կորչում է, «մահանում» է: Աւելին, հէնց այս նոյն օրերին (աստղագիտական նորալուսնի ժամանակ) է տեղի ունենում Արեգակի խաւարումը, երբ Արեգակի սկաւառակը ծածկւում է Լուսնի սկաւառակով: Անշուշտ, Արեգակի խաւարումները շատ աւելի սակաւադէպ իրադարձութիւններ են, քան Լուսնի նորելը (որ լինում է ամիսը մէկ անգամ)[10]: Բնականաբար, այս երկնային իրադարձութիւնները կանոնաւոր դիտողները, դրանց տալով դիցաբանական մեկնաբանութիւն, պիտի շատ լուրջ հակամարտութիւն տեսնէին Լուսնի եւ Արեգակի՝ դրանց համապատասխանող դիցական կերպարների միջեւ:

Սինամի փորձութիւններն էլ սկսւում են հէնց այն ժամանակ, երբ նա բացայայտում է կնոջ դաւաճանութեան գաղտնիքը եւ փորձում է պատժել նրան, այսինքն՝ հասնում է կնոջը: Սա հէնց նշանակում է, որ Լուսինը հասնում է Արեւին: Եւ, ի դէպ, սա էլ տեղի է ունենում Սինամի ձիապաններից 29-ի սպանուելուց յետոյ՝ վերջին՝ 30-րդ ձիապանի ժամանակ: Այսինքն՝ սա պիտի համապատասխանի լուսնային ամսի 29 օրերից յետոյ եկած վերջին՝ 30-րդ օրուան: Ի դէպ, հէքեաթի (d) տարբերակում վերջին ձիապանը Սինամին ասում է. *«Դու չես կարող ինձ սպանել»:* Սա առնուազն տարօրինակ է, ի նկատի ունենալով, որ Սինամը թագաւոր է, իսկ ասողն ընդամենը՝ ձիապան[11]: Միեւնոյն ժամանակ, սա լիովին հասկանալի է դառնում, եթէ ընկալենք Սինամին իբրեւ Լուսին, իսկ «յանդուգն» ձիապանին իբրեւ լուսնային ամսուայ վերջին օր: Իրօք, ամսուայ վերջին՝ 30-րդ օրը, Լուսինն այլեւս չի երեւում՝ չկայ: Ուրեմն, եւ նա չի կարող կարգադրութիւններ անել, այդ թւում եւ՝ մահավճռի: Ըստ էութեան

---

[10] Ընդհանրապէս խաւարումները կրկնւում են 18 տարի 11 օր պարբերութեամբ: Սա տակաւին հին բաբելացիներին յայտնի պարբերութիւն է, որ այժմ կոչւում է «**սարոս**»: Այս մասին տե՛ս, օրինակ, В. А. Бронштэн, Как движется Луна, “Наука”, Москва, 1990, ст. 10 – 21.

[11] Այս դրուագը յոյժ ուշագրաւ է նաեւ հետեւեալ առումով: Աշխարհիկ կեանքում տիրապետող պատկերացումների տրամաբանութեան համաձայն թագաւորը պիտի կարողանայ անել ամեն ինչ, նա պիտի լինի ամենակարող: Սրան հակառակ, սոյն դրուագում ինչ-որ շարքային ձիապան յանդգնում է այսպիսի խօսքեր ասել թագաւորին: Այսինքն, հէքեաթում պահպանուել է մի դրուագ, որ **ամբողջովին հակառակ է** աշխարհիկ կեանքում տիրապետող պատկերացումներին: Սա կարելի է դիտել իբրեւ վկայութիւն այն բանի, որ հէքեաթները շատ պահպանողական են, եւ սրանցում առկայ դրուագները կարողանում են շատ երկար ժամանակ յարատեւել նախնական վիճակով, նոյնիսկ կեանքի սովորական տրամաբանութեանը հակառակ լինելու պարագայում:

այդ օրից նա արդէն թագաւոր չէ: Այսինքն՝ այդ ձիապանին համապատասխանող օրը էապէս տարբեր է ամսուայ այլ օրերից: Եւ սա արտայայտուած է նաեւ հէքեաթի (b) եւ (c) տարբերակներում, ուր այս վերջին ձիապանը միւսներից տարբեր է իր ծագումով կամ բնոյթով. նա քուսակ է, կամ՝ աղքատի տղայ:

Ուշագրաւ է նաեւ Սինամի կնոջ՝ Գիւլի սիրեկանի կերպարը: Սա կամ **սեւ** արաբ է, կամ **դեւ**, կամ **վիշապ**: Բոլոր դէպքերում էլ սա առնչուած է **սեւ** գոյնի հետ: Նոյնիսկ (b), (e) տարբերակներում Գիւլ թագուհին իր սիրեկանից ծնում է մի **սեւ** արաբ երեխայ, որին Սինամը գլխատել է տալիս: Եւ հէքեաթի որոշ տարբերակներում Գիւլը Սինամին կախարդելուց յետոյ հէնց իր **սեւ** սիրեկանին է նստեցնում Սինամի տեղը թագաւոր: Այսինքն, իշխանութիւնը անցնում է Սինամի հակառակ ուժին, որ **սեւ** է:

Արդ, եթէ փորձենք վերաշարադրել Սինամի պատմութեան այս հատուածը ըստ մեր հասկացածի, կը ստացուի հետեւեալ պատկերը: Լուսինը ամսուայ 29 օրերն անցնելուց յետոյ 30-րդ օրը փորձում է ծածկել (նուաստացնել, տկարացնել, զօրութիւնից զրկել) Արեգակին: Այսինքն, փորձում է խաւարեցնել Արեգակը: Սակայն դա չի յաջողւում, եւ Արեգակն է Լուսնին զրկում զօրութիւնից, Լուսինը դառնում է աներեւոյթ, ընկնում է այլ աշխարհ (**Սեւ** աշխարհ): Սրան յաջորդում է Սինամի կախարդուած մնալու շրջանը (Լուսնի չերեւալը): Այս ընթացքում Լուսինը անցնում է ամբողջ երկնակամարով: 7-ական օր (տարի) **գայլ**, **էշ**, **արագիլ (կռունկ)** եւ **շուն** լինելը պիտի նշանակի պարզապէս անցնել այս կենդանիներին համապատասխան կենդանակերպերով: Անշուշտ, այսօր մեզ յայտնի կենդանաշրջանում չկան այսպիսի կերպարներ: Սակայն այսօր եւս կենդանաշրջանի մէջ յատուկ առանձնանում են չորս հիմնական կենդանակերպեր, որոնցում Արեգակը լինում է արեւադարձերի եւ գիշերահաւասարների օրերին: Ներկայումս դրանք են Ջրհոս, Ցուլ, Առիւծ եւ Կարիճ նշանները: Նախորդ շուրջ 2000 տարիների ընթացքում այդպիսիք են եղել Ձուկ, Երկուորեակ, Կոյս, Աղեղնաւոր նշանները: Դրանից էլ առաջ մօտ 2000 տարիներ այդպիսիք եղել են Խոյ, Խեցգետին, Կշիռ եւ Այծեղջիւր կենդանակերպերը: Աւելի առաջ այդպիսիք են եղել Ցուլ, Առիւծ, Կարիճ եւ Ջրհոս նշանները[12]: Այս նշաններից եւ ոչ մէկը չի համապատասխանում վերը թուարկուած կենդանիներին: Սակայն Սինամին առնչուող կենդանիները բաւական լաւ ներդաշնակում են հին յունական կենդանաշրջանի որոշ կենդանիներին: Այսպէս, հին յունական կենդանաշրջանում ունենք **Շուն**, **Էշ**, **Եզ** եւ **Քաջահաւ (Ibis)** թռչունը[13], որոնք հէնց նշուած հերթականութեամբ իրար յաջորդում

[12] Երկնքի այս հիմնական կէտերի տեղափոխութիւնը ժամանակի ընթացքում լինում է ի հետեւանք Երկրի պտտման առանցքի դարաւոր գալարապտոյտի: Իւրաքանչիւր կենդանակերպում այդ կէտերից ամեն մէկը լինում է շուրջ 2000 տարի: Մօտաւորապէս ն. Ք. 4000 թուականին գարնանամուտի կէտը մտել է Ցուլ կենդանակերպ (միաժամանակ ամառնամուտի կէտն էլ մտել է Առիւծ): Տե՛ս այս մասին, օրինակ, E. Bonn, M. M. Cirkovic, I. Milosavljevic, A new proposition for reading the Mithraic tauroctony scene, Astron. Nachrichten/AN, 323, (2002), 6, pp. 579 – 580.

[13] Мифы Народов мира, т. 1, Советская Энциклопедия, Москва, 1991, ст. 441. Ի դէպ, ուշագրաւ է, որ այս շարքի **Էշ** կենդանակերպը նոյնական պիտի լինի այսօրուայ **Խեցգետին** կենդանակերպին: Տակաւին Էրատոսթենէսը Խեցգետինը նոյնացրել է էշերի հետ: Իսկ Խեցգետնի γ եւ δ աստղերի Asellus (հիւսիսային եւ հարաւային) անունը ուղղակի ծագում է «իշուկներ» նշանակող բառից, որ գալիս է տակաւին Պտղոմէոսից: Բացի այդ, Հրէից աւանդոյթում էլ .Խեցգետին կենդանակերպը համադրուել է Իսաքարի ցեղին, որին էլ Յակոբը նմանեցրել է «ուժեղ **էշի**», իսկ Բենիամինի ցեղն էլ նմանեցուած է «պատառոտող **գայլի**». Ծննդ., ԽԹ, 14, 27, տե՛ս Richard H. Allen, Star Names. Their Lore and Meaning, Dover Publ., New York,

են երեք ընդ մէջ (այնպէս, ինչպէս պիտի իրար յաջորդեն կենդանաշրջանի չորս հիմնական կենդանակերպերը): Եթէ յունական շարքի Քաջահաւ թռչունը նոյնացնենք մեր Արագիլի կամ Կռունկի հետ (պարզապէս համապատասխան համարենք արագիլին կամ կռունկին, որոնց քաջահաւն, իրօք, արտաքուստ շատ նման է), ապա միակ անհամապատասխանութիւնը կը մնայ Եզ – Գայլ զոյգի տարբերութիւնը: Այսինքն, եթէ զանց առնենք Եզ – Գայլ տարբերութիւնը, միւս երեք զոյգերի պարագայում ունենք լրիւ համապատասխանութիւն: Մի տարբերութիւն էլ այս կենդանիների յաջորդականութիւնն է: Այս պարագայում էլ միայն մէկ տեղափոխութիւն է պահանջւում լրիւ համապատասխանութիւն ունենալու համար: Եթէ փոխուեն Եզի (Գայլի) եւ Էշի տեղերը, կենդանիների շարքերը կ՚ունենան միեւնոյն յաջորդականութիւնը[14]:

Այսպիսով, ստանում ենք, որ այն կենդանիները, որոնց փոխարկուել է Սինամը, հէնց կենդանաշրջանի չորս հիմնական կենդանակերպերն են, որոնցում Արեգակը լինում է գիշերահաւասարների եւ արեւադարձերի օրերին[15]: Այսինքն, սրանք նշանակում են **ամբողջ կենդանաշրջանը,** ուրեմն եւ՝ Արեգակի ու Լուսնի ամբողջ ուղին երկնակամարով: Ըստ այսմ, Սինամի կախարդուած վիճակը իրօք համապատասխանում է Լուսնի՝ երկնակամարով լրիւ շրջան գործելուն: Սա էլ մէկ ամիսն է: Ահա, այսքան ժամանակ յետոյ Լուսինը նորից հասնում է, հանդիպում է Արեւին, եւ այս անգամ նա ի վերջոյ կարողանում է յաղթել Արեւին. Լուսինը ծածկում է Արեւին՝ այսինքն՝ լինում է Արեւի խաւարում[16]:

Սրանից յետոյ Սինամը հեռանում է աշխարհից՝ մեկուսանում է 40 ծովի կղզում: Ընդ որում՝ 60 000 տարի:

Այսպիսով, տեսնում ենք, որ Սինամի կեանքին վերաբերող թուերը աստղագիտական – տիեզերական իրողութիւններ են նշանակում: Բնականաբար, ակնկալելի է,

---

1963, First published New York, London, Leipzig, Paris 1899, pp. 107 – 111. Փաստօրէն, Հրէից աւանդոյթում էլ կան **էշ** եւ **գայլ** կենդանակերպերը:

[14] Այսպիսի դրափոխութեամբ Սինամի կենդանիների շարքը կը դառնայ **Էշ**, **Գայլ (Եզ)**, **Արագիլ**, **Շուն:** Իսկ յունական տարբերակում շարքի սկիզբը Շունն է: Սակայն սա էական տարբերութիւն չէ: Կարեւորը մեր դէպքում կենդանակերպերի յարաբերական դասաւորութիւնն է, իսկ շարքի սկիզբը կախուած է միայն այն բանից, թէ ինչ ժամանակի է վերաբերում սոյն իրողութիւնը: Նոյնիսկ հնարաւոր է դրա միջոցով գնահատական տալ այս պատմութեան ծագման ժամանակին: Իսկ գալով դրափոխութեանը, ապա դա այնքան էլ սկզբունքային չի կարող լինել, քանի որ գործ ունենք տեւական ժամանակի ընթացքում բերնից բերան անգիր փոխանցուած պատմութեան հետ, եւ դրափոխութիւն կարող էր առաջանալ պարզ շփոթութեան հետեւանքով: Ի դէպ, հէքեաթի (g) տարբերակում կան միայն երկու կենդանիներ՝ **շուն** եւ **էշ**, եւ սրանց հերթականութիւնն էլ համընկնում է մեր բերած յունական շարքի սկզբին:

[15] Առանձին հարց է, թէ ինչո՞ւ այստեղ ունենք ոչ թէ հայկական իրականութեան մէջ ընդունուած կենդանակերպերը, այլ յունականները: Հնարաւոր է այս հարցին տալ տարբեր պատասխաններ. փոխառութիւն յունական միջավայրից, խմբագրում յունական ազդեցութեան տակ, կամ նոյնիսկ հակառակը: Սակայն նախքան այս հարցին պատասխանելը հարկ է պարզել կենդանակերպերի նախնական տարբերակները տարբեր (ի մասնաւորի՝ հայկական եւ յունական) մշակոյթներում: Դրանից յետոյ միայն կարելի կը լինի փորձել տալ այս հարցի պատասխանը:

[16] Շատ գայթակղիչ է այս իրադարձութիւնների յաջորդական շարքն ընկալել իբրեւ Արեւի եւ Լուսնի խաւարումների մէկ պարբերաշրջան՝ **սարոս**, որ պիտի լինի 18 տարի եւ 11 օր: Այս պարագայում Սինամի ամբողջ կեանքը պիտի զուգադրուի սարոսին՝ Արեւի լրիւ խաւարումից սկսած մինչեւ յաջորդ լրիւ խաւարումը: Սակայն այսպիսի զուգադրման համար մեր հիմքերը բաւարար չեն:

որ նրա ամբողջ կեանքն էլ կապուած լինի տիեզերական ինչ-ինչ երեւոյթների – իրադարձութիւնների հետ: Պարզելու համար, թէ ինչ երեւոյթներ – իրադարձութիւններ են դրանք, փորձենք աւելի հանգամանալի հասկանալ նրա ամբողջ կեանքը:

Սինամի կեանքը կարելի է տրոհել երեք հատուածի: Առաջինը նրա երջանիկ կեանքն է մինչ կնոջ դաւաճանութեան մասին իմանալը: Ապա գալիս է նրա կեանքի արկածալից շրջանը, երբ նա հակամարտութեան մէջ է մտնում դաւաճան կնոջ հետ: Եւ այս ամենին յաջորդում է նրա կեանքի վերջին շրջանը, որի տեւողութիւնը տրուած է 60 հազար տարի. այս ընթացքում նա մեկուսացած ապրում է 40 ծովի կղզում: Սրանից յետոյ Սինամի գաղտնիքը բացայայտւում է եւ նա մեռնում է:

Քանի որ, ինչպէս տեսանք, Սինամը երկնային կերպար է, բնական է, որ նրա ամբողջ կեանքը զուգակշիռ դրուած լինի **ամբողջ** երկինքն ընդգրկող իրադարձութեանը: Այսպիսի իրադարձութիւն է տարեշրջանի բոլորելը: Այս՝ տարեշրջանի ընթացքում է, որ Արեգակը մէկ լրիւ պտոյտ է գործում երկնքով: Այս նոյն տեւողութեան ընթացքում է, որ գիշերային երկնքի տեսքը դանդաղ փոփոխուելով, վերստին գալիս է նախնական վիճակին: Այսինքն, Սինամի կեանքը պիտի զուգակշիռ լինի տարեշրջանին:

Սինամի կեանքի առաջին շրջանի մասին հէքեաթում ոչինչ **ուղղակի** չկայ: Այս շրջանի մասին գիտենք միայն, որ Սինամը եղել է երջանիկ եւ ունեցել է 3 հրեղէն ձի: Եւ այս շրջանն աւարտուել է, երբ նրա կինը, ամուսնուն դաւաճանելով, սկսել է օգտագործել, յոգնեցնել, տանջել այս ձիերը: Այս շրջանից յետոյ, փաստօրէն, աւարտւում է Սինամի ոչ միայն երջանկութիւնը, այլ նաեւ իշխանութիւնը: Փորձենք սա հասկանալ: Ձին, ինչպէս գիտենք, Արեւի խորհրդանիշ է. յայտնի է, որ հնում Հայաստանում եւ մերձակայ երկրներում Արեւին ձի են զոհաբերել[17]: Ձիակառքով է երկնակամարով անցել Արեւ աստուածը յունական դիցաբանութեան մէջ, ձիերով (կամ ձիերի խմբերով) են նշանակուած ամիսները եւ տարուայ եղանակները Սանահինից գտնուած բրոնզէ գօտի-օրացոյցի վրայ[18] եւն: Ըստ այսմ, Սինամի 3 ձիերը կարող են լինել կամ 3 ամիսներ, եւ կամ՝ տարուայ 3 եղանակներ: Տարուայ 3 եղանակները պիտի ընդգրկէին կամ ամբողջ տարին (եթէ, ինչպէս վկայում են որոշ ծանրակշիռ տուեալներ, տարին բաղկացած լինէր միայն 3 եղանակներից[19]), եւ կամ տարուայ մեծագոյն մասը (եթէ տարին լինէր 4 եղանակից բաղկացած): Իսկ Սինամի կեանքը մեր հէքեաթում ունի եւս մի քանի շրջաններ, ուր ձիերը ոեւէ մասնակցութիւն չունեն: Ուրեմն, այս 3 ձիերը չեն կարող նշանակել տարուայ եղանակները: Մնում է սրանք հասկանալ իբրեւ ամիսներ: Ստանում ենք տարուայ 3 ամիսներ՝ նշանակուած Սինամին պատկանող ձիերով: Սինամը արական կերպար է (թագաւոր): Իսկ արական կերպարի հետ կապուած 3 ամիսները անմիջապէս յիշեցնում են Հայկի 3 որդիները եւ նրանց անուններով կոչուած 3 ամիսները, որոնց մասին մեզ աւանդուած է Խորենացու, Անանիա Շիրակունու, Յովհ. Սարկաւագի, Յովհ. Վանականի եւ այլոց երկերում[20]: Եւ

---

[17] Տե՛ս, օրինակ, **Քսենոփոն**, Անաբասիս, Դ, 35, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1970, էջ 98, նաեւ՝ **Հերոդոտոս**, Ա, 216, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1986, էջ 88:

[18] **Բ. Ե. Թումանեան**, **Յ. Յ. Մնացականեան**, Բրոնզէ դարի գօտի-օրացոյց, «Միտք», Երեւան, 1965, էջ 34 – 36:

[19] Տե՛ս, օր., **Բ. Ե. Թումանեան**, **Յ. Յ. Մնացականեան**, նշ. աշխ., էջ 35 – 36:

[20] **Մովսէս Խորենացի**, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, էջ 38, **Անանիա Շիրակացի**, Տիեզերագիտութիւն եւ տոմար, Հայպետհրատ, Երեւան, 1940, էջ 76 – 77, Յովհաննէս Իմաստասէրի մատենագրութիւնը, Երեւանի Համալսարանի հրատ., Երեւան, 1956, էջ 224, Յաղագս տարեմտին ի

սա էլ մեզ յուշում է, որ հարկ է զուգահեռներ փնտրել Նախահայկեան օրացոյցին վերաբերող իրողութիւնների հետ:

Նախահայկեան օրացոյցում էլ տարուայ **սկզբի 3 ամիսները** ձօնուած են եղել Հայկի (Հայր աստուծոյ) **3 որդիներին**, որոնք եղել են արեգակնային աստուածներ[21]: Այս զուգահեռով հնարաւոր է նոյնիսկ այս 3 ձիերը ընկալել իբրեւ Սինամի 3 որդիների նշանակներ[22]: Այսինքն, Սինամի կեանքի սկզբի երջանիկ շրջանը կարող ենք նոյնացնել տարեշրջանի 3 ամիսների հետ: Տարեշրջանի այս հատուածը արական կերպարի՝ Սինամի իշխանութեան տակ է:

Սրան յաջորդում է տարեշրջանի երկրորդ մասը՝ իգական կերպարի՝ Գիւլի (Սինամի կնոջ) իշխանութեան տակ: Սրա սկզբում տեսնում ենք, որ Սինամի ձիերն արդէն «շահագործում» է նրա կինը: Եւ հէնց սա էլ հանգեցնում է հակամարտութեան: Եթէ ձիերը հասկանանք պարզապէս իբրեւ ամիսներ, ապա Սինամի ձիերն օգտագործելը պիտի նշանակի, որ ամիսները այլ՝ իգական իշխանութեան տակ են անցնում: Ընդ որում, եթէ առաջին փուլում Սինամը **միայնակ** է տիրապետում իր 3 ձիեր – ամիսները, ապա յաջորդ փուլում Սինամի կինն ու զոքանչը **երկուսով** են տիրում ձիերին – ամիսներին[23]: Եւ քանի որ ձիերի քանակը չի փոխւում (նրանք դարձեալ 3-ն են) ու միաժամանակ կրկնապատկւում է նրանց «շահագործողների» քանակը, ապա Սինամի կեանքի ա՛յս՝ երկրորդ փուլը պիտի ունենայ առաջինի համեմատ կրկնակի տեւողութիւն՝ այն է՝ 6 ամիս: Տարեշրջանի այս երկու հատուածներին յաջորդում է Սինամի կախարդուած մնալու շրջանը: Այս շրջանը հէքեաթի (b) տարբերակում ներկայացուած է իբրեւ 28 տարի, սակայն, ինչպէս վերը տեսանք, այս ընթացքում Սինամ – Լուսինը մէկ շրջան է կատարում կենդանակերպի աստեղատներով: Այսինքն, սա պարզապէս մէկ լուսնային ամիս է 4 – 7 = 28 օր տեւողութեամբ, եւ այս մասին էլ ուղղակի տուեալ կայ (g) տարբերակում: Այս կերպ Սինամի կեանքի հիմնական շրջանի

---

Վանական Վարդապետէ ասացեալ, **Լ. Խաչիկեան**, Մատենադարանի գիտ. նիւթերի ժողովածու, 1,1941, էջ 160:

[21] Նախահայկեան օրացոյցի մասին մանրամասն տե՛ս **Գրիգոր Բրուտեան**, «Էջմիածին», ԺԲ, 1996, էջ 135 – 164, նաեւ՝ նոյնի Օրացոյց Հայոց, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1997, էջ 394 – 399:

[22] Սինամի 3 որդիներ ունենալու մասին հէքեաթում ռեւէ **ուղղակի** ակնարկ չկայ: Աւելին, հէքեաթի որոշ տարբերակներում Սինամը եւ Գիւլը ունեն 1 դուստր, որ յետոյ փախչում է տղայի հետ եւ դառնում նրա կինը: Այդուհանդերձ, Սինամը հէքեաթային թագաւոր է, եւ, իբրեւ այդպիսին, շատ տրամաբանական է, որ նա հէքեաթների «դասական» թագաւորների պէս ունենայ 3 որդի: Հնարաւոր է ենթադրել, նոյնիսկ, որ Սինամի կեանքում որդիներ կարող էին եղած լինել այլ կանանցից՝ մինչ Գիւլի հետ նրա ամուսնանալը: Այս մասին ակնարկ կարելի է նկատել այն, որ (e) տարբերակում Սինամն ունի **շատ կանայք**, որոնց մէջ ամենասիրելին Գիւլն է: Այդ պարագայում Սինամի ձիեր-որդիները Գիւլի համար կը լինեն խորթ զաւակներ, եւ այս կերպ լիովին տրամաբանական կը դառնայ Գիւլի կողմից ձիերին չարչարելը: Այս կերպ նաեւ շատ հասկանալի է, թէ ինչու է Սինամը այնքան շատ սիրում իր ձիերին, որ գլխատում է նրանց լաւ չխնամող ձիապաններին:

[23] Այս կապակցութեամբ կարեւոր է հէքեաթի (f) եւ (g) տարբերակներում առկայ մանրամասը, ըստ որի Սինամի ձիերին ամեն օր (լոյսին) պայտում են, իսկ յաջորդ օրը (գիշերից յետոյ՝ լոյսին) ձիերի ոտներին պայտ (նոյնիսկ մեխ) մնացած չի լինում: Պայտը, ինչպէս գիտենք, լուսնաձեւ է, այսինքն, ձիու ոտին մեխուած պայտը պիտի նշանակի, որ այդ ձին Լուսինինն է, նրա իշխանութեան տակ է: Իսկ Գիւլի - Արեւի կողմից «շահագործուելուց» յետոյ պայտերն իսպառ բացակայում են, քանի որ այդ ձիերն արդէն անցել են այլ՝ Արեւի իշխանութեան տակ: Այսինքն, պայտերի լինել-չլինելը եւս արտայայտութիւնն են այն իրողութեան, որ ձիեր-ամիսները Լուսնի իշխանութիւնից անցնում են Արեւի իշխանութեան տակ:

համար ստանում ենք 3 + 6 + 1 = 10 ամիս կառուցուածք: Այս 10 ամիսներից առաջին 3-ի հերոսը՝ տէրը, ինքը՝ Սինամն է: Ցաջորդ 6 ամիսներն անցնում են նրա կնոջ եւ զոքանչի իշխանութեան տակ: Իսկ վերջին 1 ամիսը պիտի լինի Սինամին կախարդանքից ազատող հացթուխի (վաճառականի) աղջկայ իշխանութեան տակ: Հէքեաթի մի տարբերակում այս փրկիչ աղջկայ գործունէութիւնը տրոհուած է մասերի: Սինամի իւրաքանչիւր կերպարանափոխութիւնից յետոյ աղջիկը նրան ազատում, մարդ է դարձնում, սակայն կինը վերստին կախարդում է, վերածում մի այլ կենդանու: Ըստ այսմ, հնարաւոր է նաեւ, որ այս 1 ամիսը լինի կնոջ ու զոքանչի 6 ամիսների մէջտեղը եւ կամ մի այլ ձեւով տրոհուած լինի այդ 6 ամիսների արանքներում:

Տարեշրջանի վերջին մասը Սինամի մեկուսացման փուլն է 40 ծովի կղզում: Հէքեաթում սա 60 հազար տարի է: Ինչպէս վերը նշեցինք, կարեւորը մեր պարագայում ոչ թէ չափման միաւորներն են, այլ թուերը: Ըստ այսմ, այստեղ ունենք 60 հազար, որ կարող են լինել նաեւ **օրեր**: Գալով այս թուի արտառոց մեծութեանը, նկատենք, որ **հազար**-ը այս տեղում կարող է ունենալ ոչթուային իմաստ: Գիտենք, որ հայերէնում «հազար» բառը թուային իմաստից զատ ունի նաեւ «շատ», «բազմաթիւ» «անթիւ» իմաստ: Սրա օրինակ է հէնց այս հէքեաթի (գ) տարբերակում սպանուած ծառաների թուի **1000** լինելը: Այսինքն՝ այս տեղում **60 հազար**-ը կարող ենք ընկալել որպէս **60**, բայց սովորականից ինչ-որ բանով տարբեր: Ուրեմն, կ՛ունենանք **60 օրեր**՝ ինչ-որ էական բանով տարբեր սովորական օրերից: Իսկ ի՞նչ կերպ կարող են սովորականից տարբեր լինել այդ 60 օրերը: Յիշենք, որ այս 60 (հազար) օրերի ընթացքում Սինամը դուրս է այս աշխարհից: Նա գտնուում է այնպիսի մի տեղ, ուր չեն կարող հասնել *«օձն իր պորտով, հաւքն իր թեւով»:* Այսինքն, սա իրօք, այլ՝ մեկուսացած աշխարհ է: Հասկանալու համար, թէ ինչ աշխարհ է դա՝ էլի անդրադառնանք Նախահայկեան օրացոյցին: Այստեղ տարեշրջանի մի մասը, որ համարուել է բուն տարուց դուրս, եղել է հէնց 60 – 70 օր տեւողութեամբ: Եւ համարուել է, որ այդ օրերի ընթացքում գլխաւոր պաշտուող էակը՝ Հայկը (Հայր աստուածը), եղել է **Անդրաշխարհում**[24]: Այս զուգահեռը օգնում է հասկանալ Սինամի կեանքի վերջին փուլը: Այդ փուլը անցնում է Անդրաշխարհում, կամ մի այլ տեղ, որ նոյնքան անմատչելի է, որքան Անդրաշխարհը: Սա կարող է լինել նաեւ Դրախտը: Ի դէպ, Անդրաշխարհի եւ Դրախտի հակադրութիւնը այս պարագայում թուացեալ է: Բանն այն է, որ Սինամը Լուսին է, լուսնային կերպար է: Ուրեմն, նրա բուն տեղը պիտի լինի հէնց Անդրաշխարհը: Լուսնի մասին մենք գիտենք, որ **Լուսինը պարզապէս Անդրաշխարհի Արեւն է**[25]: Ուրեմն, Անդրաշխարհում նա պիտի իրեն զգայ այնպէս, ինչպէս սովորական Լոյս Աշխարհում Արեւն է իրեն զգում: Այսինքն, Լուսնի համար դրախտային, ներդաշնակ վիճակը հէնց Անդրաշխարհում պիտի լինի: Եւ, ըստ այսմ, Սինամի համար Անդրաշխարհը կը լինի հէնց Դրախտին համարժէք:

Այսպիսով, Սինամի կեանքի վերջին փուլը անցնում է Անդրաշխարհում (կամ, իր ընկալմամբ՝ իր Դրախտում): Եւ այս փուլն էլ տեւում է 60 օր: Ստացանք տարեշրջանի (3 + 6 + 1 = 10 ամիս) + 60 օր = 12 ամիս կառուցուածք: Ընդ որում, այս վերջին 60 օրերը էապէս տարբեր են մնացեալ 10 ամիսներից: Դրանք **ամիսներ չեն** սովորական իմաս-

[24] **Գրիգոր Բրուտեան**, նշ. աշխ., էջ 385 – 430:

[25] Տե՛ս, օրինակ, **Գրիգոր Բրուտեան**, նշ. աշխ., էջ 395, 460 – 462:

տով: Եթէ վերստին յիշենք Նախահայկեան օրացոյցը, ապա կը տեսնենք, որ այս 60 արտատարեկան օրերով աւարտւում է ամբողջ տարեշրջանը: Մեր պատմութիւնում էլ այդ վերջին փուլի աւարտից յետոյ աւարտւում է Սինամի կեանքը: Եւ սա բնական էլ է, քանի որ Սինամի կեանքը, ըստ էութեան, տարեշրջանն է, ուրեմն եւ պէտք է աւարտուի տարեշրջանի վերջում:

Այսպիսով, ունենում ենք **Սինամի կեանքի եւ տարեշրջանի լրիւ համադրում**: Եւ այս համադրումը ներդաշնակ է Նախահայկեան օրացոյցի մասին մեր ունեցած պատկերացումներին:

Առաջ անցնելով, ուշադրութիւն դարձնենք մի դրուագի վրայ եւս, որ արդէն մասամբ դուրս է այստեղ դրուած խնդրից: Հէքեաթի՝ մեզ յայտնի համարեա բոլոր տարբերակներում էլ, Սինամի գաղտնիքն իմանալով, տղան գալիս է այն վիշապի մօտ, որ պատանդ էր պահել իր նշանածին: Տղան վիշապին յայտնում է Սինամի պատմութիւնը, եւ, լսելով այն, վիշապը պատռում է կաշին ու միջից դուրս է ելնում մի սիրուն աղջիկ: Ի՞նչ է սա նշանակում: Այս վիշապը, ինչպէս սկզբում նշուեց, շուրջանակի պատել էր ինչ-որ տարածք եւ գլուխը դրել պոչի վրայ: Այսինքն, այս վիշապը կազմել էր մի փակ **շրջան**: Սա արդէն յուշում է, որ ի դէմս այս վիշապի պիտի ունենանք տարե**շրջան**, կամ դրան աղերսուող մի իրողութիւն: Իսկ վիշապի պատած տարածքը հէքեաթի բոլոր տարբերակներում էլ ինչ-որ առումով **արգելուած** տարածք է, եւ հերոսները այդտեղ յայտնուել են կամ մոլորուելով՝ մթան մէջ չկողմնորոշուելով, կամ էլ չանսալով խորհրդատուների կողմից նախօրօք իրենց տրուած պատուիրանին: Այսինքն, այս վիշապը պատել է մի տարածք, որ մնացեալ աշխարհից տարբեր է, առանձնացուած է արգելքով: Ահա ա՛յս առումով այս տարածքը նոյնանում է Սինամի գտնուելու վայրի՝ 40 ծովի կղզու հետ: Եւ ահա, Սինամի գաղտնիքը այս տարածքի տիրոջ՝ այն պատող վիշապի դիւթանքի բանալին է: Իսկ Սինամի գաղտնիքն էլ հէնց **տարեշրջանի գաղտնիքն** է: Այսինքն, այս վիշապը, իմանալով տարեշրջանի գաղտնիքը, դադարում է վիշապ լինել, շրջանը արձակւում է: Այսինքն, այս վիշապը եւս տարեշրջանի արտայայտութիւնն է, եւ այդ է պատճառը, որ տարեշրջանի (իմա՛ Սինամի) գաղտնիքը լուծում է նրա դիւթանքը, բացում է նրան: Աւելին, հէքեաթի (e) տարբերակում պարզւում է, որ սա հէնց Սինամի եւ Գիլլի դուստրն է: Եւ, եթէ յիշենք, որ Սինամը եւ Գիլը աստղային կերպարներ են, եւ նրանց կեանքն էլ հէնց տարեշրջանն է, ապա աւելի քան բնական է, որ նրանց դուստրը եւս լինի տարեշրջանին աղերսուող կերպար, կամ հէնց լինի **նոր տարեշրջան**:

Սինամի պատմութեանն անմիջականօրէն աղերսւում է նաեւ Սինամի մօտ՝ 40 ծովի կղզին հասնելու դրուագը հէքեաթում, եւ օրացուցային – աստղագիտական իմաստներ ունեն նաեւ Սինամի մօտ հասնելուն աղերսուող թուերը: Նայենք դրանք:

Հէքեաթի տարբերակների մեծ մասում տղային Սինամի մօտ (40 ծովի կղզին) տանողը **թռչունն** է: Եւ այս զարմանալի թռչունը եւս առնչուած է օրացուցային թուերի հետ: Այսպէս, (a) տարբերակում Սինամի տեղը գիտեն **300**-ամեայ ծերունին եւ դարձեալ **300**-ամեայ թռչունը: Այդ թռչունը, որ երկաթէ ոտներ ունի, **12** անգամ ձագ է հանել[26], որոնցից նախորդ բոլորին կերել է վիշապը. մնացել են միայն վերջին անգամն-

---

[26] Հէքեաթի (g) տարբերակում թռչունը ձագ է հանել 40 տարի (ամեն տարի): Այստեղ էլ նրա ձագ հանելը **ամենամեայ** երեւոյթ է, եւ մեր խնդրի համար այստեղ էականը հէնց ամենամեայ լինելն է:

ւայ ձագերը: Տղան այս թռչունի բոյնը գտնում է **3** օր որոնելուց յետոյ: Սինամի մօտ թռչելուց առաջ թռչունը 40 օր ժամանակ է ուզում հանգստանալու համար, ապա յաւելում է եւս 10 օր, յետոյ էլ յապաղում է եւս 5 օր: Սրանց գումարը լինում է **55** օր: Իսկ (b) տարբերակում այս նոյն տեղում թռչունը 1 տարի ժամանակ է ուզում, որ կարողանայ կազդուրուել-երիտասարդանալ: Ի՞նչ են սրանք նշանակում:

Թռչունը, ինչպէս նշուեց, Արեւի խորհրդանիշն է, այսինքն, պիտի նշանակի հէնց Արեւ: 300 տարի կեանքը, եթէ վերանանք չափման միաւորներից, համապատասխանում է 300-օրեայ տարուն Նախահայկեան օրացոյցում: Իսկ 12 անգամ ճուտ հանելն էլ, կարող է լինել միայն ամբողջ տարեշրջանի 12 ամիսների թիւը: Ուշագրաւ է, որ (b) տարբերակում թռչունը տղային խնդրում է **1 տարի** իրեն յատուկ կերակրել-խնամել նախքան Սինամի մօտ ուղեւորուելը: Եւ այս 1 տարում թռչունը լրիւ երիտասարդանում է, դառնում է ինչպէս նոր ծնուած: Սա նշանակում է, որ այս 1 տարին **համարժէք** է նրա ամբողջ կեանքին: Այսինքն, նրա կեանքը հէնց 1 տարի է: Սա շատ լաւ ներդաշնակւում է 12 անգամ ճուտ հանելուն եւ նրան, որ թռչունն ինքը ասում է, թէ իր 12 անգամուայ ճտերը բոլորն էլ զոհ են գնացել, եւ, եթէ վերջին անգամուայ ճտերն էլ զոհուեն, ապա ինքը իրեն կը սպանի: Այսինքն, այս 12-ից յետոյ նրա կեանքը պիտի աւարտուի: Հէքեաթի (a) տարբերակում այս 12-րդ անգամուայ ճտերին թռցնելիս թռչունը նրանց յայտնում է, որ ինքը գնում է եւ կարող է **ետ գալ կամ չգալ**: Այսինքն, նա արդէն աւարտել է իր առաքելութիւնը եւ իր հետագայ գոյութիւնը, ներկայութիւնը էական չէ:

Հէքեաթի (b) տարբերակում թռչունը Սինամի մօտ գնալու ճանապարհը իմացել է մօրից, Սինամի կղզին տեսել է (երկնքից) ճուտ եղած ժամանակ, այսինքն՝ իր կեանքի սկզբում: Եւ, ահա, նա գնում է այդտեղ մէկ էլ իր կեանքի վերջում: Այսինքն, 300 օրերի (տարիների) մէկ սկզբում, մէկ էլ վերջում է նա առնչւում Սինամի կղզու հետ: Նշանակում է, ինչ-որ իմաստով նրա կեանքի սկիզբն ու վերջը համընկնում են իրար: Իսկ սա արդէն խօսում է այն մասին, որ սա պիտի լինի **տարեշրջան**, որի սկիզբն ու վերջը իրար են կցուած:

Ուշագրաւ է (a) տարբերակում թռչունի պատմածը, թէ ինքը Սինամի կղզին գնացել է մի անգամ միայն **150** տարեկանում: Այս 150-ը նրա ամբողջ կեանքի՝ **300**-ի **կէսն** է: Այսինքն, նա գնացել է Սինամի մօտ իր **կեանքի կէսին**: Ի՞նչ կարող է սա նշանակել: Եթէ թռչունի ամբողջ կեանքը ընկալենք իբրեւ մէկ տարեշրջան, ապա սա կը նշանակի այն դիրքը, որում Արեգակը լինում է **կէս տարեշրջան** անցնելուց յետոյ: Այս դիրքն իմանալու համար հարկ է նախ իմանալ տարեշրջանի սկիզբը: Նախահայկեան օրացոյցում տարեշրջանի եւ հէնց բուն տարուայ սկիզբը **ամառային արեւադարձի** ժամանակն է եղել, աւելի ստոյգ՝ ամառնամուտից 1 շաբաթ առաջ: Արդ, եթէ սրան յաւելենք կէս տարի, կը ստանանք **ձմեռային արեւադարձը**՝ ձմեռնամուտը: Ստացւում է, որ թռչունը Սինամի մօտ է գնացել ձմեռնամուտին: Ձմեռնամուտն էլ, ինչպէս գիտենք, տարուայ այն օրն է, երբ Արեգակը լինում է իր **ամենացածր** դիրքում: Սրան զուգահեռ էլ, վերը տեսանք, որ Սինամի տեղը, ըստ էութեան, **Անդրաշխարհն** է: Այսինքն, Սինամի մօտ գնալ-գալը պիտի նշանակի հէնց Անդրաշխարհ գնալ ու վերադառնալ: Եւ քանի որ թռչունը ինքը Արեւն է, ապա 300 տարուայ կեանքում 150 տարեկանում Սինամի մօտ գնալ-վերադառնալը պիտի նշանակի, պարզապէս, ամառնամուտից սկսեալ Արեգակի աստիճանական ցածրացում երկնքում մինչեւ ձմեռնամուտ եւ ապա վերստին բարձրացում մինչեւ յաջորդ ամառնամուտ: Այսինքն, սա եւս ցուցանում է,

որ ի դէմս այս հրաշք թռչունի ունենք Արեգակը, եւ այս թռչունի կեանքն ու գործունէութիւնն էլ այլ բան չեն, քան տարեշրջանի ընթացքում Արեգակի դիրքի աստիճանական փոփոխութեան նկարագրութիւնը:

Հետաքրքիր է նաեւ Սինամի մօտ ուղեւորուելուն նախորդող նախապատրաստական ժամանակահատուածի տեւողութիւնը: Մի դէպքում (b) սա 1 տարի է: Իսկ (a) տարբերակում այս հատուածում ունենք 55 օր: Ընդ որում, այս օրերը էապէս տարբեր են միւս բոլոր օրերից. թռչունը այս ընթացքի օրերի համար պահանջում է օրական **10**-ական ոչխար եւ **10**-ական լիտր գինի: Այս 55 օրերը միայն 5 օրով են պակաս Նախահայկեան օրացոյցի արտատարեկան 60 օրերից[27]: Իսկ այդ 60 օրերի արտայայտութիւնը մենք տեսանք Սինամի 40 ծովի կղզում գտնուելու ժամանակի մէջ: Ընդ որում, ինչպէս Սինամի պարագայում 60 օրերը 10-ամսեայ (300-օրեայ) կեանքից յետոյ են, այնպէս էլ թռչունի այս 55 օրերը նրա 300-ամեայ (300-օրեայ) կեանքից յետոյ են: Այսինքն, այս առումով սրանք զուգահեռ են Սինամի կեանքի ամենավերջին փուլին՝ 60 օրերին 40 ծովի կղզում: Այսպիսով, տեսնում ենք, որ թռչունի կեանքի այս 55 օրերը թէ՛ իրենց դիրքով եւ թէ՛ իրենց թուային մեծութեամբ զուգակշիռ են Սինամի կեանքի վերջում եղած 60 օրերին, որ պիտի նշանակեն Նախահայկեան օրացոյցի տարեշրջանի արտատարեկան օրերը:

Այսպիսով, տեսնում ենք, որ հէքեաթի այս դրուգում եւս նկարագրուած է տարեշրջանը:

Նկատենք, որ Սինամ թագաւորի պատմութիւնը հնարաւորութիւն է տալիս հասկանալ նաեւ, թէ ո՞րտեղից է գալիս 300-օրեայ տարուայ գաղափարը:

Մինչ այժմ 300-օրեայ տարուայ գաղափարին մենք հանգել էինք զուտ աստղագիտական իրողութիւններից գալով: 300 օրը այն (մօտաւոր) տեւողութիւնն էր, որի ընթացքում Հայաստանի միջին աշխարհագրական լայնութեան վրայ գտնուող դիտողի համար գիշերային երկնքում կ՚երեւար Հայկն (Orion) համաստեղութեան գլխաւոր աստղը՝ Հայկի աջ ձեռքը՝ Բետելգեյզէն (α Orionis)[28]: Այս հէքեաթի նիւթը հնարաւորութիւն է ընձեռում տալ նաեւ այս 300-օրեայ տարուայ **գաղափարական** բացատրութիւնը:

Իրօք, ինչպէս տեսնում ենք Սինամի պատմութիւնից, այստեղ իրար են զուգադրուած լուսնային ամիսն ու արեգակնային տարին:

Այսպէս. երկնքում գտնուող աստեղային դիցաբանական էակների գործողութեան վայրը ամբողջ **երկնակամարն** է: Երկնակամարը մէկ ամբողջութիւն է, եւ, որպէս այդպիսին, հէնց ինքը կարող է լինել չափման **միաւոր**: Ըստ այսմ, տարբեր կերպարների համար իբրեւ հիմնական գործողութիւն պիտի դիտուի մէկ լրիւ անցումը երկնակամարով: Ուրեմն, պիտի իրար համադրուեն տարբեր երկնային կերպարների

---

[27] Չի բացառւում նաեւ, որ այս 55-ը նախապէս եղած լինի հէնց 60: Հնարաւոր է, հէքեաթի պատմողը բաց է թողել եւս 5 օր տեւող մի դրուագ, կամ 5 օրով պակաս է ասել իր նշած դրուագներից մէկն ու մէկի տեւողութիւնը:

[28] Այս համաստեղութեան եւ հէնց դրա գլխաւոր աստղի դիտումները բացառիկ կարեւորութիւն են ունեցել Նախահայկեան եւ ապա՝ Հայկեան (Հայոց Բուն) օրացոյցների համար: Այդ աստղի արեգակնային ամբարձման (առաջին առաւօտեան ծագման) դիտումով են որոշուել տարեսկիզբը եւ տարեշրջանի գլխաւոր տօնի օրը այդ օրացոյցներում:

անցումները ամբողջ երկնակամարով[29]: Այս կերպ պիտի իրար համադրուեն Լուսնի եւ Արեգակի լրիւ պտոյտները երկնակամարով: Եթէ Լուսնի եւ Արեգակի անցած ճանապարհները հաւասար են, ապա բնական է, որ պէտք է ինչ-որ իմաստով, ինչ-որ կերպ հաւասար լինեն նաեւ այդ ճանապարհի վրայ ծախսուած ժամանակները: Ակնյայտօրէն, այդ ժամանակները **ուղղակի** իմաստով իրար հաւասար չեն: Ուրեմն, դրանց միջեւ հաւասարութիւն պիտի լինի ինչ-որ ա՛յլ իմաստով:

Լուսինը, ինչպէս գիտենք, երկնակամարով մէկ լրիւ շրջան է կատարում **մէկ ամսում**, որի կլորացուած տեւողութիւնը 30 օր է: Արեգակը նոյն ուղին երկնակամարով անցնում է **մէկ տարուայ** ընթացքում: Այսինքն, Լուսինը, շարժուելով համեմատաբար արագ, տիեզերական մէկ միաւորը յաղթահարում է էապէս աւելի փոքր ժամանակի ընթացքում, քան Արեգակը: Ուրեմն, պիտի համադրելի լինեն նաեւ **լուսնային ամիսն** ու **արեգակնային տարին**: Իսկ ի՞նչ կերպ կարող են այս երկու իրողութիւնները համադրուել:

Լուսնային ամիսն ու արեգակնային տարին ամեն ինչից զատ նաեւ թուային իրողութիւններ են. դրանք ունեն որոշակի թուային արտայայտութիւններ: Իսկ թուային իրողութիւնների պարագայում համադրութեան ամենապարզ, ամենահասարակ միջոցը այդ թուերի միջեւ պատիկային առնչութիւն ստեղծելն է: Այսինքն, թուերից մէկը լինի միւսի ինչ-որ պատիկը՝ այսինքն՝ թուերից մէկը առաջանայ միւս թիւը մի ինչ-որ (սակայն խիստ որոշակի) թուով բազմապատկելով: Իսկ ի՞նչ թուով պիտի բազմապատկել, ո՞ր թիւը պիտի լինի այդ պատիկութեան հիմքը: Այստեղ կարող է լինել միայն մէկ հաւանական պատասխան: Սակայն նախքան այդ պատասխանը տալը մի փոքր ծանօթանանք թուարկութեան համակարգերին:

Մենք այսօր սովոր ենք մեզ պէտք եղած թուերը գրել ընդամենը 10 թուանշաններով, որ են 0, 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9: Այս թուանշանների միջոցով մենք կարողանում ենք գրել-արտայայտել կամայական թիւ: Մեր գրած թուերի մէջ միեւնոյն թուանշանը ունենում է տարբեր արժէքներ՝ կախուած այն բանից, թէ թուի մէջ ինչ դիրք է նա զբաղեցնում: Այսպէս, 206265 թուի մէջ առաջին 2-ը, որ զբաղեցնում է աջից վեցերորդ դիրքը, նշանակում է 200000, իսկ միւս 2-ը, որ զբաղեցնում է աջից երրորդ դիրքը, նշանակում է ընդամենը 200: Նոյն կերպ՝ առաջին 6-ը (աջից 4-րդ դիրքում) նշանակում է 6000, իսկ երկրորդ 6-ը (աջից 2-րդ դիրքում) նշանակում է ընդամենը 60: Այսինքն, թուի գրութեան մէջ թուանշանի արժէքը կախուած է այդ գրութեան մէջ նրա զբաղեցրած **դիրքից**: Այս պատճառով էլ թուերի ներկայացման այսպիսի համակարգը կոչւում է «**դիրքային**»: Մեր օրինակում 200000-ը եւ 200-ը իրարից տարբերւում են 1000 անգամ: Իսկ 6000-ը եւ 60-ը իրարից տարբեր են 100 անգամ: Սրանք 10-ի աստիճաններն են: 100-ը 10-ի քառակուսին է, իսկ 1000-ը՝ 10-ի խորանարդը. $10^2 = 100$, $10^3 = 1000$: Արդ, եթէ նայենք մեր գրած կամայական թուի, կը տեսնենք, որ մեր գրածը պարզապէս մի գումար է, եւ այդ թուի մէջ իւրաքանչիւր դիրքում եղած թուանշան ցոյց է տալիս, թէ այդ գումարի մէջ քանի անգամ է մասնակցում 10-ի այն աստիճանը, որ համապատասխանում է տուեալ դիրքին: Այսպէս, $206265 = 2 - 10^5 + 0 - 10^4 + 6 - 10^3 + 2 - 10^2 + 6 - 10^1 + 5 - 10^0$: (Յիշեցնենք, որ $10^0 = 1$, $10^1 = 10$, $10^2 = 100$, $10^3 = 1000$ եւն):

---

[29] Այս առումով շատ ուշագրաւ կը լինի համեմատել տարբեր մոլորակներին համապատասխան կերպարները եւ նրանց «երկնային» վարքը:

Սա, այսպէս կոչուած, թուարկութեան **տասնական** համակարգն է: Այս համակարգում կամայական թիւ ներկայացւում է 10-ի աստիճանների գումարի միջոցով: Այս համակարգի **հիմքը 10-ն է**: Անշուշտ, սա մարդկութեան օգտագործած միակ համակարգը չէ: Տարբեր ժամանակներում տարբեր երկրներում 10-ականից զատ կիրառուել են նաեւ թուարկութեան 12-ական, 60-ական եւ այլ համակարգեր: Ներկայումս ամբողջ համակարգչային-հաշուողական սարքերը հիմքում կիրառում են 2-ական համակարգը, որում թուերը գրւում են 0-ների եւ 1-երի միջոցով: Օրինակ, երկուական համակարգով եօթ թիւը կը գրուի 111 տեսքով, յիսունինգը կը գրուի 110111 տեսքով եւ այլն:

Արդ, վերստին դառնանք մեր խնդրին: Վերը շարադրուածը ի նկատի առնելով, կարող ենք վստահ լինել, որ համադրուող-զուգադրուող թուային իրողութիւնների միջեւ յարաբերութիւնը կարող է հաւասար լինել միայն այն թուին, որը հիմք է տուեալ մշակոյթում կիրառուող թուարկութեան համակարգի համար: Այսինքն, եթէ տուեալ մշակոյթը կիրառում է թուարկութեան 10-ական համակարգը, ապա այդ մշակոյթում համադրուող թուային իրողութիւնների միջեւ պիտի լինի 10, կամ 100, կամ 1000, կամ 10000, կամ 10-ի աւելի բարձր աստիճանի պատիկութիւն: Իսկ հայկական մշակոյթում էլ, ինչպէս գիտենք, թուարկութեան հիմնական համակարգը 10-ականն է[30]: Ուրեմն, սպասելի է, որ այստեղ էլ ունենանք տարբեր կարգերի միաւորների միջեւ հէնց 10, կամ 100,.... պատիկութիւն: Եւ ակնյայտ է, որ այս թուերից հիմնականը պիտի լինի հէնց 10-ը: Այսինքն, շատ սպասելի է, որ 10-ական համակարգ կիրառող մշակոյթում զուգադրուող- համադրուող թուերի հիմնական յարաբերութիւնը լինի 10:

Ահա, ըստ այսմ, մեր խնդրի պարագայում էլ 30-օրեայ լուսնային ամսին համադրելի ժամանակային իրողութիւնը պիտի լինի 300-օրեայ արեգակնային տարին: Այս կերպ ստացւում է, որ լուսնային միաւորը յարաբերում է արեգակնային միաւորին այնպէս, ինչպէս իրար յարաբերում են տուեալ մշակոյթում կիրառուող թուարկութեան համակարգի առաջին եւ երկրորդ աստիճանի միաւորները[31], կամ, այլ կերպ՝ **փոքր** եւ **մեծ** միաւորները: Այստեղ հնարաւոր է՝ հարց առաջանայ, թէ ինչո՞ւ պիտի լուսնային ամիսը լինի արեգակնային տարուց 10 անգամ փոքր եւ ոչ թէ հակառակը: Չէ՞ որ հնարաւոր է սահմանել լուսնային տարին այնպէս, որ դա՛ լինի մեծ միաւորը: Սակայն բանն այն է, որ մեզ յայտնի բոլոր աղբիւրներում միշտ Լուսինը համարուել է Արեգակից փոքր լուսատու: Այդպէս է եւ Աստուածաշնչում, ուր Արեգակը համարուած է մեծ լուսատու, իսկ Լուսինը՝ փոքր (տե՛ս Ծննդ. Ա, 16): Իրականում Երկրից դիտողի համար Լուսինն ու Արեգակը ունեն իրար համարեա հաւասար անկիւնային

[30] Թուարկութեան 10-ական համակարգն է կիրառուել նաեւ Վանի թագաւորութիւնից մեզ հասած սեպագիր աղբիւրներից: Տե՛ս, օրինակ, Արտակ Մովսիսեան, Նախամաշտոցեան Հայաստանի գրային համակարգերը, Երեւանի Համալսարանի հրատ., Երեւան, 2003, էջ 84, 370 – 375:

[31] Ի դէպ, հէնց այս նոյն տրամաբանութեամբ էլ թուարկութեան 12-ական համակարգի կիրառութեան պարագայում 30-օրեայ լուսնային ամսին պիտի համապատասխանեցուէր արդէն ոչ թէ 300-օրեայ, այլ 360-օրեայ արեգակնային տարին. 30 , 12 = 360: Այս կերպ հնարաւոր է բացատրել 360-օրեայ արեգակնային տարուայ գաղափարի եւ դրա վրայ հիմնուած արեգակնայի օրացոյցների առաջացումը: Այս 12-ական համակարգի մնացուկներից է նաեւ կենցաղում տակաւին լայն կիրառուող «դիւժին» = 12 միաւորը:

տրամագծեր: Նոյնիսկ Լուսինը երբեմն կարող է ունենալ Արեգակից մի փոքր աւելի մեծ տրամագիծ (այլապէս չէին դիտուի Արեւի խաւարումներ): Սակայն իր բացառիկ պայծառութեան պատճառով Արեգակը աւելի մեծ է թւում, քան Լուսինը: Ըստ այսմ, բնական է, որ Լուսինը զուգադրուած լինի փոքր միաւորին, իսկ Արեգակը՝ մեծ միաւորին: Ասուածին կարելի է յաւելել նաեւ այն, որ աքքադական[32] եւ Վանի թագաւորութեան[33] սեպագրերում «երեսուն» նշանակող սեպախումբը՝ 𒌍 նշանակել է նաեւ «Լուսին»:

Որպէսզի այս ասուածները միակողմանի հիմնաւորուած չթուան, նայենք սրանց շատ սերտ աղեսուող մի այլ իրողութիւն:

Հին Միջագետքում, ինչպէս յայտնի է, կիրառուել են թուարկութեան 10-ական եւ 60-ական համակարգերը: Կաթսունից մեծ թուերը գրուել են 60-ական համակարգով: Իսկ 60-ից փոքր թուերի գրութեան համար կիրառուել է 10-ական համակարգը[34]: Ահա այստեղ 10-ական համակարգով թուերի գրութեան համար միաւորը նշանակուել է ուղղաձիգ սէպի միջոցով 𒁹, իսկ 10-ը նշանակուել է ուղղաձիգ դրուած անկիւնի նշանով՝ 𒌋. այս նշանների համադրութեամբ արտայայտուել են բոլոր թուերը 1-ից մինչեւ 59[35]: 60-ը վերստին արտայայտուել է այնպէս, ինչպէս եւ 1-ը՝ ուղղաձիգ սէպով 𒁹:

Միեւնոյն ժամանակ յայտնի է, որ այս նոյն ուղղաձիգ սէպը շումերական, Վանի թագաւորութեան (եւ այլ) սեպագրութեան համակարգերում ունի նաեւ տղամարդու որոշիչի արժէք[36]: (Այս նշանը դրուել է արական անուն նշանակող բառերից առաջ, միանշանակ հասկանալի դարձնելու համար դրանց ընթերցումը): Այսինքն, 1-ը զուգադրուած է տղամարդուն: Իսկ իբրեւ իգական անձի որոշիչ կիրառուել է մի նշան, որ զարմանալի նման է 10 թիւն արտայայտող սեպանշանին, միայն՝ պտտուած 90 աստիճան (ժամացոյցի սլաքին հակառակ): Այսինքն, 1-ը եւ 10-ը պատկերուած են հակառակ սկիզբներ (հակառակ սեռեր) ցոյց տուող նշաններով[37]: Եւ դրան ներդաշնակ էլ՝ դրանք նշանակուած են իրար հակառակ (իրար ուղղահայեաց) համաչափութիւն ունեցող պատկերներով: Ի դէպ, խեթա-լուվիական նշանագրութեան մէջ էլ 1-ը արտայայտուած է ուղղաձիգ գծիկով՝ «|», իսկ 10-ը՝ հորիզոնական գծիկով՝ «–»[38]:

Այստեղ ուշագրաւ է այն, որ ուղղաձիգ սեպի նախնականը պարզապէս առնանդամի գծապատկերն է, իսկ իգական որոշիչի նախնականն էլ իգական ծննդական գործարանի գծապատկերն է (տե՛ս աղիւսակը): Այսինքն, ստանում ենք, որ արական

[32] Տե՛ս, օրինակ, **Enn Kasak**, Raul Veede, Folklore, vol. 16, 2001, pp.17 – 18:

[33] Տե՛ս **Արտակ Մովսիսեան**, նշ. աշխ., էջ 374:

[34] **Выгодский М. Я.**, Арифметика и алгебра в древнем мире, “Наука”, Москва, 1967, ст. 89.

[35] Տե՛ս նոյն տեղում:

[36] **Иоганнес Фридрих**, История письма, “Наука”, Москва, 1979, ст. 67, Արտակ Մովսիսեան, նշ. աշխ., էջ 381:

[37] Ընդհանրապէս, եթէ այս երկու նշանները դիտարկենք զուտ որպէս սեպեր, ապա 10 նշանակող սեպը 𒌋 կարելի է դիտել իբրեւ 1 արտայայտող ուղղաձիգ սեպի 90 աստիճան պտտուած (եւ կարճացուած, բարակ մասը հանած) տարբերակը: Այսինքն, հնարաւոր է այս երկու նշաններն ընկալել իբրեւ միեւնոյն նախնական նշանի երկու տարբերակներ՝ միայն իրար նկատմամբ 90 աստիճան պտտուած (իրար հակառակ դասաւորուած):

[38] Տե՛ս Արտակ Մովսիսեան, նշ. աշխ., էջ 305 – 306:

սկիզբը՝ արական անդամի պատկերը համադրուած է 1-ին, իսկ իգական սկիզբը՝ իգական գործարանի պատկերը համադրուած է 10-ին: Արդ, եթէ սրան զուգահեռ յիշենք մեր հէքեաթից, որ լուսնային ամիսը, իբրեւ **առաջին** աստիճանի միաւոր զուգադրուած է **արական** կերպարին՝ թագաւորին, իսկ արեգակնային տարին էլ, իբրեւ **երկրորդ** աստիճանի միաւոր, զուգադրուած է **իգական** կերպարին՝ թագուհուն, ապա կ՚ունենանք լրիւ ներդաշնակութիւն վերը ստացուած պատկերի հետ: Այստեղ իգական նշանը նշանակում է 10 անգամ աւելի մեծ թիւ, քան արական նշանը: Եւ ահա, սրան զուգահեռ էլ ունենք, որ իգական կերպարին վերաբերող ժամանակը հէնց 10 անգամ մեծ է, երկար է արական կերպարին վերաբերող ժամանակից, եւ, ինչպէս իրար հակառակ են արական եւ իգական կերպարներին համապատասխան աստղային կերպարները՝ Լուսինն ու Արեգակը, այնպէս էլ իրար նկատմամբ հակառակ համաչափութիւն ունեն դրանց համապատասխանող թուերի նշանները:

| թիւը | շումերական սեպագիրը | | շումերական գրի մէջ | շումերական պատկերագիր | Սեպագիր նշանը | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | շումերական | | Վանի թագ. |
| 1 |  | | արական որոշիչ |  |  |  |  |
| 10 |  | | իգական որոշիչ |  |  |  |  |

Այսպիսով, տեսնում ենք, որ Սինամ թագաւորի «անմեղ» պատմութիւնը ըստ էութեան աստղային – օրացուցային իրողութիւնների՝ տարեշրջանի նկարագրութիւն է, եւ պարունակում է թանկագին տեղեկութիւններ հնագոյն անցեալի ժամանակային – օրացուցային – տիեզերական պատկերացումների մասին, որ էապէս ներդաշնակ են Նախահայկեան օրացոյցի մասին մեր ունեցած պատկերացումներին:

ԳԷՈՐԳ ՏԷՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ

# ԹՈՎՄԱ ՄԵԾՈՓԵՑՈՒ՝ ԵՐԳԱՍԱՑ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԽՈՅԵՑԻ-ԽԼԱԹԵՑՈՒ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ († 1438)

*(Ուսումնասիրութիւն եւ բնագրեր)*

*Հետագայ անտեղի մանրամասնումներից խուսափելով, սկզբից եւեթ բերում ենք այս վկայաբանութեան պատումի լաւագոյն ամփոփումը, որ արել է նրա բնագրերի առաջին հրատարակիչներից մէկը՝ Հ. Աճառեանը. «903.* Յովհաննէս *մանուկ Խլաթեցի, մականուն Խօլու կամ Հոյլու. քսանամեայ քաղցրաձայն երգիչ էր Խլաթի Սէյֆէդդին ամիրայի մօտ. քրդերը զրպարտեցին, թէ ն ա մի տաճիկ երգչուհու հետ ընկել է, եւ պահանջեցին մահմեդական դառնալ: Նա թուլացաւ եւ համաձայնուեց. բայց նոյն օրն եւեթ զղջալով դիմեց եկեղեցի: Հայերը մերժեցին նրան հաղորդել, ուրացող եւ անհաւատ կոչելով: Նա մնաց մէջտեղ, տանջուած հոգով եւ անօրէն արարքը ողբալով: Ծախեց իր ամբողջ ինչքը եւ աղքատներին բաժանեց: Դիմելով եկեղեցի, վճռաբար յայտնեց որ պիտի դիմի նահատակութեան եւ եկեղեցու բեմի առաջ իր գերեզմանի տեղն էլ որոշեց: Մահմեդական ամբոխը բռնեց նրան եւ չարաչար տանջելուց յետոյ, քարկոծմամբ նահատակեց «1438 թ.». Նոր վկ. 284-298 (երկու խմբագրութեամբ), Ազգապ. 2089»*[1]*: Վերջիններս գրականութեան մատնանշումներ են. առաջինը բնագրի երկու խմբագրութիւնների հրատարակութիւնն է*[2]*, երկրորդը՝ վկայաբանութեան բովանդակութեան աւելի մանրամասն վերաշարադրանք*[3]*:*

*Աւելի նորերս նոյն բնագրին անդրադարձել է հանգուցեալ ակադեմիկոս Լեւոն Խաչիկեանը. նախ պարզել է վկայաբանութեան եւս մի օրինակ. «Մատենադարանի... Հմր 5313 ձեռագիր Յայսմաւուրքի Վարդան գրիչը տուեալ ունի այն մասին, որ «Նահատակութիւն նոր վկային Յոհանու, որ մականուն Խոյլու ասի» խորագրով ուշագրաւ վկայաբանութեան հեղինակն է ոմն Թովմա վարդապետ («եւ արարողի այս սակաւ բանի Թովմայ հեզահոգի աստուածաբան վարդապետի. ամէն»)*[4]*: Ապա արձանագրելով, որ «Նոր վկաներ»ում տպագրուածի համեմատ*

---

[1] Հ. Աճառեան, *Հայոց անձնանունների բառարան, հ. Գ., Երեւան 1946, էջ 651-2:*

[2] *Հայոց նոր վկաները. Գիտական հրատարակութիւն, Աշխատասիրութեամբ* Յ. Մանանդեանի *եւ* Հ. Աճառեանի, *Վաղարշապատ, 1903 (այսուհետեւ՝ «Նոր վկաներ» ձեւով, հիմնականում շարադրանքի մէջ):*

[3] *Ազգապատում. Հայ Ուղղափառ Եկեղեցւոյ անցքերը՝ յարակից ազգային պարագաներով պատմուած, Գրեց* Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան ՝*նախկին պատրիարք, հ. Բ., Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001, էջ 2436-8. յօդ. 1443 (այսուհետեւ՝ Ազգապատում):*

[4] Թովմա Մեծոփեցի, *Պատմագրութիւն, Աշխատասիրութեամբ* Լեւոն Խաչիկեանի, *Խմբագիր* Արծրունի Սահակեան, *«Մագաղաթ», Երեւան, 1999, էջ ԾԱ. (այսուհետեւ* ՝Մեծոփեցի, *Պատ-*

«Ձմր 5313 ձեռագրի բնագիրը տարբերւում է… լեզուական ու ոճական յատկանիշներով (ձեռագրում կան ժողովրդական բառ ու բանի անսքօղ հետքեր, մինչդեռ տպագիրը զերծ է դրանցից)», Խաչիկեանը եզրակացրել է. «կարծում ենք, որ այս վկայաբանութեան հեղինակ Թովմա «հեզահոգի աստուածաբան վարդապետը» հէնց Թովմա Մեծոփեցին է»: Ի վերջոյ՝ որպէս իր տեսակէտի հիմնաւորում, բերել է «լեզուական որոշ ընդհանրութիւններ Թովմա Մեծոփեցու այլ աշխատութիւններից եւ այս վկայաբանութիւնից» եւ եզրակացրել. «Այս ընդհանրութիւններն ուշագրաւ են, բայց ոչ ամենազօր, այնուամենայնիւ կարծում ենք, թէ առայժմ կարելի է Թովմա Մեծոփեցուն վերագրել խնդրոյ առարկայ վկայաբանութիւնը, մինչեւ որ հրապարակ կբերուեն նոր փաստեր՝ ի նպաստ կամ հակառակ մեր այս հաւանական ենթադրութեան: Այսպիսով, Թ. Մեծոփեցու մատենագրական ցանկում տեղ ենք տալիս նաեւ վարքաբանական մի արժէքաւոր գրուածքի… Նահատակութիւն նոր վկային Յոհանու որ մականուն Խոյլու ասի››[5]:

Մեծոփեցու ժառանգութեան հետազօտում-հրապարակմանը նուիրուած՝ Լ. Խաչիկեանի այս արժէքաւոր, սակայն՝ անաւարտ աշխատութեան վկայակոչուած տպագրութիւնը գիտութեան մէջ լռելեայն համարուեց բոլոր առումներով անբաւարար, ուստի եւ անհրաժեշտ դիտուեց հարկաւոր լրացումներով եւ պատշաճ յաւելումներով պատրաստել նրա մի նոր հրատարակութիւն: Այս խնդրի իրագործումը ստանձնելուց յետոյ որոշեցինք գործի սահմաններն ընդլայնել եւ նոր հրատարակութիւնը խորագրել. «Թովմա Մեծոփեցի, Պատմագրութիւն եւ Նամականի»: Վկայաբանութեանս պատմագիտական արժէքը նկատի ունենալով, վճռեցինք հատորի մէջ ներառել նաեւ ԺԵ. դարի մատենագրին վերագրուած այս բնագիրը: Բացայայտուած նիւթը եւ նրա քննութիւնը յանգեցրեցին աւելի ընդհանրական խնդիրների, ուստի որոշեցինք Վկայաբանութեանս քննութիւնն ու բնագրական տարբերակները ներկայացնել նախ «Էջմիածին» ամսագրում, ապա՝ ծրագրուած գրքի մէջ:

Մեր ելակէտը, բնականաբար, Խաչիկեանի յայտնաբերած Ձմր 5313ի հետ միասին, պէտք է լինէին «Նոր վկաներ»ում գործածուած ձեռագրերը: Արդ, այստեղ բնագրի երկու խմբագրութիւնները տպագրուել են երեք եւ մէկ, ընդամէնը՝ չորս ձեռագրի հիման վրայ. «Այս վկայաբանութիւնն ունին միայն Bfr ձեռագիրները. Bf Մեհեկի ԺՁ. եւ Փետրուար ԻԲ. Կուռնելիոսի հարիւրապետի եւ Ս. Պողիկարպոսի վկայաբանութիւններից յետոյ… Վկայաբանութեանս մի երկրորդ խմբագրութիւնն ունի y ձեռագիրը, նոյն օրը, նոյն սրբերից յետոյ» (Նոր վկաներ, էջ

մագրութիւն, 1999): Խաչիկեանն իր այս ուսումնասիրութիւնը շարադրել է 1964 թ., առաջաբանի «Թովմա Մեծոփեցու մատենագրութիւնը» (հրատարակութեան մէջ դարձուած է. «Կեանքն ու գործը»՝ էջ ԻԵ.) մասի ձեռագիր շարադրանքի սկզբում կայ «10. 12. [19]64» թուագրումը:

5 Նոյն տեղում, էջ ԾԱ.-ԾԲ.: Այստեղ իսկ արձանագրենք, որ, ձեռագրական աւելի մեծ նիւթ ուսումնասիրելուց յետոյ, Խաչիկեանի տեսակէտը վիճարկելու կռուաններ չենք տեսել, աւելին՝ պարզել ենք հեղինակի «Թովմա վարդապետ» անունը հաստատող եւս հինգ ձեռագիր:

291)։ Կարողացանք պարզել, որ B-ն Մաշտոցեան Մատենադարանի (այսուհետեւ՝ ՄՄ) Հմր 3783 ձեռագիրն է (մեր շարքում՝ Մ), f-ը՝ ՄՄ Հմր 4547ը (Յ), r-ը՝ ՄՄ Հմր 992 (Վ), y-ն՝ ՄՄ Հմր 7407 (Ջ)[6]։

Պատշաճ նկարագրութիւնների չգոյութեան պատճառով այլ ձեռագրերի գոյութեան պարզումը հնարաւոր էր միայն Յայսմաւուրք ժողովածուի Գրիգոր Խլաթեցու խմբագրութեան հարիւրաւոր ձեռագրերն[7] ստուգելու եղանակով։ Նկատելով, որ մի այլ տեղ այս վկայաբանութիւնը Մեհեկի ԻԹ. եւ Մարտի Է. օրն է (Վասիլիոս եպսկոպոսի, Երմոսի, Պապինոսի եւ Պօղինոսի վարքերից յետոյ)[8], սկսե-

[6] Սրանցից երկուսի պարզումը յաջողուեց բաւական մեծ ջանքերի գնով. ա. Ախալցխայի Ս. Ամենափրկիչ եկեղեցուն պատկանած Յայսմաւուրքի (y) ներկայ՝ ՄՄ Հմր 7407ը գտանք Ախալցխայից Մատենադարան եկած բոլոր ձեռագրերն ստուգելով. բ. Էջմիածնի Գէորգեան ճեմարանի գրադարանին պատկանածը (f)՝ ՄՄ Հմր 4547ը գտնելու համար նախ նկատի առանք մինչեւ 1915ը Էջմիածնի մատենադարանում եղած՝ այս վարքը պարունակող բոլոր ձեռագրերը, ապա՝ համոզուելով, որ 4547ի եւ «Նոր վկաներ»ի մէջ f պայմանանիշն ունեցող ընթերցումները լիովին նոյնական են։ Փաստաթղթային հիմքերի չգոյութեան պատճառով վերջինիս՝ ճեմարանի գրադարանին պատկանած լինելն արտայայտուած չէ հանգուցեալ մեծավաստակ բանասէր Օննիկ Եգանեանի հետեւեալ աշխատանքների մէջ. Գէորգեան ճեմարանի հայերէն ձեռագրերի հաւաքածուն.- Էջմիածին, 1969/Դ., էջ 45-7. Մատենադարանի ձեռագրական հաւաքածուները.- Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Հատոր Ա., Երեւան, 1965, էջ 69։ Այսուհանդերձ, այս փաստը մտածել տուեց, որ բնագրագիտական խնդիրների առաջընթացն ապահովելու համար արժէ մէկ առ մէկ քննել, պարզել ու առանձին յօդուածներով ներկայացնել թէ՛ «Հայոց նոր վկաներ»ի եւ թէ՛ ընդհանրապէս ԺԹ. դ. վերջերի եւ Ի. դ. առաջին քառորդի բնագրական բոլոր հրատարակութիւնների մէջ գործածուած ձեռագրերի ներկայ հաւաքածուներն ու գոյքահամարները։ Ի դէպ, այսպիսի շնորհակալ աշխատանք անում էր նոյն Օ. Եգանեանը. տե՛ս «Էջմիածին» ամսագրում տպուած նրա հետեւեալ յօդուածները. Յովհաննէս եպսիսկոպոս Շահխաթունեանցի «Ստորագրութիւն կաթուղիկէ Էջմիածնի» աշխատութեան մէջ յիշատակուած ձեռագրերը (1972/Ը., էջ 62-4). Մարի Բրոսէի՝ Էջմիածնի գրատան ձեռագրերի ցուցակը (1970/ԺԲ., էջ 50-2). Կոմս Ա. Ս. Ուվարովի «Էջմիածնի Մատենադարանը» յօդուածում յիշատակուած ձեռագրերը (1973/Ը., էջ 33-4). Մուրիէի «Էջմիածնի մատենադարանը եւ հայկական ձեռագրերը» (1971/ԺԲ., էջ 44)։

[7] Յայտնի է, որ «Նոր վկաներ»ի նիւթը քաղուած է մեծ մասամբ այս խմբագրութեան տարբեր օրինակներից, իսկ սրա մասին կարդում ենք. «Գրիգոր Ծերենցի խմբագրութիւն, սկսւում է Նաւասարդի 1ով, ամենածաւալունն է եւ ամենատարածուածը։ Միայն Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանում պահպանւում են 257 ամբողջական ձեռագիր օրինակներ, մինչ մնացեալ բոլոր խմբագրութիւնների ձեռագրերի ընդհանուր թիւը նոյն Մատենադարանում 18ն է».- Յայսմաւուրք Տէր Իսրայէլի. Ա. Յունուար, Աշխատասիրութեամբ՝ Տ. Եզնիկ Արքեպիսկոպոս Պետրոսեանի, Աշխատակցութեամբ՝ Մ. Ապրեսեանի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչութիւն, 2008, էջ 3։

[8] Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հտ. Ե. ¬ Յայսմաւուրք¬ Գանձարան¬ Տաղարան¬ Տօնացոյց, Յօրինեց Հ. Սահակ վ. Ճեմճեմեան, Վենետիկ ¬ Ս. Ղազար, 1995, էջ 175՝ Մխիթարեան Վենետիկի ձեռ. Հմր 1812/737. 380բ-7ա (1581 թ., Խիզան, գրիչ՝ Յոբ սրկ., ծաղկող՝ Մարտիրոս, ստացող՝ Խաչատուր քհյ.)։ Վկայաբանութեան այլ օրինակներ տե՛ս Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Կազմեց Հ. Յակովբոս վ. Տաշեան, Վիեննա, 1895, էջ 71՝ Մխիթարեան Վիեննայի ձեռ. Հմր 10. 248ա-50ա (Յայսմաւուրք, ԺՁ. դ.). նոյն տեղում, էջ 898՝ Մխիթ. Վիեննայի ձեռ. Հմր 4, 349ա (Յայսմաւուրք, 1603 թ., Լվով, գրիչ եւ ծաղկող՝ Ղազար, ստացող՝ Կատարինէ)։ Վկայաբանու-

*ցինք Մատենադարանի բոլոր ձեռագրերում Փետրուարի 22ի եւ Մարտի 7ի ներքոյ փնտրել խնդրոյ առարկայ բնագիրը. միաժամանակ, մեր բարեկամ, բանասէր Վարդան Դեւրիկեանը նոյն եղանակով թերթեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հաւաքածուի ծերենցեան ութ Յայսմաւուրքները. արդիւնքում յայտնի հինգին գումարուեց եւս 16 օրինակ (14ը Երեւանում, 2ը՝ Էջմիածնում[9]), ընդամէնը՝ 21 ձեռագիր[10]: Վերջիններս նախ զատեցինք ըստ խմբագրութիւնների. ընդարձակը 13 օրինակ, համառօտը՝ 8, սրանց մէջ էլ արեցինք ժամանակագրական դասաւորում[11] եւ ստացանք հետեւեալ պատկերը[12] («Նոր վկաներ»ի մէջ գործածուածների պայմանանիշերը դրել ենք մերինների կողքը, փակագծերի մէջ՝ «Ձ (y)», գոյքահամարներից անմիջապէս յետոյ նշել ենք ձեռագրերի մէջ բնագրի զբաղեցրած էջահամարները[13]).*

---

*թիւնս կայ նաեւ մեր նկարագրած՝ Քիւրտեան հաւաքածուի (Վենետիկ) Հմր 281 Յայսմաւուրքում (Եւդոկիա, 1683 թ., գրիչ Մկրտում Շօշեցի, ստացող մահտեսի Յովհաննէս, Բաղդասար, Մինաս. 230ա-1բ «Յայսմ աւուր վկայաբանութիւն նոր վկային Քրիստոսի մանկանն Յոհանիսի [Խլաթեցւոյ]»): Քանի որ ձեռագրացուցակների նկարարագրութիւններով վկայաբանութեան օրինակների ո՛ր խմբագրութեանը պատկանելը ենթադրելն անհնար է, ուստի մեր ներկայ խնդրի համար աւելին անօգտակար համարելով, առայժմ բաւարարւում ենք այլ հաւաքածուների օրինակների այս նմուշների յիշատակմամբ:*

9 *Շնորհակալ ենք թէ՛ Վարդան Դեւրիկեանին եւ թէ՛ Տիգրան սրկ. Բաղումեանին, որ արեց այս երկու ձեռագրի անհրաժեշտ էջերի լուսանկարումը:*

10 *Յայսմաւուրքը շատ գործածական ծիսամատեան էր, այդ պատճառով շատ օրինակներ հնում ենթարկուել են պարբերական նորոգումների, որոնց հետեւանքով եւ յաճախ ձեռագրերի թերթերը հնուց ի վեր խառնուած են: Այս եւ այլ պատճառներով վստահ ենք, որ Մատենադարանի ձեռագրերի մէջ կարող են լինել վկայաբանութեանս այլ օրինակներ եւս, որ փնտրման մեր եղանակի պատճառով չեն նկատուել: Ընդհանրապէս այս տեսակ որեւէ բնագրի բոլոր օրինակները պարզելը հնարաւոր է միայն Ծերենցի Յայսմաւուրքի բոլոր ձեռագրերի կատարեալ նկարագրութիւններ ունենալուց յետոյ. այլապէս 600-700 թերթանոց մի քանի հարիւր ձեռագիր ծայրէծայր թերթելը լիովին անիմաստ է: Աւելին՝ ներկայ դէպքում նոր օրինակներ համեմատելը, վստահ ենք, օգտակար նոր բան քիչ էր տալու:*

11 *Միակ շեղումն արել ենք Ա՝ Հմր 5313 ձեռագրի համար, որովհետեւ Թովմա Մեծոփեցու այլ գործերի հետ Լ. Խաչիկեանի նկատած ոճական նմանութիւնները համընկնում են ճիշտ սրա ինքնայատուկ ձեւերին, որոնք, մեր համոզմամբ, նաեւ բնագրի հեղինակային սկզբնագրի հետքեր են. այս խնդրին կանդրադառնենք ստորեւ:*

12 *Մաշտոցեան Մատենադարանի ձեռագրերի տուեալները քաղել ենք հետեւեալից՝ Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի. Հատոր Ա-Բ. Կազմեցին՝* Օ. Եգանեան, Ա. Զէյթունեան, Փ. Անթաբեան, *Խմբագրութեամբ՝* Լ. Խաչիկեանի, Ա. Մնացականեանի, *Երեւան, 1965, 1970 (Ղ օրինակը որեւէ տեղ նկարագրուած չէ, ուստի մենք ենք նկարագրել): Իսկ Էջմիածնի (Էջմ.) ձեռագրերի տուեալներն առել ենք՝* Նուբար Միքայէլեան, *Ցուցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր ստացուած ձեռագրերի.- «Էջմիածին», 1950/Թ-Ժ., էջ 81-4, 1952/Ա., էջ 77-9: Ձեռագրերի գրչութեան հանգամանքները չենք արծարծել, որովհետեւ մեր ներկայ նպատակից դուրս է եւ վերաբերում է Ծերենցի Յայսմաւուրքի ձեռագրական աւանդոյթի քննութեան խնդիրների շարքին:*

13 *Էջմիածնական («Էջմ.») երկուսից բացի, միւսները Մաշտոցեան Մատենադարանի ձեռագրեր են, ուստի համարներից առաջ սովորական եւ մեր ընդունած ՄՄ համառօտումը չենք գրել:*

Ա. ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

*Ա. Հմր 5313, 581ա-3բ. 1465 թ., ԺԵ. դ. (1476, 1486ից յետոյ), Վան, գրիչ՝ Վարդան երէց, Նիկողայոս (Ա), Կարապետ (Բ), ստացող՝ Աւետիս քհյ (Ա, Բ), կազմող՝ Ներսէս վարպետ (1572 թ.)*[14]*. 604 թերթ, թուղթ, 36x26. երկսիւն, բոլորգիր, 36 տող:*

*Բ. Հմր 4472, 367ա-9բ. Յայսմաւուրք, 1452-1457 թթ., Լիմ, Սուխարայ վանք, Արգելան, գրիչ՝ Ղազար, Հերապետ քհյ, Յովանէս, ծաղկող՝ Մինաս, ստացող՝ Ստեփաննոս քհյ, միտ Ղարիպշահ*[15]*. 668 թերթ, թուղթ, 32x21,5, երկսիւն, բոլորգիր, 39 տող:*

*Գ. Հմր 4688, 379ա-80բ. Յայսմաւուրք, ԺԶ. դ. (1573՞ թ.), Բաղէշ, գրիչ՝ Առաքել եպս, ծաղկող՝ Մելքիսէթ, ստացող՝ խօջայ Պուտախ. 659 թերթ, թուղթ, 42x29, երկսիւն, բոլորգիր, 37 տող:*

*Դ. Հմր 7421, 331բ-4բ. Յայսմաւուրք, 1667 թ., Աւետարանոց գիւղ (Վարանդ), գրիչ՝ Խոսրով, ստացող՝ Հռիփսիմէ մայրապետ, մելիք Բաղի, Մարտիրոս պարոնտէր եպս., 596 թերթ, թուղթ, 37,5x23,5. երկսիւն, բոլորգիր, 35 տող:*

*Ե. Հմր 9890, 268ա-70ա. Յայսմաւուրք, 1673 թ., Աղւերձ գիւղ, գրիչ՝ Յովանէս քհյ, ստացող՝ Մինաս քհյ, 515 թերթ, թուղթ, 37,2x23. երկսիւն, բոլորգիր, 42 տող:*

*Զ (y). Հմր 7407, 302բ-5ա. Յայսմաւուրք, 1681 թ., Արզրում, գրիչ՝ Դաւիթ երէց, ստացող՝ Ալէքսանոս Շխնցցի. 548 թերթ, թուղթ, 40,2x27,5. երկսիւն, բոլորգիր, 39 տող:*

*Է. Հմր 7380, 327բ-9բ. ԺԷ. դ. (1682ից առաջ), Արզրո՞ւմ, գրիչ՝ Դաւիթ, Աւետիք, կազմող՝ Թորոս (1692 թ.), ստացող՝ Մեսրոպ քհյ (հետագայ՝ Խօջայ Փիրի, Կարապետ Թալնեցի՝ 1692 թ.). 651 թերթ, թուղթ, 43,2x28,5. երկսիւն, բոլորգիր, 37 տող:*

*Ը. Էջմ. Հմր 88, 68ա-70ա. Յայսմաւուրք, 1685 թ., Շօշ (Սպահան), գրիչ՝ Ստեփանոս եւ Մարտիրոս քհյք, ստացող՝ Ջիք Աւետիք եւ իր ընտանիք. 332 թերթ, թուղթ, 35x23,5. երկսիւն, բոլորգիր, 35 տող:*

*Թ. Հմր 4762, 322ա-6ա. Յայսմաւուրք. 1686 թ., գրիչ՝ Պետրոս, Մարկոս, Տէր Յակոբ, ստացող՝ Տէր Աւետիս, պարոն Խաչատուր. 490 թերթ, թուղթ, 32x21. երկսիւն, բոլորգիր, 31 տող:*

*Ժ. Հմր 3814, 274ա-5բ. Յայսմաւուրք, 1699 թ., Քարթմանիկ, գրիչ՝ Արիստակէս երէց, ստացող՝ Ուլուխան. 474 թերթ, թուղթ, 36x25, երկսիւն, բոլորգիր, 39 տող:*

*Ի. Հմր 3811, 306բ-8բ. Յայսմաւուրք, ԺԷ. դ., գրիչ՝ Յակոբ, ստացող՝ Կարապետ եպս., 530 թերթ, թուղթ, 40,5x26, երկսիւն, բոլորգիր, 37 տող:*

---

[14] *Գրչութեան գլխաւոր յիշատակարանը տե՛ս ԺԵ. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, Կազմեց* Լ. Ս. Խաչիկեան, *հ. Բ.՝ 1451¬ 1480 թթ., Երեւան, 1958, Հմր 286, էջ 233-5 (այսուհետեւ՝ ԺԵ. Բ., նաեւ՝ Ա. - Երեւան, 1955):*

[15] *Գրչութեան գլխաւոր յիշատակարանը տե՛ս ԺԵ. Բ. Հմր 111, էջ 79-80:*

*Լ. Հմր 4790, 234բ-6բ[16]. Յայսմաւուրք, ԺԷ. դ., գրիչ՝ Յովհաննէս, ստացող՝ Խոսրով կր., 306 թերթ, թուղթ, 35,5x26. երկսիւն, բոլորգիր, 37 տող:*

*Խ. Հմր 9088, 274բ-6բ. Յայսմաւուրք, 1703 թ., Սարդարի Թալայ գիւղ (յերկիրս Ջակամ), գրիչ՝ Արիստակէս երէց, ստացող՝ միտ. Եսայի, Ոսկան տանուտէր, Մելքում աղսաղկալ. 495 թերթ, թուղթ, 34,7x23,5. երկսիւն, բոլորգիր, 39 տող:*

Բ. ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

*Ծ. Հմր 4722, 428բ-30ա. Յայսմաւուրք, ԺՉ. դ. (1510ից յետոյ), գրիչ՝ Զաքարիա, ստացող՝ Մարտիրոս. 713 թերթ, թուղթ, 37x25. երկսիւն, բոլորգիր, 35 տող: Ի տարբերութիւն մեր մնացեալ օրինակների, դրուած է Մեհեկի ԻԹ. եւ Մարտի Է. օրը: Այս խմբագրութեան հնագոյնը լինելով հանդերձ, անփոյթ օրինակութիւն է, բացթողումներ շատ ունի, նաեւ՝ էական տեղաշարժ (55րդ նախադասութիւնը օրինակուած է 57րդից յետոյ):*

*Կ (r). Հմր 992, 505ա-6բ. Ճառընտիր, 1651 թ., Եղեսիա, գրիչ՝ Մաղաքեա, ստացող՝ Ոսկան Նախչիվանցի (վաճառական)[17]. 508 թերթ, թուղթ, 28,47x19. երկսիւն, նոտրգիր, 32 տող:*

*Հ. Հմր 10355, 327ա-8բ. Յայսմաւուրք, 1656 թ., Եւդոկիա, գրիչ եւ ծաղկող՝ Մկրտիչ ջահընկալ, ստացող՝ միտ. խօջայ Կիրակոս եւ որդին՝ միտ Ներսէս[18], 620 թերթ, թուղթ, 42,5x28,5. երկսիւն, բոլորգիր, 38 տող:*

*Ձ. Հմր 4548, 382բ-5ա. Յայսմաւուրք, 1664 թ., Հոռոմայրի գիւղ (Լօռի), գրիչ՝ Ներսէս դպիր, Յոհան քհյ, ստացող՝ Պօղոս եպս., Զագարիա աբղ, 679 թերթ, թուղթ, 43x27, երկսիւն, բոլորգիր, 32-36 տող:*

*Ղ. Հմր 11131, 294ա-5բ. Յայսմաւուրք, 1679 թ., Եւդոկիա, գրիչ՝ Աստուածատուր դպիր, ծաղկող՝ Մկրտիչ քհյ (գրչի հայրը), ստացող՝ Հինտիստանցի մահտեսի Սէֆէր. 517 թերթ, թուղթ 40x28. երկսիւն, բոլորգիր, 39 տող:*

*Ճ. Էջմ. Հմր 20, 53բ-5ա. Յայսմաւուրք, ԺԷ. դ., գրիչ՝ Յակոբ քհյ, ստացող՝ պարոն Մկրտիչ. 310 թերթ, թուղթ, 38x25. երկսիւն, բոլորգիր, 35 տող:*

*Մ (B). Հմր 3783, 284ա-5ա. Յայսմաւուրք, 1704 թ., Թօխաղ, գրիչ եւ ծաղկո՞ղ՝ Գէորգ Թօխաղցի, ստացող՝ Ստեփան Դարաշամբեցի. 489 թերթ, թուղթ, 43x28. երսիւն, բոլորգիր, 40 տող: Կրկին անփոյթ օրինակութիւն է, այլեւ՝ բնագրի երկրորդ կէսում հատուածների բացթողումներ ունի:*

*Յ (f). Հմր 4547, 293բ-5ա. Յայսմաւուրք, 1709 թ., Գերմանիկէ (Մարաշ), գրիչ՝ Սարգիս, ստացող՝ Ղարտաշ, Արութեն, Աւետիք, Պաղտասար, Ռհան (եղբարք). 582 թերթ, թուղթ, 42x30, երկսիւն, բոլորգիր, 41 տող:*

*Այսպիսով, Ա. խմբագրութեան՝ գրչութեան վայրը յայտնի օրինակները գրուել*

---

[16] *Բոլոր էջերի վերին 4-5 տողն ընկած՝ թափուած կամ եղծուած է, բայց այս ձեռագիրը մեր կազմած բնագրի համեմատ էական տարբերութիւններ գրեթէ չունի:*

[17] *Գրչութեան յիշատակարանները տե՛ս Հայերէն ձեռագրերի ԺԷ. դարի յիշատակարաններ, հ. Գ.՝ 1641¬ 1660 թթ., Կազմեց* Վազգէն Յակոբեան, *Երեւան, 1984, Հմր 684, էջ 430-1:*

[18] *Գրչութեան յիշատակարանները տե՛ս նոյն տեղում, Հմր 1103, էջ 727-9:*

*են Վանում (Ա), Լիմ, Սուխարայ եւ Արգելան վանքերում (Բ), Բաղէշում (Գ), Վարանդի Աւետարանոց գիւղում (Դ), Սիւնիքի Աղուերձ գիւղում (Ե), Կարինում (Զ, Է), Սպահանում (Ը), Ուտիքի Քարթմանիկ գիւղում (Ժ), Ջակամի Սարդարի Թալայ գիւղում (Խ). սրանց գրչութեան ժամանակի պատկերն է. ԺԵ. դ. (ԱԲ), ԺԶ. դ. (Գ), ԺԷ. դ. (Ե-Լ), ԺԸ. դ. (Խ): Երկրորդի գրչութեան յայտնի վայրերն են. Եդեսիա (Կ), Եւդոկիա (Հ, Ղ, Մ), Լոռիի Հոռոմայր գիւղ (Ձ), Մարաշ (Յ). գրչութեան ժամանակը. ԺԶ. դ. (Ծ), ԺԷ. դ. (Կ-Ճ), ԺԸ. դ. (ՄՅ): Գրչութեան վայրերի ցանկին աւելացնելով վերը յիշատակուած վենետիկեան եւ վիեննական ձեռագրերինը՝ Խիզան, Լվով եւ կրկին Եւդոկիա, տեսնում ենք ԺԵ-ԺԸ. դարերի գրեթէ ամբողջ հայաբնակ աշխարհը (Ծերենցի Յայսմաւուրքի օրինակների պատկերն ընդհանրապէս նոյնն է՝ աշխարհագրական աւելի լայն ու համապարփակ ընդգրկումով):*

*Բնագրի ձեռագրական պատկերի լրութեան համար նշենք նաեւ, որ, իրենց յայտնի ամբողջական օրինակներից բացի, «Նոր վկաներ»ի կազմողներն արձանագրել են Յովհաննէս Խլաթեցի սրբի անուան մի յիշատակութիւն. «Նոյնը ունի նաեւ P էջ 268ա (նոյն օր, նոյն սրբերից յետոյ)*[19]*, հետեւեալ համառօտութեամբ. «Յայսմ աւուր յիշատակ է եւ վկայաբանութիւն նոր վկային Քրիստոսի մանկան միոյ Յոհանէս անուն կոչեցեալ, որ մականուն Հոյլու ասի. կատարեցաւ ի անաւրինաց ի փառս Քրիստոսի» (Նոր վկաներ, էջ 291): Վերջում «Աստուծոյ» բառի յաւելումով ճիշտ նոյնը գտել ենք նաեւ՝ ՄՄ Հմր 6198 Յայսմաւուրքի*[20] *250ա էջում. կայ նաեւ երրորդը՝ ՄՄ Հմր 4569 Յայսմաւուրք*[21]*, էջ 331ա. «Յայսմ աւուր կատարեցաւ Յոհանէս Խոյլուն ի Ղլաթ քաղաքի, ՊՁԶ. թուականութեանս մերում, որոյ աղօթիւքն ողորմի Քրիստոս Աստուած ստացողի գրոցս պարոն Աղբուղին եւ ծնողաց նորին»:*

ՀԵՂԻՆԱԿԻ ԹՈՎՄԱ ՎԱՐԴԱՊԵՏ *անունը պահպանուել է Ա. խմբագրութեան վեց ձեռագրի վերջին նախադասութեան մէջ. սրա առաւել հարազատ տարբերակ համարում ենք* ԴԵԹԻԼ *օրինակների աւանդածը, իսկ* Ա *ձեռագրինն ստացողների անուններով ընդմիջուած եւ աղաւաղուած է (տե՛ս Ա.76): Իսկ պատասխանելու համար այն հարցին, թէ այս* ԹՈՎՄԱ *վարդապետը իսկապէ՞ս Մեծոփեցին է, զուգադիր բերենք նրա Պատմութեան եւ այս վկայաբանութեան՝ Լ. Խաչիկեանի նշած «լեզուական որոշ ընդհանրութիւններ»ը*[22]*, աւելացնելով նաեւ մեր նկատածները.*

---

[19] *Այս ձեռագիրն է՝ Էջմիածնի հին 1496, Կարինեանց 1458, որ է՝ ՄՄ Հմր 1507. Յայսմաւուրք, ԺԷ. դ., գրիչ՝ Ազարիա երէց, ստացող՝ գրչի հայր Կարապետ երէց. 502 թերթ, թուղթ, 40,8x24,5. երկսիւն, բոլորգիր, 41 տող (իսկապէս 268ա էջում կայ բերուած յիշատակութիւնը):*

[20] *1512 թ., Դրախտիկ գիւղ (Ծաղկէոց երկիր), գրիչ՝ Մարտիրոս, ծաղկող՝ Յովհաննէս կր. (1624 թ.), ստացող՝ Ներսէս քհյ:*

[21] *ԺԶ. դ., գրիչ՝ Դաւիթ, Մկրտիչ, Կարապետ, ստացող՝ Աղբուղա, Շահնիազ:*

[22] *Հմմտ.* Մեծոփեցի, *Պատմագրութիւն, 1999, էջ ԾԱ.:*

| *Մեծոփեցի, Պատմութիւն*[23] | *Վկայաբանութիւն* |
|---|---|
| *Բայց որ մարդասպանն էր ի սկզբանէ եւ չարանախանձն Բելիար, որպէս միաբանեցոյց ընդ ինքեան զդասս հրեղինաց - ԶԶ.1* | *Իսկ բանսարկուն սատանայ, որ ի սկզբանէ մարդասպանն է եւ ուսուցիչ չարին, արկեալ նախանձ եւ ատելութիւն ի սիրտ աւձաբարոյ եւ նենգաժոտ ազգին մարաց - Ա.6* |
| *լցեալ չարութեամբ, պղծութեամբ հնարիւք բանսարկուին սատանայի - Բ.2* | |
| *զցանկութիւնն սատանայական… «Զի նա մարդասպան էր ի սկզբանէ»* [Յովհ. Ը. 44] ՝*ըստ հրամանի փրկչին մերոյ*[24] *- ՂԱ.8* | |
| *նենգաւոր ազգն մարաց - ԼԳ.4* | |
| *եւ ի սոյն աւուրս եկն նենգաժոտ եւ անողորմ քուրդն Բաղիշոյ - ԽԵ.1* | |
| *բաղայս անուղայս դնելով ի վերայ նոցին - ՀԳ.4* | *բաղայս անուղայս կամեցաւ դնել ի վերայ ծառային Քրիստոսի - Ա.7* |
| *եւ բաղայս անուղայս կամէին դնել սուրբ ճգնաւորին - ԶԶ.3* | |

*Ահա նոյն տեսակին պատկանող նաեւ մեր յաւելումը.*

| *Մեծոփեցի, Պատմութիւն* | *Վկայաբանութիւն* |
|---|---|
| *Եւ երանի էր տեսողացն եւ լսողացն, որք զնա տեսանէին -* ԺԸ.14 | *մինչ զի զարմանալի էր տեսաւղացն եւ լսաւղացն - Ա.1* |

*Ի վերջոյ, ԺԵ. դարի յիշատակարանների Ա-Գ. հատորների անուանացանկերը եւ Հ. Աճառեանի Անձնանունների բառարանում առկայ «Թովմա վարդապետ»ներին վերաբերող յօդուածներն ուշադիր ընթերցելով, ԺԵ. դ. առաջին կէսին չգտանք Թովմա անունով մի այլ մատենագիր, որին կարելի լինէր վերագրել այս վկայաբանութեան հեղինակութիւնը: Աւելացնենք մի վերջին՝ թէական փաստարկում եւս. գիտենք, որ Մեծոփեցին 1436 թ. Արծկէից փախել էր Բաղէշ, որի վանքերում մնացել է երեք տարի*[25]*, որ եթէ համարենք 1436-1438 թուականները, ապա նա կարող էր Յովհաննէս երգասացի վկայութեան մասին տեղեկանալ Բաղէշից Արծկէ վերադարձին՝ Խլաթով անցած ժամանակ (Խլաթը Բաղէշից Արծկէի*

---

[23] *Քաղուածքների վերջում նշում ենք բնագրի՝ Խաչիկեանի արած հատուածումների, եւ նախադասութիւնների՝ մեր նշանակած համարները՝ ԶԶ.1 եւ այլն:*

[24] *Մեծոփեցու Պատմութիւնից այս սիւնակի առաջին երեք վկայակոչումները մերն են, Լ. Խաչիկեանը նշել է միայն Վկայաբանութեան սրանց համարժէք հատուածը:*

[25] *Տե՛ս* Մեծոփեցի, *Պատմագրութիւն, 1999, էջ 187-9. հմմտ. ԺԵ. Ա., Հմր 508, էջ 465. Ստեփանոս գրիչը 1436 թ. Բաղէշում գրած Յայսմաւուրքի մէջ արձանագրել է. «Յայսմ ամի մեծ վարժապետն Թումայ եւ Կարապետ՝ եօթն վարդապետաւք եւ այլ բազում աշակերտաւք փախստեայ եկեալ ի գաւառէն Արճիշոյ՝ առ մեզ կային ժամանակ ինչ, եւ ի նոցին շնորհաբաշխ եւ առատաբուխ իմաստիցն բազումք օգտեցան պէսպէս ուսմամբ»:*

*ճանապարհի վրայ է), եւ յաջորդող յարմար պահին գրել նրա վկայաբանութիւնը, իսկ սա լիովին համապատասխանում է Վկայաբանութեան գրուելու ենթադրական ժամանակին (տե՛ս ստորեւ): Այսպիսով, ձեռագրական նոր նիւթով եւ նոր փաստարկներով հանդերձ, Լ. Խաչիկեանի եզրակացութիւնը մնում է ուժի մէջ. «առայժմ կարելի է Թովմա Մեծոփեցուն վերագրել խնդրոյ առարկայ վկայաբանութիւնը, մինչեւ որ հրապարակ կբերուեն նոր փաստեր՝ ի նպաստ կամ հակառակ մեր այս հաւանական ենթադրութեան»*[26]*: Այս ամէնով հանդերձ, առայժմ անպատասխան է մնում այն հարցը, թէ Մեծոփեցին կամ «Վկայասէր Թովման», որ «իր «Պատմութեան» էջերում տեղ է տուել Գրիգոր Խլաթեցու, Իւսուֆ Թաւրիզեցու, Յակոբ Ովսանանցի, Ղազար Բաղիշեցու, Թովմա Պուտլիկվանեցու, Մուրատշահ Արծկէցու, Զաքարէ տանուտիրոջ տարբեր ծաւալի ու տարողութեան վարք-վկայաբանութիւններին»*[27]*, ինչո՞ւ այս մէկն իր Պատմութեան մէջ չի մուծել. հաւանական՝ գուցէ վրիպել է կամ չի հասցրել, պատասխանները կարող են լինել սոսկ վարկած-ենթադրութիւններ:*

*Մարտիրոսութեան* ԺԱՄԱՆԱԿԻ *խնդիրը ներկայացնելու ամենասեղմ եղանակը կրկին Աճառեանից բառացի քաղելն է. «Թուականի համար մեր բնագրերը համաձայնութեամբ ունին ՊՁԶ. Փետրուար 22, բարեկենդանի նախորդ շաբաթ օրը*[28]*: ՊՁԶ. թուին (Փետր. ԻԲ.) ըստ սովորական հաշուի համապատասխանում է քրիստոնէական 1437 թիւը: Բայց այս 1437 թուին՝ Զատիկը Մարտ 31ին լինելով, Բարեկենդանը գալիս է Փետրուար 10ին, ուստի համաձայն չէ մեր բնագրի մանրամասն տեղեկութեանց: Յաջորդ տարին է 1438, որ Զատիկը Ապրիլ 13ին գալով, Բարեկենդանը պատահում է Փետրուար 23ին, եւ 150 հայրապետաց տօնը՝ Փետրուար 22 շաբաթ օրը: Այս պատճառով եւ սրբի նահատակութեան թուականը դնում ենք ո՛չ թէ 1437, այլ ճշտիւ 1438 Փետրուար 22 շաբաթ»*[29]*:*

*Վկայաբանութիւնը գրուել է, բնականաբար, սրբի նահատակութեան օրից՝ 1438 թ. Փետրուարի 22ից յետոյ: Թէեւ շարադրանքը հիմքեր չի տալիս վստահօրէն պնդելու, որ հեղինակը ներկայ է եղել դէպքերին, սակայն Ա. խմբագրութեան մէջ առկայ մանրամասներից զգացւում է, որ այն գրուել է իրադարձութիւնից ո՛չ շատ ժամանակ անց. թւում է շատ չենք սխալուի, եթէ համարենք, որ նոյն 1438 թ. ընթացքում: Գիտենք, որ Յայսմաւուրքի նիւթերը հաւաքող-խմբագրող Գրիգոր Ծերենցը նահատակուել է դրանից է՛լ աւելի առաջ՝ 1425 թ. Մայիսի 27ին*[30]*: Ուրեմն, Վկայաբանութիւնը պէտք է գրուած լինի 1438 թ., իսկ Ծերենցի*

---

[26] Մեծոփեցի, *Պատմագրութիւն, 1999, էջ ԾԲ.:*

[27] *Նոյն տեղում, էջ Ծ.:*

[28] *Մեր համեմատած բոլոր ձեռագրերում եւս նոյնն է:*

[29] *Նոր վկաներ, էջ 291-2. հաշուիս կրկնումը տե՛ս նաեւ Ազգապատում, Բ., էջ 2438, յօդ. 1443:*

[30] *Հմմտ. Նոր վկաներ, էջ 264, ուր մահուան օր համարուել է 1426 թ. Մայիսի 19ը. մինչ վկայութեանը վերաբերող բոլոր տեղեկութիւնները քննել եւ 1425 թ. Մայիսի 27ը հաստատել են՝* Արտաշէս Մաթեւոսեան, Սեդա Մարաբեան, *Գրիգոր Ծերենց Խլաթեցի, Երեւան, 2000, էջ 35: Այստեղ Խլաթեցու Յայսմաւուրքին վերաբերող մասը (էջ 77-9՝) մանրամասների մէջ չմտած,*

*ժողովածուի մէջ մուծուել է մեր ունեցած հնագոյն (Բ) ձեռագրի գրչութեան 1452 թ. առաջ: Եթէ նրա հեղինակ Թովմա վարդապետը Ծերենցի գրական վաստակին քաջատեղեակ Մեծոփեցին է, եւ եթէ ինքն է այն մուծել Յայսմաւուրք, ապա դա պէտք է անէր իր մահից՝ 1446 թ. Մայիսի 15ից առաջ, այսինքն՝ 1439-1445 թթ. ընթացքում:*

ՎԿԱՅԻ ՄԱԿԱՆՈՒՆՆ *առկայ է հինգ ձեռագրում. Ա. խմբ. ձեռ. Ա՝ «Խոյլու», Բ. խմբ. ձեռ. Կ՝ «Խօլու», յիշատակութիւնների մէջ՝ ձեռ. 4569, 331ա. «Խոյլու», ձեռ. 1507, 268ա եւ 6198, 250ա՝ «Հոյլու»: Այսպիսով, երկու տեղ ունենք «Խոյլու», երկու տեղ՝ «Հոյլու», մի տեղ՝ «Խօլու»: Վերջինը կարող է յիշեցնել հայերէն «խօլ» (խելայեղ) բառը, բայց, նկատի ունենալով բարբառային հ-խ հնչիւնափոխութիւնը, մեզ աւելի ճշմարտանման է թւում այստեղ տեսնել Խոյ գաւառի անունը եւ նրան գումարուած թուրքական -լու (-ացի, -ցի) վերջածանցը, ըստ այսմ էլ համարելու, որ Յովհաննէս վկան երեւի Խոյից Խլաթ գաղթած*[31] *ընտանիքի զաւակ էր, այսինքն՝ «Խոյլու» մականունը հասկանում ենք Խլաթում հաստատուած «Խոյեցի» ձեւով:*

ԽՈՐԱԳԻՐԸ. *սկզբնական հեղինակային՝ նախայայսմաւուրայինին առաւել մօտ են. Ա. խմբ. Ա օրինակի՝* «Նահատակութիւն նոր վկային Յոհանու որ մականուն Խոյլու ասի»*, եւ Բ. խմբ. Կ Ճառընտրինը, ուր նախորդի նման չկայ «Յայսմ աւուր» սկսուածքը եւ կրկին կայ վկայի մականունը.* «Վկայաբանութիւն նոր վկային Քրիստոսի մանկանն Յոհաննիսի, որ մականունն Խօլու ասի»*. թւում է՝ վերջինիս տարբերութիւնները պայմանաւորուած են այն պարունակող ձեռագրի՝ Ճառընտիր լինելու հանգամանքով, իսկ մնացեալ օրինակներում խորագիրը յարմարեցուած է յայսմաւուրային խորագրերի ընդհանուր կաղապարին: Այս փաստն արձանագրելով հանդերձ, Ա. բնագրի համար նախընտրեցինք հեղինակային խորագիրը (միւսներինն իջեցնելով տողատակ), իսկ Բ. բնագիրը համարելով ածանցեալ տարբերակ, նրա վերնագիրը դրեցինք ըստ ձեռագրերի մեծ մասի աւանդածի:*

*Բնագրի* ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՅՆՈՒԹԵԱՆ *խնդիրը. «Նոր վկաներ»ի մէջ իբրեւ երկրորդ հրատարակուածը (էջ 292-8) մենք համարել եւ տպագ-*

---

*շատ ընդհանուր գնահատական է. այսուհանդերձ, քաղենք մեր խնդրի համար կարեւորը. էջ 78՝ «1401 թ. Գրիգոր Խլաթեցին աւարտում է Յայսմաւուրքի իր խմբագրութիւնը եւ յանձնում դարերին», էջ 76՝ «Խլաթեցին յորդորում էր ամէն գրչի Յայսմաւուրքն ընդօրինակելիս նրա մէջ մուծել ժամանակակից նոր վկաների վկայաբանութիւններ», էջ 79՝ «Խլաթեցու սեփական ստեղծագործութիւնները բազմաթիւ են Յայսմաւուրքում, որոնց հեղինակային պատկանելութիւնը կարօտ է լրացուցիչ ուսումնասիրութեան, որովհետեւ շարադրողն իր անունը չի թողել նրանց վրայ»:*

[31] *Սա կարող էր շատ հնարաւոր եւ սովորական լինել ԺԵ. դարի ասպատակութիւնների եւ նրանց հետեւանք «փախէփախ»ի պայմաններում: Հետագայ դարերում թուրքական մասնիկներով կամ ձեւերով հայ մարդկանց մականունները բաւական յաճախադէպ են. իսկ Յովհաննէսի այսպիսի մականունը կարող է պայմանաւորուած լինել նրա՝ օտարազգի ամիրի պալատական երաժիշտի զբաղմունքով:*

*րում ենք որպէս Ա. խմբագրութիւն, իսկ առաջինը (էջ 284-91)՝ երկրորդ (Բ.): Այս վերադասաւորման հիմքերը հետեւեալներն են.*

*ա. Ընդհանրապէս (այս դէպքում՝ յատկապէս եւ վստահօրէն) գիտենք, որ վարք-վկայաբանութիւններն սկզբնապէս գրուել են որպէս առանձին՝ հեղինակային գործեր, եւ յետոյ միայն մուծուել Վկայաբանք, Ճառընտիր կամ Յայսմաւուրք ժողովածուների մէջ, սրանց կեանքի հետագայ ընթացքում էլ առանձին օրինակների մէջ, համառօտուելու հետ միաժամանակ, հեղինակների անունները զեղչուել են:*

*բ. Սրա հետ միաժամանակ, «Նոր վկաներ»ի մէջ գործածուած չորս ձեռագրերից որեւէ մէկում Վկայաբանութեանս հեղինակի «Թովմա վարդապետ» անուն չկայ. Լ. Խաչիկեանն այն յայտնաբերել է մի ձեռագրում (Ա), սրան մենք աւելացրինք եւս հինգը (ԴԵԹԻԼ). այսպիսով՝ ընդարձակ կամ հեղինակային խմբագրութեան մեր գործածած 13 ձեռագրի մօտ կէսի մէջ հեղինակի անունը վկայուած է բնագրի վերջի ողորմեա՛-յիշատակագրութեան մէջ:*

*գ. Աճառեանն իսկ նկատել է, որ մեր Ա. խմբագրութեան «ինչ ինչ մասերն աւելի ընդարձակուած են, եւ ամբողջին մի աւելի աշխարհիկ լեզուի նկարագիր է տրուած» (Նոր վկաներ, էջ 291): Առաջին՝ թէ՛ բուն շարադրանքի եւ թէ՛ ընթերցումների մէջ երկու խմբագրութիւնն էլ «աշխարհիկ լեզուի նկարագիր» ունեն, երկրորդ՝ այս Վկայաբանութեան համառօտ տարբերակի մէջ չկայ որեւէ մանրամասն, որ ընդարձակի մէջ չլինի (տե՛ս ստորեւ), եւ ընդհանրապէս՝ պարզ ընթերցումից իսկ երեւում է, որ երկրորդն արտածուած է առաջինից:*

դ. Ի վերջոյ, վերը տեսանք, որ ընդարձակ խմբագրութեան ձեռագրերը հիմնականում աւելի հին են, քան՝ համառօտինը:

*Ամփոփենք. գրեթէ վստահ ենք, որ Աճառեանի հակառակ դասաւորութեան պատճառը եղել է ձեռագրական նիւթի սակաւութիւնը. ունէին ընդարձակ տարբերակի սոսկ մի, այն էլ պատահաբար տեսած*[32] *օրինակ, մինչդեռ համառօտն ունէին երեք օրինակով:*

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՅԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ *առաջին յատկանիշը երկրորդի համառօտուածութիւնն է՝ առաջինի որոշ արտայայտութիւնների, դարձուածների եւ նախադասութիւնների մասերի զեղչումով, այսինքն՝ Ա.ն ունի բազմաթիւ աւելիներ, որոնք Բ.ը չունի. բաւարարուենք մատնանշելով մի քանի օրինակ. Ա.2 «ի զինարբունս եւ յամենայն տեղիս». Ա.4* «*Եւ յորժամ գային առաջի նորա առ ի յերգել զարուեստս ունայնութեան՝ անպիտան եւ վնասակար գործոյն*». *Ա.*5 «*Եւ յորժամ զՔրիստոսէ ճառէր եւ զամենասուրբ Երրորդութիւնն աւրհնաբանէր, եւ զերգս հրեշտակացն*». *Ա.*6 «*Իսկ բանսարկուն սատանայ, որ ի*

---

[32] *Հայոց նոր վկաները, էջ Ի. «y ներկայացնում է Ախալցխայի Ս. Ամենափրկիչ եկեղեցւոյ թիւ 256 ձեռագիր Յայսմաւուրքը, որը 1901ի ամռանը քննեց պր. Յ. Մանանդեան, ձեռագրիս գրիչն է «Դաւիթ երէց», տեղը՝ «Արզրում, ի դուռն միաբան Սուրբ Աստուածածնի», թուական ՌՃԼ. = 1681, ի յամսեանն յունիսի Ժ.»:*

*սկզբանէ մարդասպանն է եւ ուսուցիչ չարին, արկեալ նախանձ եւ ատելութիւն ի սիրտ աւձաբարոյ եւ». Ա.9 «Քաւ եւ մի՛ լիցի, որդի՛ ամիրայի». Ա.10 եւ ո՛չ է պարտ ծառայիցն Քրիստոսի ի պիղծս մերձենալ, այլ աւրինաւքն Քրիստոսի կեալ՝ մինչ զի զաւրհնութեան պսակն առնուլ քահանայիւք ի դուռն եկեղեցեաց մերոց»:*

*Կայ նաեւ նոյն իմաստի սահմաններում այլասացութիւն-վերաշարադրանք. Ա.5 «եւ զերգս հրեշտակացն՝ զՓառս ի բարձունսն ի ձայն եւ յերգս արուեստին խառնեալ՝ համարձակ վստահութեամբ առաջի ամենեցուն երգէր» - Բ.4 դարձել է. «գեղեցիկ եղանակաւ բերէր զերգս Փառք ի բարձմանն եւ զայլ քաղցր բարբառ շարականացն ի մէջ եւ զարմացուցանէր զամենեսեան»: Ա.6 «նենգաժոտ ազգին մարաց, չարախաւսեն զնա առ որդի ամիրային, զի գաղտաբար կորուսցէ զնա» - Բ.5 «Իսկ նենեգաժոտ ազգն մարաց՝ որ եւ քրդաց, գրգռեն զամիրայն ի կորուսանել զնա»: Վերջինիս խմբագրութիւնների առաջին իմաստային-կարեւոր տարբերութիւնն է. Ա.՝ չարախօսում են ամիրայի որդուն, Բ.՝ գրգռում են ամիրային, ապա՝ «նենգաժոտ» սակաւադէպ բառը երկու խմբագրութիւնների մէջ ունի միանման ընթերցուածներ. Ա.՝ «ԱԲ նենգեժոտ, Դ նենգաժօտ, Զ նենգժոտ, Է նենգէժոտ, Բ.՝*ԿՅ *նենգէժոտ,* ՀՁՂՄ *նենգժոտ):*

Երկրորդ կարեւոր յատկանիշն է մէկի հիմնական շարադրանքի ձեւերի գոյութիւնը միւսում՝ որպէս ընթերցումներ, *որ կարող է նշանակել խմբագրութիւնների հետագայ փոխազդեցութիւն (համառօտն օրինակողը ձեռքի տակ ունեցել է նաեւ ընդարձակի օրինակ[33]). Ա.1 «բարեպաշտ եւ աստուածասէր ծնաւղաց զաւակ» - Բ.1 «բարեպաշտ ծնողաց զաւակ» (*ՀՅ *ունեն ճիշտ Ա.1ի ձեւը), Ա.1 «ի Խլաթ քաղաքէ» - Բ.1 «ի քաղաքէն Խլաթայ» (*Կ *խլաթ քաղաքէ), Ա.1 «զուսանական երգոց» - Բ.2 «զուսանական խաղուց» (*ԾԿՃ *երգոց ] խաղուց), Ա.3 «Էր եւ», Բ.4 «Եւ էր» (*ԿՅ ˜ *էր եւ):*

Բ.ը Ա.ի համեմատ ունի աւելի, *բայց նրա որոշ օրինակներում այդ աւելին չկայ. Բ.2 «եւ էր յոյժ անուշաձայն եւ քաղցր երգեցիկ» (*ԾԿՂՃ > *եւ էր յոյժ անուշաձայն… երգեցիկ). Բ.3 «ամենեցուն, եւս առաւել» (*ԾԿՁՃՅ > *ամենեցուն եւս առաւել):*

* * *

*Ա. խմբագրութեան Ա ձեռագիրն ընդհանրապէս շատ ուշագրաւ է միայնակ մնացող՝ այլ ձեռագրերում բացակայող իր ընթերցումներով. առաւել կարեւոր են սրա երեք հատուած-արտայայտութիւններ, որոնք կամ նրանց փոփոխակներ չկան թէ՛ նոյն Ա. խմբագրութեան եւ թէ՛ Բ. խմբագրութեան որեւէ այլ ձեռագրում. Ա.7* «բաղայս անուղայս կամեցաւ դնել ի վերայ ծառային Քրիստոսի» *(սրա փոխարէն* Բ-Խ *ձեռագրերն ունեն «հարցանէր նենգութեամբ»), Ա.46* «զթմբրեալն ի յուրացութիւն աստուածային իմաստիցն խորհրդազգեաց առնել կամէր», *Ա.48* «ծնաւտք պարանոցին գեղեցկութեամբ նոր սկսեալ մուրուացն փաղփաղել». *վկայաբանութեան ամբողջ*

---

[33] *Կան գրիչների բաւական շատ հաղորդումներ, ըստ որոնց, զգալով որ իրենց ունեցած հիմք օրինակները սխալներ ունեն, միջնադարում յաճախ ձեռագրեր էին օրինակում մէկից աւելի զաղափար օրինակների հիման վրայ:*

*շարադրանքի մէջ վերջինս այն միակ արտայայտութիւնն է, որ կարող է մտածել տալ, թէ հեղինակը վկային տեսել կամ ներկայ է եղել նրա նահատակութեան դէպքերին, սակայն թւում է, որ սա սոսկ գրական ոճ կամ եղանակ է*[34]*: Այս պատճառով սակաւ հնարաւոր ենք համարում տրամաբանական այն բացատրութիւնը, թէ գուցէ այս ձեռագրում առկայ է որոշ ինքնուրոյն մշակում՝ ոճական խմբագրում, ուստի եւ կարծում ենք, որ այստեղ բնագիրն աւելի մօտ է նախնական-հեղինակային տեսքին: Այսպէս ենք մտածում նկատի ունենալով նաեւ այս ձեռագրի մի կարեւոր իւրայատկութիւնը. Յայսմաւուրքի հիմնական շարադրանքն այստեղ աւարտւում է Աւելեաց Ե. եւ Օգոստոս Ժ. օրով՝ 554բ-570բ. «Պատմութիւն Յովասափու որդւոյ թագաւորին Հնդկաց» ծաւալուն բնագրով, որից մինչեւ ձեռագրի վերջ (570բ-602բ) զետեղուած է ձեռագրի բուն մասի գրչութիւնից յետոյ, ըստ ամենայնի՝ ստացող Աւետիս քահանայի նախաձեռնութեամբ հաւաքուած լրացուցիչ-յաւելուածային վարքա-վկայաբանական բնագրերի մի շարք: Սրանց մի մասը քաղուել է հաւանաբար ձեռագրի բուն մասի գաղափար օրինակից տարբեր՝ այլ Յայսմաւուրքից, միւս մասը՝ այլ բնոյթի ժողովածուներից: Մեր բնագիրն այս վերջին կարգի մէջ է, այսինքն՝ օրինակութեան հիմքը եղել է ո՛չ-յայսմաւուրային մի ժողովածու, ուր վկայաբանութիւնը դեռեւս զգալիօրէն պահպանել էր հեղինակային շարադրանքի նկարագիրը*[35]*:*

*Այս պատճառով վերը վկայակոչուած հատուածները թողնելով հանդերձ շարադրանքի մէջ, թէ՛ սրանք եւ թէ՛ այս՝ Ա ձեռագրի, բոլոր տողատակային տարբերութիւն-ընթերցումները դրել ենք այլ՝ տարբեր տառատեսակով: Այլ ձեւակերպումով՝ Ա ձեռագրի տարբերուող ձեւերի զգալի մասը տողատակ իջեցնելով հանդերձ, նրանք այլ տառատեսակով ենք գրել, ցոյց տուած լինելու համար, որ սրանք ըստ ամենայնի հեղինակային կամ նրան մօտ ձեւեր են, միաժամանակ՝ այդպիսով ցոյց ենք տուել, որ միջնադարում բնագիրս կենցաղավարել է հիմնականում ձեռագրերի մնացեալ մեծամասնութեան վկայած ձեւերով:*

*Երբ ապագայում արուի ծերենցեան բոլոր Յայսմաւուրքների կատարեալ նկարագրութիւնը*[36]*, նրանց գրչութեան հանգամանքների պատշաճ քննութիւնը,*

---

[34] *Հմմտ.* Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ *Պատմութիւն Հայոց, Ի լոյս ընծայեաց* Մկրտիչ Էմին, *Մոսկվա, 1853, էջ 138. «վասն զի մրազարդ մաւրուքն ի ծնաւտսն դեռեւս էր տիզեալ եւ ընծիւղեալ»:*

[35] *Այս ձեռագրի յաւելուածային մասը եւ ընդհանրապէս նրա գրչութեան հանգամանքների խնդիրն արժանի է առանձին քննութեան, որ մեր ներկայ նպատակից դուրս է, սակայն մօտ ապագայում անպայման անդրադառնալու ենք այդ խնդրին:*

[36] *Ի դէպ, Մաշտոցեան Մատենադարանի Մայր ցուցակում (հտ. Ա., Երեւան, 1984, Բ., 2004, Գ., 2007) կիրառուող՝ յղումների սկզբունքը գոնէ Ծերենցի Յայսմաւուրքի դէպքում ձեռագրերի բովանդակած միաւորների յստակ պատկեր չի տալիս, աւելին՝ խճողում է այն, առաւելը՝ շարքիս Բ (4472) եւ Յ (4547) ձեռագրերի դեռեւս աշխատանքային նկարագրութիւններն ստուգեցինք եւ տեսանք, որ մեր բնագրի գոյութիւնն արձանագրուած չէ: Սա նշանակում է, որ ցուցակի այդ սկզբունքը գոնէ Յայսմաւուրքի համար վերանայելի է, այլապէս՝ Յայսմա-*

*ճշգրտուի ձեռագրերի ազգակցութիւնը, յստակուեն նրանց ժամանակագրական-տեղային յարաբերակցութիւնների հարցերը, նոյն կերպ արուի այլ տեսակի ձեռագրերում առկայ վարքաբանական-վկայաբանական բոլոր բնագրերի միատեղուած նկարագրական քննութիւնը, գուցէ յայտնաբերուեն նաեւ Յովհաննէս Խլաթեցու Վկայաբանութեան նոր օրինակներ, որոնցով հնարաւոր կլինի աւելի յստակել թէ՛ գործի հեղինակութեան եւ թէ՛ բնագրի սկզբնական տեսքի խնդիրները:*

*Եզրափակենք. «Նոր վկաներ»ի Յ. Մանանդեանի առաջաբանը գրուած է առաւելապէս քաղաքական, գուցէ եւ ինչ-որ չափով հասարակական-տնտեսական պատմութեան խնդիրներով մտահոգ պատմաբանի հայեացքով, աւելին՝ այդ հրատարակութիւնն արուել է շատ շտապով[37]: Եթէ նոյն հատորի նիւթը ներկայիս եղանակներով վերստին հրատարակելու շատ տեղին մտադրութիւն առաջանայ, ապա վստահ կարող ենք պնդել, որ յատկապէս Յայսմաւուրքի Ծերենցի խմբագրութեան հարիւրաւոր ձեռագրերի մէջ առկայ բոլոր վկայաբանութիւնների բնագիրները լոյս են տեսնելու աւելի ճշգրտուած եւ բնագրագիտութեան ներկայիս պահանջները բաւարարող տեսքով: Այսպէս մտածելու մեր կարեւորագոյն հիմքն այն իրողութիւնն է, որ, անցած դարի սկզբում զգալի կորուստներ[38] կրելուց յետոյ, նոյն դարի ընթացքում կատարուել է մեր ձեռագրական ժառանգութեան մի տեսակ հաւաքում-կենտրոնացում, ապա՝ մատենագիտական մշակում, այսինքն՝ հրատարակուել են մեծ հաւաքածուների այս կամ այն չափով բաւարարող ձեռագրացուցակներ: Այսօր մեզ մատչելի է Աճառեանի եւ Մանանդեանի ժամանակ առկայ ձեռագրերի քանակի առնուազն քառապատիկը կամ շատ աւելին: Ուստի գործը շարունակելու համար պէտք է պատշաճ ձեւով նկարագրել նաեւ Մաշտոցեան Մատենադարանի վերն ակնարկուած 257 Յայսմաւուրքները, որոշակի սկզբունքներով ամբողջ նիւթը համակարգել, պատրաստել բոլոր հաւաքածուների՝ գործածուելիք լաւագոյն ձեռագրերի թուային պատճէնները եւ լաւ մտածուած ու ծրագրուած սկզբունքներով սկսել «Վկայաբանութիւնք հայոց» հատորաշարի տպագրութիւնը:*

ՆԵՐԿԱՅ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ[39]

---

*ւուրքների նկարագրութիւնը պէտք է անել որպէս առանձին աշխատանք:*

[37] *Վարքերի եւ վկայաբանութիւնների զգալի մասը հրատարակուած է առանց աղբիւրագիտական-բանասիրական պատշաճ քննութեան, որովհետեւ ամէն կերպ աշխատում էին գործը շուտ աւարտել. «Այս աշխատութիւնն սկսել էինք պր. Հ. Աճառեանի հետ դեռ 1900 թուի սկզբներին» (Նոր վկաներ, էջ Բ.), հմմտ. «իմ գլխաւոր նպատակն է եղել ծանօթանալ այնպիսի պատմական աղբիւրների, որոնց միջոցով հնարաւոր լինէր վաւերական փաստեր ունենալ Հայոց ներքին կեանքի մասին մահմեդականների տիրապետութեան շրջանում» (նոյն տեղում, էջ Ա.):*

[38] *Նկատի ունենք Արեւմտեան Հայաստանի տարածքի ձեռագրական հաւաքածուների հիմնականում ամբողջական ցաւալի կորուստները:*

[39] *Բնագրական աշխատանք սկսող երիտասարդ բանասէրներին, յատկապէս՝ Գէորգեան Հոգեւոր Ճեմարանի մեր սաներին ընդհանուր ուղենիշներ տալու նպատակով հրապարակ-*

*Նախորդ տպագրութեամբ չկաշկանդուելու նպատակով հիմք ենք դարձրել այլ ձեռագրեր. Ա. խմբագրութեան բնագիրն օրինակել ենք Ա ձեռագրից (Ձմր 5313), Բ. խմբագրութեանը՝ Ծ (ռ. Ձմր 992)[40], ապա մնացեալ օրինակները համեմատել ենք սրանց հետ: Վերջում փորձնական ստուգումներով համոզուել ենք, որ թէ՛ շարադրանքի եւ թէ՛ ընթերցումների մէջ «Նոր վկաներ»ում գործածուած ձեռագրերի՝ այնտեղ առկայ ձեւերը եւ ընթերցումները մեր նշանականների հետ նոյնական են:*

*Ձեռագրերի ընձեռած նիւթի թելադրանքով «աւ-օ» երկձեւութեան խնդիրը լուծել ենք հետեւեալ կերպ. Ա. խմբագրութեան ինչպէս Ա օրինակը, նոյնպէս եւ ձեռագրերի մեծ մասն ունեն «աւ», որ պահել ենք շարադրանքի մէջ, իսկ տողատակում նշել ենք նոյն բառերի «օ»ով ընթերցումները՝ եթէ անգամ մէկ-երկու տեղ բոլոր ձեռագրերում «օ» է[41]: Բ. խմբագրութեան մէջ արել ենք ճիշտ հակառակը՝ շարադրանքի մէջ դրել ենք ձեռագրերի գերակշիռ մասով վկայուած «օ»ով ձեւերը, իսկ «աւ»ով ձեւերն անխտիր իջեցրել տողատակ: Այսպէս ենք արել նախ՝ հրապարակման ընթերցող մասը՝ բուն շարադրանքը միօրինակացրած լինելու համար, ապա՝ սրանով արձանագրել ենք այն իրողութիւնը, որ անկախ նրանից, որ «օ» գիրը գրական կենցաղի մէջ վաղուց ի վեր կար, այդուհանդերձ՝ ԺԵ. դ. առաջին կէսի հեղինակների մեծ մասը նախընտրում էր «աւ»ը: Ի վերջոյ, Բ. խմբագրութեան ձեռագրերում «օ» գրի գերակշռութիւնը[42] հաստատում է, որ այն ընդհանրական կամ տիրապետող դարձաւ միայն ԺԷ. դարի ընթացքում (երկրորդ խմբագրութեան 8 ձեռագրից 7ը այս եւ յաջորդ դարի են):*

*Անտեսել եւ որպէս ընթերցում չենք նշանակել. ա) տողափոխ-էջափոխի հետեւանք՝ բառերի եւ վանկերի կրկնութիւնները, բ) բառավերջի «յ»ի հազուադէպ չգոյութիւնը. գ) տողադարձի հետեւանք գաղտնավանկի սակաւաթիւ ը-երը եւ նոյնպէս տողադարձի հետեւանք՝ «մահւամբ»ի նման ձեւերը (Ա.1՝ «ՌԺ թըւին, ԹԼ թուին» ձեւերը միացրել ենք՝ «ՌԹԺԼ թուին»). դ) «ի»ով աւարտուող (եկեղեցի, հոգի) բառերի սեռական-տրականի -ոյ (-ւոյ-ի փոխարէն)՝ կրկին սակաւաթիւ ձեւերը:*

*Ընթերցումները նշանակել ենք աւանդական եղանակով, միայն «փոխարէն» նշանակող* փխ-*ի տեղ դրել ենք* ], *իսկ* չիք-*ի տեղ՝* > *պայմանական նշանները. բոլոր դէպքերում նախ դրուած են ձեռագրերի պայմանանիշերը, ապա՝ ընթերցումը, յիշեալ նշաններից մէկը, վերջում՝ հիմնաբառը: Շարահիւսական դրափոխութիւններից առաջ դրել ենք* ~ *նշանը: Անհրաժեշտ եւ յարմար որոշ դէպքերում*

*մանս այս բաժինը ներկայացնում ենք մի փոքր աւելի մանրամասն:*

[40] *«Նոր վկաներ»ի հիմքերն են, համապատասխանաբար՝ y (ունեցած միակ, որ մեր Զ-ն է) եւ B (մեր՝ Մ):*

[41] *Նոյն կերպ երկու դէպքում (Ա.21, Ա.71) վարուել ենք նաեւ «ծնող» բառն իջեցնելով տողատակ, շարադրանքում դնելով սակաւ ձեռագրերով վկայուած «ծնաւղ» ձեւը:*

[42] *Այս խմբագրութեան միայն հնագոյն՝ Ծ, երբեմն նաեւ Չ օրինակները սակաւ դէպքերում ունեն «աւ» ձեւը:*

*տողատակում փակագծերի մէջ պահել ենք նաեւ ընտրուած եւ բնագրի մէջ դրուած ընթերցումը եւ այն աւանդող ձեռագրերի պայմանանիշերը:*

*Ընթերցումը դիւրացնելու եւ տող(եր) ու տեղ շահելու համար անպայման դրկից (բացառութիւն անելով միայն «ի», «առ» նախդիրների, «եւ» կապի, կարճ բառերի՝ «մի», «թէ» դէպքերում) երկու, երբեմն՝ երեք բառի կարճ ընթերցումները նոյն բառերի կարգով շարել ենք մի տողում, մէկինը միւսից զատելով վերջակէտով. ըստ այսմ՝ յաճախ որոշ բառերի ընթերցումները պէտք է փնտրել յաջորդող բառերի վրայ դրուած ծանօթութեան նշանների ներքոյ:*

*Ձեռագրերի պայմանանիշերը հայերէնի գլխատառերով նշանակած լինելով, ընկալման շփոթ չառաջացնելու նպատակով, տարընթերցումների մէջ մեծատառ չենք գործածել, թիւ կամ թուական նշանակող տառերը կամ թուատառերը (ասենք՝ Դ.՝ 4) տողատակում երկու կողմից առնուած են կէտերի մէջ՝ «.դ.» (սա մի տեղ նաեւ թուատառերի գրութեան ձեռագրական եղանակի վերարտադրում է):*

*Ձեռագրերի պայմանանիշերի անընդմէջ շարքերն արտայայտել ենք կրճատուած՝ գծիկով. ԲԳԴԵԶԷԸԹԺԻԼԽ-ի փոխարէն՝ Բ-Խ:*

*Բնագրերի եւ ընթերցումների ընկալումն աւելի դիւրացնելու կամ առարկայական դարձնելու նպատակով ամէն խմբագրութիւնից առաջ դնում ենք համեմատուած ձեռագրերի պարզեցուած ցանկը՝ պայմանանիշ, գոյքահամար, գրչութեան ժամանակ եւ տեղ, բնագրի էջահամարներ կարգով:*

*Այսպիսով, այս հրատարակութեան մէջ բնագրի պատկերը նախորդի՝ «Նոր վկաներ»ում տպուածի համեմատ բաւական տարբեր է, արուած են բազմաթիւ ճշգրտումներ, յստակուած է կէտադրութիւնը:*

*Որպէս անհրաժեշտ ծանօթութիւն նկատենք նաեւ, որ Ա.40 եւ Բ.31 հատուածներում յիշատակուած «Յակովիկ վկա»ն յայսմաւուրային նշանաւոր սուրբ Յակոբիկ Պարսիկն է*[43]*:*

* * *

*Վերջում որպէս յաւելուած զետեղել ենք Մեծոփայ վանքի միջավայրում ստեղծուած շատ արժէքաւոր մի Ժողովածուի*[44] *մէջ մեր նկատած փոքրածաւալ,*

---

[43] *Հմմտ. ՄՄ ձեռ. Հմր 1511, 196բ-9ա «Տրէ ի ԻԵ. եւ Դեկտեմբեր Գ. Վկայաբանութիւն սրբոյն Յակովբայ Պարսկի - Յամս բարեպաշտ թագաւորացն Ոնորիոսի եւ եղբօր նորին Արկադէոսի...». մի այլ տարբերակ տե՛ս Գրիգոր Ծերենցի Ճառընտրի մէջ՝ ՄՄ ձեռ. Հմր 1520. 153բ-6բ «Վկայաբանութիւն Յակովբայ Պարսկի, բազմահատ վկային Քրիստոսի - Ի ժամանակս Վըռամայ Պարսից արքայի էր Յակովիկ այր աստուածապաշտ...»:*

[44] *Մխիթարեան Վենետիկի Հմր 1091/245 ձեռագիրը, որ պարունակում է Թովմա Մեծոփեցու ժողոված նամականին (տե՛ս Մեծոփեցի, Պատմագրութիւն, 1999, էջ ԽԴ-ԽԵ.), որի բնագրի ամբողջացման համար Մխիթարեան միաբանութեան ընդհանրական աբբահայր Եղիա ծ. վ. Քիլաղպեանից շնորհակալութեամբ ստացանք ձեռագրի մեզ անհրաժեշտ էջերի թուային պատճէնները: Այստեղ այս պատումը տեսանք մեր խնդրին վերաբերող բնագրերից առաջ. ձեռագրի նկարագրութիւնը տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին*

*սրտառուչ մի բնագիր, որ խորագրել ենք «Աւրհնութիւն գերեզմանաց անանուն նահատակաց»: Սա մասն է ձեռագրի «Պիտանի բան՝ հանդերձ պատմութեամբ երկու կրօնաւորաց» (152ա-3ա) միաւորի*[45]*, սակայն ըստ էութեան ինքնուրոյն արժէք ունեցող՝ իրական դէպքի վաւերական արձանագրում-գրանցում է, որ ցուցադրում է. մի կողմից՝ ԺԵ-ԺԶ. դարերի ընթացքում քրիստոնեաների նահատակութիւնների յաճախադէպութիւնը, միւս կողմից՝ հայ հոգեւորականութեան եւ ընդհանրապէս ժողովրդի վերաբերմունքը նահատակների գերեզմանների նկատմամբ:*

---

*Մխիթարեանց ի Վենետիկ. հ. Բ., Յօրինեց Հ.* Բ. վ. Սարգիսեան՝ *Մխիթարեան ուխտէն, 1924, սիւն, էջ 655-72:*

45 *Նոյն տեղում, էջ 664, յոդ. 25. սկսուածքը՝ «Զոր օրինակ եթէ ոք ունիցի ակն մի պատուական, եւ նա գիտասցէ ի նմա մին յատկութիւն, որ թէ կուրի յաչսն հասուցանէ՝ իսկոյն բժշկի. եւ վասն այս խասիաթիս պատուէ եւ մեծարէ զակն...». էջ 664-5՝ տպուած է բնագրիս 3-4 նախադասութիւնների մասը. «Եւ յիջեւանել կարաւանին... գերկոսին շուրջառոն»:*

## Ա. ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

*Ա՝ 5313. 1465 թ., Վան, ԺԵ. դ., 581ա-3բ.*
*Բ՝ 4472. 1452-1457 թթ., Լիմ, Սուխարայ եւ Արգելան վանքեր, 367ա-9բ.*
*Գ՝ 4688. ԺԶ. դ. (1573՞ թ.), Բաղէշ, 379ա-80բ.*
*Դ՝ 7421, 1667 թ., Աւետարանոց գիւղ (Վարանդ), 331բ-4բ.*
*Ե՝ 9890. 1673 թ., Աղւերձ գիւղ, 268ա-70ա.*
*Զ (y)՝ 7407, 1681 թ., Արզրում, 302բ-5ա.*
*Է՝ 7380. ԺԷ. դ. (1682ից առաջ), Արզրո՞ւմ, 327բ-9բ.*
*Ը՝ Էջմ. Հմր 88. 1685 թ., Շօշ (Սպահան), 68ա-70ա.*
*Թ՝ 4762. 1686 թ. 322ա-6ա.*
*Ժ՝ 3814. 1699 թ., Քարթմանիկ, 274ա-5բ,*
*Ի՝ 3811. ԺԷ. դ., 306բ-8բ.*
*Լ՝ 4790. ԺԷ. դ., 234բ-6բ.*
*Խ՝ 9088. 1703 թ., Սարդարի Թալայ գիւղ (յերկիրս Ջակամ), 274բ-6բ:*

### ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆ[1] ՆՈՐ ՎԿԱՅԻՆ ՅՈՀԱՆՈՒ, ՈՐ ՄԱԿԱՆՈՒՆ ԽՈՅԼՈՒ ԱՍԻ[2]

**1** *Պատուական եւ պանծալի*[3] *վկայս այս Յոհանէս*[4] *էր ի Բզնունեաց*[5] *գաւառէն, ի Խլաթ քաղաքէ, բարեպաշտ*[6] *եւ աստուածասէր ծնաւղաց*[7] *զաւակ, ի*[8] *ՊՁՁ. թուականութեանն*[9] *հայոց*[10]*. սնեալ եւ վարժեալ ի յարուեստս*[11] *երաժշտական զուսանական երգոց, մինչ զի զարմանալի էր տեսաւղացն եւ լսաւղացն*[12]*՝ հաւատացելոցն եւ անհաւատիցն:* **2** *Եւ*[13] *սիրեցեալ եղեւ յաչս*[14] *ամիրապետի*[15] *Սեւդին*[16] *կոչեցեալ*[17]*. եւ հանապազ կայր առաջի նորա՝ ի զինարբունս*[18] *եւ յամենայն տեղիս*[19]*:*

**3** *Էր եւ*[20] *ի նոյն քաղաքին կին մի*

---

[1] Ա նախատակութիւն
[2] Բ-Խ *յայսմ աւուր յիշատակ (Դ իշատակ) է եւ (Ը > յիշատակ է եւ) վկայաբանութիւն նոր (Թ > վկայաբանութիւն նոր) վկային քրիստոսի մանկան (Գ մանկանն) միոյ (Գ > միոյ) յոհանէս (Գ յոհանիսի, ՋԷ յօհաննէս) անուն կոչեցեալ (Գ > անուն կոչեցեալ)* ] *նահատակութիւն... ասի*
[3] Ե *պանձալի*
[4] Դ *յայս:* Զ *յօհանէս,* Է *յօհաննէս*
[5] Դ *բըղնունեաց,* ԶԷԹ *բզունեաց*
[6] Թ *բարէպաշտ*
[7] Գ-ԻԽ *ծնօղաց*
[8] ԳԽ > *ի*
[9] Ը *.էճձզ.,* ԴԺԻԽ *թուին,* Է *թուականիս*
[10] ԲԵՋԷԸԹԼ *մերում,* Գ *մերոյ* ] *հայոց,* ԴԺԻԽ > *հայոց*
[11] Դ *յարեստս*
[12] ԲԳԴԵԷԸԹԼԽ *տեսողացն:* ԴԵՋԹԺԻԼԽ *լսողաց,* Ը *եւ լսաւղացն*
[13] ԵՋԸԹ *հաւատացելոց:* Գ > *հաւատացելոցն եւ անհաւատիցն,* ԵԸԹ *անհաւատից* : Ա > եւ
[14] ԺԽ *աչս,* Ե > *յաչս*
[15] Ա ամիրապետի քաղաքին, ԴԶ *ամիրապետին,* ԲԵԹ *ամիրապետէն,* Ժ *առիրապետին*
[16] Գ *միրսէւդին ամիրապետին* ] *ամիրապետի սեւդին,* Ա սէւդին, Ը *սեւեդին*
[17] Բ *կոչեալ,* Գ > *կոչեցեալ*
[18] Ե ˜ *զինարբուսն առաջի նորա,* Ա զինարբուսն
[19] Թ *ամենայն:* Գ > *եւ հանապազ... տեղիս*
[20] ԸԹ > *եւ*

*ղաւաղ եւ երգիչ:* **4** *Եւ յորժամ զային*[1] *առաջի նորա՝ առ ի յերգել*[2] *զարուեստս ունայնութեան*[3] *անպիտան եւ վնասակար գործոյն*[4], *յաղթեալ լինէր պեղծն այն առաջի ամենայն հրապարակին*[5]*:* **5** *Եւ յորժամ զՔրիստոսէ ճառէր եւ զամենասուրբ Երրորդութիւնն աւրհնաբանէր*[6], *եւ զերգս հրեշտակացն*[7] ՝*զՓառս ի բարձունսն*[8] *ձունսն*[8] *ի ձայն եւ յերգս արուեստին*[9] *տին*[9] *խառնեալ*[10] ՝*համարձակ վստավստահութեամբ*[11] *առաջի ամենեցուն երգէր:*

**6** *Իսկ բանսարկուն սատանայ, որ ի սկզբանէ մարդասպանն*[12] *է եւ ուսուցիչ չարին*[13], *արկեալ նախանձ եւ ատելութիւն ի սիրտ աւձաբարոյ եւ*[14] *նենգաժոտ*[15] *ազգին մարաց*[16], *չարախաւսէն*[17] *զնա առ որդի*[18] *ամիրային, զի զաղտաբար կորուսցէ*[19] *զնա:* **7** *Յաւուր միում կոչեալ*[20] *զնա առ ինքն*՝ *ի կլայն, եւ* բաղայս անուղայս կամեցաւ դնել ի վերայ ծառային Քրիստոսի[21]*:* **8** *Ասէ*[22]. *«Դու լեալ ես երբեմն մեղաւք*[23] *ընդ տաճիկ ղաւալին. աւրէնքն*[24] *մեր ուսուցանեն մեզ*[25] *այնպիսոյն յաւրէնքն*[26] *մեր զալ*[27] *եւ*[28] *զաւրէնքն*[29] *մեր*[30] *կատարել կամ*[31] *մեռանել*[32]*»:*

**9** *Իսկ ծառայն Քրիստոսի*[33] *համարձակութեամբ*[34] *ետ պատասխանի եւ ասէ. «Քաւ եւ մի՜*[35] *լիցի, որդի՛ ամիրայի, այն*[36] *գործ ձեր է եւ առաջնորդին ձերոյ:* **10** *Իսկ ես ծառայ Քրիստոսի եմ*[37]. *Քրիստոսն մեր սուրբ է եւ զսուրբն սիրէ, եւ*[38] *ո՛չ է պարտ ծառայիցն*[39] *Քրիստոսի ի պիղծս*[40] *մերձենալ, այլ աւրինաւքն*[41] *Քրիստոսի կեալ*[42] ՝*մինչ զի զաւրհնու-*

---

[1] ԴԷ > *զային*
[2] Ը > *եւ յորժամ... ի յերգել,* ԴԽ *երգել*
[3] Ա զարուեստն ունայն
[4] Գ > *անպիտան... գործոյն*
[5] Դ *յամենայն:* Թ *հաւաքեալ հրապարակին*
[6] Ա երրորդութիւն: ՋԷԽ *օրհնաբանէր*
[7] ԵԺԽ *հրեշտակաց*
[8] ԷԲ *զփառք:* ԱԺԽ բարձունսն
[9] Դ *ի երգս,* ՋԷԲԻ *ի յերգս:* Դ *յարւեստին*
[10] Ա խառնել
[11] Ը > *համարձակ վստահութեամբ*
[12] ԳԴԷԺԻԽ *մարդասպան*
[13] Ա չարեաց
[14] ԲԴԵԹԻԼ *աւձաբարու,* ՋԸԺԽ *օձաբարու,* Է *օձաբարոյ,* Գ > *աւձաբարոյ եւ*
[15] ԱԲ *նենգեժոտ,* Դ *նենգաժօտ,* Ձ *նենգժոտ,* Է *նենգէժոտ*
[16] Դ *չարաց* ] *մարաց*
[17] ԲԳԴԵՋԷԸԻ *չարախօսեն,* ԺԽ *չարախօսին*
[18] Ը *առաջի* ] *առ որդի,* ԱԳԺ > զնա: ԴԹ *որդին*
[19] Ա զաղտաբար կորուսանել ] *զի զաղտաբար կորուսցէ*

[20] Ա կոչեցեալ, Ը *կոչեաց*
[21] Բ-Խ *հարցանէր նենգութեամբ* ] *բաղայս անուղայս... ծառային քրիստոսի*
[22] Գ *եւ ասէ*
[23] ԱԴԵՋԷԸԹԺԻԽ *մեղօք*
[24] Ա ղաւալին եւ: ԳԵՋԷԸԺԽ *օրէնքն*
[25] ԺԽ *յուսուցանեն:* Դ *զմեզ,* Ա > մեզ
[26] ԴԵՋԸԻ *յօրէնքն,* Է *օրէնքն*
[27] Գ ~ *զալ յօրէնքն մեր*
[28] ԺԽ > *այնպիսոյն յաւրէնքն մեր զալ եւ*
[29] Գ *զօրէնսն,* Դ *յօրէնքն,* ԵՋԸԻ *զօրէնքն,* Է *զօրէնս,* Ժ *կամ զօրէնս*
[30] Թ > *զալ եւ զաւրէնքն մեր*
[31] Ա եւ կամ, Ժ *կատարեն*
[32] Խ *կամ զօրէնս մեր կատարեն կամ մեռանել* ] *եւ զօրէնքն... մեռանել,* ՋԷ *մեռանիլ*
[33] Թ *Աստուծոյ (*այլ ձեռքով*)* ] *Քրիստոսի*
[34] Ա > համարձակութեամբ
[35] Թ > *եւ:* ԺԽ > *եւ մի*
[36] ՋԷ *այդ* ] *այն*
[37] Դ ~ *եմ Քրիստոսի,* Ա եմ եւ, Ե *զի* ] *եմ*
[38] ՋԷ *զսուրբսն,* Ե *սուրբս:* ՋԷ > *եւ*
[39] Ե *ծառայի*
[40] ԱԴՁ-Խ *պեղծս*
[41] ԳԴՋԷԸԺԻԽ *օրինօքն*
[42] Ա կալ

*թեան*[1] *պսակն առնուլ քահանայիք*
*ի*[2] *դուռն եկեղեցեաց*[3] *մերոց*[4]*»:*
**11** *Յայնժամ բարկութեամբ լցեալ*
*անաւրինին եւ*[5] *իբրեւ զհուր վա-*
*ռեալ*[6]*, ասէ. «Լե՛ր դու*[7] *յաւրէնս*[8] *մեր,*
*մեր, ապա*[9] *թէ ո՛չ ի սոյն ժամու դառն*
*դառն եւ*[10] *չարաչար մահուամբ կո-*
*րուսանեմ զքեզ*[11]*»:* **12** *Եւ նոյնժամայն*
*հրամայեաց չորս արանց*[12] *ի բերդէն*[13]
*ի վայր արկանել զնա եւ մեռանել*[14]*:*
**13** *Եւ ոչ կարացին անաւրէնքն*[15] *յաղ-*
*թել նմա*[16]*, զի աներեւոյթ աւգնու-*
*թիւնն*[17] *Աստուծոյ յաղթեաց նոցա:* **14**
*Եւ նոքա*[18] *բրածեծ արարեալ զնա*
*դառն եւ խիստ զանիւք, եւ կապեալ*[19]
*ոտիւք եւ ձեռաւք*[20] *եդին ի բանտի*[21]*:*
**15** *Եւ զգիշերն*[22] *ողոքելով եւ պատիւ*
*խոստանալով տկարացուցին*[23] *զնա.*
*եւ նա խաբեաց զնոսա*[24] *եւ ասէ. «Թող*
*այդպէս եղիցի*[25]*», զի մի՛ կորուսանի-*
*ցեն զնա ի գիշերի:*
**16** *Եւ այգուցն՝ յորժամ լուսացաւ*[26]*,*
*հանեալ տարան առ ամիրայն եւ*[27]
*բռնութեամբ եդեալ ի ձիոջ՝ շուրջ ա-*
*ծին ի*[28] *քաղաքին*[29]*, եւ ուրախու-*
*թեամբ տաւն մեծ*[30] *կատարէին:* **17**
*Իսկ ողորմելի*[31] *մանուկն*[32]*, Ի.(20)ա-*
*մեայ*[33] *զոլով ի տիս հասակի*[34]*, ի*
*նոյն*[35] *աւրն*[36] *զղջացեալ փոշիմանե-*
*ցաւ եւ*[37] *կամէր մեռանել*[38] *վասն ա-*
*նուանն Քրիստոսի:* **18** *Յղեաց առ քա-*
*հանայս*[39] *զումն քրիստոնեայ, թէ.*
*«Տո՛ւք*[40] *ինձ զմարմին եւ զարիւն*
*Որդւոյն Աստուծոյ Յիսուսի Քրիստո-*
*սի*[41]*, զի այսաւր*[42] *եւ վաղիւն մեռա-*

---

[1] Ա > զի: ՁԷԺԻ *զօրհնութեան*, Թ *աւրհնու-թեանն*, Ը *զօրհնութիւն*, ԺԽ *օրհնութիւն*
[2] ԺԽ *զի* ] *ի*
[3] Ա եկեղեցեացն, Գ *եկեղեցւոյն*, Ժ *յեկեղե-ցեաց*
[4] Ե *զի սուրբ օրհնօքն եմ ծնեալ եւ ոչ կամիմ կամիմ արտաքոյ լինել օրինացն մերոց* ] *այլ աւրինաւքն... եկեղեցեաց մերոց*, Գ > *մերոց*
[5] ԵՁԷԸԹԺԻԽ *անօրինին*, Գ *անօրինացն:* Խ > *եւ*
[6] Գ > *եւ իբրեւ... վառեալ*, Խ *առեալ* ] *վառեալ*
[7] Գ *եւ ասեն եկ* ] *ասէ լեր դու*
[8] Գ *յօրէնսն*, ԵՁԸԹԺԻԽ *յօրէնս*, Է *օրէնս*
[9] Ա > ապա
[10] ԲԴԵԸԹԺԻԼԽ > *եւ*
[11] Գ *մեռանիս չարաչար եւ դառն տանջա-նօք* ] *ի սոյն ժամու... կորուսանեմ զքեզ*
[12] ԱԲԴԵԸԹԺԻԼԽ *.Դ.* ] *չորս:* Գ > *.Դ. արանց*
[13] Ա դղեկէն ] *բերդէն*
[14] Գ > *զնա եւ մեռանել*, ԷԺԽ *մեռանիլ*
[15] ԴԵՁԷԸԺԽ *անօրէնքն*
[16] Գ > *անաւէնքն յաղթել նմա*, Ա զնա ] *նմա*
[17] Ը *աներեւոյթ:* Ա զաւրութիւն, Դ *օգնու-թիւն*, ԳԵՁԺԻԽ *օգնութիւնն*, Է *զօրութիւնն*
[18] Բ-ԵԸ-Լ *նոցա* ] *նոքա*
[19] Թ *կապանօք* ] *կապեալ*
[20] Գ-ԻԽ *ձեռօք*
[21] Ա բանդի, Գ *բանտին*

[22] Ա զգիշերն ամենայն
[23] Ի *տկարուցին*
[24] Ա զնա ] *զնոսա*
[25] Ա լինիցի, Բ *լիցի*, Դ > *եղիցի*
[26] Գ > *այգուցն:* Ա > յորժամ լուսացաւ
[27] Ա > եւ
[28] Բ *ածէին* ] *ածին:* Ե *ընդ մէջ* ] *ի*
[29] Գ *եւ շուրջ ածեալ զքաղաքն ամենայն* ] *շուրջ ածին ի քաղաքին*
[30] Ա տաւն ուրախութեան, Գ--ԻԽ *տօն:* Դ > *մեծ*
[31] Ե *եւ էր երանելի* ] *իսկ ողորմելի*
[32] Գ *մանուկն + յոհաննէս դեռեւս*
[33] Ե *.Ի. ամաց*, Է *քսանամեայ*
[34] Գ > *ի տիս հասակի*, Ը *տեղիս* ] *տիս*
[35] Ե *հասակին:* Ե *եւ ի սոյն* ] *ի նոյն*
[36] ԲԳՁԷԸԺԽ *օրն*, Դ *յօրն*, Ե *աւուր*
[37] Գ *զղջացաւ եւ փոշիմանեալ*, Ե *զոր արարն*] *փոշիմանեցաւ*, Է մ*ոշիմանեցաւ:* Ա > եւ
[38] ԵՁԷ *մեռանիլ*
[39] Ե *եւ կոչեալ քահանայ մի եւ* ] *յղեաց առ քահանայս*, ԱԽ քահանայսն
[40] Բ *տուր*
[41] Գ > *Յիսուսի Քրիստոսի*
[42] Գ-ԸԺԻԽ *այսօր*

*նիմ վասն անուան*[1] *նորա»:* **19** *Եւ նո-*
*ցա անփոյթ արարեալ*[2] ՝ *յոյժ անարգե-*
*գելով, անհաւատ եւ ուրացող*[3] *կոչե-*
*լով*[4] *զնա*[5]*:* **20** *Այլ նա հալէր եւ մաշէր*
*յանձն*[6] *իւր, լալով եւ ողբալով*[7]*, ա-*
*մաւթխածութեամբ*[8] *եւ երկիւղիւ*[9]*,*
*զաւտելոյծ*[10] *եւ միաձորձ ի*[11] *շուրջ*
*զայր ի քաղաքին, վայ եւ եղուկ կար-*
*դայր*[12] *անձին իւրոյ*[13] *եւ ասէր*[14]*.*
*«Վա՜յ քեզ, ուրացող*[15] *Յոհանէ՜ս*[16]*,*
*զքահանայսն տրտմեցուցեր եւ*
*զծնաւղսն*[17] *քո ի սուգ սգաւորու-*
*թեան*[18] *նստուցեր, զսիրելի*[19] *եղ-*
*բարսն քո եւ զընկերսն*[20] *դառնացու-*
*ցեր:* **21** *Եւ Քրիստոսի Աստուծոյն քո*
*զի՞նչ տայցես*[21] *պատասխանի յա-*
*ւուրն դատաստանի*[22]*, որ ասաց*[23] *ի*
*սուրբ Աւետարանին ՝ թէ*[24]*. «Որ*[25] *ու-*
*րասցի զիս առաջի մարդկան, ուրա-*
*ցայց եւ Ես զնա առաջի Հաւր*[26] *Իմոյ*
*որ յերկինս*[27] *է»* [Մտթ. Ժ. 33]*:* **22** *Այլ եւ*
*զի՞նչ տացես*[28] *պատասխանի լալի*[29]
*եւ ողորմելի ծնաւղացն*[30] *քոց եւ քա-*
*հանայիցն*[31]*, եւ պահապան հրեշտա-*
*կացն քոց*[32]*, որ զիս աւրինաւքն*[33]
*Քրիստոսի սնուցին*[34]*, եւ ես զաւ-*
*րէնքն*[35] *Քրիստոսի անարգեցի*[36]*:* **23**
*Աւա՜ղ եւ վա՜յ զիս, Աստուծոյ եմ ես*[37]
*ծառայ եւ ստեղծուած*[38]*, եւ եղէ աս-*
*տուածուրաց, մոռացայ Աւետա-*
*րանն*[39] *սուրբ, որ ծնաւ զիս որդի Աս-*
*տուծոյ*[40]*, առ ոտն*[41] *կոխեցի զաս-*
*տուածարեալ*[42] *մարմին եւ զարիւն*[43]
*Որդւոյն Աստուծոյ, որ սրբեացն*[44]
*զիս, թշնամանեցի զԱստուած Հոգին,*

---

1 ԳԸ > *անուան*
2 Ա արարեալ եւ
3 ԲԼ *ուրացաւղ*, ԺԻԽ *ուրացօղ*
4 Թ > *անհաւատ եւ ուրացող կոչելով*
5 Գ > *զնա*
6 ՋԷ *հալիւր*, Է *մաշիւր:* Ա զանձն
7 ԵԹ *ողբով*
8 ԱԲԼ ամաւթղածութեամբ, ԳԵ-ԻԽ *ամօթղածութեամբ*, Դ *ամօթխածութեամբ*
9 Ը > *եւ երկիւղիւ*, Ա երկիւղածութեամբ
10 ԴՋԷԸ *զօտելոյծ*, ԵԺԻԽ *զօտէլոյծ*, Թ *զօտելուծ*
11 Գ > *ի*
12 Թ *կարդար*
13 Ա անձինն ] *անձին իւրոյ*, Ը *իւրում* ] *իւրոյ*
14 ՋԷ > *եւ ասէր*
15 ԲԼ *ուրացաւղ*, Ը *ուրացողք*, Ի *ուրացօղ*
16 Ջ *Յօհաննէս*, Է *Յոհաննէս*, Թ *Յուհանէս*
17 Ա > եւ*:* Ա զծնօղնն, ԲԵՋԷԸԹ *զծնօղսն*, ԴԺ-ԻԽ *զծնօղս* (ԳԼ *զծնաւղսն*)
18 Ջ *սուք:* Գ > *սգաւորութեան*
19 Խ *նստուցանէր:* ԺԽ *զի սիրելի*
20 Ա եղբայր եւ զընկերս քո
21 ԷԽ *տացես*
22 Դ *ի յաւուրն*, ԲԳՋԺԻ *պատասխանի* ] *դատաստանի*, ԱԷ > յաւուրն դատաստանի
23 Թ *ասացաւ*
24 Ժ *աւետարանի*, Խ *աւետարի:* Ա > թէ
25 Խ > *որ*
26 ԳԴԵՋԸԹԺԻԽ *հօր*
27 Դ *երկինս*
28 ԲԳԵԸԻԼ *տայցես*, Դ *տայց*
29 ԺԽ *լեալ* ] *լալի*
30 ԳԴԵՋԷԸԺԻԽ *ծնօղացն*, Թ *ծնօղաց*
31 Գ *սուրբ քահանայիցն*, ՋԷ *քահանայից*
32 Գ *սուրբ հրեշտակացն:* Դ > *քոց*
33 ԳԴԵՋԷԸԺԽ *օրինօքն*, Թ *աւրինաւք*, Ի *օրինաւքն*
34 Ա ուսուցին ] *սնուցին*
35 ԳԷԺ *օրէնքն*, ԴԵԸԹԻԽ *զօրէնքն*
36 Դ *յանարգեցի*
37 Թ > *ես*
38 Թ *ստեղծած*
39 Ե *զաւազանն*, Ը *զաւետարանն*, ԹԺԽ *զաւետարան*
40 Ա > աւաղ եւ վայ... զիս որդի աստուծոյ
41 Ժ *ոտան*
42 ԱԵԸԹ զաստուածարար, ԲՋ *զաստուածարեալ*, ԴԺԻԽ *զաստուածարարեալ*, Է *աստուածարեալ*
43 Ը *մարմինն*, Ջ *մարմինն եւ արիւն*, ԲԴԵԹԺԻԽ *արիւն*
44 Է *սրբեաց*, ԺԽ *սրբեալն*

*որ բնակեաց[1] յիս[2]:* **24** *Լո՛ւր երկին[3], եւ*
*եւ որ ի քեզ զաւրութիւնք[4] ՛ դասք*
*հրեշտակաց, հոգիք[5] արդարոց եւ*
*լուսաւորք[6]. ունկն դի՛ր, երկի՛ր, եւ որ*
*որ ի քեզ կենդանիք եւ բոյսք դալա-*
*րիք[7]:* **25** *Եկա՛յք ողբասցուք զանձն իմ*
*իմ եղկելի[8], քանզի ո՛չ փոքր ինչ է կո-*
*կորուստ, այլ մեծ եւ սարսափելի.*
*վասն զի զպատկերն Աստուծոյ ա-*
*նարգեցի, զհոգիս իմ կորուսի, եւ, յետ*
*հոգւոյս իմ կորստեան[9], զարարիչն*
*իմ զԱստուած[10] ի բաց թողի:* **26** *Վա՛յ*
*է[11] ինձ եւ աւուրն[12] իմ ծննդեան,*
*վա՛յ[13] է ինձ յաւուրն[14] դատաստա-*
*նի[15]»:*

**27** *Եւ զայս ասացեալ ՛ զամենայն[16]*
*քաղաքացիսն[17] ի յողբ[18] շարժէր:* **28**
*Եւ վաճառեաց զամենայն ինչս իւր[19]*
*եւ ետ[20] աղքատաց եւ կարաւտելոց[21]:*
**29** *Եւ երթեալ առաջի սուրբ եկեղե-*
*ցւոյն[22], դաւանեաց զամենասուրբ*
*Երրորդութիւնն[23] եւ զմի աստուա-*
*ծութիւնն[24], եւ զսուրբ[25] մարդեղու-*
*թիւնն Քրիստոսի[26]:* **30** *Եւ մեղայ[27] ետ*
*առաջի քահանայիցն զամենայն մեղս*
*իւր[28] ՛լալով եւ ողբալով[29]:* **31** *Եւ եցոյց*
*զզերեզմանն իւր առաջի սուրբ սեղա-*
*նոյն եւ ասէ. «Աստ թաղեցէ՛ք զիս[30]»:*
**32** *Եւ յանձն արար զինքն Աստուծոյ*
*եւ սուրբ եկեղեցւոյն եւ պատրաս-*
*տեաց զինքն[31] ամենայն[32] սրբու-*
*թեամբ[33]:* **33** *Եւ հասեալ ի պահք*
*Առաջաւորին[34], անսուաղութեամբ*
*անցուցանէր[35] զաւուրսն հինգ[36]:*

**34** *Եւ եկեալ արք երկու[37] ՛ի գլխա-*
*ւորացն[38] աւրինացն[39] եւ ասեն ցնա.*
*«Ե՛կ զնասցուք[40] յաղաւթանոցն[41] մեր*
*եւ կերիցուք, ապա թէ ոչ ՛այսաւր[42] եւ*

---

1 ԵՁ *բնակեացն*
2 Գ *զի զարարիչն իմ բարկացուցի* ] *Աստուծոյ եմ ես ծառայ... բնակեաց յիս*
3 Ա երկինք
4 ԳԴԵՁԷԸԹԽ *զօրութիւնք*
5 Բ *եւ հոգիք*
6 Դ *լոյսաւորք*
7 ԱԲԴԵԸԹԺԻԼԽ բոյս*:* Ա դալարի
8 Ա > եղկելի
9 Գ > *յետ հոգւոյս իմ կորստեան,* Դ *կորըստեանն*
*10* Գ > *իմ:* ԲԳՁԷԸ *Աստուած*
*11* Ը > *է*
12 Դ *յօուրն,* Ը *յաւուրն*
13 Է > *վայ է ինձ եւ աւուրն իմ ծննդեան,* Ա ծննդեան եւ, Թ *եւ վայ*
14 Դ *յօուրն*
15 Գ > *վայ է ինձ եւ աւուրն... դատաստանի*
16 Ը *եւ զամենայն*
17 Է *ամենայն,* Գ *զամենեսեան:* ԲԴԵՁԷԹԺԻԼԽ *քաղաքացիքն,* Գ > *քաղաքացիսն*
18 ՁԷ > *ի:* ԱԸ յողբս, Դ *ողբ*
19 Ա ˜ զամենայն ինչս իւր վաճառեաց, Գ *վաճառեաց զինչս իւր զամենայն*
20 ԲԴԵԸԹԺԻԼԽ > *եւ:* Ձ > *եւ ետ*
21 ԳԴԵՁԷԸԻԼ *կարօտելոց,* ԺԽ *զկարօտելոց*
22 ԺԽ *յեկեղեցոյն*
23 Ա երրորդութիւն, ԳԵԸԹ *զերրորդութիւնն*
24 ԴԺԽ *մի:* Ա աստուածութիւն
25 ԺԽ *սուրբ,* Գ > *զսուրբ*
26 Է > *եւ զմի աստուածութիւնն... Քրիստոսի*
27 ԺԽ *մեղաց*
28 Ը *զմեղս,* Գ ˜ *զմեղս իւր զամենայն*
29 ԴԵԹԺԻԼԽ *ողբով*
30 Գ > *եւ ասէ աստ թաղեցէք զիս*
31 Թ > *Աստուծոյ եւ սուրբ... զինքն*
32 Դ *յամենայն*
33 Բ *պատրաստութեամբ* ] *սրբութեամբ*
34 Ձ *պահքն Առաջաւորքն*
35 ԺԽ *անսուաղ,* ԴԸԻ *անսըւաղ:* Ա անցոյց, Գ *անցուցեալ,* ԺԽ *անցուցանել*
36 Բ *զաւուրս:* ԱԲԴՁԸԹԻԼ *.ե.* , ԺԽ *.է.* ] *հինգ*
37 ԱԲԵԸԹԺԻԼԽ *.բ.* ] *երկու*
38 Գ *ի գխաւոր,* Ձ *գլխաւորք,* ԷԲԴԵԸԹԺԻԽ *գլխաւոր (*ԴԵԸԹԽ > *ի)* (Ա ի գլխաւորացն*),* Լ *գլխաւորաց (*Լ > *ի)*
39 ԳԴԺԽ *անօրինացն,* Ե *յանօրինացն,* ՁԷԸ *օրինացն (*ԱԲԻ աւրինացն*)*
40 Գ *երթիցուք* ] *զնասցուք*
41 Դ *յաղօթարան,* ԵՁԷԸԹԺԻԽ *յաղօթանոցն*
42 ԴԵԸԹԺԻԼ *այսօր,* ՁԷ > *այսաւր*

*վաղիւն կորուսանեմք*[1] *զքեզ»:* **35** *Եւ նա ասէ. «Խտրին սրբոյն*[2] *եմ խոստատացեալ զայսքան*[3] *աւուրս*[4], *եւ ո՛չ կարեմ զալ»:*

**36** *Եւ նոքա չարութեամբ լցեալ, երթեալ առ դաղին*[5], *չարախաւսեն եւ ասեն*[6], *եթէ. «Ճշմարիտ քրիստոնեայ է եւ խաբեաց զմեզ եւ զաւրէնս*[7] *մեր*[8]*»: մեր*[8]*»:* **37** *Եւ նոքա*[9] *ասեն. «Լուռ*[10] *լերո՛ւք մինչեւ ի պահքն մեր, եւ ի նոյն աւրն*[11] *թլփատեմք զնա*[12]. *եւ թէ*[13] *ոչ կամի՝ չարաչար մահուամբ*[14] *կորուսանեմք զնա»:* **38** *Եւ նոցա*[15] *լռեալ մինչեւ ի վերջին աւր*[16] *շաբաթու բարեկենդանին*[17], *եւ նոյն աւրն*[18] *երթեալ*[19] *ըմբռնեցին զնա եւ տանէին հարկանելով*[20]*:*

**39** *Եւ տեսեալ ծնաւղացն*[21] *՝աղխողորմ կսկծանաւք*[22] *եւ մեծակական*[23] *ողբով*[24] *երթային զհետ նորա:* **40** *Յետս*[25] *դարձեալ ետես զնոսա եւ ասէ. «Աստուածազութ ծնա՛ւղք*[26] *իմ մարմնաւորք*[27], *մի՛ լայք ի վերայ մահուան իմոյ*[28], *այլ լացէ՛ք ի վերայ կորստեան իմոյ, բայց*[29] *աղաչեմ զձեզ. հալալ արարէ՛ք*[30] *զաշխատանս ծնաւղութեան*[31] *ձերոյ եւ աւրհնեցէ՛ք*[32] *զիս, զի ես այսաւր*[33] *առ Քրիստոս կամիմ երթալ*[34], *եւ իբրեւ զՅակովիկ*[35] *կամիմ Քրիստոսի վկայ լինել*[36]*:* **41** *Փոխադարձ արարից նմա*[37], *զի Քրիստոս վասն մեր*[38] *չարչարեցաւ, ես վասն Նորա չարչարիմ, Քրիստոս*[39] *վասն իմ անարգեցաւ, ես վասն նորա անարգիմ*[40]*:* **42** *Անմահ Բանն Աստուած*[41] *վասն իմ մեռաւ, ես*

---

[1] Գ > *այսաւր եւ վաղիւն:* Դ *կորուսանեմ*
[2] Ա խդըրնաբոյն, Բ *խըդրինաբոյն,* Գ *խըդրնաբոյն,* Դ *խըդըրաբուն,* ԵԹ *խդրինաբոյն,* Ը *խըդըրնաբոյն,* ԺԽ *խնդրնաբուն,* Ի *խըդըրնաբուն* (ԶԷ *խտրին սրբոյն.* Է՝ *սրբոյ)*
[3] Ա ~ խոստացեալ եմ*:* ԺԽ *զայնքան*
[4] Զ *աւուրքս,* Ը *աւուրսն*
[5] Գ *գնացեալ* ] *երթեալ:* ԶԷԸ *դատին,* Թ *դազին,* Ա դադին եւ ամիրայն
[6] ԵԶԷԸԹԺ *չարախօսեն:* ԶԷ *ասեն զնմանէ*
[7] ԳԴԶԷԺԻԽ *զօրէնս,* ԸԹ *զօրէնսն*
[8] Ե *տեսաք զի պաշտօնեայ է Քրիստոսի եւ նախատէ զմեզ եւ զօրէնսն մեր* ] *Ճշմարիտ քրիստոնեայ է... զաւրէնս մեր*
[9] Ե *բայց* ] *եւ նոքա,* Է > *նոքա*
[10] ԴԺԻԽ *լուր* ] *լուռ*
[11] Ա > ի, ԳԶԷԸ *օրն,* Դ *յօրն,* ԺԽ *աւուրն*
[12] Ե *լուք լիցուք մինչ ի պահսն եւ ապա բռնութեամբ թըլփատեսցուք* ] *լուռ... զնա*
[13] Ե *եթէ* ] *թէ*
[14] Ա > մահուամբ
[15] Ա > զնա*:* ԴԷԺԻԽ *նոքա* ] *նոցա*
[16] Ա վերջի: ԳԴԵԶԷԸԺԻԽ *օր*
[17] Ա բարեկենդանի, Թ *բարէնդանին*
[18] Գ > *նոյն աւրն,* ԴԵԶԷԸԺԻԽ *օրն*
[19] Գ *եկեալ* ] *երթեալ*
[20] Խ *հարկանել*

---

[21] ԳԴԵԶԷԸԹԺԽ *ծնօղացն*
[22] ԴԵԶԷԸԹԺԻԽ *կսկծանօք*
[23] ԱԳԴԷԺԻԽ մեծական
[24] Գ > *եւ մեծակական ողբով,* Է *ողբովք*
[25] Ը *յետ,* Խ > *յետս*
[26] Ա ծնաւղքն, ԲԼ *ծընաւղ,* ԳԷԸ *ծնօղք,* ԴԵԶԹԺԻԽ *ծնօղ*
[27] Զ *մարմնաւոր,* Գ > *մարմնաւորք*
[28] Գ *իմ* ] *մահուան իմոյ*
[29] Գ > *լացէք ի վերայ կորստեան իմոյ բայց*
[30] ԳԽ *արէք*
[31] ԳԴԵԶԷԸԹԺԼԽ *ծնօղութեան*
[32] ԶԷԺ *օրհնեցէք*
[33] ԳԴԵԶԷԸԺԻԽ *այսօր*
[34] Բ ~ *կամիմ առ Քրիստոս երթալ,* ԱԹ երթեալ, ԴԺԻԽ *գնալ*
[35] Ա ըզյակովիկ վկայն, Դ *զակովին,* ԲԵԶԷԸԹԺԻԼԽ *զակովիկ*
[36] ԶԷ *լինիլ*
[37] Գ > *եւ իբրեւ զյակովիկ... արարից նմա*
[38] Է *իմ* ] *մեր*
[39] Ե *եւ Քրիստոս*
[40] Ե *եւ ես:* Գ ~ *ես անարգիմ վասն նորա*
[41] Ը *աստուած + մարմնով (**այլ ձեռքով**)*

*վասն նորա մեռանիմ*[1]*»:*

**43** *Եւ տարածեալ ծնաւղացն*[2] *զձեռս*[3] *իւրեանց, խաչակնքեալ աւրհ-աւրհնեցին*[4] *եւ ասեն. «Զաւրացու-ցիչն*[5] *երկնաւորաց եւ երկրաւորաց*[6] *Քրիստոս Աստուած ամենակարող*[7] *զաւրութեամբն*[8] *զաւրեցուցանէ*[9] *զքեզ, ե՛րթ ի խաղաղութիւն, եւ Ինքն ընդ քեզ եղիցի*[10]*»:*

**44** *Եւ տարեալ զնա անաւրինացն*[11] *առ դադին*[12]*, եւ նա յղեաց առ ամի-րայն, եւ* նա[13] *ասէ. «Կրկին ուրացու-ցէ՛ք եւ թլփատեցէ՛ք զդա*[14]*»:* **45** *Եւ հասեալ ի դուռն բերդին*[15]*, զտեղի ա-ռեալ կանգնեցաւ եւ*[16] *ասէ. «Ո՞ւր տանիք զիս*[17]*, աստ ուրացեալ եմ, աստ*[18] *մեռայց»:* **46** *Եւ յանկարծակի զպսակ անձինն ՝զգլուխն*[19] *ի վեր ամ-բարձեալ, ետես իմանալի մտացն հայեցողութեամբ զամենասուրբ Եր-րորդութիւնն*[20] *եւ*[21] *զնախնի նախա-տակն համբերութեան վկայիցն*[22] *եւ զհանդիսադիրն*[23] *ամենեցուն զՔրիս-տոս Աստուած, զի*[24] *եկեալ յաւգնա-կանութիւն*[25] *՝ զտկարսն*[26] *զաւրացու-ցանէր*[27]*,* զթմբրեալն ի յուրացութիւն աս-տուածային իմաստիցն խորհրդազգեաց առնել կամէր[28]*. վասն որոյ զդասս հրեշտակացն յառաջ կոչէր, զպարս արդարոցն*[29] *մեծարէր, եւ վկայիցն քաջալեր*[30] *տայր*[31] *՝զալ տեսանել զա-րի եւ զքաջ վկայն*[32] *ի հանդիսական ատենին:* **47** *Եւ ինքն զպսակն հիւսէր, զթագն կազմէր, զտեղի հանգստեանն պատրաստէր*[33]*, զաւթեվանն*[34] *ցուցա-նէր*[35]*:*

**48** *Եւ տեսեալ անաւրինացն, զի տիպ*[36] *պատկերին գեղեցկանայր՝*

---

[1] Ե *զի Նա անմահ բայց վասն մեղաւորաց մեռաւ, ես որպէս ոչ մեռայց վասն Նորա* ] *անմահ բանն... Նորա մեռանիմ*

[2] ԳԴՁԷԸԹԺԻԼԽ *ծնօղացն,* Ե *նոցա առ Աս-տուած* ] *ծնաւղացն*

[3] Ը *զձեռսն*

[4] Ե *եւ խաչակնքեալ:* Ա աւրհնեցին զնա, Դ *եւ աւրհնեցին,* ԳՁԷԺԽ *օրհնեցին*

[5] ԴԵՁԷԹԺԻԽ *զօրացուցիչն,* Ը *զօրացուցիչն Աստուած*

[6] Ա երկնաւորացն եւ երկրաւորացն

[7] ԳԸ *Աստուածն (Ը Աստուած) մեր:* ՁԷԺԻ *ա-ամենակարօղ*

[8] Գ > *ամենակարող զօրութեամբն*

[9] ԴԵՁԷԸԺԻԽ *զօրութեամբն զօրացուցանէ*

[10] ԱԳ տէր եղիցի ընդ քեզ ] *ինքն... եղիցի*

[11] ԴԵՁԷԸԺԻԽ *անօրինացն,* Գ > *անօրինացն*

[12] ՁԷԸ *դատին*

[13] Բ-Խ > *նա*

[14] Ա > եւ թլփատեցէք: ԳՁԷ *զնա* ] *զդա (*Գ ~ *զնա եւ թլփատեցէք)*

[15] Ա բերդին եւ, Ը *բերթին,* Խ *բերդին*

[16] Ա եւ նա

[17] Գ > *ուր տանիք զիս*

[18] ԳԺ *եւ աստ*

[19] Է *անձինն իւրոյ:* Գ *զաչսն* ] *եւ յանկարծա-կի... զգլուխն,* Խ *զգլուխ*

[20] Ա զերրորդութիւն, ԵԹ *զերրորդութիւնն*

[21] ԲԴՁԷԺԻԽ > *եւ*

[22] ԲԵՁԷԸԹԼ *համբերութեամբ,* Դ *համբերու-թեանն:* Գ > *եւ զնախնի... վկայիցն*

[23] Ժ *զհանգիստղիրն,* Ի *զհանգիսադիրն*

[24] Գ *որ* ] *Աստուած զի*

[25] Ա յաւգնութիւն, Ձ *յօգնութիւն,* ԴԵԷԸԺԻԼԽ *յօգնականութիւն*

[26] Գ > *յօգնութիւն զտկարսն,* ԱԲ զտկարն

[27] Գ *զօրացուցանէր զնա,* ԴԵՁԷԺ *զօրացու-ցանէր,* Խ *զօրացուցանէ*

[28] Բ-Խ > *զթմբրեալն ի յուրացութիւն... առ-նել կամէր*

[29] Դ *յարդարոցն*

[30] Ա > եւ*:* ՁԷ *զվկայիցն:* ԴԺԻԽ *քաջալերս*

[31] Գ > *զպարս... քաջալեր տայր*

[32] Ը *զմեծ,* Թ *քաջ* ] *զքաջ:* Դ *քաջայն* ] *քաջ վկայն*

[33] Ձ *հանգստեան:* Է *պատրա***սէ**ր

[34] ԴԵՁԷ *զօթեվանն,* ԲԹԺԻԼԽ *զաւթեւանն,* Ը *զօթեւանն*

[35] Գ > *եւ ինքն...զաւթեվանն ցուցանէր*

[36] ԳԴԵՁԷԸԹԺԻ *անօրինացն:* Ե *զտիպ*

*այտ երեւացն իբրեւ*[1] *հրով վառեալ*[2], ծնաւտք պարանոցին գեղեցկութեամբ նոր սկսեալ մուրուացն փաղփաղել[3], *տեսութիւն*[4] *աչացն պայծառացեալ*[5]*:* **49** *Եւ ռնգունքն*[6] *էառ զհոտ անուշութեան*[7] *անմահ թագաւորին Քրիստոսի. եղ*[8] *ծունր, ձգեաց զձեռն իւր*[9] *յերկինս*[10], *աղաղակեաց ի ձայն մեծ*[11] *եւ ասէ. «Քրիստոս է արարիչն իմ*[12], *եւ ես հաւատամ զնա*[13]*:* **50** *Պիղծ է առաջնորդն*[14] *ձեր եւ ամենայն մանկունք նորա:* **51** *Նզովեալ է*[15] *սատանայ եւ ամենայն պոռնկասէր*[16] *դեւք նորա»:* **52** *Եւ վազեալ ի մէջ ամբոխին, անկաւ յերկիր, զհողն*[17] *խաչեալ ի բերանն արկանէր եւ ասէր. «Ահա՛ սպանէ՛ք զիս վասն Քրիստոսի»:*

**53** *Յայնժամ ամենայն բազմութիւն*[18] *անաւրինացն*[19] *իբրեւ զշուն կատաղի՝ խումբ արարեալ*[20], *դիմեցին ի վերայ նորա եւ քարիւ եւ փայտիւ եւ սրով հարին զգլուխ նորա՝ մինչ*[21] *զի ուղեղ գլխոյն*[22] *ի վայր թափեցաւ:* **54** *Եւ նա անկեալ ի մէջ նոցա, մինչ զի*[23] *բազմաց ասել թէ՝ մեռաւ*[24]*:* **55** *Եւ նա*[25] *ուշաբերեալ, յանկարծակի ելեալ*[26] *նստաւ եւ արեամբն ածանէր*[27] *զերեսն*[28] *իւր եւ ասէր*[29]. *«Ահա բաժակ՝ որ*[30] *ճաշակեցի, եւ յաւշարակ*[31] *նռան՝ յորմէ ըմպեցի*[32], *եւ մահ պատուական՝ որ այսաւր*[33] *հասի»:* **56** *Եւ տեսեալ անաւրինացն*[34] *ասեն. «Մի՛ երկնչիր, միայն բան*[35] *մի՛ խաւսեաց*[36], *եւ մեք դեղաւք բժշկեմք*[37] *զքեզ»:* **57** *Եւ նա դարձեալ դաւանեաց զՔրիստոս Աստուած, եւ կրկին անգամ*[38] *խաչիւ դրոշմեալ զհողն ի բերանն արկանէր եւ զձեռն*[39] *խաչակնքեալ ի վերայ սրտին՝ գոչէր*[40] *մեծաձայն եւ ասէր. «Հարէ՛ք զիս եւ սպանէ՛ք*[41], *զի ես ծառայ Քրիստոսի եմ»:*

---

[1] Ա > իբրեւ
[2] Թ *վառեցեալ*
[3] Բ-Խ > *ծնաւտք պարանոցին... փաղփաղել*
[4] Գ *եւ տեսութիւն*
[5] Ա պայծառանայր
[6] ԱԲԴԵԶԷԸԹԻԼ ըռընկունքն, ԺԽ *ռնկունքն,* Գ > *ռնգունքն*
[7] Ա անուշահոտութեան, Դ *անոյշութեան*
[8] Ա եւետ ] *եղ*
[9] ԶԷ *եւ ձգեաց:* Բ ~ *ձեռն իւր ձգեաց*
[10] Ը *յերկին*
[11] Գ > *ձգեաց զձեռն... ձայն մեծ*
[12] ԲԳԹ *արարիչ:* Գ > *իմ*
[13] Գ *զնա + Աստուած յաւիտենական*
[14] Ա պեղծ, Գ *այլ պիղծ:* Դ *յառաջնորդն*
[15] Ա > է
[16] Դ *պոռնընկասէր*
[17] Զ *եւ հողն,* Թ *զհուղն*
[18] ԶԷ > *ամենայն:* Ա բազմութիւնք
[19] ԳԴԵԶԷԸԺԻԽ *անօրինացն*
[20] Գ > *խումբ արարեալ,* ԺԽ *արեալ*
[21] Թ *մինչեւ*
[22] Թ *զուղեղ* ] *զի ուղեղ,* ԱԷԸ ուղիղ, Գ *ուղեղն,* Դ *յուղեղ:* Գ > *գլխոյն*
[23] Գ *մինչեւ* ] *մինչ զի*
[24] Է > *եւ նա անկեալ... թէ մեռաւ*
[25] Թ > *նա*
[26] ԳԹ > *յանկարծակի ելեալ*
[27] Խ *արեամբ:* ԳԵԶԷԺԽ *օծանէր*
[28] Ը ~ *զերեսն օծանէր*
[29] ԱԵԸ > իւր: ԴԹ *ասէ*
[30] Զ *զոր*
[31] Ա յաւշարակք, ԳԴԶԷԸԺԻ *յօշարակ,* Ե *յօշարան*, Խ *յօշական (Բ յաւշարակ)*
[32] Ը *ըմբեցի,* Թ *ըմպիցի*
[33] ԳԴԵԶԷԸԺԻԽ *այսօր*
[34] ԱԲԳԴԵԶԷԹԺԻԽ *անօրինացն*
[35] Թ > *միայն:* Ա բանիւ
[36] Թ ~ *մի բան խօսեաց,* ԳԵԶԷԸ *խօսեաց,* ԺԽ *խօսեայ*
[37] ԳԴԵԶԷԺԻԽ *դեղօք:* ԱԽ բժշկեմ
[38] ԶԷ > *անգամ*
[39] Գ > *եւ կրկին անգամ... արկանէր,* Ա ընկէց ] *արկանէր:* ԶԷ *զձեռսն*
[40] Է *գոջէր*
[41] Ա սպանէք զիս, Ը *սպաննէք*

**58** Եւ տեսեալ անաւրինացն[1] զհամբերութիւն քաջ վկային, զարմացեալ գնացին առ դաղիճ[2] եւ ասեն. սեն. «ԶՔրիստոս ճշմարիտ[3] Աստուած դաւանեաց խաբեբայն այն»: **59** Եւ նա ասէ[4]. «Ընդէ՞ր ոչ սպանէք զնա[5]». եւ ասեն. «Սպանաք զնա[6], եւ նա նոր կենդանացաւ»: **60** Եւ հրամայեաց դաղիճ[7] երթալ[8] քարկոծել զնա[9]: **61** Եւ նոցա երթեալ, ողորքանաւք[10] խրատ տային՝ առնել[11] զկամս դատաւորին: **62** Եւ նա ասէ. «Երթայց առ դատաւորն»: **63** Եւ նոցա ուրախացեալ, առեալ տանէին[12] առ դատաւորն[13]:

**64** Իսկ զաւրեղ զաւրականն[14] Քրիստոսի եւ[15] քաջ մենամարտիկն[16] զտկարութիւնն[17] եւ զցաւ անձինն[18] ի բաց բարձեալ[19], եկեալ ի նոյն[20] տեղին, ուր զուրացութեամն[21] ձին հեծեալ էր, ձայնեաց[22] մերձաւոր քրիստոնէիցն, թէ. «Աստ[23] հեծայ զսեւ ձին[24], աստ մեռայց վասն իմ Քրիստոսին[25]»:

**65** Եւ տեսեալ անաւրինացն[26] զճշմարիտ հաւատ[27] նորին, քարիւ եւ փայտիւ հարեալ[28]՝ ջարդեցին զամենայն մարմին[29] նորա[30]: **66** Եւ նա քաղցրութեամբ աւանդեաց զհոգին իւր առ Աստուած ի ձեռս հրեշտակաց Աստուծոյ[31]: **67** Եւ առեալ անաւրինացն[32] զպատուական նշխարք[33] երանելի մանկան տղային[34], հրով[35] այրեցին ի մէջ քաղաքին[36]:

**68** Եւ ի գիշերին այնմիկ[37] լոյս սաստիկ ծագեալ[38] ի վերայ նորա: **69** Եւ անաւրինացն[39] ահաբեկ եղեալ[40]՝ յամաւթ[41] լինէին[42]: **70** Եւ յետ երից ա-

---

[1] ԱԳԴԵԶԷԸԺԽ *անօրինացն*
[2] Ը > *առ դաղին*, ԶԷ *դատին*
[3] ԴԸԺԻԽ > *ճշմարիտ*
[4] ԲԴԶԷԸԹԺԻԼԽ *ասէր*, Գ *ասաց*
[5] Ա սպանանէք, ԶԷ *սպանիք:* Ջ > *զնա*
[6] ԱԲԳԴԸԹԺԻԼԽ *սպաննաք:* ԱԷ > զնա
[7] ԶԷԸ *դատին*
[8] Ը *երթեալ*
[9] Ե *ածէք առ իս. եւ ասեն. կամէաք բերել, եւ եւ նա նոր իմն կատաղեցաւ. եւ հրամայեաց դաղին առ ինքն ածել զնա* ] *սպանէք զնա... քարկոծել զնա*
[10] ԺԽ *երթալ:* ԳԴԵԷԸԹԺԻԽ *ողորքանօք*
[11] Ջ ~ *խրատ տային նմա ողորքանօք,* ԷԳ *տային նմա:* Գ *զի առցէ*
[12] Գ > *առեալ:* Թ *տարան*
[13] Գ > *առ դատաւորն,* Թ *դաղին* ] *դատաւորն*
[14] ԴԵԶԷԸԹԺԻԽ *զօրեղ զօրականն*
[15] Ա > Քրիստոսի*:* ԲԴԵԷԸԹԺԻԽ > *եւ*
[16] Գ *եւ նա* ] *իսկ զաւրեղ... մենամարտիկն*
[17] ԳԶԷ *զտկարութիւն*
[18] Գ *մարմնոյն* ] *եւ զցաւ անձինն*
[19] Է *թողեալ* Գ *եղեալ* ] *բարձեալ*
[20] Գ *եւ յորժամ եհաս ի* ] *եկեալ ի նոյն*

[21] ԲԶԷԸԹԻԽ *որ* ] *ուր:* Թ *զաւրացութեան*
[22] Ա ձինն հեծուցեալ էին: Գ *եւ ձայնեաց*
[23] Գ > *մերձաւոր քրիստոնէիցն:* Գ *աստի*
[24] Գ *զսեաւ*: Ա ձին եւ
[25] Թ *աստ մեռաց վասն իմ Քրիստոսին զի աստ հեծայ զսեւ ձին*
[26] ԴԵԶԷԸԺԻԽ *անօրինացն,* Թ *անօրինեացն*
[27] Ա հաւատս
[28] Գ > *հարեալ*
[29] ԲԴԵԶԹԺԻԼԽ *մարմինս*
[30] Գ *զնա* ] *զամենայն մարմին նորա*
[31] Գ > *ի ձեռս հրեշտակաց Աստուծոյ,* ԲԴԵԷԹԺԻԼԽ > *Աստուծոյ*
[32] ԳԴԵԶԷԸԺԽ *անօրինացն*
[33] Ե *նշխարս*
[34] Գ *Յոհանիսի* Ե *Յոհաննու* ] *տղային,* Ի *տըղաին*
[35] Ը > *հրով*
[36] Ե *յեզր* ] *ի մէջ,* Ը > *ի մէջ քաղաքին*
[37] ԱԲԳԵԶԷԸԹ յայնմիկ
[38] Ե *ծագեաց*
[39] ԱԳԴԵԶԷԹԺԻԼԽ *անօրինացն*
[40] Գ *տեսեալ այլազգեացն* ] *անօրինացն ահաբեկ եղեալ,* Ը *ահաբեկեալ* ] *ահաբեկ եղեալ*
[41] ԱԴԵԶԷԸԹԺԻԼԽ *յամօթ*
[42] Ե *մինչ զի տեսողքն ահաբեկ լինէին* ] *եւ*

ւուրց հրաման ետ[1] ամիրայն քրիստոնէիցն՝ գնալ[2] թաղել զմնացեալ նշխարս[3] նորա: **71** Իսկ քրիստոնէիցն, որք[4] յահէ[5] անաւրինացն[6] փախուցեալք էին, այգուցն ժողովեալ[7] եկին ի միասին, եւ բարեպաշտ ծնաւղքն[8] նորա ընդ նոսա՝ զսեւացեալ հանդերձս[9] ի բաց արկեալ, սպիտակազգեստք եղեն[10], եկին ի տեղի նահատակութեան պատուական վկային եւ աւրհնութեամբ[11] եւ գոհութեամբ փառս Աստուծոյ տային[12]: **72** Եւ գովէին[13] մեծաձայն բարբառով. «Աւր[14] է հարսանեաց մեր զաւակին, եկայք ուրախասցուք[15], սրբազան քահանա՛յք եւ բազմութի՛ւն ամենայն[16] եղբարց ի միասին, զի որդեակս[17] մեր զհոգեւոր բաժակն ճաշակեաց, մեք զմարմնաւոր բաժակն[18] ըմպեսցուք[19]»: **73** Եւ եթէ[20] ոք լայր ի վերայ նորա[21], ծնաւղք[22] նորա[23] սաստէին՝ ի բաց կալ ի լալոյ եւ յողբոց՝ մեծութեան խնդութեան նորա[24]:

**74** Եւ առեալ զմնացեալ մասն[25] նշխարաց նորա սրբազան արհեպիսկոպոսն[26] Տէր Ստեփանոսն[27] եւ պատուական քահանայքն, հանդերձ ամենայն բազմութեամբ[28] քաղաքին[29], ցնծութեամբ եւ ուրախութեամբ աւրհնելով[30] զամենասուրբ զԵրրորդութիւնն[31], որ ի սառուցեալ եւ ի ցրտացեալ[32] ժամանակիս ոչ յամաւթ[33] արար զմեզ առաջի ազգաց[34] անհաւատից[35], տարեալ եդին ի սուրբ եկեղեցին[36], ի ներքոյ աստիճանի[37] բեմբին[38], յորում[39] ինքն դրոշմեալ էր զտեղի գերեզմանին:

**75** Կատարեցաւ սուրբ վկայն

անօրինացն... լինէին, ԳԸ եղեն ] լինէին
[1] Դ հրամայն, Ե հրամայեաց ] հրաման ետ
[2] Դ քրստոնէին: Գ > գնալ
[3] Զ ոսկերս Ժ նշխարհս ] նշխարս
[4] Ը քրիստոնէին, Ա որ
[5] Ը հայէ ] յահէ
[6] ԱԳ-ԸԻԽ անօրինացն
[7] Ա ժողովեալք
[8] Ա ծնօղքն, Բ ծնաւղքս, Գ-ԸԻԽ ծնօղք (Լ ծնաւղքն)
[9] Ը հանդերսն
[10] ԱԸ սպիտակասգեստ: ԴԺԻԽ եղեալ
[11] ԶԷԺԽ օրհնութեամբ
[12] ԸԹ > Աստուծոյ: ԱԴ ˜ տային Աստուծոյ
[13] Ա գոչէին ] գովէին
[14] ԴԵԶԷԸԺ օր, Խ որ
[15] Դ յուրախասցուք
[16] Դ յամենայն
[17] Ա որդէակս
[18] Խ > ճաշակեաց, մեք զմարմնաւոր բաժակն
[19] Ը ըմբեսցուք
[20] Ա թէ, Թ էթէ
[21] Ա նորին
[22] Ա ծնօղքն, Ե ծնօղքն, ԳԴԶԷԸԺԻԽ ծնօղք (ԲԹԼ ծնաւղք)
[23] Ե > նորա
[24] Գ իսկ եկեալ ժողովեցան եւ բարեպաշտ ծնօղք նորա ընդ նոսա եւ քրիստոնեայք բազումք ի տեղի նահատակութեան պատուական վկային ] իսկ քրիստոնէիցն, որ յահէ անօրինացն... մեծի խնդութենէ նոցին, ԲԴԵԶԷԸԹԺԻԼԽ մեծի խնդութենէ (Բ-ԴԸԹԺԻԼԽ խնդութեանց, Ե խնդութեան) նոցին (Է նորին)
[25] Թ զմարմին ] մասն
[26] Ա արքեպիսկոպոսն
[27] ԱԸ Ստեփանոս, Է Ստեփաննոս
[28] Դ յամենայն: Ե բազմութեամբն
[29] Թ > քաղաքին
[30] Գ աւրհնէին, ԶԷԺԽ օրհնելով
[31] ԴԶԺԽ երրորդութիւնն, Ը երրորդութիւն
[32] Գ > ի: Գ յերեկոյացեալ ] ցրտացեալ
[33] ԱԳԵ-ԻԽ յամաւթ, Դ ամօթ
[34] Ը այլազգաց ] առաջի ազգաց
[35] Գ այլազգեաց եւ, այլազգաց ] ազգաց անհաւատից
[36] Ա ի սրահ սուրբ եկեղեցոյն, Ը > ի սուրբ, ԸԽ յեկեղեցին
[37] Ը տաճարի սուրբ ] աստիճանի
[38] Ա > ի ներքոյ աստիճանի բեմբին
[39] ԺԽ որում

*Քրիստոսի*[1] *յամսեանն*[2] *ի Փետրուարուարի*[3] *ԻԲ., ի տաւնի*[4] *ՃԾ. հայրապետացն Կոստանդնուպօլսի*[5]*, յետ ի*[6] *ի*[6] *բարեկենդանի*[7] *շաբաթ աւրն, ի վեց*[8] *ժամու աւուրն, ի փառս*[9] *Քրիստոսի Աստուծոյ մերոյ*[10]*:*

**76** *Որոյ բարեխաւսութեամբն*[11] *ողորմի Քրիստոս Աստուած Թումայ*[12] *վարդապետին, որ*[13] *զայս սակաւ պատմութիւնս շարադրեաց*[14] *ի դուռն սուրբ եկեղեցեաց*[15]*:*

---

[1] Գ *Քրիստոսի + մանուկն Յոհաննէս Խլաթեցին,* *ցին,* Է *Քրիստոսի Յօհաննէս*

[2] ԺԽ *ամսեանն,* Գ > *յամսեանն*

[3] ԱԷ > *ի:* Դ *փետրուար*

[4] ԱԳ-ԷԺԻԽ *տօնի*

[5] Գ *Կոստանդնուպօլսի սուրբ ժողովոյն,* Զ *Կոստանդինուպօլսի,* Է *ի Կոստանդնուպօլսի*

[6] ԵԶԷԸԹԼ *յետի* ] *յետ ի*

[7] Է *բարեկենդան*

[8] Ա-Խ (բոլոր ձձ-ը) *օրն:* Ա .զ. ] վեց

[9] Է *փա* ] *փառս*

[10] Է > *Քրիստոսի Աստուծոյ մերոյ,* Խ > *Աստուծոյ մերոյ,* ԲԴԵԶԹԻԼ *մերոյ + օրհնելոյն (*ԲԴԵԹԻԼ *աւրհնելոյն) յաւիտեանս. ամէն*

[11] ԴԵԹԻԼ (բոլոր ձձ-ը) *բարեխօսութեամբն*

[12] Ե *Թումա*

[13] ԵԹ *զի* ] *որ*

[14] Դ *շարագրեաց*

[15] Ա ողորմի ստացողի գրոցս... եւ արարողի այս սակաւ բանի Թովմայ հեզահոգի աստուածաբան վարդապետին. ամէն ] *որոյ բարեխօսութեամբն... եկեղեցեաց,* ԲԳԶԷԸԺԽ > *որոյ բարեխաւսութեամբն... եկեղեցեաց (*վերը ՝ԴԵԹԻԼ*)*

## Բ. ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

*Ծ ՝ 4722. ԺԶ. դ. (1510ից յետոյ), 428բ-30ա.*
*Կ (r) ՝ 992. 1651 թ., Եղեսիա, 505ա-6բ. (ճառընտրային-ոճական վրմշկ#).*
*Հ ՝ 10355. 1656 թ., Եւդոկիա, 327ա-8բ.*
*Զ ՝ 4548. 1664 թ., Հոռոմայրի գիւղ (Լոռի), 382բ-5ա.*
*Ղ ՝ 11131. 1679 թ., Եւդոկիա, 294ա-5բ.*
*Ճ ՝ Էջմ. Հմր 20. ԺԷ. դ., 53բ-5ա.*
*Մ (B) ՝ 3783. 1704 թ., Եւդոկիա, 284ա-5ա.*
*Յ (f) ՝ 4547. 1709 թ., Գերմանիկէ (Մարաշ), 293բ-5ա:*

### ՅԱՅՍՄ ԱՒՈՒՐ[1] ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՆՈՐ ՎԿԱՅԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ[2] ՄԱՆԿԱՆՆ ՅՈՀԱՆՆԻՍԻ[3]

**1** *Պատուական[4] եւ պանծալի վկայս[5] Յոհաննէս[6] էր ի Բզնունեաց[7] նեաց[7] գաւառէն, ի[8] քաղաքէն Խլաթայ[9], բարեպաշտ ծնողաց[10] զաւակ, ի ի Պ. եւ ի ԶԶ.[11] թվականիս մերում[12]:* **2** *Եւ էր վարժեալ ի յարուեստս[13] երաժշտական գուսանական խաղուց[14]. եւ էր յոյժ[15] անուշաձայն եւ քաղցր երգեցիկ[16], մինչ զի զարմանալի էր տեսողացն եւ լսողացն[17]:* **3** *Եւ էր սիրեցեալ յաչս ամենեցուն, եւս առաւել[18] ամիրային Սէֆէդնի[19]. եւ հանապազ կայր առաջի նորա:*

**4** *Եւ էր[20] կին մի առաջի նոյն[21] ամիրային՝ երգեցիկ եւ խաղացող. եւ յաղթեալ[22] լինէր պիղծ կինն[23] այն ի մանկանէն՝ առաջի հրապարակին, զի մանուկն Յոհաննէս[24] գեղեցիկ եղանակաւ[25] բերէր[26] զերգս Փառք ի բարձմանն եւ զայլ քաղցր բարբառ[27] շարականացն ի մէջ[28] եւ զարմացուցանէր զամենեսեան:*

---

[1] Մ *ի սմին* ] *յայսմ:* Կ > *յայսմ աւուր*
[2] Մ > *նոր վկային Քրիստոսի*
[3] Մ > *մանկանն:* ԾՀԶՂՃ *Յոհանիսի,* Կ *Յոհաննիսի + որ մականունն խօլու ասի*
[4] Կ *սուրբ* ] *պատուական*
[5] Կ *վկայս Քրիստոսի*
[6] Ծ *Յոհանէս,* ՀՂՅ *Յոհաննէս*
[7] ԾՃ *յարծրունեաց* ] *բզնունեաց*
[8] Կ > *էր ի բզնունեաց գաւառէն,* Կ > *ի*
[9] Կ *Խլաթ քաղաքէ*
[10] ՀՅ *բարեպաշտ եւ աստուածասէր,* Զ *բարեպաշտ եւ երկիւղած:* ԾԿՀԶՂՃՅ *ծնօղաց*
[11] Զ > *ի:* ԿՀԶ *.պ. եւ .ձզ.,* Ղ *.ըճ. եւ .ձզ.,* Մ *.ըճձզ.*
[12] ԾՃ > *ի .պ. եւ ի .ձզ. թվականիս մերում,* Մ *թուականին հայոց,* Զ h*այոց* ] *մերում*
[13] Յ > *ի:* Զ *արուեստս*
[14] Կ *զօսանական:* ԾԿՃ *երգոց* ] *խաղուց*
[15] Զ > *յոյժ*
[16] ԾԿՂՃ > *եւ էր յոյժ անուշաձայն... երգեցիկ,* Յ *գեղեցիկ* ] *երգեցիկ*
[17] Մ *եւ զարմանալի լսողաց* ] *մինչ զի... եւ լսողացն*
[18] ԾԿԶՃՅ > *ամենեցուն եւս առաւել*
[19] Ծ *սեֆէդնի*
[20] ԿՅ ˜*էր եւ*
[21] Կ > *առաջի:* Ծ > *նոյն*
[22] Մ *խաղացօղ,* Յ *խաղցող:* Զ *աղթեալ*
[23] ՀԶՂՅ *պեղծ,* ԾԿՃ *պեղծն* ] *պիղծ կինն*
[24] Յ *զմանուկն* ] *զի մանուկն:* ԾԿ *Յոհանէս*
[25] Ղ > *գեղեցիկ եղանակաւ,* ԾԿՃ > *եղանակաւ*
[26] ԾՃ *բերէր փողով*
[27] Զ *քաղցրաբարբառ*
[28] Մ *զամենայն երգ* ] *զերգս փառք... շարականացն ի մէջ*

**5** *Իսկ նենեգաժոտ*[1] *ազգն մարաց՝ որ եւ քրդաց*[2], *զրգռեն*[3] *զամիրայն ի կորուսանել զնա:* **6** *Եւ յաւուր միում*[4] *կոչեաց զնա ամիրայն*[5] *ի բերդն՝ առ ինքն*[6], *եւ ասէ. «Ես ստուգեալ եմ, զի դու լեալ*[7] *ես երբեմն մեղօք ընդ տաճիկ կնոջն*[8] *երգեցողի. կամ պիտի*[9] *քեզ տաճկանալ եւ առնուլ զնա*[10] *եւ կամ չարաչար մահուամբ մեռանել*[11]*»:*

**7** *Իսկ ծառայն Քրիստոսի Յոհաննէս համարձակութեամբ*[12] *ետ պատասխանի եւ ասէ*[13]. *«Այդ ձե՞զ է գործ եւ առաջնորդաց*[14] *ձերոց, եւ հեռի*[15] *ի քրիստոնէիցս, որ եմք ծառայ Քրիստոսի*[16], *զի Քրիստոս սուրբ է եւ զսուրբսն*[17] *սիրէ»:*

**8** *Յայնժամ սրտմտութեամբ լցեալ անօրինին եւ հրամայեաց*[18] *Դ. արանց՝ ընկենուլ զնա ի բերդէն*[19] *ի վայր. եւ ո՛չ կարացին*[20], *զի աներեւոյթ օգնութեամբն*[21] *Աստուծոյ յաղթեաց*[22] *նոցա սուրբն:* **9** *Եւ նոցա բրածեծ արարեալ զնա դառն եւ խիստ գանիւք, եւ կապեալ ոտիւք եւ ձեռօք եդին ի բանտի*[23]*:* **10** *Եւ ի գիշերին ողորքելով եւ պատիւ խոստանալով թուլացուցին զնա ի հաւատոցն*[24]*:* **11** *Եւ ասէ «Ի վաղիւն. կամք ձեր եղիցին*[25]*», երկուցեալ զի մի՛ ի գիշերի աներեւութաբար*[26] *կորուսցեն զնա:*

**12** *Եւ այգուցն*[27] *հանեալ տարան առ ամիրայն*[28] *եւ բռնութեամբ հանեալ ի ձի եւ շուրջ ածեալ*[29] *զքաղաքն ամենայն:* **13** *Եւ զի*[30] *էր նա մանուկ*[31] *Ի.(20)ամեայ եւ դիւրափոխ ի*[32] *յամենայն բան, վասն որոյ ի նոյն օր*[33] *փոշիմանեցաւ ի պիղծ օրինացն*[34], *զոր անօրէնքն*[35] *բռնութեամբ եդին ի վերայ նորա*[36]*:* **14** *Եւ զղջացեալ*[37] *ի միտս իւր՝ խորհէր մեռանել*[38] *վասն անուանն Քրիստոսի:* **15** *Յղեաց զոմն ի*

---

[1] ԿՅ *նենգէժոտ,* ՀՁՂՄ *նենգժոտ*
[2] ԿՄ > *մարաց որ եւ:* Ճ > *եւ:* Ծ *գրդաց*
[3] ՂՄ *գրգռեցին*
[4] Յ *յորժամ ի միում աւուր* ] *յաւուր միում*
[5] Ձ *յամիրայն,* Կ > *ամիրայն*
[6] ԾՃ *առաջի իւր* ] *առ ինքն*
[7] Մ *լիալ*
[8] ՀՂ *կնոջ*
[9] Մ *պարտ է* ] *կամ պիտի*
[10] Ծ > *զնա*
[11] ԾԿՃ ~ *մեռանել չարաչար մահուամբ,* Մ *մեռանիլ*
[12] ԾԿՁ *Յոհաննէս,* Ճ *Յովհաննէս:* Կ > *համարձակութեամբ*
[13] Ծ > *եւ ասէ*
[14] Ձ *գործ է:* Ծ *առաջնորդեաց*
[15] Մ *հեռի է*
[16] ԾԿՃ > *որ եմք ծառայ Քրիստոսի*
[17] ԾՃ *զսուրբքն,* ԿՄ *զսուրբս,* Ձ *զսուրբսն*
[18] ԾԿՃ *ասաց* ] *հրամայեաց*
[19] Յ *բերդն*

[20] ԾԿՃ *կարացին անօրէնքն*
[21] Մ > *աներեւոյթ:* ՃՅ *օգնականութեամբն*
[22] ԾՃ *յաղթէր*
[23] Մ > *ոտիւք եւ ձեռօք,* ՁՂՅ *բանդի*
[24] Կ *հաւատոց*
[25] ԾՀՁՂՃՅ *եղիցի*
[26] ԾԿՂՃՅ *աներեւոյթաբար*
[27] ԾՃՄ *ի վաղիւն* ] *այգուցն,* Յ *յայգուցն*
[28] Ձ *զնա առաջի ամիրային* ] *առ ամիրայն*
[29] ԾԿՃ *ածին*
[30] Ճ > *զի*
[31] Յ *մանուկն* ] *նա մանուկ*
[32] ՃՄՅ > *ի*
[33] Ծ *աւրն,* ՀՁՃՅ *օրն*
[34] ՀՁՅ *պեղծ:* Կ *անօրինացն*
[35] Ձ *անաւրէքն*
[36] ԾՃ > *ի պիղծ օրինացն... ի վերայ նորա*
[37] ԾՃ *զղջացաւ*
[38] ԾՃ *կամէր* ] *խորհէր:* ՂՄ *մեռանիլ*

քրիստոնէիցն[1] առ քահանայսն՝ թէ. «Տո՛ւք ինձ[2] հաղորդութիւն ի մարմնոյն Քրիստոսի[3], զի ի վաղիւն նահատակիմ վասն անուան Նորա[4]»: **16** Եւ նոցա անփոյթ արարեալ՝ անհաւատ եւ ուրացող կոչելով[5] զնա: **17** Այլ Այլ նա հալէր եւ[6] մաշէր յանձն իւր եւ[7] եւ[7] ի դառնութենէ սրտին ողբս լալագինս յօրինէր ինքն ինքեան[8], եւ ողբալով եւ ամօթխածութեամբ[9] շուրջ գայր[10] ի քաղաքին[11] զօտեւոյծ եւ միաձորձ[12], վայ եւ եղուկ կարդայր[13] անձին իւրում[14] եւ ասէր. «Վա՜յ քեզ, ուրացողդ[15] Յոհաննէ՛ս, զի զքահանայսն[16] տրտմեցուցեր եւ զծնօղսն[17] քո ի սուգ նստուցեր, եւ զսիրելի եղբարսն եւ զընկերսն[18] քո դառնացուցեր, զաւազանն մոռացար՝ որ ծնաւ զքեզ որդի Աստուծոյ[19], զԱւետարանն թողեր՝ որ լուսաւորեաց զքեզ[20] քարոզութեամբ[21], ելեր յաչացն[22] Քրիստոսի, հեռացաւ ի քէն հրեշտակն պահապան: **18** Եւ[23] Քրիստոսի Աստուծոյն[24] քո զի՞նչ պատասխանի տայցես[25] յաւուրն դատաստանի, որ ասաց ի սուրբ Աւետարանին, թէ. «Որ ուրասցի[26] զիս առաջի մարդկան, ուրացայց եւ Ես զնա առաջի Հօր[27] Իմոյ որ յերկինս[28] է» [Մտթ. Ժ. 33]:

**19** Զայս եւ առաւել քան զսոյն ողբս յօրինէր եւ[29] լայր հանապազ եւ յողբ[30] եւ յարտասուս[31] շարժէր զլսողսն[32]: **20** Եւ այնուհետեւ վաճառեաց[33] զամենայն ինչս եւ զստացուածս իւր եւ[34] ետ աղքատաց եւ կարօտելոց[35]: **21** Եւ երթեալ առաջի եկեղեցւոյն[36], դաւանեաց զամենասուրբ Երրորդութիւնն եւ զմի աստուածութիւնն[37], զմարդե-

---

[1] Ճ ումն, Կ քրիստոնէից
[2] Ճ > ինձ
[3] Հ > ի: Կ > ի մարմնոյն Քրիստոսի
[4] Կ անուանն Քրիստոսի ] անուան նորա, Յ նոցա ] նորա
[5] Մ ուրացօղ: Զ կոչեցով
[6] ԿՄ իսկ ] այլ: Մ > հալէր եւ
[7] Յ > եւ
[8] ՁՅ օրինէր ] յօրինէր: ԾՃ > եւ ի դառնութենէ... ինքեան, ՀԴ յինքեան
[9] Ճ > եւ, ԾՃ ողբով: ԾԿՁՅ ամօթղածութեամբ
[10] ՀՁԴՅ շրջէր ] շուրջ գայր
[11] Ճ քաղաքն
[12] ԾՀԴ քաղաքն: ԾՃ > զօտեւոյծ եւ միաձորձ
[13] ՀՁԴ կարդալով
[14] Մ եւ զօտեւոյծ եւ միաձորձ շրջէր ի քաղաքն ամօթալի ] ինքն ինքեան... իւրում
[15] ԾՄ ուրացօղդ
[16] ԾԿՀՃ Յոհաննէս: Հ զքահանայսն
[17] Յ տրտմեցուցանէր: Զ զծնաւղսն
[18] Ճ եղբայրսն, Մ եղբարս: Յ զնկերս
[19] ԾՃ լուսոյ ] Աստուծոյ
[20] Դ > զքեզ
[21] Զ մկրտութեամբ ] քարոզութեամբ
[22] Զ աչացն, Յ ի յաչացն
[23] Մ > հեռացաւ... պահապան, Զ ~ պահապան հրեշտակն: Մ եւ արդ
[24] ՁՅ այն ] Աստուծոյն
[25] Կ տացես պատասխանի, Զ տացես
[26] Յ ուրացի
[27] Ծ հաւր
[28] Ճ յերկինսն
[29] ԾՃ զայս ] զսոյն: Զ օրինէր: Զ > եւ
[30] ԾՃ ողբալով ասէր ] ողբս յօրինէր... եւ յողբ, Հ յողբս
[31] Զ յողբս, Մ > յողբ եւ: Ծ յարտասունս, ՁՅ արտասուս
[32] Ծ զլսօղն, ՃՄՅ զլսօղսն
[33] Մ > այնուհետեւ: Մ վաճառեալ
[34] ԾԿՃՄ > եւ զստացուածս: Մ > եւ
[35] ԿՄ > եւ կարօտելոց
[36] Զ յեկեղեցւոյն
[37] Մ > եւ զմի աստուածութիւնն, ԿԶ աստուածութիւն

*ղութիւնն*[1] *Քրիստոսի:* **22** *Եւ*[2] *ողբալով լով եւ լալով*[3] *մեղայ եւ առաջի ամենայն*[4] *քահանայիցն, եւ եցոյց զգերեզմանն իւր*[5] *առաջի սուրբ*[6] *սեղանոյն եւ ասէ*[7]. *«Աստ թաղեցէ՛ք զիս»:* **23** *Եւ յանձն արար զինքն Աստուծոյ եւ սուրբ եկեղեցւոյն*[8], *եւ պատրաստեցաւ*[9] *ամենայն սրբութեամբ:* **24** *Եւ հասեալ ի պահք*[10] *Առաջաւորին, անսուաղ անցուցանէր զաւուրսն*[11] *Ե*[12].*:*

**25** *Եւ եկեալ առ նա Բ. արք*[13] *ի գլխաւորաց*[14] *անօրինացն եւ ասեն*[15]. *«Ե՛կ երթիցուք յաղօթանոցն*[16] *մեր, կերիցուք եւ*[17] *արբցուք ի միասին*[18], *ապա թէ ոչ՝ մեռանիս ի ձեռաց մերոց»:* **26** *Եւ նա ասէ*[19]. *«Խտրին սրբոյն*[20] *եմ խոստացեալ զայսքան աւուրս եւ ոչ կարեմ*[21] *զալ»:* **27** *Եւ նոքա չարութեամբ լցեալ, երթեալ առ դաղին*[22] *եւ ասեն վասն նորա, թէ*[23]. *«Ճշմարիտ քրիստոնեայ է. եւ խաբեաց զմեզ եւ զօրէնս*[24] *մեր»:* **28** *Եւ նա ասէ. «Լուռ լերո՛ւք մինչեւ ի պահսն*[25] *իւրեանց, եւ ի նոյն օրն*[26] *թլփատեմք զնա. եւ թէ*[27] *ո՛չ կամեսցի՝ չարաչար մահուամբ կորուսանեմք*[28] *զնա»:*

**29** *Եւ նոցա*[29] *լռեալ մինչեւ ի վերջին օր շաբաթու*[30] *Բուն բարեկենդանին, եւ ի նոյն օրն*[31] *երթեալ ըմբռնեցին զնա եւ տանէին հարկանելով:* **30** *Եւ տեսեալ ծնողացն*[32] *՝աղիողորմ ողբալով եւ կոծելով*[33] *երթային զհետ նորա:* **31** *Եւ նա ասէ ցնոսա. «Աստուածազութ ծնո՛ղք*[34] *իմ, մի՛ լայք ի վերայ մահուան իմոյ, այլ լացէ՛ք ի վերայ կորստեան*[35] *իմոյ, բայց աղաչեմ զձեզ. հալալ արէ՛ք ինձ*[36] *զաշխա-*

---

[1] ՀՂ > *զմարդեղութիւնն*

[2] Մ *եւ զՔրիստոսի մարդեղութիւնն,* ԾՃ > *զմարդեղութիւնն Քրիստոսի:* Կ > *եւ*

[3] ԾՃՄ > *եւ լալով*

[4] Կ *սուրբ* ] *ամենայն*

[5] Մ *զգերեզման:* ԾՃ *զտեղի գերեզմանին իւիւրոյ* ] *զգերեզմանն իւր*

[6] Մ > *սուրբ*

[7] Մ *թէ* ] *եւ ասէ*

[8] ԾՃ > *եւ սուրբ եկեղեցւոյն*

[9] Կ *պատրաստեաց զինքն*

[10] Մ *պահքն*

[11] ՁՅ *զաւուրս*

[12] Մ *զ.ե. օրն անսուաղ անցոյց* ] *անսուաղ... զաւուրսն .ե.,* Ծ *զհինգ աւուրսն,* Ճ *զ.ե. աւուրսն*

[13] ԾԿՃ > *առ նա:* Մ *այր,* ԿՀՁՂՅ > *արք*

[14] ԾՀՁՂՃ *գլխաւոր*

[15] ԿՀՁՂՅ > *եւ:* ԾԿՃ *ասեն ցնա*

[16] ՀՁՅ *ի յաղօթանոցն*

[17] ԾՁՃՅ *եւ կերիցուք եւ*

[18] Կ > *կերիցուք եւ արբցուք ի միասին,* Ձ > *ի միասին*

[19] Ճ *ասաց*

[20] ԾՃ *խըղըրնաբոյն,* ԿՀ *խըղրնաբոյն,* Ձ *խտըրնապուն,* Ղ *խղրնաբոյն,* Մ *խնդրաբոյս* Յ *խտրնապոյն*

[21] Կ *կամիմ* ] *կարեմ*

[22] ԾՃՄ *գնացին* ] *երթեալ:* ԿՀՂՄՅ *դատին*

[23] Յ > *թէ*

[24] Կ *զօրէնսն*

[25] ԾՃ *պահքն*

[26] Ծ *աւրն*

[27] Ճ *եթէ* ] *թէ*

[28] ՀՁՂՅ *կորուսից,* Մ *կորուսցուք*

[29] Ձ > *նոցա*

[30] ԿՁՃՅ *վերջի:* Ծ *աւր:* Կ *շաբաթուն*

[31] ԾՁ *աւր,* Կ *օր*

[32] ԾԿՂՃՅ *ծնօղացն*

[33] ԾՃՄ *ողբով,* Կ > *ողբալով եւ:* ՃՄ *կոծով*

[34] Ծ *աստուածազոյթ,* Կ *ով* ] *աստուածազութ:* ԾԿՀՁՂՃ *ծնօղք,* Յ *ծնօղ*

[35] Ծ *ուրացութեան,* Ճ *ուրացութեանն* ] *կորստեան*

[36] ՀՁՅ *արարէք:* ԾՁ > *ինձ*

տանս ձեր եւ աւրհնեցէ՛ք[1] զիս, զի ես այսօր[2] վկայ լինելոց եմ Քրիստոսի՝ նման Յակովկայ[3]»: **32** Եւ տարածեալ ծնողացն[4] զձեռս իւրեանց, խաչակնքեալ օրհնեցին[5] զնա եւ ասեն. «Զօրացուցիչն[6] Աստուած զօրացուցանէ զքեզ, ե՛րթ ի խաղաղութիւն[7], եւ ինքն Քրիստոս[8] եղիցի ընդ քեզ[9]»:

**33** Եւ տարեալ զնա անօրինացն[10] առ դաղին, եւ նա յղեալ[11] առ ամիրայն եւ[12] ասէ. «Կրկին ուրացուցէք եւ թլփատեցէք[13] զդա[14]»: **34** Եւ հասեալ ի դուռն բերդին, զտեղի առեալ կանգնեցաւ[15] եւ ասէ. «Ո՞ւր կամիք տանել[16] զիս, ա՛ստ եմ հեծեալ ի ձին սատանայի եւ[17] ուրացեալ զՔրիստոս, եւ աստ[18] եմ մեռանելոց[19]»: **35** Եւ համբարձեալ[20] զաչս իւր ի վեր եւ[21] ետես հոգւոյ ակամբ[22] զՔրիստոս եկեալ բազում հրեշտակօք եւ դասիւք[23] մարտիրոսօք. եւ[24] բերեալ նմա պսակ անթառամելի[25], եւ քաջալերեալ զօրացուցանէր զնա[26] ի մարտին, եւ խոստանայր նմա զօթեվանս[27] լուսեղէնս[28]: **36** Վասն որոյ պայծառացաւ գեղ երեսաց նորա[29], եւ ամբարձեալ զձեռն[30] իւր յերկինս, աղաղակեաց եւ ասէ. «Հաւատա՛մ ի Քրիստոս Աստուածն իմ, յարարիչն[31] երկնի եւ երկրի»: **37** Եւ վազեալ[32] ի ձեռաց նոցա, անկաւ[33] յերկիր եւ զհողն խաչակնքեալ՝ արկանէր ի բերան[34] իւր եւ ասէր. «Ա՛ստ սպանեցէ՛ք[35] զիս վասն Քրիստոսի»:

**38** Յայնժամ անօրէնքն[36] դիմեցին ի վերայ նորա իբրեւ զշուն կատաղի, եւ[37] քարիւ եւ փայտիւ հարին զգլուխ նորա, մինչ զի ուղեղն[38] ի վայր թա-

---

[1] ՂՅ օրհնեցէք
[2] Զ > ես: ԾԶ այսաւր
[3] Մ օրհնել զիս ] հալալ արէք... նման Յակովկայ, Կ > նման Յակովկայ, Զ Յակովբայ
[4] Ծ տարեալ ] տարածեալ: ԿՀԶՂՃՅ ծնօղացն
[5] Մ > խաչակնքեալ: ԾԿՀԶՃ աւրհնեցին
[6] Զ > զօրացուցիչն
[7] ՀՂՄ > երթ ի խաղաղութիւն
[8] ԾՃ տէր Աստուած ] ինքն Քրիստոս
[9] ՀՂ > եւ ինքն Քրիստոս եղիցի ընդ քեզ
[10] Կ > զնա: Զ անաւրինացն, Մ > անօրինացն
[11] ԿՀՂՄՅ դատին: Մ յղեաց
[12] ԿԶՅ > եւ
[13] ՀՂ > եւ թլփատեցէք
[14] ԾՃՄ զդա եւ թլփատեցէք ] եւ թլփատեցէք զդա, Կ զնա ] զդա
[15] ԾՃ կանգնեցաւ սուրբն
[16] ԿՄ տանիլ
[17] ԾԿՃ > հեծեալ ի ձին սատանայի եւ
[18] ՀԶՂՅ > եւ: ԾԿՃ աստէն ] եւ աստ
[19] ԾՃ ~ մեռանելոց եմ (Ճ + վասն անուան նորա), Յ մեռանելոյ
[20] Մ ամբարձեալ
[21] ԾՃ > եւ

[22] ԾՃ ակամբն
[23] ԿՄ դասուք
[24] ԾՃ > եւ
[25] Կ > եկեալ բազում... պսակ անթառամելի
[26] Կ զօրացուցանէ, ԾՀՃՅ ~ զնա զօրացուցանէր
[27] Մ > նմա: Ծ զաւթեւանսն, Հ զօթեւանս, ԶՃ զյաւթեւանս, Մ օթեվանս
[28] ԾՀՂՃՄՅ լուսեղէն
[29] Ճ երեսացն, ԾՃ նորա + իբրեւ զսրբոյն Ստեփանոսի (Ճ Ստեփաննոսի)
[30] ԾՃՅ համբարձեալ: ԾՃ զձեռս
[31] Ծ յարարիչն, Ղ արարիչն
[32] Յ յերկրի: Կ վազեաց, Յ վազել
[33] Կ եւ անկաւ
[34] ԾԿՃ արկ ] արկանէր: ԾՀԶՂՃՅ բերանն
[35] ՀՂ սպաննեցէք, Զ սպաննէք
[36] Զ անաւրէնքն
[37] Մ > եւ
[38] ԾԿ ուղիղ գլխոյն, Զ ուղիղն, Ճ արիւնն եւ ուղիղն ի միասին, Մ ուղիւղն

փեցաւ: **39** Եւ նա[1] անկաւ ի մէջ նոցա[2]
ցա[2] իբրեւ զմեռեալ, մինչ զի[3] բազմաց
մաց ասել թէ մեռաւ: **40** Եւ նա[4] յան-
կարծակի ուշաբերեալ[5] եւ ելեալ
նստաւ, եւ արեամբն իւրով օծանէր
զերեսն[6] եւ ասէր. «Ահա բաժակ ա-
նապական[7], զոր արբի, եւ մահ պա-
տուական[8], որ այսօր[9] ինձ հանդիպե-
պեցաւ»: **41** Եւ ասեն անօրէնքն[10].
«Մի՛ երկնչիր, մ՛ի բան խօսեաց, եւ
մեք դեղօք ողջացուցանեմք[11] զքեզ»:
**42** Եւ նա դարձեալ դաւանեաց
զՔրիստոս Աստուած եւ կրկին ան-
գամ խաչակնքեալ[12] զհողն՝ արկանէր
ի բերանն[13] եւ զձեռն խաչակից արա-
րեալ[14] ի վերայ սրտին՝ գոչէր[15] մեծա-
ձայն եւ ասէր[16]. «Հարէ՛ք զիս եւ սպա-
նեցէ՛ք, զի ես[17] ծառայ Քրիստոսի
եմ[18]»:

**43** Եւ տեսեալ անօրինացն զհամ-
բերութիւն քաջ նահատակին[19], թողին
զնա եւ[20] գնացին առ դատին[21] եւ ա-
սեն. «Խաբեբայն այն ո՛չ դադարէ[22] ի
դաւանելոյ զՔրիստոս Աստուած[23]»:
**44** Եւ նա ասէ[24]. «Ընդէ՞ր ոչ սպան-
նէք[25] զնա». եւ նոքա[26] ասեն. «Սպան-
նաք զնա[27], եւ նա նոր կենդանա-
ցաւ[28]»: **45** Եւ հրամայեաց դատին եր-
թալ[29] քարկոծել զնա[30]: **46** Եւ նոցա[31]
երթեալ ողորքանօք խրատ տային
նմա՝ առնել զկամս դատաւորին: **47**
Եւ նա ասէ. «Երթիցուք[32] առ դատա-
ւորն»: **48** Եւ նոցա[33] ուրախացեալ,
տանէին զնա առ դատին[34]: **49** Իսկ զօ-
րեղ զօրականն[35] Քրիստոսի եւ քաջ
մենամարտիկն[36] զցաւ[37] անձինն[38] ի

[1] ԾՀՁՃՄՅ > նա
[2] ԾՃՄ > ի մէջ նոցա
[3] Ճ մինչեւ, ԾՃ > զի
[4] ԿՃ > նա
[5] ՁՅ յուշաբերեալ
[6] Ծ աւծանէր: ԾԿՁՃ զերեսս (ԾՃ զերեսն) իւր
[7] ԾԿՃ ~ անապական (Ճ ամպակ) բաժակ
[8] ՀՂ > զոր արբի, եւ մահ պատուական
[9] Ձ > որ: Ծ այսաւր
[10] Ձ անեն ] ասեն: ԾԿՃ եւ տեսեալ անօրի-
նացն ասեն ] եւ ասեն անօրէնքն
[11] Ձ դեղաւք: Կ ողջացնեմք
[12] Կ խաչիւ դրոշմեալ ] խաչակնքեալ
[13] ԾՃ > եւ կրկին անգամ... ի բերանն
[14] ԾԿՃ խաչակնքեալ ] խաչակից արարեալ
[15] Մ > եւ կրկին անգամ խաչակնքեալ... գոչէր
[16] Ձ ի մեծ ձայն ] մեծաձայն: Մ բարձրաձայն
եւ ասաց ] մեծաձայն եւ ասէր
[17] ԾԿՁՃ սպանէք, ՀՂՅ սպաննեցէք: Ծ > ես
[18] Ձ ~ եմ Քրիստոսի

[19] ԿՄ սրբոյն ] քաջ նահատակին
[20] ԾԿՃ զարմացեալ ] թողին զնա եւ
[21] ԾՁՃ դադին
[22] Յ դադարէր
[23] ԾԿՃ զՔրիստոս ճշմարիտ Աստուած դա-
ւանեաց խաբեբայն այն ] խաբեբայն...
զՔրիստոս Աստուած
[24] Ծ ասէր
[25] Ճ սպանէք
[26] ԾԿՃ > նոքա
[27] ԾՀՁՂՃ > զնա
[28] Մ > եւ նա ասէ ընդէր... կենդանացաւ
[29] ՁՃ դադին: Մ եւ ասաց դատին ] եւ հրա-
մայեաց դատին երթալ: Ձ > երթալ
[30] Ծ > դատին երթալ քարկոծել զնա
[31] ԾՁ նոքա ] նոցա
[32] ԾԿՃ երթայց
[33] ԾՃ նոքա
[34] ԾՀՁԿՃ առեալ տանէին: ԾՁՃ դադին
[35] Ծ զաւրեղ, Ձ զաւրականն
[36] Կ զօրեղ զօրականն Քրիստոսի զտկարու-
թիւնն եւ, Մ սուրբ վկայն Քրիստոսի ] զօ-
րեղ զօրականն... մենամարտիկն
[37] ԾՃ զտկարութիւն մարմնոյն զցաւս (Ճ եւ
զցաւ)
[38] Ձ անձին իւրոյ

բաց եղեալ եւ ելեալ[1] եկն ի տեղին[2], ուր զուրացութեան ձին էր հեծեալ, եւ[3] ձայնեաց մերձաւոր[4] քրիստոնէիցն, թէ. «Աստ հեծայ զսեաւ ձին, եւ[5] աստ մեռայց վասն իմ Քրիստոսին[6]»:

**50** Եւ տեսեալ անօրինացն[7] զճշմարիտ[8] հաւատ[9] նորին, քարիւ եւ փայտիւ հարեալ ջարդեցին[10] զամենայն մարմին նորա[11]: **51** Եւ նա քաղցրութեամբ[12] աւանդեաց զհոգին իւր առ Աստուած ի ձեռս հրեշտակաց[13]: **52** Եւ առեալ անօրինացն[14] զմարմին երանելի մանկանն՝ այրեցին հրով[15]:

**53** Եւ ի գիշերին այնմիկ լոյս պայծառ[16] ծագեաց ի վերայ նորա, եւ անօրէնքն[17] ամօթով գլխակոր եղեն[18]: **54** Եւ յետ երից[19] աւուրց[20] հրաման ետ ամիրայն[21]՝ բառնալ եւ թաղել զմնացեալ նշխարս[22] նորա: **55** Իսկ քրիստոնեայքն[23], որ յահէ անօրինացն[24] փախուցեալ էին, ժողովեցան ընդ բարեպաշտ ծնօղացն[25] նորա եւ եկին ի տեղին[26]: **56** Եւ ծնօղքն հանդերձ[27] ազգօքն ի բաց ընկեցին եւ սպիտակ զգեցան[28], եւ աւրհնութեամբ մեծաւ[29] զոհութիւն[30] Աստուծոյ տային[31] եւ ասէին. «Ուրախացի՛ք ամենեքեան այսօր[32] ընդ մեզ[33], զի հարսանիք[34] խնդութեան է զաւակիս մեր[35], ցնծացէ՛ք, քահանա՛յք եւ ժողովո՛ւրդք ամենեքեան[36], զի որդեակս մեր զհոգեւոր բաժակն էարբ, մեք արբցուք զմարմնաւոր բաժակն եւ ուրախասցուք»[37]. եւ սաստէին՝ որոց լային եւ կամ ափսոսային[38]:

[1] Յ ընկէց ] եղեալ: Զ > եւ: ԾՃ > եւ ելեալ
[2] Կ եկեալ ի նոյն տեղին ] եւ ելեալ... տեղին, ղին, Ճ նոյն տեղին
[3] ԾԿՃ ˜ ձին հեծեալ էր: ԾԿՃ > եւ
[4] Մ > մերձաւոր
[5] ԾԿՃ ձին + զօրինակ (ԿՃ զօրինակն) սատանայի, ԾՀԶԿՃՅ > եւ
[6] Զ Քրիստոս իմ
[7] Զ անաւրինացն
[8] Մ զհաստատուն ] զճշմարիտ
[9] Ճ հաւատս
[10] Ծ ջարդեցին զնա, Կ ջարդեալ
[11] ԾՃ > զամենայն մարմին նորա (Ճ զնա ])
[12] Մ այնու ] քաղցրութեամբ, Կ > քաղցրութեամբ
[13] Մ > ի ձեռս հրեշտակաց
[14] Զ անաւրինացն
[15] Մ եւ անօրէնքն այրեցին զմարմին երանելի մանկանն ] եւ առեալ անօրինացն... այրեցին հրով
[16] ԾԿՀՂՄ յայնմիկ: ԾԿ Ճ սաստիկ ] պայծառ
[17] Ծ անօրինաց, Հ անաւրէնքն, Ճ անօրինացն
[18] Մ > եւ անօրէնքն... գլխակոր եղեն
[19] Կ .գ., Զ յերից
[20] ԾՃ > յետ երից աւուրց, Կ աւուր
[21] ԾԿՃ ամիրայն քրիստոնէիցն (Կքրիստոնէից)
[22] Ղ > զմնացեալ: ԾՃ ոսկերս, Ղ զնշխարս
[23] Զ քրիստոնայքն
[24] Զ ահէ: Զ անաւրինացն
[25] Զ ծնաւղացն
[26] Ղ > ի տեղին
[27] ԾՃ ծնօղքն (Ճ ծնօղք) նորա, Յ ծնօղացն: ԾՅ զհանդերձ
[28] Ճ սզեցան
[29] Ճ > մեծաւ
[30] ՂՅ օրհնութեամբ: ԾՀՂՃՅ զոհութիւնս
[31] ԾԶՃ ˜ տային Աստուծոյ
[32] Ճ ˜ այսօր ամենեքեան
[33] Հ ˜ այսօր ամենեքեան: ՀԶՂՅ ˜ այսօր (Զ այսաւր) ընդ մեզ ամենեքեան
[34] ՀԶՂ հարսանիս
[35] ԾՃ մերոյ
[36] ԾՀԶՂՃՅ > ամենեքեան
[37] ԾՃ եւ ծնողքն հանդերձ... ուրախասցուք՝ մասը 57րդ նխդս-ից յետոյ է
[38] ՀԶՂՅ > կամ: ԾՃ > եւ սաստէին... ափսոսային

**57** *Եւ առեալ զմնացեալ մասն նշխարացն*[1] *նորա, սրբազան եպիսկոպոսն Ստեփանոս*[2] *ամենայն բազմութեամբ քահանայիցն*[3] *եւ ժողովրդոցն աւրհնէին*[4] *զԱստուած, որ ի*[5] *ձմեռնացեալ ժամանակիս վարդ փթթեցոյց մեզ հոտով անուշութեան*[6]*:* *թեան*[6]*:* **58** *Եւ տարեալ եդին յեկեղեցին՝ ի ներքոյ բեմբին*[7]*, ուր ինքն*[8] *դրոշմեալ էր զտեղին*[9]*, սաղմոսիւք եւ օրհնութեամբ*[10]*, ի փառս Արարչին*[11]*:*

**59** *Կատարեցաւ սուրբ վկայն Քրիստոսի յամսեանն*[12] *Փետրվարի*[13] *ԻԲ.*[14]*, ի տօնի ՃԾ. հայրապետացն, ի փառս Քրիստոսի Աստուծոյ*[15]*:*

---

[1] ԾՃ *մասունս:* ԾՀՂ *նշխարաց,* Յ *ի նշխարաց*

[2] Ծ ***Ստեփանոսն,*** ՀՂՅ ***Ստեփաննոս,*** Ձ ***տէր*** *Ստեփաննոսն*

[3] ԿՄ *քահանայից*

[4] ՀՋՂՅ *եւ օրհնէին (ՀՋ աւրհնէին)*

[5] Կ > *ի*

[6] Մ *եւ եկեալ ծնողաց նորա, եւ սրբազան եպիսկոպոսն Ստեփաննոս՝ քահանայիւք եւ բազմութեամբ ժողովրդոց* ] *իսկ քրիստոնեայքն որ յահէ... անուշութեան,* ԾՃ > *աւրհնէին զԱստուած... անուշութեան*

[7] ԾՃ *առաջի* ] *ի ներքոյ:* ՁՅ *բեմին*

[8] ՁՂՅ *եւ ինքն*

[9] Մ *եցոյց* ] *դրոշմեալ էր զտեղին*

[10] ԾԿՀՋՃՅ *աւրհնութեամբ*

[11] Մ *Քրիստոսի Աստուծոյ* ] *Արարչին*

[12] ԾՃ *սուրբն Յոհանէս (Ճ Յոհաննէս) ի թուականիս (Ճ թվականիս) մերում .պձզ.* ] *սուրբ վկայն... յամսեանն*

[13] ԾՃ *ի փետրուարի*

[14] ԿՀՋ *ի .իբ.,* ԾՃ *.իբ. (Ճ .իդ.) + ի փառս Քրիստոսի*

[15] Մ > *կատարեցաւ... Աստուծոյ,* ԾՃ > *ի տօնի... Աստուծոյ,* ՀՅ *Աստուծոյ մերոյ*

## ՅԱՒԵԼՈՒԱԾ

## [ԱՒՐՀՆՈՒԹԻՒՆ ԳԵՐԵԶՄԱՆԱՑ ԱՆԱՆՈՒՆ ՆԱՀԱՏԱԿԱՑ]

*Մխիթարեան Վենետիկի ձեռ. Հմր 1091. 152բ-3ա*

1 *Պատմեաց մեզ պատուական կրօնաւորն Կարապետ եւ ասաց, թէ Բ. (2)
կրօնաւոր հանդիպեցան ինձ, մէկի անունն՝ Սիմէոն, ի սուրբ ուխտն Արգե-
լան՝ ի վանսն Տէր Յուսկան որդոյն:* 2 *Եւ ասացին. «Ի վերին երկրէն ի գալ
էաք, եւ եկայք հասաք ի սահմաս Դարօնից բերդին, ի տեղին որ կոչի Ղազա-
րի գօլ, եւ իջավանեցաք անդ՝ ի ճանապարհէն սակաւ ինչ հեռու:* 3 *Եւ յիջեւա-
նել կարաւանին, փոքր մի հեռացեալ՝ սկսանիմք, եւ զԵրեկոյի ժամն կատա-
րեցաք, եւ տեսաք առաջի մեր Բ. (2) ինչ նշան՝ իբր թէ գերեզմանի, եւ ասեմք
մի առ մի, թէ. «Այս գերեզման քրիստոնէից է, կատարեմք ի վերայ սոցա
զԱմբիծսն, զկարգ ննջեցելոցն»:* 4 *Եւ իբրեւ կատարեցաք եւ գնացաք յիջե-
ւանսն մեր, գիշերն Բ.(2)քս մի երազ տեսաք. Բ. (2) գեղեցիկ կտրիճ երեւեցան
մեզ, կարմիր եւ կանաչ շուրջառիւ, եւ սկսան շնորհակալու լինել մեզ, եւ ա-
սէին. «Փառաւորէ Աստուած զձեր հոգին եւ զծնողացն ձեր /153ա/, որպէս
դուք զմեզ մխիթարեցիք». եւ արկեալ ի վերայ մեր զերկոսին շուրջառսն:* 5 *Եւ
մեք ասեմք, թէ. «Աստուծոյ սիրոյն համար ասացէ՛ք մեզ, թէ դուք ո՞վ էք»:* 6 *Եւ
նոքա ասեն. «Ի վաղուց հետէ մեք աստ եմք, եւ նահատակք եմք՝ չարչարեալք
վասն անուանն Քրիստոսի. եւ շատ ժամանակ է, որ զձայն Սաղմոսացն
Դաւթի եւ Աւետարանին Քրիստոսի չեմք առեալ:* 7 *Իսկ դուք լսել ետուք մեզ եւ
փառաւորեալ մխիթարեցիք զհոգի եւ զմարմին մեր, աւրհնութիւնն Աստուծոյ
ի վերայ ձեր եղիցի»:* 8 *Եւ աներեւոյթ եղեն:* 9 *Եւ մեք զարթուցեալք, պատ-
մեցաք միմեանց զմի եւ զնոյն երազն, եւ փառք Աստուծոյ տուաք եւ գոհացաք
զնմանէ եւ զսրբոց նորա:*

10 *Տե՛ս եւ ի միտ ա՛ռ, եղբա՛յր, եւ զԱմբիծ կարգ ննջեցելոցն ծայրատ մի՛
բարբանջեալ ղօղանջել, եւ զԱստուած ի բարկութիւն շարժել, աղաչեմ:*

*ԳԱՅԱՆԵ ՊՈՂՈՍՅԱՆ*
*Կենսաբանական գիտությունների թեկնածու*

# ԵՎՐՈՊԱԿԱՆ ՈՒՂԵԳՐՈՂՆԵՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ, ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՍՐԲՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄՅՈՒՌՈՆԻ ՄԱՍԻՆ
## (ԺԱՆ ՇԱՐԴԵՆ)

17-րդ դարում Հայաստանով անցած նշանավոր ճանապարհորդներից է Ժան Շարդենը: Ծնվել է 1643 թվականի նոյեմբերի 26-ին բողոքականի ընտանիքում:

1664 թ. հոր հանձնարարությամբ, որը հարուստ ոսկերիչ և թանկարժեք քարերի վաճառական էր, նա ուղևորվում է Հնդկաստան՝ ադամանդներ գնելու և այնտեղից էլ մեկնում է Պարսկաստան, ուր մնում է վեց տարի՝ 1665-70 թթ., ապրելով Սպահանում՝ Պարսից շահի պալատում:

Պարսկաստանում անցկացրած այս տարիներին նա մանրամասն ուսումնասիրում, ապա նկարագրում է Պարսից արքունիքը, այնտեղի պալատական կարգերը, ինչպես նաև պարսկական մշակույթն ու գիտությունը:

1640 թ. Շարդենը Փարիզ է վերադառնում թանկագին քարերի, ինչպես նաև երկրագիտական և հնագիտական նյութերի հարուստ հավաքածուով:Հաջորդ տարի՝ 1671 թ., Փարիզում հրատարակում է իր ուղեգրությանը մաս կազմող «Պատմություն Պարսից շահի թագադրման» գիրքը:

1671 թ. օգոստոսին Անդրկովկասով կրկին մեկնում է Պարսկաստան՝ իր հետ տանելով Շահ Աբբաս Երկրորդի, որը հայ մատենագրության մեջ հայտնի է Շահ Աբբաս Փոքր անվամբ, պատվիրած առարկաներից:

Ինչպես նախորդ, այնպես էլ այս ճանապարհորդությանը նրան ընկերակցում էր լիոնցի վաճառական Ռեզենը: Այս նոր ճանապարհորդությանը նրան է միանում և նկարիչ Գրելոն:

Չորս տարի մնալով Սպահանում՝ նա մեկնում է Հնդկաստան, որտեղից Եվրոպա է վերադառնում Բարի հույս առաքելության միջոցով 1680 թ., սակայն ոչ թե Ֆրանսիա, այլ Անգլիա, քանի որ լինելով բողոքական՝ գտնում է, որ Ֆրանսիայում իր առջև փակ են առաջընթացի ճանապարհները:

Անգլիայի Կարլ Երկրորդ թագավորը նրան բարյացակամորեն է ընդունում և կավալերի տիտղոս է տալիս Շարդենի ամուսնության օրը՝ 1689 թ. օգոստոսի քսանչորսին: Շարդենն ամուսնանում է Ֆրանսիայից իր հայրենակցուհու հետ, որը դարձյալ բողոքական լինելու պատճառով հարկադրված էր թողնելու հայրենիքը:

1683-1711 թթ. Շարդենը եղել է Անգլիայի դեսպանը Հոլանդիայում և Անգլո-Հնդկական ընկերության կառավարիչը: 1711 թ. վերադառնալով Անգլիա՝ այստեղ է անցկացնում կյանքի վերջին երկու տարիները և Լոնդոնում վախճանվում 1713 թ. հունվարի քսանվեցին:

Շարդենի ուղեգրության մեջ ներկայացված է դեպի Պարսկաստան և Հնդկաստան նրա երկրորդ ճանապարհորդությունը, որում զետեղված է նաև կաթոլիկ միսիոներ Զամպիի՝ Արևմտյան Վրաստանին նվիրված աշխատությունը: Այս ուղեգրությունը կարևոր սկզբնաղբյուր է Պարսկաստանի, ինչպես նաև Անդրկովկասի, այդ թվում և Արևելյան Հայաստանի պատմության ուսումնասիրման համար:



ԺԱՆ ՇԱՐԴԵՆ
(Նկարը վերցված է Շարդենի ուղեգրության 1711 թ. Ամստերդամի հրապարակությունից)

Փարիզից Սպահան 1672-73 թթ. ճանապարհորդության առաջին հատորը, որում է գտնվում և Անդրկովկասի ու Հայաստանի ուղեգրական իր նկարագրությունը, Լոնդոնում լույս է տեսնում 1686 թ.: Այս ուղեգրության ամբողջական նկարագրությունը հրատարակվում է 1711 թ. Ամստերդամում՝ այնուհետև քանիցս տպագրվելով նաև եվրոպական երկրներում:

Շարդենը ոչ միայն նկարագրում է այն երկրները, որոնցով անցել է, այլև անդրադառնում է այդ երկրների և ժողովուրդների բարքերին, հավատալիքներին, սովորույթներին և պատմությանը, ինչպես նաև աշխարհագրական յուրահատկություններին: Ընդ որում անհրաժեշտ է նշել, որ իր եղած վայրերի պատմությունը նա ներկայացնում է եվրոպական լեզուներով թարգմանված մատենագրական համապատասխան աղբյուրների, ինչպես նաև այն գործերի միջոցով, որոնք թարգմանաբար նրան ներկայացրել են Վրաստանում, Հայաստանում և Պարսկաստանում: Շարդենի ուղեգրությունը, սակայն, կարևորվում է նաև նրանով, որ, գրավոր սկզբնաղբյուրներից բացի, նա օգտագործել է առկա ժողովրդական ավանդությունները և նրան կարելի է համարել այդ ավանդությունները քննական վերաշարադրանքով առաջին հրապարակողներից մեկը: Ասվածը վերաբերում է հատկապես Արարատի, Նոյյան տապանի և ջրհեղեղի հետ կապված ավանդություններին: Շարդենի մոտ գտնում ենք այն ավանդությունները և ստուգաբանությունները, որոնք այնուհետև արդեն շեշտված ազգային-հոգևոր շնչով հանդես են գալիս նախ՝ Ղազար Ջահկեցու (կթղ. 1737-1751 թթ.), ապա՝ 19-րդ դարի առաջին կեսին Մեսրոպ Թաղիադյանի և Խաչատուր Աբովյանի երկերում:

Այսպիսով՝ Աստվածաշնչի հայերեն ավանդությունների Շարդենի գրառումները կարելի է համարել կարևոր մի օղակ հայ միջնադարյան և նոր շրջանի գրականության միջև:

Պատմական աղբյուրներին Շարդենի քաջատեղյակությունը երևում է նաև աշխարհագրական հարցերում: Նա վկայակոչում է հին աշխարհագիրներին և Անդրկովկասով անցած ճանապարհորդներին՝ սկսած Ստրաբոնից, սակայն ոչ թե վերաշարադրում է նրանց գրածները, այլ դրանք հարաբերում է իր տեսածի և կատարած չափումների ու հաշվարկների հետ: Շարդենը առանձնակի ոգևորությամբ է գրում

հատկապես լեռների և լեռնաշղթաների մասին, որն իր բարձրակետին է հասնում Արագածին, ապա և Արարատին նվիրված հատվածներում: Հայաստանի մասին Շարդենը գրում է. «Սուրբ Գրքում Հայաստանն ամենուր անվանվում է Արարատ: Այն Ասիայի ամենագեղեցիկ և արգավանդ երկրներից մեկն է: Յոթ մեծ գետեր ոռոգում են այն, որի համար է, ինչպես ինձ է թվում, որ Հին Կտակարանի մեկնիչներից շատերը Հայաստանը մատնացույց են անում որպես այն երկիրը, ուր սկզբնապես եղել է երկնային դրախտը: Հայաստանը նշանավոր է նաև այնտեղ տեղի ունեցած կարևոր իրադարձություններով: Չկա մի այլ թագավորություն, որտեղ տեղի ունեցած լինեին այնպիսի արյունահեղ իրադարձություններ և այդքան մեծ թվով, ինչպես այնտեղ»:

Ուղեգրության Երևանին նվիրված բաժնում մանրամասն նկարագրելով քաղաքն ու Երևանի բերդը իր ամրություններով՝ Արարատյան դաշտի օրինակով Շարդենը դարձյալ շեշտում է, որ այն բարեբեր և բնական հարստություններով երկիր է:

Քանի որ Երևանն ու Արարատյան դաշտի բնակավայրերը սերտորեն հարաբերվում են Նոյյան տապանի հետ կապված ավանդությունների հետ, ուստի, սկսած Երևանից, Շարդենը Արարատյան դաշտի բնակավայրերի մասին գրելիս անդրադառնում է նաև նրանց տեղանվանական ստուգաբանություններին: Առանց անունը նշելու՝ նկատի ունենալով Ակոռին, որն ըստ ժողովրդական ստուգաբանության նշանակում է արկանել ուռի, թե Նոյն այստեղ տնկեց խաղողի առաջին որթատունկը, Շարդենը գրում է. «Հայկական ավանդությամբ Նոյը խաղողի վազ տնկեց Երևանի մոտ: Ոմանք անգամ ցույց են տալիս այդ տեղը, որը գտնվում է Երևանից մի մղոն հեռավորության վրա»:

Ջրհեղեղյան ավանդությունների նույն այս ելակետով Երևան բառի տեղանվանական ստուգաբանության մասին Շարդենը գրում է. «Հայերի կարծիքով Երևանը ամենահին բնակավայրն է աշխարհում, քանի որ նրանց ավանդությամբ այնտեղ է ապրել Նոյը իր ամբողջ ընտանիքով ինչպես ջրհեղեղից առաջ, այնպես էլ հետո՝ իջնելով այն լեռից, որի վրա դադարել է տապանը: Դրանից բացի հայերը համոզում են, որ այստեղ, մոտակայքում է եղել երկրային դրախտը: Հատկանշական է, որ այս ավանդության Շարդենի լսած տարբերակում փաստորեն ոչ միայն ասվում է, որ Նոյը ջրհեղեղից հետո հանգրվանեց Արարատյան դաշտում, այլև որ անգամ ջրհեղեղից առաջ է նա բնակվել այստեղ: Այս հանգամանքը գալիս է վկայելու, որ նման յուրաքանչյուր ավանդության ամբողջական վերականգնման համար, հայկական սկզբնաղբյուրներից բացի, հարկավոր է ներառել նաև եվրոպական ուղեգրողների համաբնույթ վկայությունները:

Շարդենը ներկայացնում է այս ավանդության նաև լեզվական ստուգաբանությունը՝ գրելով, որ հայերը Երևան անունը բխեցնում են հայերեն երևալ բայից, թե «Նոյը, իջնելով Արարատ լեռան վրայից, առաջին անգամ է տեսնում այդ երկիրը»: Այս ավանդության՝ Շարդենի վկայակոչած տարբերակում որոշակի անհամապատասխանություն կա, քանի որ, համաձայն հայկական ավանդության գրառված տարբերակների, Նոյը բացականչում է «Երևաց», երբ ջուրն իջնում է ու տապանից երևում է Արարատյան դաշտավայրը: Ուստի Շարդենին կա՛մ պատմել են այս ավանդության մեկ այլ տարբերակը, կամ էլ այս տարբերությունը առաջ է եկել ոչ ճիշտ թարգմա-

նության և վերջինիս ոչ ճիշտ ընկալման պատճառով:

Նախիջևանի մասին գրելիս Շարդենը հիշատակում է այն ավանդությունը, որ Նոյը այստեղ է բնակվել ջրհեղեղից հետո: Շարդենը գրում է, որ հայերն իրենց խոսքերը ապացուցելու համար վկայակոչում են այդ քաղաքի անվանումը, որը հայերենում նշանակում է առաջին բնակավայր կամ առաջին իջևան եղող տուն, որը, ըստ էության, համընկնում է Նախիջևան բառի՝ նախ իջևան (նախ այստեղ իջևանեց Նոյը) ստուգաբանության հետ:

Կարևոր է նաև Շարդենի՝ Ս. Էջմիածնի նկարագրությունը, որը արժեքավոր տեղեկություններ է պարունակում Մայր Աթոռի վիճակի, ինչպես նաև այն մասին, թե այդ ժամանակ ինչ սրբություններ էին հավաքված այնտեղ: Ս. Էջմածնի դեպքում ևս Շարդենը մատենագրական աղբյուրները համադրել է Մայր Աթոռի միաբանների պատմած ավանդությունների հետ: Ժամանակի՝ այդ թվում և Պարսից արքունիքի քաղաքական իրավիճակին քաջատեղյակ լինելով՝ Շարդենը փորձել է Ս. Էջմիածնի վիճակը ներկայացնել Արևելքի քաղաքական ընդհանուր իրավիճակի համապատկերում՝ անդրադառնալով նաև 17-րդ դարի ներհայկական ազգային, եկեղեցական մի շարք հարցերի՝ այդ թվում ծանր այն իրավիճակի, որն ստեղծվել էր Ս. Էջմիածնում Մելքիսեդեկ աթոռակից կաթողիկոսի մերժելի գործունեության, Երուսաղեմի Եղիազար պատրիարքի՝ (որն այնուհետև դարձավ Ամենայն հայոց կաթողիկոս՝ Եղիազար Ա Այնթապցի՝ կթղ. 1681-1691 թթ.՝ հաջորդելով Հակոբ Դ Ջուղայեցուն) Օսմանյան կայսրության էջմիածնական վիճակների համար մյուռոնի օրհնությունը Երուսաղեմում կազմակերպելու փորձերին և մի շարք այլ հարցերի, որոնց հանգամանալից անդրադարձել է Առաքել Դավրիժեցին իր «Հայոց պատմության» մեջ: Ուստի Շարդենի ուղեգրությունը տվյալ հարցերին վերաբերող մի կարևոր աղբյուր է Դավրիժեցու պատմության կողքին:

Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ Շարդենը որոշակի քամահրանքով է խոսում Մայր Աթոռի հոգևորականների, ինչպես նաև Ս. Էջմիածնում պահվող սրբությունների մասին: Այս հանգամանքը, սակայն, ավելի շատ պայմանավորված է նրա բողոքական լինելով և ավանդական եկեղեցիների հանդեպ ունեցած վերաբերմունքով և ոչ թե Հայոց եկեղեցու դեմ հատուկ դիրքորոշմամբ: Նույն բացասական կանխատրամադրվածությունը գտնում ենք և կաթոլիկ եկեղեցու հանդեպ նրա վերաբերմունքում և տված բնորոշումներում: Նույն այս պատճառով է, որ նա թողեց Ֆրանսիան և բնակություն հաստատեց Անգլիայում և Հոլանդիայում: Շարդենի նման վերաբերմունքը թեև որոշ չափով ստվերում է նրա ուղեգրության Հայաստանին վերաբերող մասը, սակայն նրա հաղորդած տեղեկությունները մնում են որպես պատմական, ազգագրական և աշխարհագրական կարևոր տեղեկություններ գրառված 17-րդ դարի երրորդ քառորդում:

*ԺԱՆ ՇԱՐԴԵՆ (1643-1713 թթ.)*

# ՍԸՐ ԺԱՆ ՇԱՐԴԵՆԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՎ ԵՎ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀՆԴԿԱՍՏԱՆՈՎ

*Առաջին հատորը պարունակում է հեղինակի ուղևորությունը Փարիզից մինչև Սպահան: Դրան ավելացված է Պարսկաստանի ներկա շահ Սուլեյման Երրորդի թագադրությունը. Լոնդոն, Մովսես Փիթի տպարան, 1686 թ.:*

## ՍԸՐ ԺԱՆ ՇԱՐԴԵՆԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՎ

Երևանից երեք մղոն հեռավորության վրա է գտնվում Երեք եկեղեցիների նշանավոր վանքը՝ հայ քրիստոնյաների սրբություն սրբոցը, եթե ես համարձակվեմ այսպես կոչել այն, որին նրանք վերաբերվում են առանձնակի բարեպաշտությամբ: Ես բերում եմ եկեղեցու հատակագիծը և ավելացրել եմ գծագիրը, ինչպես նաև գլխավոր եկեղեցու արտաքին տեսքի փոքրիկ ուրվանկարը, վանքի ավելի հստակ նկարագրությունը՝ ավելի պարզ պատկերացում տալու համար:

Հայերը այն կոչում են Էջմիածին, որը նշանակում է Միածին Որդու էջքը կամ Միածին Որդին վայր իջավ: Նրանք՝ հայերը, ասում են, որ այս անունն է տրվել այդ վայրին, քանի որ այս տաճարի կառուցման վայրում Հիսուս Քրիստոս տեսանելիորեն Իրեն ցույց տվեց Սուրբ Գրիգորին, ով նրանց առաջին պատրիարքն էր: Մահմեդականները այն կոչում են Ուչ- Քիլիսե կամ Երեք եկեղեցիներ, քանի որ վանքի եկեղեցուց բացի, նրա մոտ ևս երկու ուրիշ եկեղեցիներ կան, որով նրանք դառնում են երեքը:

Առաջին և գլխավոր եկեղեցին՝ Էջմիածին անվանվողը, շատ ամուր և մռայլ կառույց է, ամբողջովին կառուցված մեծ ավազաքարերից [տուֆից]: Քառանկյունի հարթ որմնասյուները, որոնք 72 ոտնաչափ(ֆունտ = 39,5 սմ) բարձրություն ունեն, քարե մշակված սյուներ են, ինչպիսիք են նաև կաթողիկե գմբեթը և զանգակատները:

Տաճարի ներսում չկան քանդակազարդեր և նկարչական զարդարանք:Խորանները կանգնած են արևելյան կողմում, բացի եկեղեցու վերջում գտնվող երեքից: Դրանցից կենտրոնականը շատ ընդարձակ է, քարե բեմով, շատ լավ զարդարված արևելա-քրիստոնեական ոճով: Սակայն նրա կողմնային ավանդատներում բեմի սեղաններ չկան, մեկը ծառայում է որպես ավանդատուն՝ զգեստավորման համար, մյուսը՝ որպես գանձատուն:

Տեղի վանականները ցույց են տալիս այնտեղ պահվող գեղեցիկ և շատ շքեղ եկեղեցական սպասքի տարբեր առարկաներ՝ խաչեր, ոսկե սկիհներ, արծաթե կանթեղներ և մոմի աշտանակներ: Այս հարստության գլխավոր մասը պապերի նվերներն են, որը մի կողմից ցույց է տալիս նրանց դյուրահավատությունը, մյուս կողմից՝ հայերի ճարպկությունը:




Ս. Էջմիածինը և շրջակա վանքերը ըստ Շարդենի գծապատկերի

Գանձատանը կան արծաթյա և ոսկեզօծ տարբեր մասնատուփեր: Ըստ տեղի վանականների վկայության՝ վանքում պահվող գլխավոր մասունքներն են Ս. Հռիփսիմեի իրանի վերին մասը, Ս. Գայանեի բազուկը, Աջը Ս. Գրիգոր Լուսավորչի, ով այսպես է անվանվում, որովհետև դարձի բերեց Հայաստանը, Երուսաղեմի եպիսկոպոս Ս. Հակոբի կողոսկրը, Ս. Պետրոսի ճկույթը և Ս. Հովհաննես Մկրտչի երկու մատները, ում մարմինը, ինչպես պնդում են վանքի վանականները, ամփոփված է իրենց ուխտին պատկանող և Էրզրումին մոտ գտնվող միաբանության վանքում: Ասում են, որ Կեսարիայի եպիսկոպոս Ղևոնդիոսը այս մասունքները տվել է իրենց առաջին պատրիարքին [Ս.Գրիգորին], և Հովհաննես Մկրտչի մարմինը 300 տարի թաղված մնալուց հետո տեղափոխվել է այն վայրը, ուր ամփոփված է այժմ: Սակայն Էջմիածնի վանականները, որոնք հայերի ամենամեծ գիտնականներն են համարվում, այնքան անտեղյակ են, որ չգիտեն անգամ այն փաստը, որի մասին առաջինը ինձնից լսեցին, որ, համաձայն պատմական վկայությունների, Ս. Հովհաննես Մկրտչի մարմինը Հուլիանոս Ուրացողի հրամանով այրվեց և մոխրի վերածվեց[1]: Ես կարևոր չեմ համարում որևէ բան ասել այն մյուս սրբությունների մասին, որոնք նրանք հավակնում են ունենալ իրենց գանձարանում, քանի որ այդ սրբությունները աշխարհի այս մասում եղող և քիչ ճանաչում ունեցող սրբերի մասունքներ են: Լրացուցիչ ես կավելացնեմ միայն, որ հոգևորականները որպես մեծ ճշմարտություն պնդում էին, որ նրանք ունեցել են Հիսուս Քրիստոսի սուրբ ձեռքերը խաչին գամող զույգ գամերը, որոնցից մեկը այժմ Դիարբեքիրում է, իսկ մյուսը՝ Վրաստանում: Եվ որ Աբաս Մեծը իրենց գանձարանից դուրս է տարել իսկական Գեղարդը, որով խոցվեց Հիսուս Քրիստոսի կողը, և Տիրոջ անկար պատմուճանը՝ հարստացնելով Պարսից շահերի գանձարանը Սպահանում[2]:

Եկեղեցու կենտրոնում գտնվում է մի մեծ քառակուսի քար՝ երեք ոտնաչափ անկյունագծով և հինգ ոտնաչափ հաստությամբ: Հայերը հաստատուն հավատն ունեն, որ այս այն տեղն է, ուր իրենց առաքյալ Ս. Գրիգորը տեսավ Հիսուս Քրիստոսին մի կիրակի երեկոյան, երբ ինքն աղոթում էր և որտեղ Նա խոսեց նրա [Սուրբ Գրիգորի] հետ: Վանականներն այնուհետև համոզում էին մեզ, որ Հիսուս Քրիստոս այդ սրբի առջև լույսի ճառագայթներով գծագրեց Էջմիածնի եկեղեցու պատկերը և պատվիրեց նրան կառուցել համաձայն այն գծագրի, որ նա այդտեղ պատկերեց այդ տեսիլում: Նրանք նաև ավելացնում են, որ այն տեղում, ուր այժմ հիշյալ քարն է դրված, նույն այդ ժամանակ երկիրը բացվեց և Քրիստոս այդ բացվածքի միջով ձևավորված խորխորատը նետեց Հայաստանի տաճարներում եղած բոլոր դևերին, որոնք կեղծ պատգամախոսներ էին, և Ս. Գրիգորին պատվիրեց սանդարամետը ծածկել մարմարով[3]: Ասվածին ավելացրին, որ Աբաս Մեծը տարավ մարմարե սալը և այն զետեղեց Պարսկաստանի արքունական թանգարանում, իսկ այդ սալի տեղը դրեց այն քարը, որի մասին ես ասացի: Այս քարի՝ Սպահան տարվելու պատմության մասին ես մանրամասնորեն հետաքրքրվեցի Սպահանում. դեռ ավելին՝ հարցրի անձամբ իրենց՝ գանձարանի վերահսկիչներին, սակայն ես չկարողացա պարզել, թե արդյոք նրանք որևէ բան հասկացան դրանից[4]:

Հայկական ավանդությունը մեզ պատմում է մեկ ուրիշ մանրամասն ևս այդ եկեղեցու կենտրոնի մասին, ինչը ես գրավոր շարադրեցի ստորև, թեև այնքան առասպելաբանական, որքան մնացածները: Այն, սակայն, ես այնուամենայնիվ ցանկանում եմ հիշատակել: Լեգենդն ասում է, որ սա ճիշտ այն վայրն է, ուր Նոյը կառուցեց զոհասեղանը և մատուցեց զոհը, որը հիշատակված է Ծննդոց գրքի ութերորդ գլխում[5]:

Վերջերս վերակառուցված գլխավոր զանգակատունը ունի վեց զանգ, որոնցից ամենամեծը կշռում է 1200 կշռաքար(ֆունտ): Փոքր զանգակատներից մեկը փլվել է մոտ քառասուն տարի առաջ և չի էլ նորոգվել դրամի սղության պատճառով, ինչպես հայերն են ասում, և, իսկապես երևում է, որ Էջմիածնի վանականները շատ աղքատ են:

Այս եկեղեցու շուրջ վանքն առաջին անգամ կառուցվել է Հայոց քսանիններորդ պատրիարք Ներսեսի կողմից: Այն ավերել են թաթարները և եթե հավատանք տեղական պատմություններին, այն հինգ անգամ հողին է հավասարեցվել: Այն այժմ կառուցված է աղյուսից: Պատրիարքի կացարանն ընկած է դեպի արևելք: Բացի այդ՝ կան կացարաններ վանք այցի եկող օտարականների և ութսուն վանականների համար, սակայն սովորաբար վանքում լինում են տասներկու կամ տասնհինգ հոգևորականներից ոչ ավելի: Հայոց պատրիարքները պարտավոր են գտնվել այստեղ: Սակայն, եթե ճշմարտությունն ասենք, ագահությունը, նախանձը և փառասիրությունը, որոնցով նրանք տարված են այս ժամանակաշրջանում, նրանց այնքան է զբաղեցնում, որ նրանք իրենց ամբողջ ժամանակը վատնում են՝ թափառելով ամբողջ Պարսկաստանով և Թուրքիայով[6]: Այս պատրիարքը իր իշխանության ներքո ունի 12 թեմեր:

Մյուս երկու եկեղեցիները, որ գտնվում են Էջմիածնին մոտիկ, կոչվում են մեկը՝ Ս. Գայանե, մյուսը՝ Ս. Հռիփսիմե: Հռոմեացի երկու կույսերի անուններից, ովքեր, ինչպես իրենք են ասում, փախել էին Հայաստան իններորդ հալածանքի ժամանակ և մարտիրոսություն ընդունեցին այն նույն տեղում, ուր երեք եկեղեցիներն են կանգնած:

Ս. Գայանե եկեղեցին գտնվում է վանքից 700 քայլ հեռու՝ դեպի աջ, իսկ Ս. Հռիփսի-

մեն՝ դեպի ձախ 2000 քայլ: Այս երկու եկեղեցիները կիսով չափ ավերված են, երկուսում էլ երկար ժամանակ է, ինչ եկեղեցական արարողություններ չեն կատարվում: Երևանի տարածքում, որն ընդգրկում է 20 փարսաղ շառավղով տարածք, կան տղամարդկանց քսաներեք և կանանց հինգ մենաստաններ: Սակայն բոլորն էլ խղճալիորեն աղքատ և վատ պահվող: Մեծ մասը հինգ կամ վեց հոգուց ավելի միաբան չունի, որոնց ծայրահեղ աղքատությունը մշտապես նրանց մղում է ապրուստ որոնելու, որի պատճառով նրանք երբեք չեն կատարում իրենց ծառայությունը՝ բացի տոն օրերից:

Առավել նշանակալի մենաստաններից է Խոր Վիրապը, որը հայերեն տառացիորեն նշանակում է եկեղեցի գբի վրա: Հետագայում այս անվանումը տրվել է այս վայրին որպես վիրապի վրա կառուցված, որի մեջ, ինչպես մեզ հայոց պատմությունն է պատմում, Ս. Գրիգորը նետվեց և կենդանի մնաց՝ կերակրվելով նույն ձևով, ինչպես Դանիելը կերակրվեց առյուծների գբում: Այս վանքը գտնվում է Երևանի տարածքի սահմանագծին՝ Էջմիածնից հարավ, ուր, ինչպես այդ գյուղի բնակիչներն են ասում, կարելի է տեսնել Արտաքսադի ավերակները:

Քաղաքը, որ նրանք կոչում են Արտաշատ, Պարսից թագավոր Արտարքսերս թագավորի անունից է ծագում, ում արևելցիները կոչում են Արդեշիր: Ինչպես նրանք հավաստիացնում են, այդ քաղաքի ավերակներում կարելի է տեսնել 1300 տարի առաջ կառուցված Տրդատի պալատի ավերակները: Նրանք, բացի այդ, ասում են, որ կա պալատի առջևի մասը, որը վերևում կիսով չափ է ավերված: Այստեղ դեռևս պահպանվում են սև մարմարից սյուների չորս շարքերը՝ յուրաքանչյուրը ինը սյունից: Այս սյուները շրջապատում են մշակված մարմարի կտորների մեծ շեղջ, և սյուները այնպիսի մեծություն ունեն, որ երեք մարդ դժվարությամբ կկարողանան դրանք ընդգրկել ձեռք ձեռքի տված: Նրանք այդ ամբողջ վայրը, ուր գտնվում է այդ ավերակների ողջ զանգվածը, Տրդատի թախտ կամ Տրդատի գահ են կոչում: Ես խուսափում եմ խոսել ուրիշ վանքերի կամ բանավոր պատմությունների մասին, որոնք հայերը պատմում են դրանց կամ այդ վայրերում պահվող մասունքների մասին: Դրանց մեջ թվարկվում են Վերոնիկան կամ թաշկինակը, որ այդ անունով կինը բերեց մաքրելու Քրիստոսի դեմքի քրտինքը, Ս. Թովմայի և Ս. Սիմոնի աճյունները: Այս պատմությունները բոլորը անհիմն և ծիծաղելի բաներ են: Հիրավի, իսկապես հայկական ավանդույթը ոչինչ չունի առողջ բանականությունից: Ես չեմ ասի ոչինչ բան հայկական հավատքի կամ ծեսի մասին, քանի որ լավ հայտնի է՝ ինչպես են նրանք բազում դարեր պատված մոնոֆիզիտների [միաբնակների] կարծիքներով, ովքեր անվանվում են Հակոբիկյաններ, որոնց ուսմունքից այսօր նրանք բոլորովին որևէ բան չեն հասկանում՝ ամբողջովին գտնվելով անտեղյակության մեջ:

Հայերը միշտ պահել են իրենց հին ժամերգությունները և արարողությունները, և այս հանգամանքը կարելի է համարել ուղղակի ապշեցուցիչ, եթե չասենք վերբնական, քանի որ նրանք տասնմեկ դար գտնվում էին մահմեդականների իշխանության ներքո, և դրա հետ միասին այնքան աղքատ և անգետ են, որքան կարող է աղքատ և անգետ լինել մի ժողովուրդ, որը հասցվել է ստրկացվածության նման աստիճանի: Չնայած այդ պայմաններին՝ նրանց հավատը, ինչպես արդեն ասացինք, մնացել է անսասան, և նրանք պահում են այն՝ չցանկանալով փոխել ուրիշով, տոկուն ձևով դիմանալով թե՛ մահմեդականների ճնշումներին, որոնք նրանց անսահմանափակ տերերն են, ինչպես և հռոմեական տար-

բեր առաքելությունների փորձերին, որոնք արդեն երկու դար անպտուղ ձևով փորձում են իրենց միսիոներների, հոգևորականների և կրոնավորների միջոցով նրանց գրավել դեպ իրենց դավանանքը: Չի կարելի խոսքեր գտնել նկարագրելու այն ծախսերը և խորամանկությունները, որոնց դիմում է Հռոմը իր նպատակին հասնելու համար, սակայն այդ ջանքերը ցանկալի արդյունքի չբերեցին, որովհետև այդ հայերից նրանք, որոնք Եվրոպայում հեռացել էին իրենց կրոնից, վերադառնալով իրենց մոտ տուն, դառնում են ավելի հայ, քան տեղացիները և դարձյալ սկսում են անիծել Լևոն պապին՝ որպես արևելյան և արևմտյան եկեղեցիների միասնության խախտման գլխավոր մեղավորներից մեկին՝ միաժամանակ հանդիմանելով նրա բոլոր հաջորդներին և թշնամաբար վերաբերվելով հռոմեական եկեղեցու ուսմունքին՝ որպես մի ուսմունքի, որը միանգամայն հակասում է իրենց եկեղեցու ըմբռնումներին: Գլխավոր միջոցը, որի օգնությամբ Հռոմում փորձում են թափանցել Հայոց հավատի մեջ և ճեղքել այն, կայանում է նրանում, որ հայ հոգևորականներից երդում են վերցնում, որ նրանք գինուն ջուր չխառնեն, սակայն, չնայած Հռոմի բոլոր ջանքերին՝ վերջինս երբեք չկարողացավ հասնել այն բանին, որ բոլոր հայ հոգևորականները ջրի խառնումը կատարեն կամավոր՝ առանց որևէ երդման: Սակայն, եթե ճիշտն ասենք, հայերը և արևելյան մյուս քրիստոնյաները հավատարիմ են իրենց կրոնին շնորհիվ իրենց ստացած դաստիարակության, քանի որ խելամիտ ձևով բացատրել, թե ինչու են նրանք իրենց քրիստոնյա համարում, նրանք ի վիճակի չեն:

Հայերը մանկուց սովորում են Քրիստոս ասել, խաչակնքել և պահք պահել և շարունակում են այդպես վարվել արդեն հասուն տարիքում այն ամուր հավատով, որ միայն ծիսականության նման ճիշտ պահպանության մեջ է կայանում քրիստոնեության ողջ էությունը: Դրանից բացի՝ նրանք իրենց բացարձակ պարտավորությունն են համարում եկեղեցի գնալ, երբ գտնվում են իրենց հայրենի երկրում կամ այն վայրերում, որտեղ դավանում են նրանց կրոնը: Նրանց պահքերը շատ երկարատև են, հաճախակի և ծանր: Նրանք պահքի ժամանակ ձեռնպահ են մնում մսից, ձվից, յուղից, կաթից և պանրից և օրվա մեջ միայն մեկ անգամ են ուտում՝ արևի մայր մտնելիս:

[...] Երևանից տասներկու փարսախ դեպի արևելք երևում է հռչակավոր լեռը, որի հետ կապված բոլորը համաձայն են այն հարցում, որ այստեղ նստեց Նոյյան տապանը, թեև ոչ ոք չի կարող բերել որևէ լուրջ փաստարկ ապացուցել փորձելու համար այն, ինչ նրանք պնդում են: Երբ օդը պարզ է, այս լեռը տեսանելի չէ երկու մղոնից ավելի հեռավորությունից, ինչքան էլ այն բարձր ու մեծ է:

Ես հակված եմ կարծելու, որ ես տեսել եմ շատ ավելի բարձրը, եթե չեմ սխալվում, Կովկասի այն մասում, որը ես անցա ճամփորդելով Սև ծովից դեպի Ախլցխա: Թուրքերն այս լեռը [Արարատ] կոչում են Ագրիդաղ, բարձր կամ Մասիս սար, սակայն հայերը և պարսիկները այն կոչում են նույն անունով՝ Մասիս: Այս բառը հայերը բխեցնում են Մաս կամ Մեղեկ որդուց Արամի, ումից, ինչպես նրանք են ասում, գալիս է իրենց և՛ ծագումը, և՛ անվանումը (Armenias):

Պարսիկները Մասիս բառը բխեցնում են «ազիզ» բառից, որն իրենց լեզվով նշանակում է «սիրելի» կամ «քնքշորեն սիրված», և նրանք, լեռան անվանումը ստուգաբանելով, ասում են, որ այն այսպես է կոչվել Աստծո ընտրության համար, որով այն կրել է երջանիկ տապանը, որը փրկեց մարդկային ցեղը:

Սրանք բռնազբոսիկ ստուգաբանություններ են, ինչպես որ կարող են լինել ուրիշներ ևս, ինչպես որ կարող ենք համարել և զանգերի զնգոցի պատմությունը: Այս լեռը պարսկերեն գրքերում կոչվում է ևս երկու ուրիշ անուններով՝ Կոու-Նուշ կամ Նոյան սար և Սահաթ-Թոպպուզ կամ Երջանիկ բլուր [կոն]:

Սուրբ Գիրքը, սակայն, առանձին անուն չի տալիս: Այն միայն ասում է, որ տապանը նստեց Արարատ լեռան վրա, որը Հայաստանում է: Սրանք հույն և լատին հեղինակների մոտ հայտնի այն լեռներն են, որոնք նրանք համարում են, որ մասն են Տավրոսյան լեռնաշղթայի և կոչվում են Զորդիան, Կորդյան, Կորդուենյան, Կորդիան, Կուրդի և Կորդուք անուններով: Ամեն հեղինակ փոխում է բառը ըստ իր սեփական լեզվի արտաբերման:

Համաձայն հայկական ավանդության՝ տապանը մինչև հիմա Մասիսի գագաթին է: Բացի այդ՝ նրանք ավելացնում են, որ ոչ ոք չի կարող ելնել այն տեղը, ուր հանգչում է տապանը: Ասվածին նրանք խորապես հավատում են հրաշքի նկատմամբ այն հավատով, որը նրանք ասում են պատահեց Էջմիածնի Հակոբ անունով վանականի հետ, որը հետագայում դարձավ Մծբինի եպիսկոպոս: Նրանք պատմում են, որ այս հոգևորականը, տարված այն կարծիքով, որ սա այն լեռն է, որի վրա նստեց տապանը ջրհեղեղից հետո, որոշում է հասնել գագաթին կամ մեռնել լեռը բարձրանալու փորձի ժամանակ: Երբ նա անցել էր ճանապարհի կեսը, էլ չէր կարողանում առաջ գնալ, քանի որ, երբ նա մագլցում էր ամբողջ օրը, քնած ժամանակ հրաշքով նա ետ էր տարվում այն տեղը, որտեղից սկսել էր առաջ շարժվել առավոտյան: Այսպես շարունակվեց երկար ժամանակ, սակայն վերջապես Աստված ունկնդրեց վանականի աղոթքներին, ցանկացավ բավարարել նրա իղձը որոշ չափով և առաքեց հրեշտակին տապանի մասունքով՝ հորդորելով նրան այլևս իզուր չտանջվել նման ծանր զբաղումով, քանի որ մահկանացուներին արգելված է բարձրանալ այդ լեռան գագաթը[7]: Սա պատմություն է, որը նրանք պատմում են և որի հետ կապված ես երկու դիտողություն կանեմ: Առաջինը՝ այս պատմությունը չի կապվում հին հեղինակների՝ Հովսեփիոսի, Բերոսոսի, Դամասկացու վկայությունների հետ, որոնք հաղորդում են, որ տապանի մնացորդները տեսանելի են եղել և որ մարդիկ վերցրին այն ձյութից, որով տապանը պատված էր, որպես հիվանդությունների հակաթույն: Երկրորդ՝ գագաթի անմատչելի լինելու մեջ որևէ հրաշք չկա, որովհետև լեռը և դեպի գագաթ ճանապարհը կեսից ամբողջապես պատված են հավերժական և երբեք չհալվող ձյունով, և տարվա բոլոր եղանակներին այն իրենից ներկայացնում է ձնային սարսափելի մի զանգված:

Լեռան լանջին՝ քրիստոնեական մի գյուղում, կա մի մենաստան, որն անվանվում է Առաքել վանք, որը նշանակում է Առաքյալների վանք: Հայերը մեծ հարգանքով են վերաբերվում այդ տեղին, քանի որ հավատում են, որ հենց այդտեղ է ապրել Նոյը ջրհեղեղից հետո և կատարել առաջին զոհաբերությունը: Ասում են, որ այդտեղ են գտնվել Անդրեաս և Մատթեոս առաքյալների մասունքները, և որ այդ ավետարանչի գլուխը գտնվում է վանքի եկեղեցում: Հայերը դեռ շատ հրաշալի բաներ են պատմում այս վայրի մասին և այն համարում են իրենց սուրբ երկիրը[8]:

[...] Արևելյան քրիստոնյաների մեծ մասը կարծում է, որ մյուռոնը բուժիչ բալզամ է հոգևոր բոլոր հիվանդությունների դեմ և կա քրիստոնեական ամբողջական ուսմունք, որը հաստատում է, որ հոգևոր վերածնության և մեղքերի թողության շնորհը հաղորդվում է

այդ յուղով, որի համար, օրինակ, մկրտության ժամանակ գլխավորապես անհրաժեշտ է օգտագործել այդ յուղը և ոչ թե ջուրը:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Ղևոնդիոսի կողմից Ս. Գրիգորին Հովհաննես Մկրտչի մասունքներից տալու մասին գրում է Ագաթանգեղոսը. «Երբ վերադառնում էր նա հունաց կողմերից, իր հետ բերել էր մեծ մարգարե, երանյալ Հովհաննես Մկրտչի ու Քրիստոսի սուրբ վկա Աթանագինեսի ոսկորների նշխարները» (Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, աշխտ. Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1983, # 810):

Ագաթանգեղոսի այս վկայությունը որևէ ձևով չի հակասում այն փաստին, որ Հուլիանոս Ուրացողի ժամանակ այրվել են Հովհաննես Մկրտչի մասունքները, քանի որ Հուլիանոսի ծավալած հալածանքները տեղի են ունեցել Ս. Գրիգորի՝ Կեսարիայից Հայաստան վերադառնալուց մի քանի տասնամյակ հետո:

Հովհաննես Մկրտչի մասունքների Հայաստան բերվելու մասին Շարդենը այնպես է գրում, կարծես թե Ս. Էջմիածնի հոգևորականներն են հնարել այս պատմությունը: Նա կամ չի իմացել Ագաթանգեղոսի այս վկայության մասին և կամ էլ միտումնավոր չի հիշում այդ մասին, որպեսզի կասկածի ենթարկի այդ ավանդության վավերականությունը:

Շահ Աբասի կազմակերպած բռնագաղթից հետո Հին Ջուղայում Հովհաննես Մկրտչի մասունքների գտնվելու մասին է գրում Առաքել Դավրիժեցին: Պատմիչի շարադրանքից երևում է, որ այս զյուտի մասին պատմությունը մեծ տպավորություն է թողել Արարատյան դաշտի բնակավայրերում, և միգուցե այն պատմել են նաև Շարդենին և նա այլևս խորամուխ չի եղել այս մասին ավելի հին սկզբնաղբյուրներ որոնելուն (Առաքել Դավրիժեցի, Պատմություն, աշխտ. Վ. Առաքելյանի, Երևան, 1988, էջ 406-408):

[2] Դավրիժեցու մոտ որևէ վկայություն չկա Շահ Աբասի ժամանակ Ս. Գեղարդի՝ Արևելյան Հայաստանից Սպահան տարվելու մասին: Այն Պարսկաստանում չի եղել նաև Շարդենի՝ Ս. Էջմիածին այցելության ժամանակ, այլ պահվել է Գեղարդավանքում և Ս. Գեղարդի պահարանը վնասվել է 1679 թ. երկրաշարժի ժամանակ, երբ ավերվել է նաև Գեղարդավանքը:

Շարդենը ամենայն հավանականությամբ Ս. Գեղարդը շփոթել է Լուսավորչի աջի հետ, որն իրապես այդ ժամանակ Պարսկաստան էր տարվել և Դավրիժեցին էլ մանրամասն գրում է, թե Նոր Ջուղայի ժողովուրդը ինչպիսի ջերմեռանդությամբ և երկյուղածությամբ է վերաբերվում Սպահան տարված Լուսավորչի աջին (Դավրիժեցի, Պատմություն, էջ 170-171):

[3] Այստեղ Շարդենը նկատի ունի Լուսավորչի տեսիլը և Միածնի էջքով Սանդարամետի ավերվելը, որի գրական սկզբնաղբյուրը Ագաթանգեղոսի Պատմության հետևյալ տողերն են. «Տեսա մարդկային մի ահավոր կերպարանք, բարձր ու ահեղ, որն առջևից էր ընթանում և վերևից մինչև ներքև վայրէջքի առաջապահն էր. ձեռքին ուներ ոսկե մի մեծ կռան, և բոլորը նրա ետևից էին գալիս: Ինքը գալիս էր սլանալով, խոյանալով արագաթռիչ արծվի նման ու իջավ հասավ մինչև երկրի հատակը, քաղաքի մեջտեղը, խփեց լայնատարած գետնին և մեծ ու անչափ թնդյուններ հնչեցին անունդների սանդարամետից (դժոխք): Ամբողջ երևացող երկիրը, աչքին տեսանելի լինելու չափ, հարթ հավասար դաշտաձև տափակացավ (Ագաթանգեղոս, Հայոց Պատմություն, էջ 415, 417, # 735):

Շարդենի այս նկարագրությունը արձագանքն է նաև Սահակ Ձորափորեցու շարականի

հետևյալ տողերի.

*Էջ Միածինն ի Հօրէ եւ լոյս փառաց ընդ Նմա,*
*Ձայնք հնչեցին սանդարամետք անդնդոց:*

[4] Մայր Տաճարի և Իջման Ս. Սեղանի քարերից Սպահան տանելու մասին Դավրիժեցին գրում է. «Նշանավոր քարերը քանդեցին, հանեցին տեղերից. դրանք հետևյալներն են՝ Սուրբ Սեղանը, որի վրա Սուրբ Պատարագն էր մատուցվում, այս սեղանի սյունը, Քրիստոսի իջման տեղի քարը...» (Դավրիժեցի, Պատմություն, էջ 171): Ինչ վերաբերվում է Շարդենի այն ասածին, թե Պարսից արքունիքի գանձարանում այդ քարի պահվելու մասին որևէ տեղեկություն չկա, անհրաժեշտ է նշել, որ այդ քարերը ոչ թե գանձարան են տարվել, այլ նախ Բաթուն գյուղը, որը Սպահանի մոտ է, ապա տվել են Նոր Ջուղայի հայերին, որոնք այս քարերը զետեղել են Խոջենց եկեղեցում (Դավրիժեցի, Պատմություն, էջ 172):

[5] Մայր տաճարի Ավագ Խորանի ներքո, որ հնագույն պաշտամունքի մի վայր է եղել, հավաստվում է նաև հնագիտական տվյալներով: Մայր Տաճարի 1950-ական թթ. հիմքերի վերանորոգության ժամանակ այնտեղից դուրս եկավ ուրարտական վաղ շրջանի մի կոթող, իսկ Տաճարի հին Ավագ Սեղանն էլ կանգնեցված էր հեթանոսական կրակարանի վրա:

[6] Շարդենի այս խոսքերը վերաբերվում են Ս. Էջմիածնի 16-րդ դարի վերջից մինչև Մովսես Գ Տաթևացու (կթղ. 1629-1632թթ.) ընտրությունն ընկած շրջանին, երբ թուրք պարսկական պատերազմների պատճառով այս տարածաշրջանում ստեղծված անիշխանությունը իր բացասական կնիքն էր թողել և Մայր Աթոռի վրա: Այս շրջանը մռայլ գույներով է նկարագրում և Դավրիժեցին:

[7] Շարդենը կամ նրան այս պատմությունը պատմած միաբանները որպես գրական սկզբնաղբյուր ունեցել են Փավստոս Բուզանդի Պատմության Մծբնա Հակոբ Հայրապետի՝ Նոյյան տապանի մասունքը ձեռք բերելու մասին գլուխը, որը տառացիորեն համընկնում է Շարդենի գրածի հետ. (Տե՛ս Փավստոս Բուզանդ, Հայոց Պատմություն, Գ դպրություն, գլ. Ժ):

[8] Առաքել կամ Առաքյալների վանք ասելով Շարդենը նկատի ունի Ակոռիի վանքը: Ալիշանը այս մասին գրում է. «Յանուն Առաքելոց Աղրէի և Մատթէի կոչէն փռանկ ճանապարհորդք ԺԷ դարուն զվանս և զեկեղեցի Ակոռոյ, բայց որիշ որիշ թուին եկեղեցիքն, գեղջն կոչէր յանուն Ս. Աստուածածնի, վանացն Ս. Առաքեալք, զյետինս ի սկիզբն ԺԸ դարուն, յամի 1701 աւեր եգիտ Դուռնըֆոր, այլ Շարտէն, որ իբրեւ քառասուն ամաւ յառաջ ետես՝ ցուցանէ շէն և յոյժ պատուեալ ի տեղացեաց, մանաւանդ վասն զազաթան Ս. Աւետարանչին Մատթէի, ընդ որում ասէին գտեալ անդ և զնշխարս Ս. Անդրէի. «ևս և վասն այգետնկութեան Նոյի յայնմ ետեղ» (Հ. Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 473):

*Անգլերենից թարգմանությունը և ծանոթագրությունները՝*
***Գ. Պողոսյանի***

*ՍԻՐՎԱՐԴ ՀԱՄԲԱՐՅԱՆ*

# ՏԱԳԱՆՐՈԳ ՔԱՂԱՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՎ ԴՊՐՈՑԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Ռուսական կայսրության հարավում Պետրոս Մեծի հիմնադրած Տագանրոգ քաղաքում հայերի հայտնվելը կապված է Ազովի նահանգում Ղրիմի հայերի վերաբնակեցման հետ:

1768-1774 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Քյուչուկ-Կայնարջիի հաշտության պայմանագրով Ղրիմում հաստատված թաթարական խանությունը ճանաչվեց Թուրքիայից անկախ: Ղրիմի խանության նկատմամբ Եկատերինա 2-րդ կայսրուհին վարում էր այն տնտեսապես թուլացնելու, կայսրության հարավային սահմանները ամրապնդելու, Սև և Ազովի ծովերի մերձափնյա հողերի նվաճման քաղաքականություն: Ռոստովցի ուսումնասիրող Ա. Բոգդանյանը իր «Անցյալից» գրքում նշում է, որ Եկատերինա 2-րդը Ղրիմի խանությունը թուլացնելու նպատակով ծրագրավորեց այնտեղից հանել հույներին և հայերին և վերաբնակեցնել այն ժամանակ դեռ անմարդաբնակ Նովոռոսիյսկի երկրամասում (հետագայում՝ Ազովի նահանգ): Դրանով նախ մեծ հարված էր հասցվում խանի եկամուտներին, որոնք գոյանում էին հույներից և հայերից գանձված հարկերից, և երկրորդ՝ ռուսական կառավարությանը Ղրիմից քրիստոնյաներին տեղահանման և վերաբնակեցման էր մղում երկրամասը տնտեսապես յուրացնելու և զարգացնելու հեռանկարը[1]:

Ռուսական կայսրության գործակալներին հաջողվեց բանակցել հայ հոգևորականության և հարուստ վերնախավի հետ, որի ներկայացուցիչներից շատերն առևտրական և գործնական կապեր ունեին Հարավային Ռուսաստանի բնակավայրերի հետ: Ձեռք բերվեց նրանց համաձայնությունը՝ տեղափոխվելու նոր երկրամաս և ծավալելու առևտրական գործունեություն: Եկատերինա 2-րդի կարգադրությամբ տեղահանման և վերաբնակեցման գործը հանձնարարվեց իշխան Պոտյոմկինին: Վլադիմիր Բարխուդարյանի «Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն (1779-1861 թթ.)» պատմագիտական աշխատությունը բոլոր մանրամասնություններով ներկայացնում է հայերի վերաբնակեցումն Ազովի երկրամաս, որում իրենց մեծ ներդրումն ունեցան զորավար Սուվորովը, Աստրախանի երիտասարդ արքեպիսկոպոս իշխան Հովսեփ Արղությանը: Վերաբնակեցումն ավարտվեց 1778 թ. սեպտեմբերին, որի մասին Սուվորովը հայտնեց ղեկավարությանը. «Ղրիմի քրիստոնյաների տեղահանումն ավարտված է»[2]:

Դոնի ափեր հայ գաղթականների քարավանը հասավ 1779 թ. դեկտեմբերին: Մշտական բնակատեղի ընտրելու, «տեղանքի ու պայմանների հետ ծանոթանալու նպատակով մի պատգամավորություն է ուղարկվում, որը Դնեպր գետի մոտակայքը զբաղված տեսնելով՝ անցնում է Մարիուպոլ, հետո նաև՝ Տագանրոգի շրջակայքը: Այս վայրերը նույնպես հարմար չեն գտնում և կանգ են առնում Դոն գետի ափին՝

[1] **А. М. Богданян**, Из прошлого, 2-е изд., Ростов-на-Дону, 1989, с. 5-6.

[2] Там же, с. 10.

սուրբ Դիմիտրի Ռոստովսկու ամրոցի մոտ»[3]:

1779 թ. դեկտեմբերի 14-ին Եկատերինա 2-րդը ստորագրում է հայ գաղթականների իրավունքների և արտոնությունների մասին պատմական հրովարտակը: Այդ հրովարտակի ետնից առաքված ղրիմահայ գաղթականների պատգամավորները վերադարձին մտնում են Տագանրոգ քաղաք, այնտեղից՝ իրենց բնակատեղի: Գաղութի հիմնադրման ժամանակ Տագանրոգը, որ Եկատերինա 2-րդի օրոք վերականգնվել էր թուրքերի վերջին ավերածություններից և նոր զարգացում էր ապրում, արդեն համարվում էր ամբողջ Ազովի ավազանի առաջնակարգ առևտրավայր հանդիսացող նավահանգիստ, «նաև տարածքի միջնորդ առևտրի դերակատար, որը մտնում էր Ազովի նահանգի վարչական կառուցվածքի մեջ՝ որպես գավառ, իսկ Տագանրոգի գավառի մեջ էին մտնում Նոր Նախիջևանը և Դիմիտրի Ռոստովսկու ամրոցը: 1784-1796 թթ. Նախիջևանը, Ռոստովը, Տագանրոգը և Ազովը մտնում էին Եկատերինոսլավի փոխարքայության Մարիուպոլի գավառի կազմի մեջ»[4]:

Հայ վերաբնակիչներն իրենց բնակավայրերի համար ընտրում են Դիմիտրի Ռոստովսկու ամրոցից արևելք ընկած տարածքը, ուր և 1781 թ. հիմնվեց Նոր Նախիջևան քաղաքը (հետագայում՝ Դոնի Ռոստով) իր հինգ՝ Չալթր, Թոփթի, Մեծ Սալի, Փոքր Սալի, Նիսվետա գյուղերով: Սակայն հարուստ վերնախավին և առևտրականներին գրավիչ թվաց Տագանրոգ նավահանգիստը, ուր հույսեր ունեին սկսելու իրենց առևտրական գործունեությունը՝ գտնելով, որ դրա զարգացման համար այնտեղ կան նպաստավոր պայմաններ: Տագանրոգում հաստատվեցին մի քանի հարուստ հայ ընտանիքներ:

19-րդ դարի վերջի 20-րդ դարի սկզբի պատմաբան Պ. Ֆիլևսկին իր «Տագանրոգ քաղաքի պատմությունը» գրքում քրիստոնյաների՝ սերբերի, հույների, հայերի և մյուսների՝ Նովոռոսիյսկի երկրամասում վերաբնակեցումը համարում է կարևորագույն քաղաքական քայլ, որն իրականացրեց իշխան Պոտյոմկինը: Նա կարողացավ այն կազմակերպել այնպես, որ նրանք շատ շուտով կարևորություն ներկայացրին Ռուսաստանի շահերի տեսանկյունից[5]: Գրեթե հարյուրամյա պատմություն ունեցող քաղաքն (Տագանրոգը հիմնադրվել է Պետրոս Մեծի կողմից թուրքերի հետ Ազովի պատերազմի տարիներին՝ 1698 թ.) ուներ բնակչության ինտերնացիոնալ կազմ՝ ռուսներ, իտալացիներ, հույներ, բելգիացիներ, գերմանացիներ, ուկրաինացիներ, հրեաներ, իսկ ավելի ուշ քաղաքի բնակիչները ներկայացնում էին 100-ից ավելի ազգեր ու ազգություններ: Ի սկզբանե բազմազգ բնակչություն ունենալու իրողությունը թույլ էր տալիս ազգային համայնքներին (էթնիկ խմբերին) հավասար հնարավորություններ ունենալ ոչ միայն տնտեսական գործունեություն ծավալելու, այլև իրենց ազգային մշակույթը, ավանդույթները, հավատն ու կենցաղը պահպանելու համար: Տագանրոգի ավելի քան 300-ամյա պատմությունը վկայում է, որ այս հանգամանքով է պայմանավորված և այն, որ երբեք այստեղ չեն ծագել միջէթնիկական կոնֆլիկտներ, չի եղել անհանդուրժողականության մթնոլորտ որևէ ազգային փոքրամասնության շուրջ: Սրան նպաստել է և այն, որ տարբեր ժամանակներում մինչխորհրդային շրջանում քաղաքային իշխանությունը գլխավորել են տարբեր ազգությունների, համայնքների

[3] **Վլ. Բարխուդարյան**, Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն (1779-1861 թթ.), Երևան, 1967, էջ 51:

[4] Նույնի էջ 102:

[5] **П. П. Филевский**, История города Таганрога, Москва, 1996, с. 88.

ներկայացուցիչներ՝ նորվեգացի Կոռնելիուս Կրյուսը, գերմանացի Կոպենհաուզենը, հույն Ալֆերակին, հայ Սերեբրյակովը (Արծաթագործյան) և այլն:

Հաստատվելով քաղաքում՝ հայ ընտանիքներն սկսում են ծավալել առևտրական գործունեություն՝ սպասարկելով քաղաքի բնակչությանը: Նրանցից ոմանք, դուրս գալով քաղաքային առևտրի շրջանակներից, լայն կապեր ստեղծեցին Ռուսաստանի հարավի և այլ երկրամասերի գործարար շրջանակների հետ: Հայ ընտանիքները շուտով քաղաքում դարձան հեղինակություն վայելող ընտանիքներ, որոնք որոշակի կշիռ ունեին քաղաքի տնտեսության, հոգևոր-մշակութային կյանքում:

Տագանրոգցի երկրագետներ Օ. Գավրյուշկինի և Մ. Կիրիչեկի՝ քաղաքի պատմությանը նվիրված ուսումնասիրություններում հայերը հիշատակվում են որպես քաղաքի ամենահարուստ բնակիչներ: Ազդեցիկ էթնիկ խմբերի շարքում ավելի վաղ հաստատված հույների ու իտալացիների մասին խոսվում է հայերից հետո միայն:

Քաղաքի բնակչության աճին համընթաց ավելանում էր նաև հայ ազգաբնակչության թիվը՝ 1867 թ. կազմելով 128, իսկ 19-րդ դ. վերջին՝ մոտ 1000 մարդ[6]: Ի տարբերություն Նոր Նախիջևանի և Դոնի հողում հիմնված հայկական բնակավայրերի, ուր իրենց հաստատումից շատ չանցած 1780-ական թթ. հայերն արդեն սկսում են եկեղեցիների կառուցում և դպրոցաշինություն (20-րդ դարի սկզբին այդ բնակավայրերն ունեին արդեն ութ եկեղեցի, թեմական դպրոցներ, արական և իգական կրթական հաստատություններ), Տագանրոգի հայ բնակչությունը գրեթե մեկ հարյուրամյակ չուներ համայնքային կազմակերպություն, մասնավորապես՝ էթնոպաշտպան մեխանիզմներից կարևորագույնները՝ եկեղեցի, դպրոց: Կարելի է ենթադրել, որ եկեղեցի և դպրոց չունենալը պայմանավորված էր նախ հայերի ոչ այնքան մեծաթիվ լինելու, որքան որ կոմպակտ չբնակվելու (ի տարբերություն հույների, իտալացիների, որոնք իրենց տները կառուցել են քաղաքի որոշակի շրջանում՝ ստեղծելով ամբողջական փողոցներ, այդ փողոցների անվանումները՝ Հունական, Իտալական, պահպանվել են մինչև օրս), Նոր Նախիջևանից հեռու լինելու և, վերջապես, հենց Նախիջևանի եկեղեցական կազմակերպության հոգևոր վարչության կողմից Տագանրոգ քաղաքի հայության հոգևոր – կրթական խնդիրներին ոչ պատշաճ ուշադրություն ցուցաբերելու հետ: Ազգային ինքնության պահպանման այդ հիմնական լծակների բացակայությունն արդյունք էր թերևս նաև այն բանի, որ քաղաքում հաստատվեցին հիմնականում ունևոր, վաճառական հայերը, առավելապես իրենց առևտրական գործունեության հաջողությունն ապահովելու մեջ ավելի շատ մտահոգված խավը: Կարևոր հանգամանք էր և այն, որ «Ղրիմից տեղափոխման ժամանակ արդեն հայ գաղթականների քարավանը, ըստ բնակության նախկին վայրերի, բաժանվել էր խմբերի իրենց հոգևորականների գլխավորությամբ: Այնտեղից նրանք նոր բնակավայր տեղափոխեցին նաև իրենց եկեղեցիների ողջ ունեցվածքը, սրբապատկերներն ու մյուս մասունքները»[7]:

Հիմնելով Նոր Նախիջևանը և մյուս հայկական գյուղերը՝ ղրիմահայությունն իր հոգևոր հայրերի առաջնորդությամբ նախ սկսեց եկեղեցիներ կառուցել, ապա դրանց կից՝ ծխական դպրոցներ: Տագանրոգում հաստատվեցին հայ ընտանիքներ տարբեր բնակավայրերից: Եվ միայն 18-րդ դարի վերջին հայերի շրջանում սկսում են քննարկումներ, որոնցում կարևորվում է հայ բնակչության համար սեփական եկեղեցի և

---

[6] **Киричек М.,** Армянская школа, Таганрогская правда, 1994, 8 октября, с. 4.

[7] **В. Г. Вартанян**, Церковные древности Нор Нахичевана, Община, Историко-культурный журнал Юга России, выпуск десятый, Минеральные Воды, с. 13.

դպրոց ունենալը: Այդ հարցի կենսունակությունը գիտակցաբար է ըմբռնվում քաղաքի հայ հարուստ վերնախավի կողմից: Հայ համայնքի կազմավորումն ու ակտիվացումը, հայկական եկեղեցու, դպրոցի ստեղծումը կապված են 1865-1868 թթ. Տագանրոգի քաղաքագլուխ Միքայել Սերեբրյակովի (Արծաթագործյան) որդու՝ Հակոբ Սերեբրյակովի անվան հետ: Հակոբ Սերեբրյակովը մեծ ճանաչում ուներ Ռուսաստանի հարավի, նաև Մոսկվայի, Պետերբուրգի գործարար շրջանակներում: Ուսումնասիրողները նշում են, որ նա «երկար տարիներ իրեն բնորոշ նրբանկատ կոկիկությամբ վարում էր մանուֆակտուրային առևտուր, այնուհետև ավելի քան տասը տարի զբաղվում էր հացի արտահանմամբ: 1896 թ. հանդես եկավ որպես Սիբիրում ծխախոտի արդյունաբերության զարգացման պիոներ՝ Օմսկում բացելով առաջին ծխախոտի գործարանը, մտցնելով այնտեղ իննժամյա աշխատանքային օր[8]: Հակոբ Սերեբրյակովը, որ երկրագետների կողմից հիշատակվում է որպես «հայտնի և հաջողակ գործարար», մեծ կապեր ուներ Մոսկվայի հարուստ առևտրական Պ. Տրետյակովի հետ, որը նրան խնդրել էր միջնորդել՝ ձեռք բերելու մի քանի կտավներ: Դրանցից էր Կ. Բրյուլովի հեղինակած ռուս գրող Ն. Կուկոլնիկի դիմանկարը, որը շնորհիվ նրա միջնորդության դարձավ Տրետյակովյան պատկերասրահի գոհարներից մեկը:

1855 թ. Հ. Սերեբրյակովը քաղաք է հրավիրում ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկուն, որի հետ ուներ անձնական կապեր և միջնորդում էր նաև նրա կտավների վաճառքին: Մեծ ծովանկարիչը Տագանրոգին է նվիրում իր կտավներից մի քանիսը (այդ գործերն այսօր պահպանվում են քաղաքային պատկերասրահում):

Այս նույն Հակոբ Սերեբրյակովը 1895 թ. Նիկոլայ 2-րդի թագադրման պատվին քաղաքին է նվիրում Հունական փողոցի վրա գտնվող, իր սեփականությունը հանդիսացող հողատարածքը, պայմանով, որ այնտեղ կառուցվի հայկական եկեղեցի: Հակոբ Սերեբրյակովը դրանից առաջ էլ հայկական եկեղեցու կառուցման նախաձեռնողներից էր: Նրան այս հարցում օգնում էր մոսկովյան վաճառական Շորնիկովը: Գործին մեծ օժանդակություն ցուցաբերեցին մյուս մեծահարուստ հայ ընտանիքները՝ Աղաբաշև, Բաղդասարով, Մարտիրոսով, Տեր-Հարությունով, Հովհաննիսյանց, Խալդրիմյանց եղբայրները: Հայ բնակչության շրջանում հանգանակություն սկսվեց, և արդեն 1897 թ. նոյեմբերին եկեղեցու կառուցման հարցը վերջնականապես դրական լուծում ստացավ: Ընտրվեց նաև եկեղեցու ավագանի: Այդ գործը համայնքը վստահեց Ս. Աղաբաշևին: 1900 թ. մայիսի 21-ին հանդիսավոր պայմաններում հավաքված բազմաթիվ հայերի ներկայությամբ դրվում և օծվում է շենքի հիմնաքարը: 1901 թ. հոկտեմբերին եկեղեցու շենքը հիմնականում կառուցված էր, շրջակա տարածքը՝ մաքրված: Այն կառուցված էր հայ եկեղեցական ճարտարապետական ոճով, ուներ կոնաձև գագաթ, նրան հարող զանգակատուն: Եկեղեցին որոշվեց կոչել Սուրբ Հակոբի անունով, որի հիշատակը նշվում էր հոկտեմբերին, որով, անշուշտ, Տագանրոգի հայերն իրենց երախտագիտությունն էին հայտնում Հակոբ Սերեբրյակովին: 1903 թ. ապրիլին եկեղեցու գագաթներին ամրացվեցին խաչերը: Արարողությանը ներկա էին հայ հոգևորականներ և մեծաթիվ հայ բնակչություն: Եկեղեցու կայացման այս գործընթացին արդեն որոշակի օգնություն էր ցույց տալիս Նոր Նախիջևանի եկեղեցական կազմակերպությունը:

1904 թ. տեղադրվեցին սրբապատկերները: Որոշակի նյութական դժվարություն-

---

[8] **Гаврюшкин О.**, Армянская церковь, Таганрог, 1999, с. 80.

ները հաճախ էին ընդհատում եկեղեցու ներքին հարդարանքի ամբողջացման գործը, և միայն 1906 թ. սկզբներին վանքի ամբողջական կառուցումն ավարտվեց: Որոշ չինովնիկական քաշքշուկներ նույնպես հաղթահարելով՝ Տագանրոգի հայ ազգաբնակչությունը տոնեց եկեղեցու բացումը: Այն տեղի ունեցավ 1906 թ. մարտի 19-ին հանդիսավոր պայմաններում, որին ներկա էին քաղաքի բոլոր հայ ընտանիքները, տեղական վարչակազմի և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Եկեղեցու օծումը կատարեց Նախիջևանից ժամանած Մուշե արքեպիսկոպոսը: Նա իր հետ բերել էր հոգևորականների մի խումբ և մեծ երգչախումբ, որի հոգևոր երգերի կատարումը հատկապես ուժեղ ազդեցություն թողեց ներկաների վրա: Եկեղեցու ավագանին՝ Ս. Աղաբաշյն, իր եղբոր՝ երդվյալ ատենակալ Կ. Աղաբաշևի հետ միասին բավականին մեծ աշխատանք էր տարել եկեղեցու բացման արարողությունը կազմակերպված անցկացնելու ուղղությամբ: Ռուս հետազոտողը նշում է. «Ժամերգության ավարտին հյուրերը հրավիրվեցին ճաշկերույթի «Կոնտինենտալ» հյուրանոցում, որը պատկանում էր Ն. Տեր-Հարությունովին: Հայ համայնքը շնորհավորանքներ էր ստանում հյուրերից եկեղեցու առիթով, որը հանդիսանում էր քրիստոնեական հավատին նվիրվածության և ամրապնդման աղբյուր հայ ժողովրդի, նաև քաղաքի ողջ քրիստոնյա բնակչության շրջանում: Մատնանշվում էր նաև, որ հավատով և ոգով ռուս ժողովրդին մոտ կանգնած հայ ժողովուրդը պետք է իրեն զգա ինչպես իր տանը, որովհետև այստեղ ապրող բոլոր ժողովուրդների համար Ռուսաստանը հայրենիք է՝ առանց ազգությունների և կրոնի տարբերության»[9]:

Եկեղեցու բացման առիթով Ս. Աղաբաշևը շնորհավորական հեռագիր էր ստացել Նախիջևանի հոգևորականությունից, որում մասնավորապես նշված էր. «Շնորհավորում ենք և պարտք ենք համարում կիսել հայկական գաղութի ուրախությունը Աստծո նոր տաճարի օծման հանդիսավոր օրվա առթիվ: Թող նորընծա եկեղեցին դառնա հայ հասարակության և Մայր Տաճար Սուրբ Էջմիածնի միջև կապող օղակ»[10]: Ուղերձ էր ուղարկել նաև Քիշինևի հայկական եկեղեցիների արքեպիսկոպոս Ներսեսը, որով շնորհավորում և օրհնում էր գաղութին և եկեղեցու հոգաբարձուներին՝ աղոթելով Աստծո տաճարի ծաղկման և ժողովրդի հետ միասնականանալու համար ու հույս հայտնում տեսնելու Տագանրոգի եկեղեցու համար արժանավոր հոգևոր հայր: Եկեղեցու բացման արարողության ժամանակ և առաջիկա երկու ամիսներին դեռևս չկար այդ արժանավոր հոգևորականը: Եվ միայն հունիսի 4-ին կայացան Ս. Հակոբ եկեղեցու քահանայի ընտրությունները: Երկու թեկնածուներից (հայր Հովհաննես Օքսենտյանց և հայր Վարդանյանց) հոգևոր ժողովում միաձայն ընտրվեց Եկատերինովկա գյուղի քահանա Հովհաննես Օքսենտյանցը: Սակայն Եկատերինովկայի բնակիչները Նախիջևանի հոգևոր վարչությանը դիմեցին իրենց քահանային վերադարձնելու խնդրանքով: Տագանրոգի հայ հավատացյալների որոշումը չհաստատվեց հոգևոր վարչության կողմից: Սեպտեմբերի 24-ին կայացավ երկրորդ ժողովը, որին Նախիջևանից մասնակցում էր Մուշեղ արքեպիսկոպոսը: Եվ որքան էլ տագանրոգցիները պնդեցին Հովհաննես Օքսենտյանցի թեկնածությունը կրկին քվեարկելու հարցը, արքեպիսկոպոսը մերժեց՝ հիմք ընդունելով վարչության որոշումը, միաժամանակ առաջարկելով ընտրել հանձնաժողով՝ եպարքոսական ղեկավարությանը իրենց միջնորդագիրը ներկայացնելու նպատակով: Սակայն այս անգամ էլ խնդիրը չլուծվեց

[9] **Гаврюшкин О.**, там же, с. 81.

[10] Там же.

Օքսենտյանցի հարցում: Մի քանի ամիս անց ժողովը Ս. Հակոբ եկեղեցու վանահայր ընտրեց միակ թեկնածուին՝ հոգևորական Վարդանյանցին Կրասնովոդսկից: Սակայն 1906 թ. սեպտեմբերի 9 – ի՝ «Առանձնացված հողի մասին» հրամանագրից օգտվելու, հողակտոր ձեռք բերելու ցանկություն հայտնած Եկատերինովկայի հայերն սկսեցին դուրս գալ համայնքից, իսկ մնացածները, չկարողանալով պահել հոգևորականին (Հովհաննես Օքսենտյանցին), հրաժարվեցին նրա ծառայություններից: Տագանրոգի հայերն ուրախությամբ ընդունեցին այս լուրը և նշանակեցին նոր ժողով, որում երկու հոգևորականների՝ Օքսենտյանցի և Վարդանյանցի թեկնածությունները կրկին դրվեցին քվեարկության: Օքսենտյանցը ստացավ քառասունհինգ ձայն կողմ, երկու դեմ և ընտրվեց Տագանրոգի հայկական եկեղեցու քահանա: Ինչպես նկատում է Վ. Վարդանյանը, «նա [Օքսենտյանցը] ավարտել էր Դոնի հայերի համար այն ժամանակվա ամենամատչելի ուսումնական հաստատությունը՝ Նախիջևան - Բեսարաբյան հոգևոր սեմինարիան, որը պատրաստում էր հոգևորականների և ուսուցիչների՝ եկեղեցական - ծխական դպրոցների համար: 1902 թ. նա ձեռնադրվել էր հոգևորական: 1906 թ. մինչև փակումը, իսկ հետո քանդումը՝ մինչև 1920-ական թվականների վերջը, Օքսենտյանցը Տագանրոգ քաղաքի հայկական եկեղեցու անփոփոխ վանահայրն էր»[11]:

1907 թ. նոյեմբերի 4-ին և 6-ին հայկական եկեղեցին կատարեց հոգեհանգիստ՝ Ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի մահվան առիթով: Քահանա Օքսենտյանցը Տագանրոգի հայկական գաղութի անունից Էջմիածին ուղարկեց հեռագիր, որում մասնավորապես ասված էր. «Տագանրոգի հայկական գաղութը, վշտակցելով Վեհափառ սուրբ պատրիարքի անսպասելի մահը, իր ջերմ աղոթքն է հղում Ամենազորի խորանին՝ խնդրելով Նրան ընդունել (մեր հավատքի) ջատագովին սուրբ հայրերի գիրկը՝ ճշմարտության, հավատի և սիրո համար»[12]:

Տագանրոգի Սուրբ Հակոբ եկեղեցին շարունակեց տեղի հայ համայնքի համար իր հոգևոր ազգապահպան առաքելությունը մոտ տասներեք տարի: Շնորհիվ Հովհաննես Օքսենտյանցի ազգանվեր գործունեության, հայերն ունեին իրենց քրիստոնեական հավատի կենտրոն հայկական եկեղեցին, ուր կատարվում էին եկեղեցական տոներն ու ծիսակատարությունները, սգո պատարագները, իրականացվում էին երեխաների մկրտություններն ու հարսանիքները:

Եկեղեցուն կից կառուցվել էր նաև միահարկ շենք՝ եկեղեցական ծխական դպրոցի համար, որն սկսեց գործել որպես երրորդ կարգի դպրոց (մեկ դասարան՝ խառը ուսուցմամբ) և նախատեսված էր հիմնականում չունևոր ընտանիքների երեխաների համար[13]: Պարապմունքները վարում էր նույն ինքը՝ Հովհաննես Օքսենտյանցը:

Խորհրդային իշխանության հաստատումով սկսվեց եկեղեցական ունեցվածքի հաշվառում: Բոլշևիկներին առաջին հերթին հետաքրքրում էին ոսկուց, արծաթից, թանկարժեք քարերից պատրաստված առարկաները: Դրանց մեծ մասի պատմական արժեքը բոլորովին հաշվի չէր առնվում: Ուկրաինայի բանվորագյուղացիական կառավարության (այդ տարիներին Տագանրոգը մտնում էր Ուկրաինայի կազմի մեջ) 1919 թ. հունվարի 23-ի դեկրետով եկեղեցական և կրոնական կազմակերպությունների ողջ ունեցվածքը, շենքերը հայտարարվեցին ազգային սեփականություն և հանձն-

[11] **В. Варданян**, Духовный пастырь таганрогских армян, Вехи Таганрога, Историко-литературный альманах, N 10, декабрь, 2001, с. 23.

[12] **Гаврюшкин** О., там же, с. 84.

[13] **Киричек** М., там же.

վեցին տեղական կամ կենտրոնական պետական իշխանությունների տնօրինությանը: 1922 թ. Սուրբ Հակոբ հայկական եկեղեցուց բռնագրավեցին արծաթե հինգ սրբապատկեր, խաչերը և ոսկուց պատրաստված բոլոր առարկաները:

1929 թ. հոկտեմբերին քաղաքային խորհրդի թիվ 1151 կարգադրությամբ հրաման արձակվեց եկեղեցիներն ակումբներին և հացահատիկի պահեստներին օգտագործման հանձնելու մասին: Հայկական եկեղեցու հարցը քննարկվում է Տագանրոգի քաղաքային խորհրդի նախագահության 113-րդ գումարման 1929 թ. դեկտեմբերի 26-ի նիստում և ընդունվում է որոշում. «Նպատակային համարել փակել Երրորդ Ինտերնացիոնալ փողոցի վրա գտնվող հայկական դպրոցը, քանի որ քաղաքում կուլտուր - լուսավորչական կարիքների լիակատար բացակայության պայմաններում դրանից օգտվում են աննշան թվով հայ հավատացյալներ՝ 250 չափահաս բնակչությունից 129-ը»[14]:

Եկեղեցու շենքի քանդումն սկսվեց 1930 թ. օգոստոսին և վերջնականապես ավարտվեց 1956 թվականին: Եկեղեցու տեղում կառուցվեց քառահարկ բազմաբնակարան շենք:

Պատմաբան Պ. Ֆիլևսկու վերը հիշատակված գրքում մի այսպիսի դրվագ կա. «Հայկական քանդված եկեղեցու մոտով մի ծեր կին քարշ էր տալիս սատկած շանը՝ եկեղեցու ետևի բարձրությունից ներքև գցելու համար: Այդ ժամանակ անցնում է մի կոմունիստ, որ ծիծաղելով ասում է.

- Ինչպե՞ս ես դու առանց տերտերի թաղում շանը:

- Մի՞թե միայն շներին են առանց քահանայի թաղում: Կոմունիստներին՝ նույնպես,- պատասխանում է ծեր կինը»[15]:

Հայկական դպրոցի ճակատագիրը վճռվեց նույն կերպ: Դպրոցն անցավ քաղաքային ժողկրթբաժնի տնօրինությանը: Հայերենի պարապմունքներն անցկացվում էին միայն դպրոցին կից ստեղծված հայկական ակումբում: Օքսենտյանցը հեռացվեց ուսուցչությունից:

Հայկական եկեղեցիների փակումից և քանդումից հետո Դոնում շատ հայ հոգևորականներ շարունակում էին կատարել իրենց պարտականությունները, իրականացնում էին հոգևոր ծիսակատարություններ հավատացյալների համար, սակայն նրանց պատվերով և նրանց տանը: Օքսենտյանցը մինչև 1938 թ. ապրում էր Տագանրոգում և նման կերպ էր կատարում իր հոգևոր ծառայությունը հայ համայնքին: 1938 թ. Դոնի մյուս հոգևորականների նման նա ևս ձերբակալվեց «հակահեղափոխական քարոզչության և նացիոնալիստական, ապստամբական խմբերի ղեկավարման» մեղադրանքով:

Հայկական դպրոցն իր ակումբային պարապմունքներով, այնուամենայնիվ, դեռ որոշ ժամանակ պահպանեց իր անվանումը, ստացավ խորհրդային դպրոցի առաջին աստիճանի կարգավիճակ: Դասերն անցկացնում էին համատեղությամբ աշխատող ուսուցիչները: Երկար ժամանակ չէր գտնվում հարմար մեկը, որ գլխավորեր դպրոցն ու ակումբը: Եվ միայն 1924 թ. դպրոցի ղեկավար նշանակվեց երիտասարդ կոմերիտական, գրագետ, հայերեն և ռուսերեն լեզուներին տիրապետող Աշոտ Մեժլումյանը (հետագայում ՌԽՖՍՀ-ի պատվավոր ավտոշինարար, ճարտարապետ, քաղաքի մի շարք ձեռնարկությունների ղեկավար, բազմաթիվ խոշոր շինությունների, կառույցնե-

---

[14] **ТФ. ГАРО**, ф. 462, ед. оп. 1, ед. хр. 41, л. 21.

[15] **П. П. Филевский**, там же, с. 89.

րի հեղինակ, Տագանրոգ քաղաքի պատվավոր քաղաքացի): Դպրոցի վարիչ Ա. Մեծլումյանը, չնայած շատ կարճ՝ ընդամենը մեկ տարի ղեկավարեց դպրոցը, սակայն լավագույն դպրոցական գործով է սկզբնավորվել նրա՝ որպես քաղաքի նշանավոր և պատմական անհատի աշխատանքային կենսագրությունը:

1927 թ. հայկական դպրոցը մտավ քաղաքի ազգային փոքրամասնությունների՝ երեխաների համար ստեղծված առաջին ինտերնացիոնալ դպրոցի մեջ, իսկ երկու տարի անց՝ լուծարվեց: Հայ երեխաները սկսեցին հաճախել քաղաքի մյուս դպրոցները, ուր դասավանդումը կատարվում էր միայն ռուսերեն լեզվով: Դպրոցի շենքը երկար տարիներ տրամադրվեց բանվոր երիտասարդության երեկոյան (գիշերային) դպրոցին, 1987 թ.՝ Տագանրոգի միջշրջանային դատախազությանը (Տագանրոգի քաղաքային խորհրդի գործկոմի 1987 թ. ապրիլի 1-ի թիվ 93 որոշմամբ), որին այնուհետև թույլատրվեց քանդել շենքը՝ կիսավթարային լինելու պատճառով (1988 թ. փետրվարի Տագանրոգի քաղխորհրդի գործկոմի թիվ 48/9 որոշմամբ), 1988թ. հունիսին շենքը հատկացվում է «Մոնոլիտստրոյ - 4» կազմակերպությանը և, վերջապես, 1995 թ. մայիսին քաղաքային իշխանությունները բաց աճուրդում վաճառեցին շենքը «Շելֆ» մասնավոր ձեռնարկությանը, որն այն վարձակալության է տալիս մինչև օրս[16]:

20-րդ դարի սկզբին Տագանրոգում կառուցված հայկական Սուրբ Հակոբ եկեղեցու և ծխական դպրոցի ծնունդը պայմանավորված էր մոտ հազարի հասնող հայ ազգաբնակչության ազգային ինքնագիտակցության վերելքով: Դրա շնորհիվ էր, որ Տագանրոգի հայկական համայնքը, թեև ոչ երկար ժամանակով, ձեռք էր բերել ազգային նկարագրով վառ արտահայտված էթնիկ ինքնություն: Եկեղեցին կատարում էր կրոնական ծեսեր, նշում էր տոներ, աշխատանք էր տանում ազգային ավանդույթների և սովորությունների վերածնման, մայրենի լեզվի և մշակույթի պահպանման ուղղությամբ: Դպրոցում, բացի դաս-պարապմունքներից, կազմակերպվում էին մայրենի լեզվով ընթերցումներ ցանկացողների համար, հանդիպումներ քաղաք ժամանած նշանավոր գործիչների հետ: Եկեղեցու և դպրոցի միջոցով Տագանրոգի հայերը կապեր ունեին Նոր Նախիջևան, Չալթր, Ազովի, Նովոռոսիյսկի հայկական բնակավայրերի հետ: Սուրբ Հակոբ եկեղեցին կապող օղակի դեր էր կատարում քաղաքի հայ հավատացյալների և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միջև, անմիջական կապեր ուներ Հայաստանի, Ռուսաստանի տարբեր հայ գաղթօջախների հոգևոր թեմերի հետ: Խորհրդային իշխանության կողմից հայ եկեղեցու և դպրոցի փակումը խոշոր հարված հասցրեց համայնքին, որը զրկվեց ազգային ինքնության պահպանման հիմնական միջոցներից: Նրան ավելի իրատեսորեն սկսեց սպառնալ ռուսականացման վտանգը: Նույն ճակատագրին արժանացան նաև ազգային մյուս փոքրամասնությունները: Դեռևս 19-րդ դարի կեսերից կառուցված հրեական սինագոգան, հունական ուղղափառ, քիչ ուշ՝ գերմանական կաթոլիկ եկեղեցիները և դպրոցները նույնպես փակվեցին:

Անցյալ դարի 90-ական թվականների սկզբներից Տագանրոգի հայ բնակչության թիվը կտրուկ ավելացավ՝ ի հաշիվ Ադրբեջանից, Լեռնային Ղարաբաղից, Հայաստանից, Վրաստանից մեծ թվով արտագաղթողների հոսքի: Առաջացավ նաև հայկականության պահպանման խնդիրը, որը կարող էր լուծել համայնքային կազմակերպության վերածնունդը միայն: Քաղաքում 90-ականների սկզբից սկսվել էր ազգային փոքրա-

[16] К истории здания армянской церкви и церковно-приходской школы в Таганроге (Извлечение из архивных документов нашего времени), Вехи Таганрога, Историко-литературный альманах, N 10, декабрь, 2001, с. 9-11.

մասնությունների հասարակական կազմակերպությունների ստեղծման գործընթաց, մարզային արդարադատության վարչության կողմից գրանցվել և գործում էին գերմանական, իրեական, հունական համայնքները: Հայկական համայնքի «ՆԱԻՐԻ» կազմակերպությունը ստեղծվեց 1997 թ. մարտին՝ խնդիր դնելով ծավալել ազգապահպան գործունեություն: Իր գոյատևման հենց սկզբից համայնքը դիմել է քաղաքային իշխանություններին՝ համայնքին վերադարձնելու հայկական նախկին ծխական դպրոցի շենքը, սեփականատերը առաջարկել է գնել բավական բարձր գնով, բայց համայնքը չի ունեցել ֆինանսական միջոցներ: Բազմաթիվ փորձեր են արվել կառուցելու հայկական եկեղեցի: Մասնավորապես, քաղաքային իշխանություններից ձեռք է բերվել համաձայնություն, տրամադրվել է հողատարածք, համայնքի ղեկավարությունը եկեղեցու կառուցման ծախսերի նախահաշվարկ է կատարել, ձեռք է բերել ապագա եկեղեցու նախագծի տարբերակներ, կապեր են ստեղծվել Դոնի Ռոստովի Սուրբ Կարապետ եկեղեցու հետ, որի քահանան՝ Տեր Թադեոսը, Տագանրոգի հայկական համայնքի կազմակերպած շատ միջոցառումների իր անձնական մասնակցությունն է ցուցաբերել:

Եկեղեցի կառուցելու համար ֆինանսական միջոցներ հավաքել համայնքին այդպես էլ չի հաջողվել: Փորձերը ձախողվել են եկեղեցու հարցում, բայց կիրակնօրյա դպրոց ստեղծվել է: Պարապմունքներն անց են կացվել քաղաքային վարչակազմի տրամադրած Մետալուրգիական քոլեջի շենքում: Հայաստանի Հանրապետության Կրթության և գիտության նախարարությունը Ռոստովում գտնվող ՀՀ հյուպատոսական ծառայության միջոցով Տագանրոգ է ուղարկել դպրոցի երկու խմբերի համար անհրաժեշտ քանակությամբ «Այբբենարաններ», այլ դասագրքեր: Համայնքը յոթ տարի շարունակ գործունեություն է ծավալել՝ չունենալով շենքային պայմաններ, ֆինանսական միջոցներ: Համայնքի անդամ որոշ գործարարների տրամադրած դրամական միջոցները բավարարել են միայն առանձին միջոցառումներ, ազգային□եկեղեցական տոներ կազմակերպելուն: Չնայած նրան, որ համայնքն այդպես էլ չկարողացավ համախմբել հայ հասարակության բոլոր շերտերին ու խմբերին, սակայն իր հայանպաստ գործունեությամբ կարողացավ արթնացնել ազգային ինքնագիտակցությունը, բարձրացրեց օտար երկրում համայնքային կյանքի կազմակերպման հիմնախնդիրը, հայկական եկեղեցի ու դպրոց ունենալու անհրաժեշտությունը: 2004 թ. ամռանը համայնքի ղեկավարի ընտանիքը վերադառնում է հայրենիք և, զրկվելով իր նախաձեռնողից, «ՆԱԻՐԻ» հայկական համայնքը փաստորեն դադարեցնում է գործունեությունը:

Այսօր Տագանրոգի մոտ 10 հազարի հասնող հայ բնակչությունը չունի իր համայնքային կազմակերպությունը, էթնոպաշտպան մեխանիզմներից հիմնականները՝ եկեղեցի և դպրոց:

*ՍԵՎԱԿ ՀԱԿՈԲՅԱՆ*
*ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտ*

# ՍՓՅՈՒՌՔՈՒՄ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՄՈՌԱՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՁՈՒԼՄԱՆ ՎՏԱՆԳԻ ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆԸ ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆԻ ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը 1962 թվականից սկսած շրջել է հայկական ողջ սփյուռքով և իր ուղևորությունները հետագայում ամփոփել չորս ուղեգրական հատորներում՝ «Քարավանները դեռ քայլում են» (1964 թ.), «Խճանկար հոգու և քարտեզի գույներից□ (1976 թ.), □Գույներ նույն խճանկարից□ (1989 թ.), □Իմ կածանը աշխարհի ճանապարհներին» (2002 թ.): Ուղեգրություններում բանաստեղծուհին ամենայն մանրամասնությամբ անդրադառնում է սփյուռքահայ կյանքի բոլոր ոլորտներին: Դրանց հիմքում հիմնականում հայապահպանության հարցերն են, որ տարբեր տարիներին գրված գրքերում շարունակաբար շեշտվել են:

Կապուտիկյանի առաջին ուղևորությունը Սփյուռք 1962 թվականին էր, երբ Բեյրութում մասնակցեց Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակին նվիրված հանդիսություններին: Իր խոսքում բանաստեղծուհին շեշտում է, որ հարահոս ժամանակների մեջ շատ բաներ կորցրինք, կորցրինք Արևմտյան Հայաստանն ու արևմտահայությանը, բայց չկորցրինք մեր լեզուն, որն ամուր է ինչպես բյուրեղ: Հայոց գրերն էլ դիմացան բազում արհավիրքների ու տարածվեցին աշխարհով մեկ՝ դառնալով կամուրջ Սփյուռքի և Հայաստանի միջև: Սփյուռքի հայությունը այդ գրերի հրամայականով ամենուր առաջին հերթին հիմնել է իր դպրոցը, մշակույթի օջախն ու եկեղեցին:

Սփյուռքահայության՝ որպես ազգային հավաքականության գրավականը նաև վարժարաններն են: Դրանք այն գլխավոր օղակն են, որոնք երեխային կապում են մայրենի լեզվին: Իսկ ինչպիսի՞ն էր վիճակը Սփյուռքի վարժարաններում: Կապուտիկյանը լինում է այցելած վայրերի գրեթե բոլոր հայկական վարժարաններում և հետագայում ընթերցողին ներկայացնում առաջին հայացքից ստացած իր տպավորությունները: Բանաստեղծուհին նշում է, որ հայության ձուլումը սկսվում է հենց վարժարաններից և օրինակներով նշում է մայրենի լեզվի մոռացության բերած աղետները: Բանաստեղծուհին վկայում է, օրինակ, որ երբ ինքը զրուցում է Բոստոնի Ս. Հակոբ եկեղեցուն կից գործող շաբաթօրյա դպրոցի երեխաների հետ, նրանց պատմում Հայաստանի մասին, խոսքերը դեմ են առնում ինչ-որ պատնեշի: Ինչքան էլ ունկերը լարեն երեխաները, միևնույն է, չեն հասկանում բանաստեղծուհուն: Տարեց ուսուցչուհին շփոթված ցանկանում է արդարանալ, ասել, որ ինքը ամեն ինչ անում է հայեցի կրթելու համար, բանաստեղծուհու ուշադրությունը հրավիրում է պատին փակցված թերթին, ուր եղել են Շիրազի, Սևակի, Կապուտիկյանի տողերը, որոնք պատգամում էին «չմոռանալ մայր լեզուն»: Ուսուցչուհին սկսում է բարձրաձայն կարդալ Աբովյանի խոսքերը. «Ա՜խ, լեզուն, լեզուն, լեզուն որ չըլի, մարդ ինչի՞ նման կըլի: Մեկ ազգի

պահողը, իրար հետ միացնողը լեզուն ա ու հավատը...»: Բացի ուսուցչուհուց, սակայն, և ոչ մի աշակերտ չի կարողանում կարդալ այդ տողերը: Իսկ Հայ բարեգործական ընդհանուր միության Մոնրեալի ամենօրյա վարժարանում, երբ աշակերտներին Թումանյանի լուսանկարը նվիրելուց հետո Կապուտիկյանը հարցնում է, թե ո՞վ է Հովհաննես Թումանյանը, ոչ ոք չի իմանում: Բրազիլիայի Սան Պաուլո քաղաքի «Բարեն և Ռեժինա Բազարյան» վարժարանում մանկապարտեզային տարիքի ընդամենը 28 երեխա են, որ հյուրի ողջույնին ի պատասխան՝ ապշած նայում են՝ հայերեն ոչ մի բառը չհասկանալով: Կանադական հողում ստեղծված առաջին գաղութում՝ Սեն-Կատրին փոքր քաղաքում, 1912 թ. գաղթած քղեցիների կառուցած Կանադայի առաջին հայկական եկեղեցու սրահում հանդիպման ժամանակ 10-12 տարեկան Նուշեն սկսում է խոսքը՝ «Սիրելի Սիլվա Կապուտիկյան...», բայց կանգ է առնում և մեղավոր նայում հոր կողմը՝ հուսահատ անցնելով անգլերենի: Օրինակներն անվերջ են: Բանաստեղծուհին ամենուր այսպիսի տխուր փաստերի ականատեսն է լինում, և Սփյուռքում հայկականությունը կորցնելու տագնապը գնալով մեծանում է:

Մայրենի լեզվի համատարած մոռացման պատճառը հեղինակը համարում է այն, որ Եղեռնի հետևանքով ձևավորված գաղութները սկզբում չէին կարող հոգալ հայապահպանության օջախներ ստեղծելու, երեխաներին հայեցի դաստիարակելու խնդիրները, ընդհակառակը՝ցանկանում էին, որ զավակներն ավելի շուտ մերվեն օտարին, որպեսզի թոթափեն խեղճությունը: Իսկ երբ ինտեգրվել են իրենց ապրած երկրների կյանքին և ուշքի եկել, մտածել են արդեն դպրոց ունենալու մասին, ցավով նկատել են, որ ուշացել են:

Կապուտիկյանը նկատում է, որ կրթության, երեխաների դաստիարակության, ազգային գիտակցության սերմանման հարցերում ծնողներն են կողմնորոշում երեխաներին, և որքան ծնողների համար թանկ է հայրենիքը, այնքան կարևորում են մատաղ սերնդի հայեցի դաստիարակությունը: Սփյուռքում հաճախ հայերը չեն ցանկանում վտանգել իրենց զավակների կրթությունը. նրանց մեջ ամուր նստած է թերահավատությունը հայկական դպրոցի նկատմամբ: Ծնողներից ոչ բոլորն են պատրաստ «զոհողության» գնալ՝ երեխաներին հայկական վարժարան տանել, քանի որ այստեղ սովորելը էժան է և արդյունավետ: Բուլղարիայում մեկը պատմում է, որ ինքը եղել է հայկական վարժարանի հոգաբարձության անդամ և տնետուն ընկած ծնողներին համոզել է զավակներին հայկական վարժարան բերել. մի քանի հոգի են միայն հավաքվել: Հայրենի հյուրի համար ավելի մեծ ցավ չէր կարող լինել, քան տեսնելը, թե ինչպես հայ երեխաներին հայկական դպրոց տանելը զոհողության նման մի բան է դարձել, և դրա համար հարկ է ամեն կերպ տրամադրել ծնողներին: Ի՜նչ զոհողությունների ասես, որ չեն գնում հայկական վարժարանների ուսուցիչները, նրանք ամեն ինչ անում են, որպեսզի հայ երեխաները չպոկվեն իրենց արմատներից: Բայց խնդիրը գնալով դժվարանում էր:

Կապուտիկյանն իր գրքերում հիշեցնում է, որ անարդար է արտասահմանում ամենաանմխիթար վիճակում պահել հայ ուսուցչին: Կրթության ոլորտում պետք է ներգրավվեն ամենաորակյալ և շնորհաշատ մարդիկ, որպեսզի կարողանան հայ մանուկին փրկել ձուլումից, ուծացումից, մինչդեռ որակյալ ուսուցիչները շատ քիչ են,

իսկ ուսուցչությամբ հաց վաստակելը՝ համարյա անհնար:

Հայոց լեզուն չիմանալու աղետալի վիճակի նկարագրության հանդիպում ենք Կապուտիկյանի բոլոր ուղեգրություններում: Գաղութներում գերակշռող մասը չգիտի մայրենին, մանավանդ՝ երիտասարդությունը: Վերջիններիս հայերեն չիմանալու սովորական լինելը ամենածանր ազդեցությունն է թողել բանաստեղծուհու վրա: Իսկ ձուլման ամենամեծ վտանգը հայոց լեզուն չիմանալն էր: Կապուտիկյանը անվերջ օրինակներ է բերում, թե ինչպես երիտասարդները ամենաանհրաժեշտ բառերն անգամ չեն կարողանում գործածել: Ալեքսանդրիայի օդակայանում բանաստեղծուհին հանդիպում է մի հայ աղջկա, որը բացարձակապես հայերեն չի իմանում, նույնիսկ՝ բարևել: Երբ իմանում է, որ Կապուտիկյանը Հայաստանից է, որքա՛ն է ուզում հաղորդակցվել հետը, սակայն Կապուտիկյանը անգլերեն չգիտեր, իսկ նա՝ Օթրի Ժամկոչյանը, հայերեն: Ալեքսանյանների դուստրեր Սիրանն ու Նվարդը Նյու Յորքում են ապրում, ծնողները՝ Մոնրեալում: Սիրանը գործածում է հայերենի իր փոքրիկ բառապաշարը, որպեսզի խոսի հայրենի հյուրի հետ, իսկ Նվարդը, որ երգչուհի է և ավելի փոքր բառապաշար ունի, ասում է միայն ամենաանհրաժեշտ բառերը: Նա ուզում է Երևանի մասին նոր երգեր սովորել, բանաստեղծուհին թելադրում է, իսկ նա գրում է… անգլերեն տառերով: Որպես գրող՝ նա չէր կարող հանգիստ նայել, թե ինչպես ընտանեկան միջավայրում օտար լեզու չիմացող մեծերի, տատիկ-պապիկների խոսքերին երիտասարդները պատասխանում են օտար լեզվով կամ հատ ու կենտ հայերեն բառեր են միայն արտասանում: Փարիզում՝ հայկական ընտանիքում, Զատիկի սեղանը բաժանված է երկու մասի՝ հայերեն խոսող տարեցների և ֆրանսերեն խոսող երիտասարդների, որոնք իրենց լեզվով, մտածելակերպով, հետաքրքրություններով հեռու են մեծերից:

Երիտասարդներն ավելի արագ են կուլ գնում ուծացմանը: Կապուտիկյանը նշում է, որ հետզհետե բնաշխարհում ծնված սերնդի անհետացման հետ միասին կտրվում է այն շղթան, որ օտարության մեջ ծնված սերնդին կապում էր հայրենական հողի, մշակույթի ու լեզվի հետ: Փոխվել է Սփյուռքի սոցիալական կազմը: Հայերն իրենց ընդունակություններով հասել են նյութական բարեկեցության: Ասպարեզի վրա է արդեն նոր սերունդը, որը կրթվել, ուսում է ստացել այլ երկրում, հայրերի լեզվից չնչին բառեր է վերցրել, իսկ ավանդությունից՝ ոչինչ: «Ազատատենչ» երիտասարդները չափահաս դառնալուն պես առանձնանում են: Երիտասարդությունը Արևմուտքի ամենալուրջ հիմնախնդիրն է: Նա փոխվում է, տարբեր հայացքներ որդեգրում, այլ հովերով տարվում: Զանազան շարժումներ են ի հայտ գալիս, որոնցից յուրաքանչյուրում կան հայ երիտասարդներ, ովքեր, տարվելով դրանցով, կործանվում են, իսկ եթե չեն կործանվում ֆիզիկապես, ապա հեռանում են ծնողներից, լեզվից, ազգությունից, ազգային գիտակցությունից: Շատ ծնողներ մտահոգված են, որ երիտասարդները չհակվեն այս կամ այն օտարածին գաղափարների, սակայն ծնողների համար դժվար է երեխաներին հեռու պահել այդ ամենից: Կապուտիկյանը նշում է, որ զարգացած երկրներում մեծացող հայ երիտասարդին այլևս հնարավոր չէ հայությանը կապված պահել հայրենի հիշատակների ոգեկոչմամբ, ստիպել սիրել Հայաստանը՝ հայրենասիրությունից դրդված: Հայապահպանության համար անհրաժեշտ են ուրիշ ուղիներ, միջոց-

ներ:

Հայրենի հյուրի հետ հանդիպումներում երիտասարդներ գրեթե չկան, իսկ եթե հանկարծ գալիս են, ապա՝ ուշ, ծնողներին տուն տանելու համար: Երեկոների ավարտին ծերերը մոտենում են դողդոջուն ու արցունքոտ, բռնում բանաստեղծուհու ձեռքը, կանայք փարվում, համբուրում են, մի քանիսն էլ հավաստում, որ եղել են Հայաստանում: Այդ ծերերը հանդիպում են ամենուր, ու թեև հոգատարությամբ շրջապատված, սակայն խորթացած, մեկուսացած են իրենց օտարախոս երեխաներից: Գիտակցում են, որ իրենց տոհմում հայերենը մեկընդմիշտ հեռանալու է իրենցից հետո: Դժվար թե ավելի բնութագրական արտահայտություններ լինեն հայկական Սփյուռքին սպառնացող համատարած ուծացմանը, քան տալիս է Կապուտիկյանը:

Բուլղարիայում հայկական եկեղեցու մուտքի մոտ բուլղարերենով հայտարարություններ են: Նրանցից մեկն է միայն հայերեն, այն էլ գուժում է Երզնկայում ծնված 88-ամյա Զապել Փանոսյանի մահը: «Ո՛չ, միայն 88 տարեկան երզնկացի մայրիկը չէր, որ հանգչում էր հեռու այդ քաղաքում, այլ մի ուրիշ, մի շատ թանկագին բան էր մեռնում այստեղ, մեռնում դանդաղ, օր-օրի, ոչ կարճատև, այլ երկար ու երկար մի հիվանդությունից հետո»[1],- գրում է բանաստեղծուհին:

Հայ ավանդական ընտանիքը աստիճանաբար ենթարկվում է օտար ազդեցություններին: Գնալով բարակում է հայության երակը: Դպրոցն ավարտելուց հետո ամեն մեկը մի կողմ է գնում, մի երկիր, գնում է հաստատելու, գտնելու իրեն:

Իրողություն է, որ բացի Մերձավոր Արևելքի հայկական գաղութներից, մյուսներում 40-ից ցածր տարիք ունեցողները հայերեն գրեթե չեն կարդում: Ուղեգրությունների հեղինակը զգում ու գիտակցում է, որ ինչ էլ անի՝ Սփյուռքը չի կարող երիտասարդությանն ամբողջությամբ հայերեն խոսեցնել: Բայց կարող է հայերեն խոսեցնել նրանց հոգիները: Իսկ դա պետք է արվի թեկուզ օտար լեզվով: Կապուտիկյանը նորից ու նորից գալիս է այն համոզմանը, որ Սփյուռքում հայապահպանման համար պատասխանատու պետք է լինեն նաև Հայաստանի ղեկավարները, արևմտահայ լեզվի ճակատագիրը նրանց խնդիրն էլ է: Նա համարում է, որ պետք է Հայաստանում հրատարակված հայոց պատմության, մշակույթի, գիտության վերաբերյալ յուրաքանչյուր օտարալեզու աշխատություն, ամսագիր և այլն, ուղարկվի աշխարհի այն բոլոր երկրները, ուր հայ կա:

Բանաստեղծուհին նկատում է, որ Սփյուռքում ամենատխուրը մտավորականության վիճակն է, տխուր՝ ավելի շատ հոգեբանական առումով, քանի որ նրանք իրենց վրա են կրում ամբողջ ծանրությունը: Գրականությամբ զբաղվելով՝ սփյուռքյան գրողը ընտանիք չի կարող պահել, քանի որ գրածները չեն վաճառվում, օրեօր քչանում է հայերեն կարդացողների թիվը, ուստի գրելը դառնում է երկրորդ մասնագիտություն: Սփյուռքը բնորոշող երևույթներից է օտարագիր հայ գրողների առկայությունը, քանի որ հայերեն կարդացողները գնալով պակասում են, իսկ հայ գրողներն էլ հայերեն գրելու չափ հայերեն չգիտեն: Օտար հողում ծնված հայը եթե գրում է, ապա պետք է գրի այդ լեզվով, եթե երգում է, դարձյալ այդ լեզվով: «…Եվ մեր սքանչելի արևմտա-

[1] **Կապուտիկյան Սիլվա**, Գույներ նույն խճանկարից, Երևան, 1989, էջ 112-113:

հայերենը՝ գոնե արևմտյան սփյուռքում, դառնում է ցպահանջ մի նամակ, որը, պահանջատեր չունենալով, մնում է փոստատան դարակներում»[2],- գրում է բանաստեղծուհին:

Սրահներից մեկում մեր բոլոր գրողների գրքերը կան, բայց տարիներով իրար գլխի են դարսված, ծածկված են ժամանակի փոշով: Հայրենի հյուրին են նվիրում այս գրադարանից շատ գրքեր, որ գոնե սպառվեն դրանք: Մշակույթի մարդիկ բոլորն էլ մտահոգված են, թե ի՞նչ է լինելու իրենց ստեղծածը իրենցից հետո: Բրազիլիայում բանաստեղծուհուն է մոտենում Հարություն Պետոյանը՝ կնոջ և 13-14-ամյա դստեր հետ: Աղջիկը գրում է բանաստեղծություններ՝ պորտուգալերեն: Կապուտիկյանի հարցին, թե ե՞րբ են եկել Բեյրութից, պատասխանում են՝ 6-7 տարի առաջ: Ավա՜ղ, վեց տարի, և արդեն պորտուգալերեն է գրում բեյրութահայ աղջնակը: Սա արդեն անկանխելիության հասնող ձուլում է:

Տարբեր սրահները, բարեգործական, հասարակական, հայրենակցական միությունները մեծ ջանքերով, զոհողություններով հիմնում են դպրոցներ, մշակույթի օջախներ, հրատարակում թերթ-ամսագրեր, որպեսզի ոտքերի տակ հայրենի հող, գլխներին՝ հովանավորող սեփական իշխանություն չունենալու պայմաններում հայապահպանությունը չթուլանա: Ստեղծվում են ամեն կարգի ակումբներ ու սրահներ, որպեսզի երեխան իր արմատներից չհեռանա, համոզված, որ եթե վերջինս այդ սրահներին վստահի, ապա նա ապահովված կլինի՝ մանկապարտեզից մինչև ծերություն: Դրանք միայն սրահ չեն, միայն նյութական շենք-հաստատություն չեն, դրանք նաև հոգի են: Ուղեգրությունների հեղինակը ցույց է տալիս, որ անգամ այս պայմաններում հայությունը գնալով նոսրանում է: Իսկ նոսրացման պատճառները շատ են:

Լեզվի մոռացմանը խառնվում է արտագաղթի պատկերը: Այստեղ ևս տագնապելու առիթը շատ մեծ է, քանի որ չկա մեկը, որ Արևմտյան Հայաստանից գաղթելուց ի վեր նույն երկրում մնա: Կանադայի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն կից շաբաթօրյա վարժարանում 12-ամյա փոքրիկ Սարգիսն արտասանում է Կապուտիկյանի «Հայոց աշխարհ» բանաստեղծության տողերը.

Հայո՜ց աշխարհ, հայո՜ց երկիր, հայո՜ց հող,
Լայն աշխարհում քո գրկի մե՜ջ ապրեմ թող...
... Ո՜ւր էլ գնամ, ինչ աշխարհ էլ թափառեմ,
Նորեն ետ գամ՝ քո տանիքո՜ւմ ծվարեմ...:

Սարգսի արտասանությանը զուգահեռ բանաստեղծուհին հիշում է Մոնրեալի օդակայանում դիմավորողների բազմության մեջ վաղեմի ծանոթներին՝ Արշավիր Կոնճյանին, Էլդային, Սուրենին, Բեյրութից՝ Վազգեն Այգունուն, Կահիրեից՝ Մոսիո Օնիկյին… ովքեր մոտենում էին, սեղմում բանաստեղծուհու ձեռքն ու հարցնում.

- Ջիս չե՞ք հիշեր, ես Կահիրեեն եմ... Կամ
- Բեյրութ հանդիպած ենք, չե՞ք հիշեր...
- Մոռցա՞ծ եք, Հալեպ, Հայկազյան վարժարան...

[2] Նույն տեղում, էջ 9:

- Մենք ալ հանդիպած ենք, Փարիզի «Լյութեսիա» պանդոկին մեջ...»: Նրանք ցրվել էին ամբողջ Կանադայում ու Ամերիկայում: Ցավն ու խռովքը խառնվում են իրար: Ուրեմն, փոխանակ մոտենալու հայրենի հողին, ավելի են հեռացել, հատել են օվկիանոսը: Չկա հայրենիքը, որ փոխարինի մայրական գրկին, ուրեմն՝ հայի համար միևնույն է, թե ուր կապրի: Եվ ահա, սրանց է միանում Սարգսի մանկական անկեղծ խոստումը: Բանաստեղծուհին համոզված է, որ նա չի գա, չի ծվարի հայրենի կտուրի տակ, քանի որ նրա ծնողները նույնպես դա էին երգում, բայց աշխարհի հեռավոր ճանապարհները օտարեցին հայրենի տանիքից:

Յուրաքանչյուր հաջորդ ուղեգրությունում մեր առջև գծվում են կերպարներ, որոնց հանդիպել ենք նախորդ գրքերում, և դրանք հիմնականում այն մարդիկ էին, ովքեր նախորդ հանդիպումներում խնդրում էին օգնել Հայաստան վերադառնալուն, բայց հետագայում, նյութի հետևից ընկած, հայտնվել են այլ ափերում: Տորոնտոյում հանդիպում ենք ալեքսանդրահայ Բենիամին Մամուրյանին և հիշում 1963 թվականին Ալեքսանդրիայում նրա անկեղծ խանդավառությունը Հայաստան ներգաղթելու կապակցությամբ, մտահոգությունը, որ երեխաները վարժվեն Հայաստանին: Երեխաների բախտով այդքան մտահոգ Մամուրյանները, սակայն, չեկան Հայաստան, իսկ երեխաներն էլ հայտնվեցին Տորոնտոյում: Փարիզում շաբաթօրյա վարժարանի հիմնադիրներից Կարպիս Ջրբաշյանին գիտենք դեռ «Քարավանները» գրքից, երբ 63 թվականին իր փոքրիկ Տիգրանին առած՝ եկավ փարիզյան հյուրանոց և հպարտ ներկայացրեց որդու հայերեն արտասանությունը:

Կահիրեաբնակ Կարո Ներիտյանը խորհուրդ է հարցնում՝ գնա՞լ Կանադա, քանի որ ժամանակին չգնալու դեպքում իր իրավունքները կկորցնի: Նա ունևոր է, բայց Հայաստան գալով կարո՞ղ է ունենալ այն ամենը, ինչ որ հիմա: Կապուտիկյանը կարծես մեղադրում է նրան, բայց արդյո՞ք մեղավոր է նա, որ նյութականը ավելի շատ է ձգում, չէ՞ որ կարևոր է նաև սեփական ունեցվածքը, որը քչերը կզոհեն հանուն հայրենիքի: Մեղադրե՞լ: Ինչպե՞ս: Արդարացնե՞լ: Ինչպե՞ս: Բեյրութում ոսկերչական խանութի տեր Սարգիսը ցանկանում է, որ Կանադա մեկնելուց առաջ գոնե հեռախոսով եղբոր հետ խոսի Կապուտիկյանը. «Մեկնելեն առաջ թող հայրենիքեն ձայն մը լսե»: Ի՞նչ մաղթել նրան, «Քո մայր լեզուն չմոռանա՞ս»: Միևնույն է, վաղ թե ուշ կմոռանա նա էլ, բոլոր մեկնողներն էլ: Կապուտիկյանը կարծում է, որ ավելորդ է մեկնողներին համոզել Հայաստան գալ: Ինչպես արվեստին նվիրումն է տրվում ի վերուստ, այնպես էլ հայրենիք գնալը պետք է ներսից բխի:

«Մեր հույսը Հայաստանն է, այս երկիրներուն մեջ վաղ թե ուշ պիտի կորսվինք»: «Պիտի կորսվինք հոս», «Միայն թե հարկ է օր առաջ տանի՛լ մեզ այստեղեն»,- շատ էր լսում բանաստեղծուհին այս խոսքերը Սփյուռքում: Բայց շուտով այդ ձայները լռում են, հաջորդ ուղևորություններում չկան այդ խնդրանքները: Շատերին ենք ծանոթանում, որ Հայաստանից են գնացել: Նրանք հիմնականում գոհ են իրենց կյանքից, թեև աչքերում արցունքներ կան, բայց խոսքում չի նկատվում: Մեկնումի հնարավորությունը թուլացնում է մնացողի դիմադրությունը, գայթակղությանը դիմադրելու կարողությունը սպառվում է, մեկնում են... Այլևս մարդիկ ջանքեր չեն թափում, մտահոգված չեն մնալու այն երկրում, որտեղ ապրում են: Ահա այսպես է, որ հայահավաքի

գործը չի շարունակվում: Հավաքույթներում հրաժեշտից հետո ամեն մեկը գնում է իր տուն, մեկը՝ Սեն-Կատրին, մյուսը՝ Տորոնտո, երրորդը՝ Նիագարա-Ֆոլս, Կոլդ, Նյու Յորք… Եվ միայն Կապուտիկյանը՝ Երևան: Ահա սա է ուծացումը, ասիմիլյացիան, սպիտակ ջարդը, որ սպառնում է Սփյուռքին: Գրողը զգում է, որ ազգապահպանման հիմքն ամուր չի դրված, քանի որ դրանից առաջ առկա է անձնապահպանման խնդիրը: Արտազաղթը ջլատում է հայության ուժը, թուլացնում է դրա դեմ պայքարողի ձեռքերը: Հոգնել են բոլորը, և, թվում է՝ զենքերը այլևս վայր են դնում:

Բեռլինում եղած օրերին բանաստեղծուհին ստանում է մի նամակ՝ գրված Կիպրոսում հանդիպած Մելինե Պապովյանի կողմից: Այս անգամ նա հայտնվել էր Բեռլինում և իր արցունքաշաղ տողերն էր գրում այդ օտարոտի երկրից: Իսկ ո՞ւր կհանդիպեն հաջորդ անգամ... Սա մեկի ճակատագիր չէ, սա հայի ճակատագիր է, մի ամբողջ ազգի: Կապուտիկյանի ազգական Լևոնը ապրում է Փարիզում, երկու տարին մեկ գալիս է և մի քանի օր ապրում Երևանում: Նա ուզում է փոխադրվել Հայաստան, բայց երեխաները հետ են պահում. «Հայրիկ, դուն թողած-եկած ես քո ծննդավայրը, ատոր համար կտառապիս, ինչո՞ւ կուզես, որ մենք ալ թողնենք մեր ծննդավայրը, Հայաստան երթանք ու նորեն քեզի պես տառապինք»[3]: Եվ այսպես, ուծացման օրօրի զորացող ալիքներում փշրվում են մարդիկ, նրանց հոգիները, փշրվում են աննկատորեն՝ իրենք էլ չզգալով իրենց փշրվելը: Կյանքի ալիքները նրանց նետել են բոլորովին ուրիշ ափեր…

Ուծացման վտանգի դեմն առնելու նպատակադրումը Կապուտիկյանի ուղեգրությունների առանցքն է:

«Սփյուռքը գտնվում է ազգային ինքնությունը, մշակույթը, լեզուն կորցնելու, ուծացման ամենակուլ երախին կեր դառնալու վտանգի տակ»[4],- ահազանգում է բանաստեղծուհին: Առաջին սփյուռքապատումը՝ «Քարավանները», ամբողջությամբ ողողված էր «Խոսք իմ որդուն» բանաստեղծության շնչով, որը կարծես ազգահավաքության կոչ էր: Մյուս գրքերում պատգամին փոխարինելու է գալիս հայապահպանման աղոթքը: Ուղեգրությունների հերոսները թեկուզ հայերեն չգիտեն, բայց հաճախում են եկեղեցի, պատարագներին ու ժամերգություններին, և սա արդեն վկայում է, որ թեև լեզուն կորսվում է, բայց հավատին ամուր են կառչած: Հայ Եկեղեցին, որը ամբողջ հայության գլխավոր ներկայացուցիչն է ողջ աշխարհում, ամուր է իր դիրքում: Տորոնտոյի Սուրբ Երրորդություն եկեղեցու խորանի ճակատին կարդում ենք «Տեր, կեցո դու զհայս» բառերը: Դա ոչ միայն բանաստեղծի խոսքերի վերաարձանագրում է եկեղեցու խորանին, այլ նաև Տիրոջն ուղղված աղոթք, որ Աստված պահպանի, չթողնի, որ մեր մանուկները աշխարհի այս խառնիխուռն ճամփաներում մոլորվեն հայության ճանապարհից, հայրենասիրությունն ու հայոց լեզուն չխեղդվեն օտար լեզուների խառնարանում: Աստված օգնի, որ հացի ճամփաները ուր էլ տանելու լինեն նրանց առավոտյան, երեկոյան նրանք դարձյալ վերադառնան հայկական եկեղեցի:

Սփյուռքն ամեն անգամ այլ տպավորություն է թողնում բանաստեղծուհու վրա իր

[3] **Կապուտիկյան Սիլվա,** Խճանկար հոգու և քարտեզի գույներից, Եր., Սովետ. գրող, 1976, էջ 455:

[4] «Գույներ նույն խճանկարից», էջ 260:

հայրենաբաղձ երազներով, անհետացող ծերունիներով ու անհետացող հայերենով, ուծացման երախն ընկած երիտասարդներով: Հուզմունքն ու ցավը փոխանցվում են ընթերցողին: Կապուտիկյանն ինքը կարծես կրում է հանդիպածների ճակատագրերը, և միջնորդությամբ մենք տեսնում ենք այդ մարդկանց ներաշխարհը, տարաբնույթ զգացումներ ունենում: Որքան ընթերցող, այնքան ապրում ու զգացողություն, այնքան հույզեր, հույսեր: Մեկը հայությանը տրված գնահատականը խղճահարություն կհամարի, մյուսը՝ սեր, երրորդը՝ հավատ վաղվա նկատմամբ, բայց երբեք՝ ատելություն կամ հիասթափություն:

Եթե 1962 թ. Բեյրութի Մեսրոպյան փառատոնում և «Քարավաններում» Կապուտիկյանը հույս էր հայտնում, թե կգա այն օրը, երբ հայ ժողովուրդը կհավաքվի Հայաստանում, ապա մյուս տարիների ճամփորդություններից հետո այս տողերը բանաստեղծական զեղում էին թվում միայն... Ուղեգրություններն էլ հետզհետե ավելի մտահոգ են դառնում: Նա սկսում է համոզվել, որ որքան էլ ցավալի, միևնույն է՝ Սփյուռքը մնայուն երևույթ է հայի համար: Ու եթե Սփյուռքը մնայուն է, եթե հնարավոր չէ հայությանը հավաքել Հայաստանում, չպետք է հանձնվել, պետք է ազգովին համախմբվել և թույլ չտալ նրա ձուլումը, ողջ Սփյուռքում հայապահպանություն իրականացնել, ամեն վայրկյան հայությամբ, Հայաստանի շնչով պահել նրանց: Սփյուռքը կարիք ունի Հայաստանից հայապահպանման ազդակների, մշակույթի ու գիտության մարդկանց, երիտասարդներին ազգային գիտակցության բերելու կոչերի, և կարևոր է, որ նման մարդիկ հաճախ այցելեն Սփյուռք: Եվ սա է նաև ուղեգրությունների առանցքը: Ընդ որում, դրանք շարադրված են հրապարակախոսական շնչով, և դա այս գրքերի գեղարվեստական արժանիքներից է:

Հետաքրքիր հնարանք է նաև, որ գրողը շատ գեղեցիկ է նկարագրում, օրինակ, Եդվարդը, նրա առօրյան, զուգահեռ՝ որևէ գաղթօջախի: Օտար սրահների կողքին ներկայացնում է Թալինը՝ իր գեղջկական գրավիչ պատկերներով՝ գյուղական պարզ առօրյան հակադրելով ամերիկյան շքեղություններին: Սիլվա Կապուտիկյանի ուղեգրությունները գրական-հրապարակախոսական եզրահանգում ունեն. միայն Հայաստանին կառչելը Սփյուռքի հայությանը կփրկի օտարացումից և ուծացումից:

*ՎԱՉԵ ՔԱԼԱՇՅԱՆ*

# ԿԱ՞ ԱՐԴՅՈՔ ԱՅԼ ՀՆԱՐ՝ ՔԱՆ ՏՐՎԱԾԸ

*Մանավանդ վարմն ու որոգայթները*
*զաղտնի են, ծածուկ,*
*Իսկ հնարաղիրն աննկատելի.*
*Ներկան անգո է, անցյալն անորոշ, գալիքն*
*անստույգ:*

Գրիգոր Նարեկացի
«Մատյան Ողբերգության» (Բան ԺԵ, գ)

Բնագիտությանը հայտնի է խնդիր, որի լուծումներից մեկն էլ չի բացառում թիթեռի թևի շարժման հետևանքով հողմապտույտի առաջացումը: Այդ երևույթը հենց այդպես էլ կոչել են՝ «Թիթեռի էֆեկտ»[1]: Դրա էությունը կայանում է նրանում, որ խիստ անհավասարակշիռ ոչ գծային միջավայրում կարող են առաջանալ կայուն ինքնակազմակերպված համակարգեր, այլ խոսքով՝ այդպիսի դեպքերում չնչին ազդեցությունն իսկ ուժգնանում է միջավայրի կողմից, և քաոսից ծնունդ է առնում բոլորովին նոր կարգ[2]: Առաջնորդվելով նմանության սկզբունքով՝ հնարավորինս խուսափելով մեխանիկական զուգահեռումներից, կարելի է ենթադրել, որ այսօրվա Աշխարհը բնութագրող իրավիճակում առկա են վերը նկարագրված երևույթը բնորոշող բոլոր նախապայմանները: Իրավամբ, ինֆորմացիայի խտության մեծացման հետ մեկտեղ ժամանակի ահագնացող արագացումը հանգեցրել է անընդհատ «փոքրացող» Աշխարհի ներկա ընթացքին և շատ շուտով յուրաքանչյուր անհատի արարքը կարող է ուժգնանալ հանրության կողմից ու նոր կարգի ծննդյան պատճառ հանդիսանալ: Դա ինքնին նշանակում է, որ այլևս անհատ մարդու վարքագիծը և ընկալումները դադարում են միայն իրենը լինելուց, քանի որ յուրաքանչյուրի մոտեցումներից էապես կախված է բոլորի ապագան ու թե ինչպիսի Աշխարհի նոր կայուն վիճակ է հաստատվելու հեռանկարում: Հետևաբար անհատի արտաքին կյանքը չի կարող ինքնուրույն զարգանալ՝ չառնչվելով նրա ներքին հոգևոր ընթացքներին, ինչը կատարվել ու կատարվում է մեր ժամանակներում, որի հետևանքով այսօր էլ մարդկությունը փորձում է իր առջև ծառացած խնդիրները կա՛մ սառեցնել՝ դրանց լուծումը փոխանցելով հաջորդ սերունդներին, կա՛մ էլ հատվածական մոտեցումներով առաջնորդվելով՝ էլ ավելի է խորացնում առկա ճգնաժամը՝ այն վերածելով համապարփակ ճգնաժամի:

Ժամանակի մեջ, երբ մարդկության արտաքին կյանքի և ներքին հոգևոր ընթացքի անհամապատասխանությունը հասնում է կրիտիկական եզրագծին և սպառնում ողջ տիեզերքի գոյությանը, տեղի է ունենում վերաարարման ակտ. մինչ օրս, իրականաց-

[1] **С. П. Капица**, **С. П. Курдюмов**, **Г. Г. Малинецкий**, "Синергетика и прогнозы будущего, Москва, 2001 г.,էջ 24.

[2] **Г. Николис**, **И. Пригожин,** Познание Сложного, Москва, 1990 г.,с. 71.

վել են երեք այդպիսի ակտ, որոնք խորհրդանշվում են համապատասխանաբար Ջրհեղեղով, Հայկի և Բելի պատերազմով և Քրիստոսի մարդեղացմամբ: Դրա լավագույն ապացույցը կայանում է նրանում, որ միայն նշված իրադարձություններից հետո է մարդկությունը սահմանել ժամանակի հաշվարկման նոր սանդղակներ՝ յուրաքանչյուր դեպքում որպես զրոյական սկզբնակետ համարելով իրադարձության ծննդյան պահը (համապատասխանաբար՝ Ջրհեղեղից առաջ և հետո, Հայկյան ժամանակացույց և՛ Հիսուսի ծնունդից առաջ, և՛ հետո):

Բնագիտության մեջ վերաարարման սկզբունքը հայտնի է ռեգեներացիա անվանումով, համաձայն որի, սերված ազդանշանը (ինֆորմացիան), օբյեկտիվորեն, ժամանակի ընթացքում աղմուկների պատճառով աղճատվում է, և նախնական ինֆորմացիայի հարատևության ապահովման համար անհրաժեշտ է լինում ժամանակ առ ժամանակ վերարտադրել (ռեգեներացնել) ազդանշանը[3]: Այստեղից կարելի է եզրակացնել, որ Տիեզերքի ինքնապահպանման գերխնդիրը հանգում է նախնական ինֆորմացիայի պահպանման համընդհանուր սկզբունքին:

Միևնույն ժամանակ, ռեգեներացիայի շնորհիվ ազդանշանը ընդունող օբյեկտում կուտակված սեփական ինֆորմացիան սկսում է նյութականանալ և երևութական հարթությունում հանդես է գալիս որակապես նոր չափ-ձևերի բազմազանությամբ ու դրանց անընդհատ տրոհման ընթացքով: Այսպիսով, տիեզերքի ծավալումը բոլոր մակարդակներում և այդ մակարդակների մասը կազմող ենթամակարդակներում ընթանում է միաժամանակ երկու ուղղությամբ՝ նյութի հարթության մեջ անընդհատ տրոհման և դիֆերենցման, իսկ Ոգու (ինֆորմացիայի) հարթությունում՝ կուտակման և միասնականության աստիճանի աճի: Ակներևաբար, վերաարարումով պայմանավորված և համամարդկային կարգը բնութագրող ինֆորմացիայի (Արարչական կամքի) ու մարդկության ներքին ինֆորմացիոն կուտակումը բնորոշող ազատ կամքի միջև փոխհարաբերությունները միջնորդավորված են տիեզերական էությունը մարդկային էակի կողմից ընկալելու էներգետիկ ունակությամբ[4], գրված էլ է, թե. «Աստված ստեղծեց մարդուն Իր պատկերով ու նմանությամբ«, այսինքն մարդն իբրև կատեգորիա առկա է միայն մետաֆիզիկական (բնազանցական) հարթության մեջ, իբրև Աստծո Մտքում հղացած ինֆորմացիա. «Ի սկզբանե էր Բանը, և Բանը Աստծո մոտ էր, և Բանը մարմին եղավ ու բնակվեց մեր մեջ» (Հով. Ա 1, 14):

Ֆիզիկական հարթությունում բնազանցական Մարդը (իբրև հավաքական մարդկության Արարչական հղացում) պրոյեկտվում է Ռասաների տեսքով (Սև, Կարմիր, Դեղին, Սպիտակ), վերջիններս իրենց հերթին տրոհվում են Ազգերի, որոնք իրենց ներսում բաղդատվում են Ցեղային միությունների, սրանք էլ Տոհմերի, ապա ընտանիքների՝ ընդհուպ մինչև մարդ անհատը: Տրոհման այս գործընթացը արտացոլում է տիեզերակառույցի տարածաժամանակային ծավալման համընդհանուր զարգացումը՝ յուրաքանչյուր դեպքում անդրադարձնելով Արարչագործության հերթական փուլը, Հավիտենական Կյանքի հաջորդական երևակումը, որն էլ իրենից ներկայացնում է Մարդկության Պատմության ներքին տրամաբանությունը հանդիսացող պատմականությունը՝ բաշխված լինելով տարածության և ժամանակի մեջ ըստ համապատաս-

---

[3] **Д. С. Чернавский**, Синергетика и информация, Москва, 2004 г., с. 22.

[4] **Г. Хакен**, Информация и самоорганизация, Москва, 2005 г., с. 35.

խան արտաքին իրավիճակների:

*Հարստանում ես մեծապես տալով, ոչ թե առնելով,*
*Ոչ թե կիտելով, այլ ցրելով են գանձերդ բազմանում,*
*Ունեցվածքներդ բազմապատկվում են*
*Սփռելով, ոչ թե խնայողությամբ,*
*Ոչ թե դիզելով, ամբարվելով են պաշարներդ աճում,*
*Այլ տարածվելով…*

**(Գր. Նարեկացի, Մատյան Ողբերգության (Բան ԼԱ, ա))**

Այսպիսով, տրոհման յուրաքանչյուր մակարդակում, ներքին ինֆորմացիայի կուտակման որոշակի աստիճանում, տեղի է ունենում հաջորդ մակարդակի գեներացումը (ինֆորմացիան վերածվում է նյութի, նյութը՝ ինֆորմացիայի) և այս նոր մակարդակը անբացահայտ կերպով իր մեջ կրում է նախորդը իբրև ներուժ ու սակրալ (սրբազան) սկզբունք, միայն նախասկիզբը հանդիսացող Կենտրոնում է, որ ինֆորմացիան և նյութը նույնական են, կամ էլ, որ նույնն է, դրանց փոխակերպման համախականությունը ձգտում է անսահմանության: «Եվ երկնքում են Հայրը և Բանը և Սուրբ Հոգին, և այս երեքը Մի են: Եվ այս երեքն են, որ երկրում վկայում են. Հոգին և Ջուրը և Արյունը, և այս երեքը միաբան են» (Ա. Հովհ. Ե 6-8): Ինֆորմացիան, էներգետիկ գործընթացների միջնորդությամբ, իրացվում է որպես ըստ որոշակի չափի ձևավորված ու կազմակերպված մարմին և, հակառակը, յուրաքանչյուր մարմնի իր ներքին էներգատարությանը համապատասխան տրված են ինֆորմացիոն պարամետրեր: Եվ քանի որ Տիեզերքի ամբողջականությունը խարսխված է Ինֆորմացիա-Էներգիա-Նյութ եռամիասնության վրա, ապա դրանցից որևէ երկուսի առկայությունն ինքնաբերաբար հանգեցնում է երրորդի դրսևորմանը, օրինակ՝ էներգիա-խոսքի և ինֆորմացիա-պատկերի առկայության դեպքում, երրորդը՝ նյութի երևակումը տեղի է ունենում ավտոմատ կերպով. «Այն, որ Վարն է, նման է նրան, որ Վերն է: Եվ այն, որ Վերն է, նման է նրան, որ Վարն է» (Հերմես Տրիսմագիստ), հենց այս մեխանիզմի վրա են հենված բոլոր ժամանակների մոգություններն ու կախարդանքները:

*Ահա կատարյալ մի երրորդություն,*
*Անբաժանելի, անմասնատելի երեք դեմքերով,*
*Անսկզբնավոր ու անժամանակ,*
*Համակ բարեգործ, համակ կենսատու ու խաղաղարար,*
*Հաստիչ բովանդակ արարածների,*
*Անբաժանությամբ ու մի բնությամբ միշտ փառաբանված:*

**(Գր.Նարեկացի, Մատյան Ողբերգության (Բան ԽԴ, ա))**

Այսինքն՝ տարածական-ֆիզիկական մարմինը ինֆորմացիոն-ժամանակային մարմնի պրոյեկցիան է, հետևաբար տիեզերական նվիրապետության (հիերարխիայի) յուրաքանչյուր մակարդակ և այդ մակարդակի ենթամակարդակ, ամբողջի մասը լինելով, միևնույն ժամանակ իր մեջ կրում է ամբողջը, իբրև ներքին պոտենցիա՝ ՓՈՔՐԸ ՄԵԾԻ ՄԵՋ Է, ՄԵԾԸ ՓՈՔՐԻ:

Ուրեմն, մարդ անհատը միաժամանակ ապրում է Տիեզերակառույցի բոլոր մա-

կարդակներում և հանդիսանում է տարաբնույթ մարմինների համադրությունից կազմված բարդ համակարգ: Լինելով ամբողջի մասնակի արտացոլանքը՝ մարդ համակարգի հիմքում նույնպես ընկած է ինֆորմացիա-էներգիա-նյութ (գիտակցություն-հոգի-մարմին) եռամիասնական բազիսը, որի ներքին ներդաշնակությունը օժտում է վերջինիս խոսքի շնորհով, կամ, որ նույնն է՝ Ոգեղենությամբ (ի տարբերություն կենդանական աշխարհի մյուս տեսակների, որոնք ունենալով եռամիասնական կառույց, զուրկ են անհատականությունը զատող ներքին ներդաշնակությունից՝ ոգու հավաստիքը հանդիսացող խոսք կառուցելու և արտաբերելու ունակությունից):

*Մարդուս կազմվածքը բաղադրեցիր տարրերից ներհակ,*
*Որոնցից մեկը թանձր ու ծանր է, մյուսը ՝ թեթև,*
*Մեկը սառնաշունչ, մյուսը հրային,*
*Որպեսզի մենք այդ հակամարտերի*
*Դիմադրությունն իրար նկատմամբ*
*Անաչառ կերպով հավասար պահած*
*Ներդաշնակելով արդար համարվենք...*

**(Գր. Նարեկացի, Մատյան Ողբերգության (Բան ՁԶ, ա))**

Մարդ անհատի ներքին Երրորդության աստիճանական ինքնաիրացումով ծնվում և ծավալվում է մարդու ժամանակային մարմինը՝ բաշխվելով հինգաչափ բոլորապտույտով, համապատասխանաբար՝ Սկիզբ-Անցյալ-Ներկա-Ապագա-Վերջ: Եվ քանի որ տիեզերակառույցի երկբևեռ տրոհման ընթացքն ունի դիսկրետ (ընդհատ) բնույթ, ապա զարգացման յուրաքանչյուր փուլի Վերջը հանդիսանում է հաջորդի՝ սկզբնավորման անիմանալի համատեղումը: Հետևաբար Մահը և Ծնունդը փարվելով իմաստավորում են Հավիտենության խորհուրդը[5], ուրեմն Մահը Կյանքի որոշակի արտահայտությունն է սոսկ, ահա թե ինչու Էպոսում Դավիթը անիծում է Փոքր Միհրին. «Անմահ ըլնես, Անժառանգ», քանի որ Մահվան և Ծնունդի տարանջատումը նշանակում է Հավիտենության խզում, ինչը խորհրդանշված է Նեմրութ Լեռան ստորոտում Միհրի Ագռավու Քար մտնելով:

*Իսկ երկրորդը ՝ հողն անմշակ սենյակն իր որովայնի,*
*Բարգավաճեցրեց յոթ գավակներով,*
*Թիվ անբավության, որ Աստվածային*
*Հավիտենություն է նշանակում,*
*Սահմանը նրա անիմանալի հարակայություն*
*Եվ ավազանի նորածին որդոց հորդությունն անհատ:*
*Թիվն այս պանծալի, որ չունի իրեն զույգ ու հավասար,*
*Ոչ վերջ, ոչ վախճան, կուսություն է մի ընտրությամբ ուրույն,*
*Միշտ նվիրական, հավիտենություն անճառ, անմեկին,*
*Խորհուրդը խորհին, մեր մտքին անհաս:*

**(Գր. Նարեկացի, Մատյան Ողբերգության (Բան ԼԱ, ա))**

Ինչպես և նյութական՝ ֆիզիկական մարմինը, անհատ մարդու ժամանակային

---

[5] **Վ. Քալաշյան**, **Դ. Հարությունյան**, Հարէր, Երևան, 1999 թ., էջ 19:

մարմինը նույնպես օժտված է իներտությամբ: Դրա բովանդակությունը պայմանավորված է նրանով, որ կամայական ժամանակային հատվածում քաշխված արտաքին իրավիճակները հակում ունեն կրկնվելու և պահպանելու իրենց անփոփոխ ընթացքը մնացած բոլոր ժամանակային պահերին, հենց այս հակվածությունն է, որ կոչում են անհատական սովորություններ՝ բնավորություն: Հետևաբար, անհատին տրված ազատ կամքը ոչ այլ ինչ է, քան սեփական ժամանակային մարմնի իներտությունը խափանելու և մոբիլությունը (շարժունությունը) ապահովելու ունակություն: Այսինքն, մարդ անհատը գնում է դեպի Աստված թե Մամոնա, Լույսը թե Խավարը, կորոշվի նրան տրված ազատ կամքի ուղղվածությունից, մարդու կողմից Աշխարհին ընկալելու կերպից և ներքին ներդաշնակման աստիճանից:

Արդ, ներդաշնակության սեմանտիկան հանգում է մասի վարք ընթացքի և ամբողջի նպատակ-շահի համապատասխանությանը: Այլ խոսքով, մասի ներքին ինֆորմացիայի կուտակումը բնորոշող ազատ կամքը, որ նաև բնութագրում է տիեզերական նվիրապետության տվյալ մակարդակում քաոսի աստիճանը, համատեղվում է իր հակոտնյայի՝ կարգավորվածությունը (դետերմինացվածությունը) արտահայտող և ամբողջի ինֆորմացիոն դաշտում գրանցված ծրագրի հետ: Հակոտնյաների այս համատեղությունը պայմանականորեն անվանում են անորոշության առընչություն[6]: Պատահականության և օրինաչափության այսօրինակ մեկտեղումը ճշգրտորեն համապատասխանում է տիեզերակառույցի ծավալման դիսկրետ ընթացքին և հանդիսանում է վերաարարման (ռեգեներացիայի) իրագործման ներքին մեխանիզմը: Անորոշության առնչության մասնակի դրսևորումներից է հանդիսանում այն հանգամանքը, որ եթե հայտնի է հնարավոր իրադարձություններից որևէ կոնկրետ մեկի սպասումը, ապա անորոշ է դրա կայացման պահը: Եվ ընդհակառակը, երբ հայտնի է կայացման կոնկրետ պահը, ապա անորոշ է հնարավոր իրադարձություններից սպասվողի կոնկրետությունը:

Այսպիսով, Մոլորակի կյանքն ու ճակատագիրը կախված է այն բանից, թե ինչքանով մարդը կունենա ամբողջի մասը լինելու ընկալում և միաժամանակ ամբողջը կրելու իրական ապրում, և թե համապատասխանաբար ինչքանով տնօրինելու իրավունքը կվերածի տեր կանգնելու առաքելության:

*Արդ այս բոլորից մատնված գերուս*
*Լոկ Դու կարող ես ազատել, փրկել*
*Մահվան ընծայված հոգին իմ կյանքին վերադարձնելով,*
*Քանզի, Տեր Հիսուս, դու ես ճանաչվում միայն բարերար,*
*Անսահման փառքով օրհներգված Քո Հոր ու Սուրբ Հոգուդ հետ՝*
*Հավիտյաններից հավիտյանս, ամեն:*

**(Գր. Նարեկացի, Մատյան ողբերգության (Բան ԺԵ, գ))**

## Հացն ու Գինին, Տեր Կենդանին

[6] **Г. Николис**, **И. Пригожин**, Познание Сложного, Москва, 1990 г., с. 88.

Ինչպես արդեն նշվել էր, մարդ էակին տրված ազատ կամքը բնութագրում է նաև տիեզերական նվիրապետության տվյալ մակարդակում քաոսի աստիճանը: Բացի այն, որ քաոսը հանդիսանում է անկարգության բնութագրիչը, միևնույն ժամանակ այն կարող է ընկալվել իբրև բոլոր հնարավոր կարգավորվածությունների բազմազանություն, որպես կարգավորվածության բարձրագույն աստիճան[7]: Ինչպես հում կավի մեջ առկա են բոլոր հնարավոր քանդակները և միայն վարպետի կամքով ու ստեղծագործական մտքի շնորհիվ է դրանցից առանձնացվում կոնկրետ մեկը, այնպես էլ քաոսում առկա բոլոր հնարավոր կարգավորվածություններից տարանջատվում է այն եզակին, որը ծնվում է Արարչի Կամքով: Այսինքն վերաարարման ակտը հանդիսանում է մարդկության Ազատ կամքի (Իգական՝ պասիվ սկզբունք) և Արարչական Կամքի (Արական՝ ակտիվ սկզբունք) բեղմնավոր փարումի հետևանք, ահա թե ինչու էր նշվել, որ հենց անորոշության առնչությունն է հանդիսանում ռեգեներացիայի ներքին մեխանիզմը[8]: Հարկ է ընդգծել, որ այս պրոցեսը բնավ զերծ է դուալիստական բովանդակությունից և հանդիսանում է Երրորդության ինքնաիրացման արտաքին երևակումը: Եվ սա այսպես է, քանի որ ակտիվ և պասիվ սկզբունքների նկարագրված փոխազդեցությունը միջնորդավորված է էներգետիկ գործընթացներով (Սիրո՝ նեյտրալ, չեզոքացնող սկզբունք), ինչը լինելով այդ փոխազդեցության հավասարակշռող ու ծնող պատճառ՝ միաժամանակ հանդիսանում է դրա հետևանք-արդյունքը (Բանը՝ Լոգոսը, Որդին)[9], արդ՝ **ԱՍՏՎԱԾ ՍԵՐ Է և ՍԵՐՆ Է ԱՍՏՎԱԾ**, իսկ մահմեդական կրոնի համաձայն՝ **ՉԿԱ ԱՍՏՎԱԾ ՔԱՆ ԱՍՏՎԱԾ** (լա իլա իլ Ալլահ):

*Զի դու ես միայն երկնքում անճառ, երկրում անզնին,*
*Գոյություն բոլոր տարերքների մեջ,*
*Աշխարհի բոլոր եզրածագերում,*
*Սկիզբն համայնի և ամեն ինչում՝ ամբողջ լրությամբ,*

**(Գր. Նարեկացի, Մատյան ողբերգության (Բան ԽԱ, բ))**

Ոգու աշխարհում պատճառի և հետևանքի այս նույնությունն ու նմանությունը ենթադրում է մարդու կողմից իրեն շրջապատող աշխարհի նորովի ընկալում, դուալիստական մոտեցմամբ պայմանավորված նեգատիվ (սև-սպիտակ) տրամաբանությունից պետք է անցում կատարվի երրորդության օրինաչափությամբ (էսխոտոլոգիայով) պայմանավորված աշխարհընկալման կերպին: Նոր մոտեցման պարագայում իրականությունն ընկալվում է արդեն ոչ թե որպես կատարված եղելությունների բազմություն, որտեղ մարդ էակը ենթակա է ճակատագրապաշտության ու բարին չարից տարբերելու հատվածականությանը, այլ իբրև առկա հնարավորությունների ամբողջություն, ուր նույնիսկ կատարված իրողությունը հանդես է գալիս նոր հնարավորության տեսքով, որից կարող են իրենց սկիզբն ու շարունակությունն ունենալ բազ-

---

[7] **С. П. Капица**, **С. П. Курдюмов**, **Г. Г. Малинецкий**, Синергетика и прогнозы будущего, Москва, 2001 г., с. 27.

[8] **Л. В. Лесков**,Футуро-синергетика, Москва, 2005 г.,с. 52.

[9] **И. Пригожин**, **И. Стенгерс**, Время, Хаос, Квант к решению парадокса времени. Москва, 2000 г., с. 27.

մաթիվ այլ հնարավորություններ: Անգամ ավազակին խաչելության պահին ինքնափոփոխման դեպքում երկնքի արքայություն մտնելու հնարավորություն է ընձեռվում, այսպիսով մարդը դուրս է գալիս զոհի հոգեբանությունից: «Հիսուս Քրիստոս դարձավ Մարդու Որդի այն բանի համար, որ մարդը դառնա Աստծո Որդի»[10]՝ իրողությունների ու դեպքերի կույր ենթակայությունից ձերբազատված անհատն ինքն է սկսում արարել իրեն շրջապատող դեպքերի և դիպվածների տարածաժամանակային բաշխվածությունը՝ ելնելով սեփական հոգու ապրումից, մտքի ընկալումներից և նյութական հարթությունում դրսևորած վարվեցողությունից ու մտադրություններից:

*Սրան կցորդ է, հույժ նմանատիպ*
*Հավատալը և այն փոփոխության,*
*Որ մեղավորը կարող է դառնալ լիովին քավված,*
*Չարագործն՝ արդար, անմաքուրը՝ սուրբ,*
*Ծանր, անքավելի հանցագործությամբ*
*Մահապարտն՝ անպարտ երանավետյալ,*
*Իսկ ծառայական կապանքների մեջ հեծեծողն հասնել*
*Երկնային փառքի ու ազատության:*

**(Գր. Նարեկացի, Մատյան ողբերգության« (Բան ԺԱ, ա))**

Պատճառի և հետևանքի այս նույնությունը առկա է միայն Կենտրոնում և ողջ տիեզերակառույցում կենտրոնի ինֆորմացիոն արտահայտությունը հանդիսացող բազմաբնույթ արտացոլանքներում: Տիեզերածնության ընթացքը սկիզբ է առնում, երբ Կենտրոնը իբրև սերմ սկսում է ինքնադրսևորվել. «Ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ ձեզ. եթե ցորենի հատիկը հողի մեջ ընկնելով չմեռնի, միայն հատիկն ինքը կը մնայ, իսկ եթե մեռնի, բազում արդյունք կտա» (Հով. ԺԲ 24): Արդ՝ Կենտրոնում ժամանակը կանգնած է կամ որ նույնն է՝ իրար հաջորդող ժամանակային պահերը նույնական են՝ տարածությունը, անցյալը, ներկան և ապագան միևնույն կետում են, այսինքն ժամանակի խտությունը և Կենտրոնում պարփակված էներգիան ձգտում են անսահմանության, իսկ ժամանակային ընթացքի արագությունը՝ զրոյի: Կենտրոնի ինքնադրսևորմանը զուգընթաց տարածությունն ու ժամանակը սկսում են որոշակի օրինաչափությամբ տրոհվել, և պատճառը տարանջատվում է հետևանքից ու պատճառ-հետևանք նույնությունը ծավալվելով՝ վերածվում է պատճառահետևանքային շղթայի՝ բաշխվելով տրոհվող ժամանակի և տարածության մեջ: Այս տրոհման արդյունքում սերված տիեզերական նվիրապետությունն իր ամբողջության մեջ խարսխված է մեկ միասնական տրամաբանության վրա, որը բովանդակային իմաստով հանգում է էություն-երևույթ պատճառահետևանքային կապի պահպանմանը (աղ. 1): Չէ՞ որ սերմը պտղի է վերածվում տարածության և ժամանակի մեջ, ծավալվելով ամբողջությամբ, այլ ոչ թե մաս առ մաս և հերթականությամբ: Հետևաբար, խնդիրը ծավալման օրինաչափության պարզաբանման մեջ է կայանում, որը համապիտանի լինելով հանդերձ, ընկած է նաև մարդկության զարգացման ու ինքնափոփոխման հիմքում: Մարդկության արտաքին պատմությունն էլ հանդիսանում է մարդու ներքին պատ-

[10] **Иринея Лионский**, Против ересей, IIIX2//Творения, Москва, 1996 г., с. 240.

մության տարածաժամանակային ծավալումը, որը ենթարկվում է այդ նույն օրինաչափությանը:

*Իսկ մեկնությունը դրա կգտնես*
*Նկարված քո մեջ, անձն իմ եղկելի,*
*Ինչպես մի անեղծ արձանի վրա,*
*Ժամանակի տարրն ու տարին կազմող*
*Իրարահաջորդ թիվը օրերի,*
*Սահմանված ասես ինչ-որ օրենքով*
*Մարմնիդ մասերին համապատասխան,*
*Պետք է որ պահվեն անսխալ ու միշտ անայլայլելի:*

**(Գր. Նարեկացի , Մատյան ողբերգության« (Բան ԽՁ, բ))**

Ողջ տիեզերքը իրենից ներկայացնում է հիերարխիկ կառույց և այդ կառույցի յուրաքանչյուր մակարդակ բոլոր բնագավառներում ու մասերում կազմակերպվում է միևնույն՝ համապիտանի սկզբունքներին համապատասխան: Մակարդակներից յուրաքանչյուրն ածանցվում է իր նախորդից՝ որպես օբյեկտ, և հանդես է գալիս որպես սուբյեկտ՝ ծնող պատճառ, հիերարխիայի առավել ստորին մակարդակների համար[11]: Ակնհայտ է, որ այդ հիերարխիան քարացած չէ և անընդհատ տրոհվում է տարածության և ժամանակի մեջ՝ ենթարկվելով ծավալման միևնույն սկզբունքին՝ *փոքրը մեծի մեջ է, մեծը՝ փոքրի*: Այս սկզբունքի տրամաբանությունը կայանում է նրանում, որ հիերարխիայի մակարդակներից յուրաքանչյուրը, ամբողջի մասը լինելով, իր մեջ կրում է ամբողջը՝ որպես ինֆորմացիա: Օրինակ, բջիջը, հանդիսանալով կենդանի օրգանիզմի բաղկացուցիչ մասը, իր մեջ բովանդակում է ողջ օրգանիզմը ինֆորմացիայի տեսքով (այստեղից էլ՝ կլոնավորման հնարավորությունը): Հատիկը, լինելով պտղի մասը, միևնույն ժամանակ որպես պոտենցիա կրում է պտղի եռամիասնական կառույցի ամբողջ ինֆորմացիան (այստեղից էլ, երբ սերմը ընկնում է հողը, մեռնելով, ծննդյան պատճառ է հանդիսանում նոր պտղի համար՝ իր բոլոր մասերով):

Չնայած ծավալման միևնույն սկզբունքին, ժամանակի մեջ հիերարխիայի տարբեր մակարդակներում տրոհումը ընթանում է ոչ միևնույն արագությամբ: Այսպես, բջիջների տրոհման արագությունը ավելի մեծ է, քան կենդանի օրգանիզմներինը: Այսինքն, որքան համակարգը բարդանում է, այնքան տրոհման գործընթացները դանդաղում են, իսկ ժամանակի ընթացքը արագանում, այսինքն կրճատվում է երևութական կյանքի տևողությունը, և նվիրապետության վերին մակարդակներում ընթացող պրոցեսներն ուշացումով են դրսևորվում առավել ստորին մակարդակներում:

Բոլոր մակարդակներում ծավալման սկզբունքի նույնությունը և տրոհման արագությունների տարբերությունը զուգակցվում է ծավալման միևնույն օրինաչափությամբ: Դրա տրամաբանությունը կայանում է նրանում, որ անկախ օբյեկտի բարդության աստիճանից, վերջինիս ծավալումի համամասնությունը անընդհատ մնում է նույնը և ենթարկվում յոթի, կամ, որ նույնն է, օկտավայի օրենքին[12] (այստեղից էլ՝

[11] **Վազգեն Ա. Կաթողիկոս**, Գալիքի տեսիլքով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1998 թ., էջ 114:

[12] **П. Успенский**, В поисках чудесного, Петербург, 1992 г., с. 147.

բնագիտության մեջ հայտնի պահպանման բոլոր օրենքները):

Տիեզերական նվիրապետության յուրաքանչյուր մակարդակում էներգետիկ գործընթացներով միջնորդավորված ինֆորմացիա-նյութ փոխակերպումները տեղի են ունենում տվյալ մակարդակին հատուկ հաճախականություններով, վերջինս էլ բնութագրում է տվյալ հարթությունում ցանկացած երևույթի տարածաժամանակային բաշխվածությունը, ինչը նշանակում է, որ նախնական ինֆորմացիան բաշխված է ամբողջ տիեզերքով, այլ ոչ թե լոկալիզացված է: Այսինքն՝ յուրաքանչյուր մակարդակ օժտված է իր սեփական հաճախային սպեկտրով (չափողականությամբ) և որքան մոտենում ենք Կենտրոնին, այնքան ավելի է մեծանում փոխակերպման արագությունը և պատճառն ու հետևանքն էլ ձգտելով միմյանց՝ կրճատվում է ներկայի տևողությունը, իսկ տարածությունը ձգտում է կետի[13]: Քանի որ հիերարխիկ յուրաքանչյուր մակարդակում ընթացող պրոցեսները ժամանակի մեջ որոշակի հապաղումով են արտահայտվում առավել ստորին հարթություններում, ապա էություն-երևույթ պատճառահետևանքային շղթայի անխզելիության պայմաններում դա հանգեցնում է տիեզերակառույցի ծավալման ընդհատ (դիսկրետ) բնույթին, հետևաբար Կենտրոնից ժամանակի ու տարածության տրոհման ընթացքը տեղի է ունենում ոչ թե հավասարաչափ (գծային) կերպով, այլ՝ արագացող ու դանդաղող (ոչ գծային բոլորապտույտի) պարույրի տեսքով (գծապատկեր 1):




***Գծապատկեր 1.*** Որքան մոտենում ենք Կենտրոնին, այնքան ավելի է մեծանում ժամանակի խտությունը, ինչը բնութագրվում է իրար հաջորդող ամենամոտ հնարավոր պահերի հեռավորությամբ և այնքան ավելի է դանդաղում ժամանակի արագությունը, որը գծապատկերում ներկայացված է պարույրը շոշափող սլաքներով (1<2<3): Պարույրը սահմանափակող կողագծերը բնութագրում են պատճառահետևանքային շղթայի անխզելիությունը (պատահույթի ապազայի լուսակոն) և սահմանազատում բացարձակ անխզելիությունը (ունայնությունը) կարգավորված անխզելիությունից, իսկ պարույրների տրամագծերը բնորոշում են տվյալ հիերարխիկ մակարդակում պատճառի և հետևանքի նույնության աստիճանը կամ որ նույնն է՝ ***ներկայի*** տևողությունը:

Կոնը հատող շրջանագծերից յուրաքանչյուրի կենտրոնը արտացոլում է գագաթի՝ Սերմի, որ է Կենտրոնը Արար Աշխարհի, պրոյեկցիան տվյալ հիերարխիկ հարթության համար, այսպիսով՝ տիեզերական նվիրապետության յուրաքանչյուր մակարդակ իր մեջ կրում է Կենտրոնը անբացահայտ կերպով, որպես սակրալ (սրբազան) սկզբունք, Բանը տրոհվելով՝ Որդու պատարագով, Արարում է Հոր Կամքը, Աստծո

[13] **С. Хокинг**, **Р. Пенроуз**, Природа пространства и времени, Санкт Петербург, 2007 г., с. 157.

մտքում հղացած ինֆորմացիան[14]:

*Ջոհաբերվելով հավիտենապես*
*Ամեն սեղանի սպանդարանում՝*
*Անսպառորեն մնում է համայնն ամեն ինչի մեջ,*
*Ամբողջությունը՝ ամեն մի մասում,*
*Էությամբ՝ երկնում, խնկությամբ երկրում,*
*Անհատ՝ մարդկությամբ և աստվածությամբ իր՝ լիակատար*
*Փշրվելով միշտ անթիվ մասերի՝ բաշխվում է անվերջ,*
*Որ միավորի այդպես բոլորին*
*Որպես մի մարմին Իր՝ գլխի համար,*
*Փառք քեզ նրա հետ, Հայր ողորմության,*
*հավիտյանս. ամեն:*

**(Գր. Նարեկացի, Մատյան Ողբերգության (Բան ԽԷ, գ))**

Տարածության չորս կողմերին համապատասխան և ժամանակի խտության անհավասարաչափ բաշխվածության հետևանքով, տիեզերական նվիրապետության յուրաքանչյուր մակարդակ օժտված է ինֆորմացիա-նյութ փոխակերպումների չորս տարբեր արագություններով (հաճախությունների սեփական սպեկտրով): Քանի որ այդ փոխակերպումները միջնորդավորված են էներգետիկ գործընթացներով, ապա յուրաքանչյուր հարթությունում առկա է համապատասխանաբար չորս էներգետիկ մակարդակ, որոնք խորհրդանշորեն ներկայացվում են հող, ջուր, օդ և հուր տարերքների տեսքով: Որքան մեծ է ինֆորմացիայից նյութ և նյութից ինֆորմացիա անցման արագությունը, այնքան կարճ է փոխակերպման ժամանակը և բարձր է փոխակերպման համար անհրաժեշտ էներգիայի չափը: Համապատասխանաբար, ամենաբարձր էներգետիկ մակարդակը հուր տարերքում է և ամենացածրը՝ հող տարերքում, ինչը նաև բնութագրում է այդ տարերքներում արարելու ունակության աստիճանը:

Այս չորս ենթամակարդակները միմյանց հետ շաղկապվում են Կենտրոնի անբաժանելի երրորդությունից ճառագած եռամիասնությամբ, որը միաբանված է: Տիեզերակառույցի ծավալման ընթացքը նախնական ինֆորմացիայի պահպանման տեսանկյունից խարսխված է երկնային երրորդության հաջորդական արտապատկերումների վրա «Եվ երկնքում են Հայրը և Բանը և Սուրբ Հոգին, և այս երեքը երեքն են, որ երկրում վկայում են. Հոգին և Ջուրը և Արյունը, և այս երեքը միաբան են» (Ա. Հովհ. Ե 8): Մի են, կնշանակի անմասնատելի և անբաժանելի, միաբան են՝ սերված են միևնույն բանից և նույն բանում են, մյուս կողմից երկնային և երկրային երրորդությունները կապված են Բանով[15], որը երկնքում և՛ պատճառ է, և՛ հետևանք, իսկ երկրի վրա՝ ծնող պատճառ և ընդգրկող սկզբունք: Այս նույն իմաստաբանությունն արտահայտվում է պայծառակերպության խորհրդով, որը կայանում է ընկալելի Լույսի փոխակերմամբ իմանալի և ճանաչելի լույսի, ինչն իր էության մեջ եռամիասնական է ու

---

[14] Հ. Կ. **Դավթյան**, **Է. Վ. Լալայան**, Նարեկացու աշխարհայացքը, Երևան, 2003 թ., էջ 75:

[15] **Վարդան Դևրիկյան**, Պայծառակերպությունը և Վարդավառի տոնը, Երևան, 2006թ., էջ 24:

հանդիսանում է երկնային երրորդության էմանացիան (ճառագումը)[16]: Այսպիսով, Կենտրոնից ճառագված լույսով՝ երկրային երրորդությամբ շաղկապված չորս տարերքները կազմում են յոթ մակարդակներից բաղկացած ներդաշնակ բազմամիասնություն, ինչն էլ իրենից ներկայացնում է յոթի կամ օկտավայի համապիտանի օրենքը (3+4=7՝ գծապատկեր 2):




***Գծապատկեր 2.*** Ներկայացված յոթ ենթամակարդակները իբրև ներդաշնակ բազմամիասնություն նկարագրում են ինչպես ամբողջ տիեզերակառույցի տրոհման՝ ծավալումի համամասնությունը, այնպես էլ տիեզերակարգի մասը կազմող ենթամակարդակում ներքին ինֆորմացիայի կուտակման և հաջորդական տրոհման գործընթացը: Մակարդակից մակարդակ անցումների մեջ ընդմիջումները տեղի են ունենում երրորդության մասը կազմող ջուր բաղադրիչի և ջուր տարերքի միջև, ինչպես նաև տիեզերակառույցի տվյալ հարթությանը նախորդողի ստորինից՝ հողից հուր անցման և հաջորդող հարթության վերին ենթամակարդակին հողից հուր անցման ընթացքում: Նույն տրամաբանությամբ և դինամիզմով է նաև կառուցված հնչերանգների դասավորությունը օկտավայում (դոհող, ռե- արյուն, մի- ջուր տարերք, ֆա-Ջուր երրորդության, սոլ-օդ, լյա-հոգի, սի- հուր):

Ջուր տարերքը բացարձակ ունայնությունից տարանջատված (երրորդության ջուր բաղադրիչ) քաոսն է տիեզերական նվիրապետության տվյալ հարթությունում, ինչը բնութագրվում է ազատ կամքով և բնորոշում է տվյալ ենթամակարդակի ինքնությունը, որը, զատվելով Կենտրոնից, իր մեջ կրում է Սերմն իբրև ինֆորմացիա. «Մնացէ՛ք իմ մեջ, եւ ես ձեր մեջ, ինչպես ճյուղը, որ ինքն իրեն չի կարող պտուղ տալ, եթե որթատունկի վրա հաստատված չլինի, նույնպես և դուք՝ եթե իմ վրա հաստատված չլինեք: Ես եմ որթատունկը, իսկ դուք՝ ճյուղերը: Ով բնակվում է իմ մեջ, և ես՝ նրա մեջ, նա շատ պտուղ է տալիս, որովհետև առանց ինձ ոչինչ չեք կարող անել» (Հովհ. ԺԵ 4-5): Էպոսում էլ Ծովինարը հղանում է ջրից (երրորդության ջուր բաղադրիչ) և այնուհետև ծնված որդիներից Սանասարը ջրի տակ է (ջուր տարերք) ջոջանում, ստանում իր մարմնի յոթ մասերին համապատասխան զգեստներն ու կենաց ծառը խորհրդանշող խաչ պատերազմին առնելով աջ թևին՝ զատվում է Կենտրոնից իր ուրույն ինքնությամբ (Էպոս՝ ճյուղ Առաջին): Այստեղից՝ Ինքնության ընկալումից, ճանաչումից և յուրացումից սկիզբ է առնում ներքին ինֆորմացիայի կուտակման պրոցեսը ու, եթե այն ազատ կամքի գործադրումով ընթանում է 7-ի օրենքին համապատասխան, ապա անհատը մեղավոր մարդուց մերկանալով և Քրիստոսին՝ նորը հագնելով, սրբությամբ և արդարությամբ նորոգվում է և բռնում Դարձի ճամփան: Այս խորհուրդը տրվեց Որդու կողմից Վերջին ընթրիքի ժամանակ Ս. Պատարագի խորհրդի ներկայացումով, որովհետև դրանով Հայր Աստված սրբագործված հացն ու գինին Սուրբ Հոգու ներգործությամբ վերածում է Իր միածին Որդու մարմնին և արյանը՝ դրանք բաշխելով և ճա-

[16] Նույն տեղում, էջ 25:

շակողներին միավորելով Իր հետ[17]: Էպոսում էլ Սասնա ծռերը որևէ բան արարելուց առաջ հնչեցնում էին Հացն ու Գինին Տեր կենդանին, այսինքն երկնային լույսի ճառագումով չորս տարերքների շաղկապված ներդաշնակությունն է արարման սկզբունքը: Ուրեմն, հայ լինել, կնշանակի նմանվել Հայկ նահապետին, ով, վերադառնալով (դարձ) հայրերի երկիր Հարք, եռաթև նետով (հոգին և ջուրը և արյունը, որ միաբան են) բևեռեց Բելին (հող, ջուր, օդ և հուր տարերքների չշաղկապվածություն), այսինքն՝ Բելը ոչ միայն մեզնից դուրս է, այլ նաև մեր ներսում է և այն պահերին, երբ մեզ հաջողվում է Երրորդության լույսով ներդաշնակել մեր ներքնաշխարհի չորս տարերքները, մենք կոչվում ենք Հայ՝ Աստծո զինվոր:

Արդ, օկտավայի կամ յոթի օրենքը, որ նաև յոթերորդ տառը Է-էությունն է խորհրդանշում, հանդիսանում է Աստծո առակային՝ մարդացած կերպարից քողի՝ ծածկույթի հեռացման եղանակը, ինչն էլ կայանում է անհատական ինքնափոփոխումի ճանապարհը, որ նշանակում է մեռնել այս նյութի աշխարհում և ծնվել Ոգու մակարդակում. «Ով սիրում է իր անձը, կը կորցնի այն, իսկ ով այս աշխարհում իր անձն ատում է, այն կը պահի հավիտենական կյանքի համար» (Հովհ. ԺԲ 25):

*Պաղատում եմ քեզ, լույսի ճառագայթ,*
*Արքա երկնավոր, գովյալ անպատում,*
*Որդի միածին անճառ Աստծո,*
*Խոնարհելով քո ունկն ու վերստին*
*մերձենալով ինձ,*
*Բարձրյալ բարեգութ, կյանքի ապավեն,*
*Անսա չարաչար վիրավորվածիս*
*հառաչանքներին այս նվաղաձայն:*

**(Գր. Նարեկացի, Մատյան ողբերգության (Բան ԺԴ, ա))**

## Ազգ-Անհատ փոխհարաբերությունը

Յուրաքանչյուր Ազգ, Բնական Տեսակ, ունի ծննդյան իր Պահը և տարածության իրեն հատուկ մասը՝ Արեալը[18]: Արեալի տարածական չափումը հանդես է գալիս որպես Բնական Հայրենիքի նյութական բաղադրիչ, իսկ ժամանակային չափումը՝ որպես Պատմական Ուղի, ինչը հանդիսանում է Բնական Տեսակի ժամանակային մարմինը, որն անընդհատ ծավալվելով՝ դրսևորվում է արտաքին պատմության, պատմական փաստերի տեսքով:

Այսպիսով, ազգերը համամարդկային հանրույթի որակական բաղադրիչներն են: Նրանցից յուրաքանչյուրին տրված է աշխարհընկալման իր կերպը, սխեման և այն արտահայտելու խորհրդանիշերի իր և միայն իր համակարգը, ինչն առավել արտահայտված է ազգերի մշակույթներում (լեզու, այբուբեն, ճարտարապետություն, երաժշտություն և այլն): Մշակույթի միջոցով յուրաքանչյուր ազգ անկրկնելի է իր տեսակի մեջ և այդ յուրահատկություններով էլ պայմանավորվում է մարդկային հան-

[17] Պատարագամատույց, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2002 թ., էջ 31:

[18] **Л. Н. Гумилев**, Этногенез и биосфера Земли, Ленинград, 1989 г., с. 181.

րության ներքին բազմազանությունը:

Ծավալման սկզբունքի համաձայն՝ մասն է ամբողջի և ամբողջը մասի ներքո, հետևաբար համակարգի կենսունակությունը հանգում է ներքին բազմազանության պահպանման խնդրին: Այսինքն, համակարգի ցանկացած մասի, տարրի խնդիրն է իր տեսակին բնորոշ որակական հատկանիշերի՝ ***ԻՆՔՆՈՒԹՅԱՆ*** պահպանությունը մի կողմից, և ամբողջի հետ ներդաշնակվելու պերմանենտ ձգտումը՝ մյուս կողմից:

Այս երկու անհամատեղելի, հակոտնյա, մղումների համատեղությունից ծնվում է մշակույթը՝ «Ոգու և մարմնի կռվում ծնված հոգևոր էներգիան դրսևորվում, մարմնանում է սիմվոլների միջոցով»[19]: Սիմվոլները չեն հորինվում մարդկանց կողմից, այլ հանդիսանում են ենթագիտակցական կայուն ընկալումների (արխետիպեր) արտաքին դրսևորում[20]: Այլ խոսքով, Ազգային խորհրդանիշերի համակարգը մշակույթի անբաժանելի մասն է կազմում, իսկ Մշակույթը, հանդիսանալով էթնիկ տեսակի ինքնության ծավալման նյութական և աննյութական դրսևորումը, ներկայացնում է ազգային Է-ության ինֆորմացիոն արտահայտությունը: Այն ներառելով ազգային ոգեղենության բոլոր շերտերը՝ էթնոսի ձևավորման ընթացքում ձեռք է բերում համակարգաստեղծ նշանակություն: Ելնելով այն հանգամանքից, որ կամայական հանրային համակարգի (այդ թվում էթնիկ) անվտանգությունը ենթադրում է արտաքին անսահման ազդեցությունների պարազայում համակարգաստեղծ կապերի պահպանում, ապա մշակույթը և նրա անաղարտության ապահովումը ձեռք է բերում առանցքային նշանակություն: Դա նշանակում է ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ բնութագրող բաղադրիչների ներքին ներդաշնակ բազմազանության պահպանում: Օրինակ, լեզվի մակարդակում բարբառները հանդիսանում են վերջինիս որակական բազմազանության բաղադրիչները, հետևաբար դրանցից որևէ մեկի կորուստը կամ աղճատումը հանգեցնում է լեզվական համակարգի որակական աղքատացման, ինչն իր հերթին զրկում է արտաքին արձագանքման հնարավորությունից, քանի որ միօրինակ համակարգը բոլոր ազդեցություններին հակված է արձագանքել միայն մեկ ձևով:

*Ահա հոգևոր մի այլ օրինակ,*
*Որ նույնպես քեզնով է մեկնաբանվում՝*
*Միրո հողերով ի մի շաղկապված*
*Միասնությունը սուրբ եկեղեցու.*
*Բոլոր մասերը եթե անխտիր,*
*Վեհը փոքրի հետ որպես համարժեք,*
*Համահաճորեն չներդաշնակվեն՝ մի լծով կապված,*
*Խաթարված կլինի Քրիստոսի սուրբ*
*Անվան շինության ամբողջությունը,*
*Ինչպես որ, ասենք, մարմնի որևէ*
*Անդամը, թեկուզ աննշան, չնչին,*
*Եթե կտրվի, պակասի հանկարծ,*
*Կաղճատվի ամբողջ կազմվածքը մարմնի,*

---

[19] **К. Г. Юнг**, Психология и алхимия, с. 45.

[20] Տարեգիրք, Ինքնության հարցեր, Երևան, 2002 թ., էջ 25:

*Որն զգայական սենյակն է մարդու,*
*Եվ բուն կերպարը կենթարկվի անարգ*
*մի փոփոխության:*

**(Գր. Նարեկացի, Մատյան ողբերգության (Բան ԽՁ, գ))**

Տարածության և ժամանակի մեջ տիեզերակառույցի ծավալումն ընթանում է միաժամանակ երկու ուղղություններով՝ ֆիզիկական, նյութական հարթության մեջ՝ անընդհատ դիֆերենցման, իսկ էության, ինֆորմացիոն մակարդակում՝ ինտեգրման, միասնականության աստիճանի բարձրացման ուղղությամբ: Ակներևաբար, կառույցի և նրա մասերի միջև գործում են երկկողմ հետադարձ կապեր[21], որոնց հետևանքով հիերարխիայի բոլոր մակարդակներում էլ ծավալման այս երկբևեռ պրոցեսը, որոշակի հապաղումով, իրեն համարժեք դրսևորումներն է ունենում՝ հավասարակշռվելով տվյալ մակարդակի ներքին էներգիայով:

Մասնավորապես, մարդկային հանրության հիերարխիայում դիֆերենցման գործընթացը դրսևորվում է ԻՆՔՆՈՒԹՅԱՆ զատորոշման տեսքով, իսկ ինտեգրմանը՝ ինքնությունների բազմազանության ներդաշնակման ձգտումով: Ազգը, որպես համամարդկային հիերարխիայի բաղադրատարր, ոչ թե մարդկանց թվաքանական գումարն է, այլ մարդ-մարդ փոխհարաբերությունները միջնորդավորող և միայն տվյալ էթնիկ տեսակին տրված արժեքների համակարգով բնորոշվող մեկ ամբողջական էականություն: Քանի որ արժեքը, որպես կատեգորիա, ապագայի հանդեպ ունեցած մտապատկերն է, ապա բնական տեսակի արժեքային համակարգի հիմնախարիսխ է հանդիսանում նրա մշակույթում դրսևորված աշխարհընկալման մոդելը, մտքի կառուցման նրան հատուկ կերպը: Հետևաբար, ազգերի մակարդակում տիեզերակառույցի երկբևեռ ծավալման ընթացքի հավասարակշռումը տեղի է ունենում աննյութական մշակույթի վրա խարսխված ինքնաճանաչման պրոցեսի միջոցով: Այդ պրոցեսի միջոցով համամարդկային ամբողջի մասը հանդիսացող էթնիկ տեսակը պահպանում է իր ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ, միևնույն ժամանակ, որպես ինֆորմացիա կրելով ամբողջը, ձգտում է ներդաշնակվել ազգերի բազմազանությանը:

Այսինքն, նկարագրված մեխանիզմը, համամարդկային միջավայրից էթնիկ տեսակը ինքնորոշելու էական միջոց լինելով, միևնույն ժամանակ ազգային հավաքականության միասնականությունը պահպանող ուժ է հանդիսանում: Այս ճանապարհով համամարդկային ամբողջի մասը հանդիսացող էթնիկ տեսակը սեփական յուրահատկության պահպանման միջոցով կրում է ամբողջն իր մեջ և որևէ տեսակի աղճատում նշանակում է ինքնության պղծում, հետևաբար և ամբողջի մասը լինելու մերժում:

*Գոյությունն հոգուս մեղկությամբ լուծված*
*Ու քայքայված է համակ մեղքերով.*
*Գործիքն ընթացքիս՝ մարմինս կրող ոտքերս երկու,*
*Որոնք քայլում են կաղ ու անհաստատ,*
*Չարի արգելքով՝ շեղվել են ճամփից*

[21] **Л. В. Лесков**, Футуро-синергетика, Москва, 2005 г., с. 20.

*կենարար ծառի.*
*Ուժ տուր վերստին և ուղղիր մոլոր ընթացքը նրանց*
*Ամենափրկչիդ հնարանքներով:*

**(Գր. Նարեկացի, Մատյան ողբերգության (Բան ԺԸ, բ))**

Վերը շարադրված մոտեցումների տեսանկյունից կարելի է եզրակացնել, որ բնական տեսակի առաքելության սահմանումը գոյաբանական (էկզիստենցիալ) առումներով հանգում է մարդու հոգու փրկության ճանապարհով ինքնահիրացման անընդհատությանը: Եվ քանի որ մարդը միկրոտիեզերք է, ապա նրանում նույնպես մեկտեղված են օրինաչափությունն ու պատահականությունը՝ մասնավորապես, հոգևոր կատարելության գոյություն ունեցող ճարտարությունների մասնակի խնդիրներից մեկն էլ անորոշության առնչության ձևավորումն է մարդ անհատի ներսում: Այսպես օրինակ, մտքի և շնչառության տարաբնույթ եղանակներով մեկտեղվում են ռիթմիկան (դետերմինացվածությունը) և ասոցիացիաները (քաոսի և սպոնտանության իպոստասները):

Յուրահատկություններն ի հայտ են գալիս կոնկրետ Ազգի կողմից ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ գործադրման մեջ, ինչը պայմանավորված է մշակութային շերտերում ամփոփված և աշխարհընկալման մոդելի վրա խարսխված ընկալումների տարբերությամբ: Եթե արևելքը ձգտում է ճանաչել մարդուն ճանաչելով աշխարհը, իսկ արևմուտքը ճանաչում է աշխարհը՝ ճանաչելով մարդուն ապա աշխարհճանաչողության հայկական կերպը մեկտեղում է արևմտյան և արևելյան աշխարհընկալման համակարգերը՝ ներկայացնելով երկու տարաբնույթ մոդելների սինթեզ, անհամատեղելի հակոտնյաների միության լավագույն օրինակ: Հետևաբար, հայ էություն ինքնադրսևորման եղանակը բանաձևային մակարդակում կարելի է ձևակերպել՝ ***«Ոչ թե արևմուտք կամ արևելք, այլ՝ և՛ արևմուք, և՛ արևելք»*** եզրաբանությամբ, այլ խոսքով՝ եթե Արևմուտքի հարաբերությունը Աստծո հետ տեղի է ունենում երկխոսության տեսքով (իմմանենտություն՝ ներակայություն), իսկ Արևելքինը՝ մենախոսության (տրանսցենդենտություն), ապա հայը ընկալում է Աստծուն մենախոսությամբ և արտահայտում երկխոսությամբ:

Մարդ անհատը, հանդիսանալով տիեզերական նվիրապետության ազգ մակարդակի հաջորդական տրոհումների հետևանքը, փոխհարաբերվում է իր ազգի հետ հատուցման (կարմայի) օրենքին համապատասխան: Դա պայմանավորված է նաև նրանով, որ մետաֆիզիկական հարթության մեջ մարդը որպես ինֆորմացիա հանդիսանում է Աստծո մտքի հղացումը և նախնական ինֆորմացիայի պահպանման տեսանկյունից մարդը միաժամանակ բնակվում է տիեզերակառույցի բոլոր մակարդակներում: Ուրեմն, ֆիզիկական հարթության մեջ անհատի ծննդյան պահը և տեղը պայմանավորված է նրա հոգևոր անցյալում կուտակած բեռը թոթափելու համար լավագույն մեկնարկային պայմաններ ստեղծելու նպատակահարմարությամբ:

*Որպես մեղքերով փոխադարձաբար*
*պայմանավորված*
*Նրանց հետևանք, արդյունք, էակից՝*

*Հատուցումները արտահայտությամբ*
*Չափազանց հար ու նման են նրանց,*
*Միշտ նույնօրինակ ու զուգակշիռ:*

**(Գր. Նարեկացի, Մատյան ողբերգության (Բան ԺԹ, գ))**

Միաժամանակ, այս կամ այն ազգին, ցեղին և ընտանիքին պատկանելու կանխորոշվածությունը, դուրս լինելով անհատական կամքից (ուրեմն սրբագործված), պայմանավորում է հոգևոր կատարելության անհատական ձգտման համար անհրաժեշտ ուղենիշերի և ընկալումների կոնկրետ համակարգի նախընտրությունը: Այսինքն, որևէ անհատի հոգևոր կատարելության ընթացքը սկիզբ է առնում ազգային ինքնության յուրացումից, ինքն իրեն ճանաչելու՝ տիեզերակարգում ինքն իրեն զիտակցելուց և ազգային աշխարհընկալման մոդելի վրա խարսխված ներքին աշխատանքի գործադրումով: Խնդրի հետագա պարզաբանման նպատակով մշակութային շերտերի վերլուծությունը ցույց է տալիս, որ հայ տեսակի աշխարհընկալման մոդելում առանցքային դեր ունի *Կենտրոնի-Սերմի* գաղափարը: Օրինակ, երաժշտության մեջ հայկական ձայնեղանակի (լադի) կառուցվածքում հնչերանգները, ելնելով կենտրոնի հնչերանգից, շարժվում են միաժամանակ դեպի սուր և թավ հնչերանգներ, այնուհետև, նորից վերադառնում են դեպի *Կենտրոն,* ի տարբերություն արևմտյան լադի, որտեղ ձայնեղանակները սկիզբ են առնում ու վերադառնում թավ հնչերանգներ (ինդուկտիվ մտածելակերպ) և արևելյանի, որտեղ սկիզբն ու վերջը սուր հնչերանգներում են մեկնարկում և ավարտվում (դեդուկտիվ մտածելակերպ): «Յուրաքանչյուր ազգի երաժշտությունն իր ազգի հնչական ելևէջներեն կծնի ու կծավալի, հայ լեզուն ունի իր հատուկ հնչավորությունը, ուրեմն և համապատասխան երաժշտություն»[22] ի նկատի ունենալով, որ Ոգին մարդուն տրված կենաց ծառով խոսք կառուցելու և արտաբերելու ունակությունը հանդիսանալով մարդու ներքին ներդաշնակման կերպն է արտացոլում, կարելի է եզրակացնել, որ՝

***Արմատական բնազդներում տրված Հայկական աշխարհընկալման մոդելը պատկերանում է՝ օկտավայի Կենտրոնից (երրորդության ջուր բաղադրիչ-ֆա հնչերանգ) բխած և դեպի Կենտրոն անդրադարձած պարբերական պրոցեսի իրականացման տեսքով:***

Հետևաբար հայ մարդու հոգևոր կատարելությանը ուղղված ներքին աշխատանքի հիմքում պետք է ընկած լինի այս նույն տրամաբանությունը, և քանի որ մարդու ինքնափոփոխման ընթացքը ուղղված է օկտավայի ստորին մասերից դեպի վերև, ապա բուն հայկական ներշնչման մեխանիզմը (մեդիտացիան) պետք է սկիզբ առնի սրտից (կենտրոնին զուգահեռ մարմնի մասը) և շարժվի միաժամանակ դեպի օկտավային զուգահեռ մարմնի վերին ու ստորին մակարդակները, այնուհետև կրկին վերադառնա մեկնակենտրոնին: Այսինքն, մարդու հոգևոր կատարելության դեպի վեր ուղղված էվոլյուցիան օբյեկտիվորեն հակառակ է ընթանում տիեզերակառույցի դեպի վար ուղղված տրոհմանն ու զարգացմանը (ինվոլյուցիային) և այդ պատճառով այն անհրաժեշտաբար ազատ կամքի գործադրման կարիքն ունի: Ազատ կամքով դրսևորված ճիգը պետք է գործադրվի օկտավայի ստորին մակարդակներից դեպի վեր ուղղված ըն-

[22] **Կոմիտաս**, *Հոդվածներ և ուսումնասիրություններ*, Երևան, 1941 թ., էջ 49:

թացքում հանդիպող ընդմիջումների և ընդհատումների պահերին, որոնք են՝ երրորդության ջուր բաղադրիչից (զուգահեռներն են՝ ֆա հնչերանգն ու մարմնի մասերից սիրտը) անցումը օդ տարերքին (զուգահեռներն են՝ սոլ հնչերանգն ու մարմնի մասերից ձայնափողը) և տիեզերակառույցում մարդ անհատ հիերարխիայի վերին (ընտանիք, ազգ, ցեղ, մարդկություն) ու ստորին (ֆիզիկական երկիր, լուսին) հարթություններ անցումներում (գծապատկեր 2):

Այժմ եթե համեմատական վերլուծության տեսանկյունից դիտենք քրիստոնեական ավանդույթում ընդունված հոգևոր մենակեցության (ասկեզայի) համակարգերը, ապա պարզ կդառնա, որ այն միարժեքորեն համընկնում է վերը նկարագրված հայկական մեղիտատիվ մեխանիզմին: Մասնավորապես, քրիստոնեության մարդաբանական տեսակետը անմիջականորեն առնչվում է մարդ անհատի եռամիասնական բազիսին և հոգու փրկության ուղենիշը պարփակված է սուբյեկտիվ ազատ կամքի ու աբարչական օբյեկտիվ կամքի փոխներգործության (սիներգիզմի)[23] ծիրով: Այս իմաստով, քրիստոնեական ավանդույթում իր ուրույն դերակատարությամբ առանձնանում է ներքին հոգևոր աշխատանքի՝ Իսիհաթի ուղղությունը: Իսիհազմը (հունարեն ▯▯▯▯▯▯ - խաղաղություն, լռություն)[24] որպես հոգևոր կատարելության կիրառական փորձառություն, հանդիսանում է ուղղափառ ասկետիզմի հիմնախարիսխը: Վերջինիս ամենաէական կողմը կայանում է հոգու և գիտակցության համարժեքության մասին պնդումը և սրտի ու մտքի, որպես մարդու մեջ առկա գերագույն սկզբունքներ, սինթեզի ձգտումը: Ի տարբերություն հունական ավանդույթի (արևմուտք), որտեղ գիտակցությունն ու միտքն է դոմինանտ համարվում և Իսլամի (արևելք)՝ սրտի սկզբունքի գերակա խորհրդապաշտությամբ, Իսիհազմը միարժեքորեն օրինաչափվում է հայկական աշխարհընկալման մոդելի վրա խարսխված և վերը նկարագրված բուն հայկական հոգևոր կատարելության ճարտարության հետ:

*Եվ այն, ինչ ասելն իսկ ահավոր է,*
*Գրում եմ այստեղ որպես հիշատակ մեծ երախտիքիդ.*
*Կարող ենք նույնիսկ մենք աստված լինել*
*Շնորհներով ու ձիրքերով ընտիր*
*Ու միավորվել ստեղծողիդ հետ՝*
*Տերունական Քո մարմնի ճաշակմամբ*
*Եվ միաձուլմամբ Քո կենաց լույսին.*
*Մինչդեռ, Պողոսի խոսքի համաձայն,*
*Նախկին օրենքը չուներ այսպիսի*
*Կատարելության երջանիկ խոստում:*

**(Գր. Նարեկացի, Մատյան ողբերգության (Բան ԾԲ, բ))**

Ազգի անցած պատմական Ուղու և անհատի հոգևոր կյանքի ընթացքում ձեռք բերված փորձի համապատասխանությունը և համարժեքությունը ենթադրում է, որ ազգային միֆերի համալիրը միաժամանակ օժտված է երկու ուղղվածությամբ: Որպես

[23] **Епископ Паргев**, Богопознание, Степанакерт, 1991 г., с.s 44-46.

[24] **С. Хоружий**, Ключ к новому видению человека http://www.wco.ru/biblio/, с. 6-11.

մարդու կողմից տիեզերակարգի ճանաչման և յուրացման համակարգ[25], միֆը մի կողմից ուղղված է մարդու ներաշխարհին՝ ուղղորդելով անհատի ներքին կյանքը, մյուս կողմից, այն կանոնակարգելով մարդկային վարքագիծը արտաքին կյանքում, բնորոշում է էթնիկ համակեցության բովանդակությունը: Անհատի և ազգի ներդաշնակման այս եղանակի տեսանկյունից Հայ անունը բնորոշող առանցքային միֆը (Հայկի և Բելի պատերազմը), լինելով պատմական եղելություն, միաժամանակ հանդիսանում է հայ մարդու հոգևոր կատարելությունն ապահովող՝ վերը նկարագրված, ներքին մեխանիզմ: Այսինքն հայոց պատմական անցյալն ու հիշողությունը այս դեպքում դադարում են լինել սոսկ կատարվածի ժամանակագրություն, այլ վերածվում են ներկայում առկա հնարավորության, որից սկիզբ են առնում ապագան կառուցելու բազմաթիվ ուղղություններ:

Ազգային հավաքական հոգեբանության[26] մեջ պատճառի և հետևանքի այս նույնության լույսի ներքո վերարարման մյուս երկու ակտերը, որոնք խորհրդանշվում են Ջրհեղեղով և Քրիստոսի մարմնացումով, ձեռք են բերում ներքին բովանդակության նոր իմաստավորում: Ջրհեղեղի պարագայում պատմական եղելության արտաքին՝ երևույթի առակային դրսևորումը օրինաչափվում է Սերմի գաղափարին, քանի որ Տապանի խորհուրդը կայանում էր նախնական ողջ ինֆորմացիայի պահպանման մեջ ջուր տարերքի-քաոսի առկայության պայմաններում: Ընդ որում, Կենտրոնի-Սերմի զոհողության պրոյեկցիան երկրի վրա համընկնում է Հայկական Արեալի հետ[27]: Աստծո Որդու մարմնացումը լրումն էր առաջին երկու վերարարման ակտերի, քանի որ Քրիստոս կար Հիսուսից առաջ և Մարդու Որդին իր կյանքով նյութականացրեց աշխարհարարման խորհուրդը՝ անցնելով ձեռնադրման յոթ աստիճաններով՝ Ծնունդը, Մկրտությունը Հորդանանում, Պայծառակերպությունը, Ինքնուրացումը, Հայտնությունը, Վճիռը և Հարությունը:

Եթե առաջին երկու իրադարձությունների արտաքին-առակային և ներքին-բովանդակային իմաստավորումները համամարդկային լինելով ակներևաբար նույնանում են Հայ ազգային Ինքնությանը, ապա Քրիստոսի գալստյան պարագայում վերը լուսաբանված բովանդակային նույնությունը Հայկականության բազմաշերտությանը լրացվում է նաև ազգային պատմության արտաքին-առակային հետագա դրսևորումներում:

Մասնավորապես, երբ զուգահեռներ ենք անցկացնում Գողգոթայի և Տեր-Զորի միջև, ակնհայտ է դառնում, որ Գողգոթայում խաչելության վճիռն իրականացրեց հռովմեացի զինվորը: Տեր-Զորում, Հայոց Խաչելության վճիռը իրականացրեց թուրք ասկյարը, վճիռ, որը կայացրեցին նույն փարիսեցիների հետնորդները: Արտաքին այս նմանության ներքին նույնությունը պարզ է դառնում, երբ համեմատում ենք Քրիստոնեության ընդունման տարեգրության՝ (301 թ. = 3 + 0 + 1 = 4) ու ցեղասպանության միջև ընկած ժամանակահատվածի՝ (1614 տարի = 1 + 6 + 1 + 4 = 12 = 1+ 2 = 3) թվերի ներքին էզոթերիկ (թաքնագիտական) խորհուրդները՝ 4 + 3 = 7: Այսինքն, Հայ ազգա-

---

[25] **А. А. Степанян**, Развитие исторической мысли в древней Армении, Ереван, 1991 г. с. 7.

[26] **Վազգեն Ա. Կաթողիկոս**, Գալիքի տեսիլքով, գիրք երկրորդ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1998 թ., էջ 116:

[27] **Վ. Քալաշյան**, **Դ. Հարությունյան**, Հարէր, Երևան, 1999 թ., էջ 7-8:

յին հավաքական մարմինը թե՛ տարածական և թե՛ ժամանակային առումներով Քրիստոնեության լույսով անցնում է հոգևոր կատարելության Ուղին, որը համապատասխանում է 7-ի տիեզերական օրինաչափությանը:

Արդ, հարկ է վերաիմաստավորել պատմական անցյալը, որովհետև այսօրվա արմատները երեկվա մեջ են, վաղվանը՝ այսօրվա և անհատական ինքնափոփոխման ողջ ընթացքը հետադարձ կապով առնչվում է նաև ազգային վերափոխմանը:

*Տէր Յիսուս Քրիստոս, Հօրդ հետ գովված,*
*ու երկրպագված*
*Բարեհռչակված քո Սուրբ Հոգու հետ,*
*Դու, որ մարմնացար մեզ համար ՝ ըստ մեզ,*
*Որ մեզ դարձնես ըստ Քեզ ՝ քեզ համար,*
*Լույս ամենայնի, համակ ողորմած, հզոր, երկնային,*
*Աղաչում եմ Քեզ, ջարդված, խորտակված,*
*Լուծված հողանյութ անոթիս նորեն*
*Վերստեղծելով հրաշակերտիր:*
*Ինձ, որ պատկերդ եմ, մեղքով հնացած,*
*Քուրաներիդ մեջ ձուլիր վերստին խոսքիդ հրայրքով:*

**(Գր. Նարեկացի, Մատյան ողբերգության (Բան ԺԹ, ա))**

Ընդհանրապես մեկնությունների վերը ներկայացված թվային խորհրդաբանությունը, այլաբանական սրբազան նշանակություն ունենալով, խարսխված է տիեզերածնության մասին համամարդկային ընկալումների վրա: Գոյություն ունեցող թվերի խորհրդաբանությունները կրում են բազմաբովանդակ բնույթ, մասնավորապես 4 թվի խորհրդաբանությունը կապվում է ինչպես տարերքների հետ, այնպես էլ գրերի համար տրված գլխավոր գույներին և այլն[28], նույնպիսի բազմազանությամբ է օժտված նաև 10 թվի խորհրդաբանությունը, սակայն մեր կարծիքով, դրանց բոլորի հիմքում ընկած է տիեզերակառույցի երկբևեռ տրոհման ներկայացված օբյեկտիվ ընթացքն ու դրա առանցքը հանդիսացող ինֆորմացիա-էներգիա-նյութ եռամիասնության ինքնաիրացման օրինաչափությունները: Հետևաբար, նույնիսկ թիվը կազմող գումարելիների հերթականությունը օժտված է շատ որոշակի ներքին իմաստաբանությամբ, օրինակ օկտավայի համապիտանի օրենքն արտահայտող 3 + 4 ≡ 7 նույնությունն արտահայտում է տիեզերակառույցի տրոհման վայրընթաց պրոցեսը (գծապատկեր2)՝ ինվոլյուցիան, այդ պատճառով տվյալ դեպքում այն պայմանականորեն կարելի է թվագրել՝ 3 + 4 ≡ 7↓: Մինչդեռ վերը ներկայացված մարդու ինքնակատարելության և ազգի ներքին պատմության էվոլյուցիոն ընթացքները, օբյեկտիվորեն դեմ հանդիման լինելով Արարման ինվոլյուցիային, ուղղված են ստորին մակարդակներից դեպի վերին շերտերը: Ակներևաբար, էվոլյուցիոն ընթացքն արտահայտող օկտավայի օրինաչափությունն այս դեպքում պետք է թվագրվի՝ 4 + 3 = 7↑ տեսքով, այսինքն եթե առաջին դեպքում Կենտրոնից ճառագված եռամիասնական լույսով 4 տարերքները շաղ-

[28] Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմի աստուածաբանական հանդէս «Գանձասար», Երևան, 1993թ., (դ), էջ 318:

կապվելով կազմում են 7-ի բազմամիասնությունը, ապա երկրորդ դեպքում տիեզերական նվիրապետության յուրաքանչյուր հարթությունը բնութագրող սեփական հաճախությունների սպեկտրը՝ 4 տարերքները, ներդաշնակվում են միմյանց հետ Սերմի-Կենտրոնի ինֆորմացիոն պրոյեկցիայի՝ ներքին երրորդության միջոցով: Եպոսում էլ՝ Սասնա ծուռ Դավիթը, երբ վերանորոգում էր (իմա. հոգևոր ինքնակատարելության ընթացք) Մարութա Բարձրիկն Աստվածածինը, աշխարհի չորս ծագերից կանչում է տաճարաշեն վարպետներ (4 տարերքներ) և տաճարը հնարավոր է լինում կանգուն պահել միայն, երբ ***երրորդ օրը*** կառուցելուց առաջ Դավիթը Թուր Կեծակիով հիմքում խաչ է անում (իմա. երկնային և երկրային երրորդությունները կապող Բան-Լույսը), ուրեմն անհատն իբրև տիեզերակառույցի տրոհման ***արտաքին մարդ*** արդյունք-հետևանք իր ներքին չորս տարրերով ենթարկվում է Արարաչական Կամքի (իմա. դետերմինություն) դրսևորումն հանդիսացող ինվոլյուցիոն 7↓-ի օրինաչափությանը, մյուս կողմից էլ հոգևոր կատարելության ընթացքում իրեն տրված ազատ կամքի (իմա. քաոսի աստիճան) գործադրումով Բան-Լույսով, որ եռամիասնական է, շաղկապում է ***ներքին մարդու*** չորս տարերքները՝ իրագործելով էվոլյուցիոն՝ 7↑-ի օրինաչափությունը: Արդյունքում, ներքին ինֆորմացիայի կուտակման հիմքում ընկած անորոշության առնչությունը, որ նաև ռեգեներացիայի հիմնախարհիսխն է, թվային խորհրդաբանությամբ ներկայանում է՝ 3 + 4 + 3= 10↓↑ տեսքով, որտեղ առաջին 3-ը երկնային երրորդությունն է (Հայրը և Բանը և Սուրբ Հոգին, որ մի են), 4-ը տարերքներն են (ներքին հաճախությունների սպեկտրը), իսկ վերջին գումարելին հանդիսացող 3-ը երկնային Երրորդության արտապատկերումը՝ պրոյեկցիան հանդիսացող եռամիասնությունն է (Հոգին և Ջուրը և Արյունը, որ միաբան են), այլ խոսքով՝ Աստծո որդիների՝ «ներքին» և «արտաքին» մարդու ներդաշնակ միասնության թվային խորհրդաբանությունը արտահայտվում է 10↓↑ թվի ներկայացված իմաստաբանությամբ:

Տերունական աղոթքի բազմաթիվ մեկնություններից Ս. Եղիշե վարդապետի ուրույն քննությունը,[29] օրինաչափելով ներկայացված թվային խորհրդաբանությանը, ակնհայտ է դարձնում, որ այն բաղկացած է 10 մասից, որոնցից՝ **«Հայր մեր որ երկնքում ես, թող սուրբ լինի Քո անունը, Թող գա Քո արքայությունը, թող Քո կամքը լինի ինչպես երկնքում, այնպես էլ՝ երկրի վրա«** համապատասխանում է երկնային Երրորդությանը, որ է՝ Հայրը և Բանը և Սուրբ Հոգին, **«Մեր հանապազօրյա հացը տուր մեզ այսօր, Ներիր մեր մեղքերը, ինչպես որ մենք ենք ներում մեր պարտապաններին, Մի տար մեզ փորձության, այլ փրկիր չարից«** համապատասխանում է ներքին չորս տարերքներին, **«Զի Քո է արքայություն և զորություն և փառքը, հավիտյանս. Ամեն«** համապատասխանում է երկնային Երրորդության արտացոլանքը հանդիսացող երկրային եռամիասնությանը, որ է միաբան: Արդ, «Հայր Մեր»-ով ներդաշնակվում են «ներքին» և «արտաքին» մարդը և միասնական վարք ու բարքով իբրև ամբողջություն անհատը կերպափոխվում Աստծո Որդու:

*Այսպես այս յուղը՝ կատարյալ*
*Փրկության լույսով,*

---

[29] Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմի ասպուածաբանական հանդէս «Գանձասար», Եր–ան, 1993., (զ), էջ 246-254:

*Լցվելով մեզ վրա՝ օծում է մեր*
*Խորանն արտաքին*
*Իսկ ներքին մարդու մեջ մտնելով*
*Ոչ ակնհայտ, այլ ծածկապես՝*
*Նոր կենդանություն է հաղորդում:*

**(Գր. Նարեկացի, Մատյան ողբերգության (Բան ՂԳ, գ))**

Աղյուսակ1

| *ԷՈՒԹՅՈՒՆ* | | *ԵՐԵՎՈՒՅԹ* | |
|---|---|---|---|
| *Էմանացիա* | *Սուբստանցիա* | *Պրոյեկցիա* | *Դրսևորում* |
| Սերմ | Ինֆորմացիա | Մատերիա | Պտուղ |
| Ինդուկցիա | Տրանսցենդենտ | Իմանենտ | Դեդուկցիա |
| Աշխարհընկալում | Ենթագիտակցություն | Գիտակցություն | Աշխարհայացք |
| Արժեքների համակարգ | Խմբային անգիտակցական | Հասարակական կարծիք | Ստերեոտիպ |
| Մշակույթ | Ազգ | Հասարակություն | Քաղաքակրթություն |
| Ժամանակային մարմին | Ներքին պատմություն | Արտաքին պատմություն | Ժամանակագրություն |
| Ինքնակազմակերպման զգացում | Պետականություն | Պետություն | Քաղաքական կառույց |
| Էթիկա | Բարոյականություն | Իրավունք | Իրավական նորմ |
| Իմաստություն | Արևելք | Արևմուտք | Իմացություն |
| | *Համասարակշռող էներգիա (Հյուսիս-Հարավ)* | | |




# ՄՐՑԱՆԱԿՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ «ԱՎԵՏԻՍ» ՌԱԴԻՈՀԱՂՈՐԴՄԱՆ ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻՆ

Փետրվարի 8-ին Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Տեղեկատվական համակարգի տնօրեն Տ. Վահրամ քահանա Մելիքյանը մրցանակներ հանձնեց Մայր Աթոռի «Ավետիս» հոգևոր ռադիոհաղորդման (Հանրային ռադիո) շրջանակներում 2007 թ. կազմակերպված մրցույթների հաղթողներին: Մրցույթներին առաջադրված հարցերին պատասխանել և մրցանակի էին արժանացել յոթ ունկնդիրներ՝ Հովհաննիսյան Սարգիսը, Դեմիրճյան Անահիտը, Բարսեղյան Խաթունը, Օհանյան Աննան, Ռաֆայելյան Հասմիկը, Խուդոյան Կարինեն և Ազիզյան Զարուհին:

Ողջունելով և շնորհավորելով մրցույթի հաղթողներին՝ Տ. Վահրամ քահանան իր գնահատանքի խոսքն ուղղեց նրանց՝ հոգևոր հաղորդաշարերին մշտապես ակտիվ և հետևողական մասնակցության համար: Իր խոսքում Տեր Հայրն անդրադարձավ նաև հեռուստա և ռադիո եթերներին և դրանցում առկա հոգևոր հաղորդումներին. «Անհերքելի իրողություն է, որ այսօր տեղեկատվական տեխնոլոգիաները մեծ դեր ունեն մարդու կյանքում: Ցավոք, միշտ չէ, որ դրանք իրենց բովանդակությամբ և ուղղվածությամբ դրական են ազդում մարդու աշխարհայացքի ձևավորման վրա: Քիչ չեն և դատապարտելի են այնպիսի օրինակները, երբ եթերում հնչում են մեր ազգային նկարագրին անհարիր նյութեր, ուր գովազդվում են բռնությունը, դավաճանությունը, անճաշակությունը, ոտնակոխ են արվում ազգային-հոգևոր մեր արժեքները: Այս մարտահրավերները դիմագրավելու գործում կարևոր ենք նկատում հոգևոր հաղորդումների առկայությունը հեռուստա և ռադիո եթերներում: Ուրախալի է արձանագրել, որ Մայր Աթոռի «Ավետիս» ռադիոհաղորդումն իր հաստատուն լսարանն է գտել և վայելում է ունկնդիրների համակրանքը»:

Տեր Հայրն իր խոսքում հորդորեց ներկաներին նույն ոգով և ջերմեռանդությամբ շարունակել հետևել հոգևոր հաղորդաշարերին՝ դրանց միջոցով հաղորդ դառնալով մեր հայրերի սրբազան հավատին ու ժառանգությանը, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ավանդույթներին ու անանց արժեքներին:

2000 թվականից «Ավետիս» հոգևոր ռադիոհաղորդումը անխափան հեռարձակվում է Մայր Աթոռի Տեղեկատվական համակարգի և Հայաստանի Հանրային Ռադիոյի արդյունավետ համագործակցությամբ:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ ՏՕՆԸ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄՈՒՄ
## Տոնը նշանավորվեց նաև առաջնորդանիստ Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցու մկրտության ավազանի օծմամբ

Տեառնընդառաջի ծիսական արարողությունները Գուգարաց թեմում ևս սկսվեցին փետրվարի 13-ի երեկոյան. Վանաձորի Ս. Գրիգոր Նարեկացի և Ս. Աստվածածին եկեղեցիներում երեկոյան ժամերգությունից հետո կատարվեց նախատոնակ: Նախատոնակին հավատացյալները մասնակցեցին վառվող մոմերով ու ճրագներով, որ կարծես լույսի տոնախմբություն էր հիշեցնում՝ խորհրդանշելով Սիմեոն ծերունու՝ Հիսուսին տրված «Լույս» անունը: Ապա ժողովուրդը հոգևորականների թափորի ուղեկցությամբ շարժվեց եկեղեցու բակ, որտեղ վառվեց Տեառնընդառաջի խարույկը: Տեառնընդառաջի խարույկը հիշատակումն է Երուսաղեմի բնակիչների՝ քառասնօրյա Հիսուսին ջահերով ու ճրագներով ընդառաջ դուրս գալուն: Վանաձորցիները ևս, ի հիշատակումն այդ գեղեցիկ ավանդության, վառվող մոմերով մասնակցեցին Ս. Գրիգոր Նարեկացի և Ս. Աստվածածին եկեղեցիների բակերում կազմակերպված ժողովրդական տոնախմբությանը: Ս. Աստվածածին եկեղեցում նորապսակներին սպասվում էր հաճելի անակնկալ. եկեղեցու խաչքավոր Արմեն Մխոյանի կողմից հունվարից մինչ Տեառնընդառաջ ընկած ժամանակահատվածում Ս. Աստվածածին եկեղեցում պսակված 32 նորապսակ զույգերին տրվեցին հուշանվերներ:

Օրը նշանավորվեց նաև Ս. Գրիգոր Նարեկացի առաջնորդանիստ Մայր եկեղեցու ավանդատան մկրտության ավազանի օծմամբ: Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանի ձեռամբ օծվեց եկեղեցու խաչքավոր, ՎՊՄԻ ռեկտոր Գուրգեն Խաչատրյանի մեկենասությամբ կառուցված մկրտության ավազանը: Այն նախապես լվացվեց խաչքավորի կողմից Վանա լճից բերված ջրով, ապա օծվեց սրբալույս Մյուռոնով: Օծման սրբազան արարողությունից հետո նորաօծ ավազանում կատարվեց անդրանիկ մկրտությունը. խաչքավոր Գ. Խաչատրյանի կնքահայրությամբ մկրտվեցին մանկավարժական ինստիտուտի 26 ուսանողներ, որոնց կնքահոր կողմից նվիրվեցին խաչիկներ և մկրտության վկայականներ:

Փետրվարի 14-ին Վանաձորի Ս. Գրիգոր Նարեկացի և Ս. Աստվածածին եկեղեցիներում առավոտյան ժամերգությունից հետո կատարվեց Անդաստանի կարգ. եկեղեցու չորս կողմերում կարդացվեցին չորս Ավետարաններից հատվածներ օրհնությամբ աշխարհի չորս կողմերի: Ապա մատուցվեց Սուրբ Պատարագ, որի ավարտին կատարվեց նորապսակների մասնավոր օրհնության կարգ:

*ԴԻՎԱՆ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻ*

# ՎԵՐԱՕԾՎԵՑ ԹԵԹՐԻԾՂԱՐՈՅԻ ՇՐՋԱՆԻ ՍԱՄՇՈՒԼԴԱ ԳՅՈՒՂԻ ՍՈՒՐԲ ՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑԻՆ

Փետրվարի 23-ին, ձեռամբ Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի և մասնակցությամբ Թբիլիսիի Սուրբ Գևորգ առաջնորդանիստ եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Եղիշե ավագ քահանա Հարությունյանի, Մառնեուլի և Բոլնիսի շրջանների հայության հոգևոր հովիվ Տ. Հուսիկ քահանա Հարությունյանի, Թբիլիսիի Սուրբ Գևորգ առաջնորդանիստ եկեղեցու դպրաց դասի, վերաօծվեց Թեթրիծղարոյի շրջանի Սամշուլդա գյուղի Սուրբ Փրկիչ եկեղեցին՝ վերանորոգված և բարեկարգված, հովանավորությամբ ծնունդով Սամշուլդեցի, Ռուսաստանի Դաշնությունում բնակվող Գուրգեն Հովհաննիսյանի:

Հավարտ վերաօծման կարգի անդրանիկ պատարագ մատուցեց Մառնեուլի և Բոլնիսի շրջանների հայության հոգևոր հովիվ Տ. Հուսիկ քահանա Հարությունյանը, իսկ հավուր պատշաճի քարոզ խոսեց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը: Վիրահայոց թեմի առաջնորդի կողմից գնահատանքի և օրհնության արժանացան եկեղեցու վերականգնման գործում ներդրում կատարած Գուրգեն Հովհաննիսյանը, շինարարական աշխատանքների կազմակերպիչ Աշոտ Քոչարյանը, ինչպես նաև շինարարության մասնակիցները, որոնց փոխանցվեց առաջնորդական Օրհնության Գիր և հուշանվերներ: Դեսպանի խորհրդական Եղիա Մանսուրյանն ընթերցեց Վրաստանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Հրաչ Սիլվանյանի ողջույնի խոսքը, իսկ Վրաստանի Հայերի Միության անունից ներկաներին ողջունեց Վրաստանի Հայերի Միության փոխնախագահ Վան Բայբուրթյանը:

Արարողությունն ավարտվեց ավանդական մատաղի օրհնությամբ, ազգագրական երգ ու պարով և Թբիլիսիի Պ. Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի դերասաններ Ռոբերտ Հովհաննիսյանի և Ռոբերտ Աղաջանյանի ասմունքով:

Արարողությանը ներկա էին՝ Վրաստանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպանի խորհրդական Եղիա Մանսուրյանը, Վրաստանի Հայերի Միության նախագահ Հենրիխ Մուրադյանը, «Վրաստան» թերթի գլխավոր խմբագիր, Վրաստանի խորհրդարանի պատգամավոր, Վրաստանի Հայերի Միության փոխնախագահ Վան Բայբուրթյանը, Թբիլիսիի Պ. Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի տնօրեն և գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանը, Թբիլիսիի Սուրբ Գևորգ առաջնորդանիստ եկեղեցու հավատացյալներ, վիրահայ մշակույթի գործիչներ:

Թեթրիծղարոյի շրջանի Սամշուլդա գյուղի Սուրբ Փրկիչ (Սուրբ Աստվածածին) քարաշեն եկեղեցին կառուցվել է 1854 թ.: Ունեցել է հոգևոր դպրոց, 40 ծուխ՝ 400 բնակիչներով: Գյուղից 500 մետր հեռավորության վրա գտնվում է 18-րդ դարի Սուրբ Աստվածածին ուխտատեղի քարաշեն մատուռը, մեկ այլ ուխտատեղի՝ Սուրբ Գևորգ մատուռը, գտնվում է գյուղի մյուս կողմում՝ անտառի մեջ:

*ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ*
*ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ*

# ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵՎ ՌՈՒՍ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՀԱՄԱՏԵՂ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ

2008 թ. փետրվարի 5-6-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ Հայ Առաքելական և Ռուս Ուղղափառ Եկեղեցիների միջև 2001 թվականին սկսված համատեղ քննարկումների երկրորդ հանդիպումը՝ նվիրված «Մարդու իրավունքներ. բարոյականություն և ավանդական արժեքներ» թեմային:

Ստորև ներկայացվում է հանդիպման համատեղ հաղորդագրությունը:

## Հաղորդագրություն Հայ Առաքելական և Ռուս Ուղղափառ Եկեղեցիների միջև համատեղ քննարկումների երկրորդ հանդիպման

*Սուրբ Էջմիածին*

2008 թ. փետրվարի 5-6-ը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ Հայ Առաքելական և Ռուս Ուղղափառ Եկեղեցիների միջև համատեղ քննարկումների երկրորդ հանդիպումը, որը նվիրված էր «Մարդու իրավունքներ. բարոյականություն և ավանդական արժեքներ» թեմային:

Համատեղ քննարկումներն սկսվել են 2001 թվականին երկու Եկեղեցիների գահակալների՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Մոսկվայի և Համայն Ռուսիո Ալեքսի Բ Պատրիարքի նախաձեռնությամբ և օրհնությամբ՝ քննելու համար աստվածաբանական, եկեղեցական և հասարակական կյանքին վերաբերող առկա խնդիրներ: Առաջին հանդիպմանը, որ տեղի էր ունեցել 2001 թ. փետրվարի 13-15-ը Սուրբ Էջմիածնում, քննարկվել էին հասարակական նշանակություն ունեցող ժամանակակից խնդիրներ, որոնք արտացոլված են Ռուս Ուղղափառ Եկեղեցու սոցիալական կոնցեպցիայի հիմունքներում:

Հանդիպման թեմայով ներկայացվեցին չորս զեկուցումներ

- «Մարդու իրավունքները քրիստոնեական տեսանկյունից. ժամանակակից մարտահրավերներ» - Տ. Հովակիմ վրդ. Մանուկյան,
- «Աստվածաբանական մոտեցում մարդու իրավունքների նկատմամբ» - Հայր Գեորգի Ռյաբիխ,
- «Մարդու իրավունքներ. աստվածաբանությո՞ւն, գաղափարախոսությո՞ւն, թե՞ քաղաքական տեխնոլոգիա» - Իգումեն Կիրիլ Գովորուն,
- «Անկում դեպի վեր» - Արա Գալոյան:

Այնուհետև տեղի ունեցավ քննարկում, որի ընթացքում արծարծվեցին մարդու իրավունքների գաղափարի ծագման, քրիստոնեական ավանդության և տարբեր աշխարհայացքային համակարգերի հետ դրա կապի, Եկեղեցի-պետություն հարաբերությունների մոդելի և ժամանակակից հասարակության մեջ Եկեղեցու առաքելության կերպերի մասին հարցերը: Արդյունքում կողմերը հանգեցին հետևյալ եզրակացության:

Եկեղեցու հետաքրքրությունը մարդու իրավունքների նկատմամբ պայմանավորված է այն փաստով, որ մարդը և իր փրկությունը գտնվում են քրիստոնեական աստվածաբանության առանցքում: Այդ պատճառով մարդու իրավունքները, որոնք ուղղված են մարդ անհատի արժանապատվության և ազատության պաշտպանմանը, արժեք են ներկայացնում նաև քրիստոնեական ավանդության տեսանկյունից: Սա հատկապես վերաբերում է Հայ Առաքելական և Ռուս Ուղղափառ Եկեղեցիներին, որոնք հալածանքների բազում շրջաններ են վերապրել:

Սակայն մարդու իրավունքների գաղափարը կարող է օգտագործվել նաև ի վնաս անհատի և հասարակության, եթե այն գործածվում է մեղքի և անբարո արարքների արդարացման և քարոզչության համար: Ժամանակակից հասարակությունը պետք է պաշտպանի ոչ միայն ընտրության ազատությունը, այլև մարդկանց ազատությունը մեղքից՝ թույլ չտալով անբարո և հոգևորից զուրկ արժեքների պարտադրում հանրային կյանքում (կրթական համակարգ, ԶԼՄ-ներ, գործարար ոլորտ և այլն):

Մարդու իրավունքների գաղափարի գործադրումը չի կարող առանձնացվել ժողովրդի կրոնական և ազգային ավանդույթներից: Մարդու իրավունքների հիման վրա կրոնը չպետք է դիտարկվի բացառապես որպես մասնավոր երևույթ: Յուրաքանչյուր ժողովուրդ իրավունք ունի սահմանելու հասարակական կյանքում կրոնական ավանդույթների հետ փոխազդեցության իր ձևերը:

Իր առաքելությանը հավատարիմ Եկեղեցին միշտ պաշտպանել է նեղյալներին և կարոտյալներին: Եկեղեցին պատրաստ է երկխոսության բոլոր այն մարդկանց հետ, որոնք անտարբեր չեն մյուսների ցավի և անարդարության նկատմամբ, և պատրաստ է միավորել իր ջանքերը պետական, հասարակական և այլ կազմակերպությունների հետ, որոնք զբաղվում են մարդու իրավունքների պաշտպանությամբ:

Հայ Առաքելական Եկեղեցու կողմից հանդիպմանը մասնակցում էին Գեղարքունիքի թեմի առաջնորդ Տ. Մարկոս եպիսկոպոս Հովհաննիսյանը (պատվիրակության ղեկավար), Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի վարիչ Տ. Հովակիմ վարդապետ Մանուկյանը, Գևորգյան Հոգևոր Ճեմարանի դասախոս Տ. Մուշեղ աբեղա Բաբայանը, Մայր Աթոռի Տեղեկատվական համակարգի տնօրեն Տ. Վահրամ քահանա Մելիքյանը, ԵՀԽ Հայաստանյան Կլոր սեղան միջեկեղեցական հիմնադրամի տնօրեն դոկտ. Կարեն Նազարյանը, «Շողակաթ» հեռուստաընկերության ծրագրերի տնօրեն պրն Արա Գալոյանը:

Ռուս Ուղղափառ Եկեղեցու կողմից երկրորդ հանդիպմանը մասնակցում էին Մոսկվայի Պատրիարքարանի արտաքին եկեղեցական հարաբերությունների բաժնի փոխտնօրեն Մարկ եպիսկոպոս Եգորևսկին (պատվիրակության ղեկավար), Մոսկ-

վայի Պատրիարքարանի արտաքին եկեղեցական հարաբերությունների բաժնի միջքրիստոնեական կապերի քարտուղար Իգոր քահանա Վիժանովը, Մոսկվայի Պատրիարքարանի արտաքին եկեղեցական հարաբերությունների՝ Եկեղեցու և հասարակության հարցերով զբաղվող բաժնի քարտուղար հայր Գեորգի Րյաբիխը, Կիևի միտրոպոլիտության աշխատակից իգումեն Կիրիլ Գովոռունը, Մոսկվայի Պատրիարքարանի արտաքին եկեղեցական հարաբերությունների բաժնի աշխատակից Ալեքսանդր քահանա Վասյուտինը:

Հանդիպման մասնակիցներին ընդունեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Ողջունելով համատեղ քննարկումների հերթական հանդիպման գումարումը՝ Վեհափառ Հայրապետը հաջողություն մաղթեց պատվիրակություններին իրենց աշխատանքում և վստահություն հայտնեց, որ այն կծառայի երկու Եկեղեցիների միջև առկա ջերմ հարաբերությունների առավել զորացմանը:

Երկօրյա քննարկումների ավարտին տեղի ունեցավ նաև հանդիպում միջազգային և հայկական իրավապաշտպան կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*



# *ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ*

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԻՐԱՆԻ ԴԵՍՊԱՆԻՆ

Փետրվարի 13-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Իրանի Իսլամական Հանրապետության նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Սեյեդ Ալի Սաղայիանին:

Շնորհավորելով դեսպանին նոր նշանակման առիթով՝ Նորին Սրբությունն արդյունավոր գործունեության իր բարեմաղթանքները փոխանցեց նրան: Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ նկատեց, որ դարավոր բարեկամական հարաբերությունները երկու ժողովուրդների միջև այսօր առավել զարգանում են՝ ընդգրկելով համագործակցության նորանոր ոլորտներ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ի դեմս դեսպանի իր շնորհակալությունը հայտնեց Իրանի իշխանությունների հոգատար և բարյացակամ վերաբերմունքի համար Իրանում բնակվող հայորդիների հանդեպ: Նորին Սրբությունն ուրախությամբ արձանագրեց նաև, որ սերտ հարաբերություններ են ձևավորվել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանատան միջև, ինչը համագործակցության նոր հորիզոններ է բացում հատկապես կրթական և մշակութային ոլորտներում:

Իր հերթին դեսպան Սեյեդ Ալի Սաղայիանը, շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, նկատեց, որ մինչ դեսպան նշանակվելը տարբեր պատվիրակությունների կազմում բազմիցս այցելել է Հայաստան: Դեսպանը հավաստիացրեց Նորին Սրբությանը, որ պիտի ջանքերը ծառայեցնի երկու պետությունների համագործակցության առավել սերտացմանը և ժողովուրդների բարեկամության ամրապնդմանը:

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԵԱՀԿ ԳՈՐԾՈՂ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԱՏՈՒԿ ՊԱՏՎԻՐԱԿԻՆ

Փետրվարի 18-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապե-

տությունում գտնվող ԵԱՀԿ գործող նախագահի հատուկ պատվիրակ դեսպան Հեյկի Թալվիթիեին:

Ողջունելով պրն Թալվիթիեի այցը Մայր Աթոռ՝ Նորին Սրբությունն ուրախություն հայտնեց Հայաստանում նրան վերստին տեսնելու համար: Վերհիշելով Հեյկի Թալվիթիեի պաշտոնավարության տարիները Հայաստանում որպես Ֆինլանդիայի դեսպան՝ Վեհափառ Հայրապետը գոհունակություն հայտնեց Հայաստանի և Ֆինլանդիայի միջև սերտացող հարաբերությունների առիթով: Հայոց Հայրապետը նաև ներկայացրեց Հայ Եկեղեցու և Ֆինլանդիայի Ուղղափառ և Լյութերական Եկեղեցիների միջև առկա ջերմ հարաբերությունները:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց նաև Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման հիմնախնդրին և Հայաստանում փետրվար 19-ին կայանալիք նախագահական ընտրություններին:

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ԿԱՐԱԿՈՊՈՒԼՈՍԻՆ

Փետրվարի 18-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հունաստանի Հանրապետության խորհրդարանի պատգամավոր Մաքսիմոս Կարակոպուլոսին և նրա գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ-ում Հունաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպանի:

Հանդիպման ընթացքին խոսվեց հայ և հույն ժողովուրդների պատմական ընդհանրությունների և երկու պետությունների միջև առկա ջերմ բարեկամական կապերի ու համագործակցության մասին: Անդրադարձ կատարվեց նաև Հայ Առաքելական և Հույն Ուղղափառ եկեղեցիների եղբայրական հարաբերություններին: Այս առիթով Նորին Սրբությունը գոհունակությամբ նշեց, որ Մայր Աթոռի հինգ միաբաններ այսօր իրենց աստվածաբանական ուսումն են շարունակում Հունաստանի բարձրագույն կրթական հաստատություններում: Հայոց Հայրապետը նաև ի դեմս Հունաստանի խորհրդարանի պատգամավորի շնորհավորեց հույն ժողովրդին Աթենքի և Համայն Հելլադայի Արքեպիսկոպոս Նորին Ամենապատվություն Հերոնիմոս Բ-ին ընտրության առիթով:

Հանդիպմանն անդրադարձ եղավ նաև Հայաստանում փետրվար 19-ին կայանալիք նախագահական ընտրություններին:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

**Փետրվարի 3-ին, կիրակի - Բուն Բարեկենդան:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Պարույր քահանա Ավետիսյանը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Տաթև արքեպիսկոպոս Սարգիսյանը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 12):

**Փետրվարի 10-ին, կիրակի - Բ. կիր. Քառասնորդական Պահոց (Արտաքսման):**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ադամ քահանա Մակարյանը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Փառէն եպիսկոպոս Ավետիքյանը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

**Փետրվարի 14-ին, հինգշաբթի - ԺԱ օր Մեծի Պահոց: ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ: Տօն քառասնօրեայ գալստեանն Քրիստոսի ի Տաճարն:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ջաբեհ վարդապետ Կաբաղյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Տե՛ր, թող բացվեն մեր աչքերը» բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 16):

**Փետրվարի 17-ին, կիրակի - Գ. կիր. Քառասնորդական Պահոց: (Անառակին):**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ասողիկ քահանա Կարապետյանը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

**Փետրվարի 24-ին, կիրակի - Դ. կիր. Քառասնորդական Պահոց (Տնտեսին):**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արամ քահանա Միրզոյանը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Սահակ վարդապետ Մաշալյանը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 21):

# “ЭЧМИАДЗИН” ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА

**(Февраль 2008 г.)**


1. Президент НКР в Первопрестольном Святом Эчмиадзине, 11 февраля 2008 г. (с. 3).
2. Праздник Сретения Господне в Первопрестольном Святом Эчмиадзине, 14 февраля 2008г. (с. 4).

## ПАТРИАРШИЕ ЭНЦИКЛИКИ И БЛАГОСЛОВЕНИЯ

3. Энциклика Его Святейшства Гарегина II, Католикоса всех армян Его Преосвященству епископу Антонину Блаку по случаю его награждения орденом “ Святой Нерсес Шнорали”, 7 февраля 2008 г., № 460 (с. 5-6).
4. Патриаршие награды (пожалование в феврале 2008 г. орденов “Святой Нерсес Шнорали” лицам, оказавшим большие услуги Армянской Церкви) (с. 7).
5. Послание Его Святейшства Гарегина II, Католикоса всех армян по случаю двадцатилетия Арцахского движения, 19 февраля 2008 г. (с. 8).
6. Поздравительное послание Его Святейшства Гарегина II, Католикоса всех армян Его Высокопреосвященству новоизбранному Архепископу Афин и Всей Эллады, 9 февраля 2008 г. (с. 9).

## СООБЩЕНИЕ

7. Воззвание Верховного Духовного Совета по случаю президентских выборов РА, 19 февраля 2008 г. (с.10)
8. Послание предводителей глав епархий Армянской Церкви народу по случаю президентских выборов, 29 февраля 2008 г. (с. 11).

## ПРОПОВЕДИ

9. Проповедь Его Высокопреосвященства архиепископа Татева Саркисяна в Кафедральном соборе Святого Эчмиадзина на Литургии в Воскресенье Масленицы, 3 февраля 2008 г. (с.12-15).
10. Проповедь архимандрита Зарега Кабагяна в Кафедральном соборе Святого Эчмиадзина в праздник Сретения Господа, 14 февраля 2008 г. (с. 16-20).

11. Проповедь архимандрита Саака Машаляна в Кафедральном соборе Святого Эчмиадзина в Воскресенье Управителя, 24 февраля 2008 г. (с. 21-24).

## РЕЛИГИОЗНО-ЦЕРКОВНЫЕ ИССЛЕДОВАНИЯ

12. **ИЕРОМОНАХ МУШЕГ БАБАЯН**- Воззрения Святого Григора Нарекаци о понятиях – богобоязнь, размышления о смерти, страшный суд и вечные мучения по “Книге скорбных песнопений” (с. 25-33).
13. **АРХИМАНДРИТ ОВАКИМ МАНУКЯН** - Экуменическое движение в 20-ом веке и участие в нем Армянской Церкви (с. 34-48).

## ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

14. **ГРИГОР БРУТЯН** – Некоторые календарные факты в армянских волшебных сказках (исследование по теории календаря) – (с. 49-66).
15. **ГЕВОРГ ТЕР-ВАРДАНЯН** - Труд Товмы Мецопеци “Мартирологий песенника Иоаннеса Хойеци - Хлатеци (кодикологическое исследование и критичский текст) – (с. 67-103).
16. **ГАЯНЕ ПОГОСЯН** – Путевые заметки европейских авторов о Святом Эчмиадзине, о святынях Армянской Церкви и о Святом Мире. Жан Шарден -(с. 104-107).
17. **ЖАН ШАРДЕН** – Путешествия по Персии и Восточной Индии (путевая запись, перевод с английского Г. Погосян)-(с. 108-115).
18. **СИРВАРД АМБАРЯН** – Из истории армянской церкви и школы города Таганроге (историковедческое исследование) –( с. 116-124).
19. **СЕВАК АКОПЯН** - Озабоченность по поводу опасности забвения армянского языка и ассимиляции в путевых записках Сильвы Капутикян (филологическое исследование) – (с. 125-132).
20. **ВАЧЕ КАЛАШЯН** - Есть ли иная возможность, чем данная? (натурфилософское исследование) – (с. 133-153).

## В СВЯТОМ ПЕРВОПРЕСТОЛЕ И В ЕПАРХИЯХ

21. Призы слушателям радиопередачи “Аветис” Первопрестольного Святого Эчмиадзина, 8 февраля 2008 г. (с. 154)
22. Праздник Сретения Господа в Гугарской епархии. Праздник был ознаменован освящением купели крещения церкви Св. Григория Нарекаци, 13 февраля 2008 г. (с. 155).
23. Заново освящена церковь Святого Спасителя в селе Самшулда Тетрицгаройского района, 23 февраля 2008 г. (с.156)

24. Продолжаются совместные обсуждения между Армянской и Русской Православной Церквями, 5 февраля 2008 г. (с. 157).
25. Сообщение о второй встрече совместных обсуждений между Армянской и Русской Православной Церквями, 5 февраля 2008 г. (с. 157).

## АУДИЕНЦИИ В ПЕРВОПРЕСТОЛЬНОМ СВЯТОМ ЭЧМИАДЗИНЕ

26. Аудиенция у Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, посла Ирана в РА, 13 февраля 2008 г. (с. 160).
27. Аудиенция у Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, особого представителя действующего председателя ОБСЕ, 18 февраля 2008 г. (с. 160).
28. Аудиенция у Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, депутата Парламента Греции г-на Каракопулоса, 18 февраля 2008 г. (161).

29. Краткие церковные новости. Информация о Святых Литургиях, проповедях и других церемониях в Кафедральном соборе и Первопрестольном Святом Эчмиадзине в течение февраля 2008 г. (с.162).

# “ETCHMIADZIN”
# OFFICIAL MONTHLY REVIEW OF
# HOLY ETCHMIADZIN
## (February 2008)


1. President of Nagorno Karabakh in the Mother See of Holy Etchmiadzin, 11 February, 2008 (p. 3).
2. The Feast of the Lord’s Presentation at the Temple in the Mother See of Holy Etchmiadzin, 14 February, 2008 (p. 4).


## PONTIFICAL ENCYCLICALS AND LETTERS OF BLESSING


3. Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to H.G. Bishop Antonin Blank, on the occasion of his decoration with the Medal of “St. Nerses the Graceful”, 7 February, 2008, no. 460 (p. 5-6).
4. Pontifical Awards (Order of “St. Nerses the Graceful” granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, during February 2008 to clergymen and laymen having been of great service to the Armenian Church,) (p. 7).
5. Message of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, on the occasion of the 20th anniversary of Artsakh Movement, 19 February, 2008 (p. 8).
6. Letter of Congratulations of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to the newly elected Archbishop of Athens and All Greece, 9 February, 2008 (p. 9).


## PRESS RELEASES


7. Appeal of the Supreme Spiritual Council on the occasion of presidential elections, 19 February, 2008 (p. 10).
8. Message of the Primates of the Armenian Church Dioceses to the nation on the occasion of presidential elections, 29 February, 2008 (p. 11).


## SERMONS


9. Sermon delivered by Archbishop Tathev Sarkissian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of Divine Liturgy on the Eve of the Great Lent, 3 February, 2008 (p. 12-15).
10. Sermon delivered by Rev. Fr. Zareh Kabaghian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of Divine Liturgy on the occasion of the Feast of the Lord’s Presentation at the Temple, 14 February, 2008 (p. 16-20).

11. Sermon delivered by Rev. Fr. Sahak Mashalian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of Divine Liturgy on the Sunday of the Steward, 24 February, 2008 (p. 21-24).

## RELIGIOUS STUDIES

12. **REV. FR. MOUSHEGH BABAYAN** – Views of St. Gregory of Narek on the concepts of awe towards God, thoughts on death, Judgment Day, perpetual suffering according to the "Book of Lamentations" (p. 25-33).
13. **REV. FR. HOVKIM MANUKIAN** – The Ecumenical Movement in the 20th Century and the Participation of the Armenian Church in that Movement (p. 34-48).

## HISTORICAL AND PHILOLOGICAL STUDIES

14. **GRIGOR BRUTIAN** – Some Calendar Facts in the Armenian Miraculous Fairy-Tales (calendar research) – (p. 49-66).
15. **GEVORG TER-VARDANIAN** – Testimony of Singer Hovhannes Khoyetsi-Khlatetsi by Thomas Metsopetsi (manuscript research and critical text), (p. 67-103).
16. **GAYANE POGHOSSIAN** - The Notes of European Travelers on Holy Etchmiadzin, Armenian Church Relics and Holy Myron. John Chardin (geographical research) – (p. 104-107).
17. **JOHN CHARDIN** - The Travels into Persia (travel-notes translated from English by Gayane Poghossian) - (p. 108-115).
18. **SIRVARD HAMBARIAN** – Excerpts from the history of the Armenian Church and school of Taganrog city (historical research) – (p. 116-124).
19. **SEVAK HAKOBIAN** – Concern on the menace of oblivion and assimilation of the Armenian language in the travel-notes of Silva Kapoutikian (philological research) – (p. 125-132).
20. **VATCHE KALASHIAN** - Is there any other possibility than the one that was given? (ecophilosophical research) – (p. 133-153).

## IN THE MOTHER SEE AND THE DIOCESES

21. Rewards granted to the listeners of "Avetis" radio program, 8 February, 2008 (p. 154).
22. The Feast of the Lord's Presentation at the Temple in the Diocese of Gougark. The feast was also marked by the consecration of the baptismal pool of St. Gregory of Narek Church, 13 February, 2008 (p. 155).
23. Re-consecration of Holy Savior Church of village Samshoulda in the region of Tetritsegharo, 23 February, 2008 (p. 156).
24. Discussions between the Armenian Apostolic and Russian Orthodox Churches go on, 5-6

February, 2008 (p. 157).
25. Press release on the second meeting in the context of discussions between the Armenian Apostolic and Russian Orthodox Churches, 5 February, 2008 (p. 157).

## AUDIENCES AT THE MOTHER SEE

26. Audience granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to the Ambassador of the Islamic Republic of Iran, 13 February, 2008 (p. 160).
27. Audience granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to the special envoy of the OSCE acting president, 18 February, 2008 (p. 160).
28. Audience granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Mr. Karakopoulos, Deputy of Parliament of Greece, 18 February, 2008 (p. 161).

29. Brief Church News. Information about the Divine Liturgies, sermons and other services held at the Mother See and the Cathedral of Holy Etchmiadzin during February 2008 (p. 162).

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԼՂՀ նախագահը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ........................................ 3
Տեառնընդառաջի տոնը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում .............................. 4

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ

**Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի** Կոնդակը Անտոնին Եպիսկոպոս Բլանքին «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրելու մասին .................................................................... 5
Հայրապետական գնահատություն ................................................................ 7
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը Արցախյան շարժման 20-ամյակի առիթով ..................................................................... 8
Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական գիրը Աթենքի և Համայն Հելլադայի նորընտիր Արքեպիսկոպոսին ................................................... 9

## ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գերագույն Հոգևոր Խորհրդի կոչը ՀՀ նախագահական ընտրությունների առիթով ........................................................................................................ 10
Հայ Եկեղեցու առաջնորդների ուղերձը ժողովրդին .................................... 11

## ՔԱՐՈԶԽՈՍԱԿԱՆ

Տ. Տաթև արքեպիսկոպոս Սարգիսյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Բուն Բարեկենդանին մատուցված Ս. Պատարագին 12
Տ. Զարեh վարդապետ Կաքաղյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Տեառնընդառաջին մատուցված Ս. Պատարագին .... 16
Տ. Սահակ վարդապետ Մաշալյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Տնտեսի կիրակիին մատուցված Ս. Պատարագին .... 21

## ԿՐՈՆԱ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

**Տ. ՄՈՒՇԵՂ ԱԲԵՂԱ ԲԱԲԱՅԱՆ** - Սուրբ Գրիգոր Նարեկացու հայացքները Աստծո երկյուղ, մահվան մտորումներ, ահեղ դատաստան և հավիտենական տանջանքներ հասկացությունների մասին ըստ «Մատեան ողբերգութեան» ........................................................................ 25

Տ. ՀՈՎԱԿԻՄ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ - Էկումենիկ շարժումը 20-րդ դարում և Հայ Եկեղեցու մասնակցությունն այս շարժմանը .................. 34

## ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

**ԳՐԻԳՈՐ ԲՐՈՒՏԵԱՆ** - Որոշ օրացուցային իրողութիւններ հայկական հրաշապատում հէքեաթներում .................................................................. 49
**ԳԷՈՐԳ ՏԵՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ** - Թովմա Մեծոփեցու՝ երգասաց Յոհաննէս Խոյեցի-Խլաթեցու վկայաբանութիւնը ........................................................ 67
ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆ ՆՈՐ ՎԿԱՅԻՆ ՅՈՀԱՆՈՒ, ՈՐ ՄԱԿԱՆՈՒՆ ԽՈՅԼՈՒ ԱՍԻ ........................................................................................ 84
**ԳԱՅԱՆԵ ՊՈՂՈՍՅԱՆ** - Եվրոպական ուղեգրողները Ս. Էջմիածնի, Հայոց Եկեղեցու սրբությունների և Սրբալույս Մյուռոնի մասին. Ժան Շարդեն .................................................................................... 104
**ԺԱՆ ՇԱՐԴԵՆ** - Ճանապարհորդություն Պարսկաստանով և Արևելյան Հնդկաստանով ........................................................................................ 108
**ՍԻՐՎԱՐԴ ՀԱՄԲԱՐՅԱՆ** - Տագանրոգ քաղաքի հայկական եկեղեցու և դպրոցի պատմությունից ............................................................................ 116
**ՍԵՎԱԿ ՀԱԿՈԲՅԱՆ** - Սփյուռքում հայոց լեզվի մոռացության և ձուլման վտանգի մտահոգությունը Սիլվա Կապուտիկյանի ուղեգրություններում ......................................................................... 125
**ՎԱՉԵ ՔԱԼԱՇՅԱՆ** - Կա՞ արդյոք այլ հնար՝ քան տրվածը ..................... 133

## ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

Մրցանակներ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Ավետիս» ռադիոհաղորդման ունկնդիրներին ........................................................... 154
Տեառնընդառաջի տոնը Գուգարաց թեմում. տոնը նշանավորվեց նաև առաջնորդանիստ Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցու մկրտության ավազանի օծմամբ ............................................................................... 155
Վերաօծվեց Թեթրիծղարոյի շրջանի Սամշուլդա գյուղի Սուրբ Փրկիչ եկեղեցին ........................................................................... 156
Հայ Առաքելական և Ռուս Ուղղափառ Եկեղեցիների միջև համատեղ քննարկումները շարունակվում են .......................................................... 157
Հաղորդագրություն Հայ Առաքելական և Ռուս Ուղղափառ Եկեղեցիների միջև համատեղ քննարկումների երկրորդ հանդիպման ...................... 157

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Իրանի դեսպանին ..................... 160
Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԵԱՀԿ գործող նախագահի
հատուկ պատվիրակին .................................................................. 160
Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հունաստանի Խորհրդարանի
պատգամավոր Կարակոպուլոսին ........................................................ 161

Եկեղեցական բեմ. լուրեր .................................................................. 162